

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱ



EUROPEAN
EDUCATIONAL REGIONAL
ACADEMY

ISSN 1829-4359

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

6

ԵՐԵՎԱՆ
2015



ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

6

ԵՐԵՎԱՆ
2015

ՀՏԴ 001
ԳՄԴ 72
Ե 744

Գլխավոր խմբագիր՝

Հովհաննիսյան Դեզի, տեխնիկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ

Խաչատրյան Ա. Հ., իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր
Աբրահամյան Հ. Մ., պատմագիտության դոկտոր
Վահանյան Գ. Ա., տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Մարզպանյան Հ. Ա., տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Ղարսյան Է. Վ., տեխնիկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Մովսիսյան Յու. Մ., ֆիզմաթ գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Գրիգորյան Յու. Գ., ֆիզմաթ գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Աստվածատրյան Ա. Վ., բժշկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Քրիստոֆ Կրեյցոց, ինֆորմատիկայի դոկտոր, պրոֆեսոր

Ե 744 **Եվրոպական ակադեմիա:** Գիտ. հոդվածների ժլվ./
ԵՏԱ. Գլխ. խմբ.՝ Դ. Հովհաննիսյան, - Եր.: «ԵՏԱ» հրատ., 2015:
Գիրք 6 - 480 էջ:

Ժողովածուն ընդգրկում է իրավաբանության, փիլիսոփայության, մաթեմատիկայի, ինֆորմատիկայի, կառավարման, տնտեսագիտության տարբեր ոլորտների հրատարակված հոդվածների վերլուծությանը նվիրված հոդվածներ: Ներկայացված հետազոտությունների արդյունքները կարող են օգտակար լինել համապատասխան բնագավառներում զբաղված մասնագետների, ասպիրանտների, հայցորդների, ինչպես նաև գիտության նորագույն նվաճումներով հետաքրքրվող անձանց:

ЕВРОПЕЙСКАЯ АКАДЕМИЯ: СБОРНИК НАУЧНЫХ ТРУДОВ
EUROPEAN ACADEMY: COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

ՀՏԴ 001
ԳՄԴ 72

ISBN 978-99941-2-609-5

© Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի հրատարակչություն, 2015
© Publishing of European Educational Regional Academy 2015

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Հ. Ա. Մարգարյան, Ա. Ա. Հարությունյան

Գյուղատնտեսության ճյուղն ուղղված է բնակչության սննդապահովվածությանը և արտադրության մի շարք ճյուղերի հումքի մատակարարման ապահովմանը, որով էլ կարևորվում է դերը տնտեսության մեջ: Գյուղատնտեսությունը հանդիսանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսության առանցքային ոլորտներից մեկը և ունի չափազանց մեծ դեր ու նշանակություն երկրի անվտանգության, կենսագործունեության և տնտեսության կայունացման գործում¹: Ուստի գյուղատնտեսական ոլորտը և այդ ոլորտում ընդգրկված մարդկային ռեսուրսները պահանջում են համակողմանի ուսումնասիրություն և մոտեցում: Շուկայական հարաբերություններին անցման և համարյա թե բոլոր կոլտնտեսությունների, սովխոզների վերացման հետևանքով, որոնք հանդիսանում էին գյուղաբնակների գրեթե միակ աշխատատեղը՝ գործազրկությունը սկսեց արագորեն աճել: Աղքատությունը, սոցիալապես անապահովությունը, այլընտրանքային զբաղվածության բացակայությունը դարձան գյուղաբնակներին հուզող խնդիր, որով էլ խիստ կարևորվում է պետության միջամտությունը խնդրի լուծման հարցում: Ակնհայտ դարձավ, որ լուրջ պետական միջամտություն պետք է կատարվի անհրաժեշտ ծրագրերի մշակման, հատուկ գործողությունների իրականացման, գործազրկության մակարդակի կրճատման, աշխատանքային շահագրգռվածության բարձրացման, գյուղական բնակչության մասնագիտական պատրաստվածության բարձրացման և այլ ուղղություններով:

ԼՂՀ կառավարության կողմից գերակա հայտարարված այս ճյուղում՝ չնայած ամեն տարի ավելացվող ֆինանսական հոսքերին, ինչ-

¹ ԼՂՀ 2013թ. պետական բյուջեի կատարման մասին հաշվետվություն, Ստեփանակերտ, 2014թ., էջ 8:

պես նաև՝ տարբեր ծրագրերով տրամադրվող փոխհատուցումներին ու արտոնյալ վարկերին, դրական տեղաշարժն աննկատ է: Իրականացված բոլոր միջոցառումների շրջանակում *մարդկային կապիտալի* ու նրա դերի կարևորման անհրաժեշտությունը սահմանափակվեց հողօգտագործողների և համայնքների ղեկավարների հետ պարբերաբար կազմակերպված սեմինար-խորհրդակցություններով՝ մշակաբույսերի խնամքի և մշակման աշխատանքների թեմաներով: Այսինքն՝ մարդկային կապիտալի ու նրա դերի կարևորման գաղափարին աննշան ուշադրություն դարձվեց: Այնինչ, ռազմավարական առումով պահանջվում էր շատ ավելի լուրջ մոտեցում:

Կարևոր հիմնահարց է նաև բնակչության քաղաքաբնակ կենտրոնամետությունը: Ներկայումս ԼՂՀ բնակչության 53 տոկոսը կենտրոնացված է քաղաքներում: Նույն պատկերն է նաև Հայաստանի Հանրապետությունում, որտեղ քաղաքներում կենտրոնացված է ամբողջ բնակչության մոտ 63 տոկոսը: Այս ցուցանիշները ռազմավարական՝ հաշվեկշռված զարգացման առումով լուրջ մտահոգության տեղիք են տալիս:

Տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների հագեցվածությամբ և, իհարկե, բնակչության թվով առանձնանում է ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտը: Քաղաքին բաժին է ընկնում հանրապետությունում գրանցված կազմակերպությունների 67,6 տոկոսը, գործող կազմակերպությունների՝ 73,0 տոկոսը, չգործող կազմակերպությունների՝ 57,2 տոկոսը, մինչդեռ Ստեփանակերտ քաղաքը ԼՂՀ տարածքի ընդամենը 0,3 տոկոսն է կազմում:

Գյուղատնտեսության և ձկնաբուծության ոլորտում գործող կազմակերպությունների 50,0 տոկոսը հաշվառված է Ստեփանակերտ քաղաքում, 17,9 տոկոսը՝ Ասկերանի, 10,7-ական տոկոսը՝ Մարտունու և Շուշիի, 7,1 տոկոսը՝ Քաշաթաղի և 3,6 տոկոսը՝ Հաղրուֆի շրջաններում: Մարտակերտի և Շահումյանի շրջաններում գյուղատնտեսության ոլորտում գործող կազմակերպություններ չկան, մինչդեռ վերջիններիս է բաժին ընկնում հանրապետության ընդհանուր տարածքի 31,7 տոկոսը²:

Գյուղական միջավայրն իր առանձնահատկություններով անշուշտ ներազդում է աշխատանքի շուկայի ձևավորման վրա: Որոշակի անհաշվեկշռվածությունն անխուսափելի է՝ կապված տարածքային

² ԼՂՀ ԱԿԾ բիզնես-ռեգիստրի հետազոտության զեկույց, Ստեփանակերտ 2014թ., էջ 24:

կտրուվածության, ենթակառուցվածքների բացակայության, աշխատանքների սեզոնային բնույթի և այլ հանգամանքների հետ:


Սակայն գյուղատնտեսության մեջ ներգրավված բնակաչությունն ունի մի առավելություն այն հարցում, որ արտադրության հիմնական միջոց հանդիսացող հողը ոչ միայն չի մաշվում, այլև ճիշտ օգտագործման դեպքում բարելավում և վերականգնում է իր որակական հատկանիշներն այն դեպքում, երբ արտադրության մնացած միջոցներն աստիճանաբար մաշվում են: Գյուղատնտեսությամբ զբաղվող բնակչության առավելությունը նաև այն է, որ ի տարբերություն այլ ապրանքների՝ պահանջարկը գյուղմթերքների նկատմամբ քիչ առածգական է, այսինքն՝ իր կենսական պահանջմունքների բավարարման նպատակով բնակչությունը հարաբերականորեն կայուն պահանջարկ է ցուցաբերում որոշակի պարենային ապրանքների նկատմամբ, և միայն իրական եկամուտների նվազման ու գների կտրուկ բարձրացման դեպքում է պարենային ապրանքների պահանջարկը համապատասխանաբար նվազում: Դա նշանակում է առավել կայուն պահանջարկի առկայություն պարենամթերք արտադրողի համար՝ գրեթե անկախ մակրոտնտեսական իրավիճակից:

2013թ. ԼՂՀ զբաղվածության ոլորտում իրականացվող պետական քաղաքականությունն ուղղված էր աշխատաշուկայի լարվածության մեղմացմանը, տնտեսության մեջ ընթացող զարգացումներին համապատասխան աշխատուժի մրցունակության բարձրացմանը, գործատուների մոտ առկա թափուր աշխատատեղերի արդյունավետ համալրմանը և այլն: Շարունակվում էին իրականացվել երիտասարդների, աշխատաշուկայում անմրցունակ խմբերի, մասնավորապես՝ հաշմանդամների, գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր հանդիսացող՝ աշխատանք փնտրող անձանց զբաղվածության ապահովմանն ուղղված ծրագրերով նախատեսված միջոցառումները: Միաժամանակ, զբաղվածության քաղաքականության բարեփոխումների թիրախների ու դրանց լուծումների սահմանման նպատակով մշակվեց 2014-2019թթ. ԼՂՀ զբաղվածության ռազմավարություն:

Ըստ այդմ՝ աշխատանքային իրավահարաբերությունների բնագավառում կվարվի աշխատանքային օրենսդրության կատարելագործման, հատկապես՝ աշխատողների իրավունքների ու երաշխիքների ամրապնդման և օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ

պետական հսկողության ու վերահսկողության արդյունավետության բարձրացման քաղաքականություն: Նման ռազմավարական ծրագիր մշակել է նաև Հայաստանի Հանրապետությունը, համաձայն որի՝ Հայաստանում գյուղերի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարությամբ կարևորվում է գյուղատնտեսությանը և գյուղին պետական ակտիվ աջակցությունը: Այն առավելապես ուղղված է գյուղատնտեսության ոլորտում տնտեսվարողների համար գործունեության և ներդրումների բարենպաստ պայմանների ապահովմանը, գյուղատնտեսական զբաղվածության խթանմանը և այլն³:

2006թ. ԼՂՀ գյուղաբնակ գործազուրկների թվաքանակը կազմում էր 249 մարդ, որոնցից 31-ը ստացել է գործազրկության նպաստ, իսկ 2013թ.՝ 167 մարդ, որոնցից գործազրկության նպաստ ստացել է 43 մարդ: Բայց անհրաժեշտ է նաև նշել աշխատանք փնտրող քաղաքացիների աշխատանքի տեղավորման ցուցանիշի մասին, համաձայն որի 2013թ. աշխատանքի է տեղավորվել 189 մարդ, որոնցից և ոչ մեկը գյուղաբնակ չէ (գծապատկեր 1): Այս խնդրի լուծումը կարիք ունի ինչպես պետական, այնպես էլ մասնավոր սեկտորի աջակցության:



Գծապատկեր 1. Գյուղաբնակ գործազուրկների, գործազրկության նպաստառուների և աշխատանքի տեղավորվածների թվաքանակների դինամիկան

³ ՀՀ զբաղվածության 2013-2018թթ. ռազմավարություն, ՀՀ կառավարության թիվ 45 որոշում առ 08.11.2012թ., էջ 8:

Վերլուծելով վիճակագրական տվյալները կարելի է եզրակացնել, որ առկա ցուցանիշները վկայում են գյուղերին խիստ բնորոշ՝ թաքնըված գործազրկության մասին, քանի որ հողասեփականատեր գյուղացիների այն մասը, որը հող մշակելու կարողություն չունի, որպես գործազուրկ հաշվառման չի վերցվում: Ուստի գյուղատնտեսության մեջ զբաղվածության մակարդակն արհեստականորեն ուռճանում է:

Ունենալով ռազմավարական նշանակություն պարենային ապահովության հիմնախնդրի լուծման, գյուղական տարածքների զարգացման ու գյուղական բնակավայրերի ամրապնդման համար՝ գյուղատնտեսությունը վճռորոշ դեր է խաղում երկրի անվտանգության, կենսագործունեության և տնտեսության կայունացման գործում⁴: Ուստի ոլորտը շարունակում է մնալ բարգավաճման նպատակային թիրախ, որի իրականացումն էլ իր հերթին պահանջում է լուրջ միջոցառումների կիրառում: Մարդկային կապիտալի տարանջատումը որպես ինքնուրույն հասկացություն և դրա դիտարկումը որպես կարևորագույն ռեսուրս՝ թույլ կտա բարձրացնել ինչպես տնտեսապես ակտիվ բնակչության զբաղվածության, այնպես էլ գյուղատնտեսության ոլորտում ներառված բնակչության կենսամակարդակը, որի հետևանքով կզարգանա ոչ միայն գյուղատնտեսության ոլորտը, այլ նաև հնարավորություն կստանանք այդ ոլորտում իրականացվող բարեփոխումների վրա կատարվող ծախսերը վերածել արդյունավետ և շահավետ ներդրումների:

Ցանկացած պարագայում չափազանց կարևոր է մարդուն, հասարակությանը, մարդկային կապիտալին արժանի ուշադրություն և ֆինանսական միջոցներ տրամադրելը: Մեր երկրի տնտեսական ու քաղաքական բարդ ու դժվարին պայմաններում, ունեցած ռեսուրսների խիստ սահմանափակ քանակության, ինչպես նաև՝ դրանց հասանելիության և օգտագործման մեծ դժվարությունների պարագայում, կայուն ապագա ունենալու հասարակական պահանջումնքը բավարարելու հիմնական միջոցը դառնում է հասարակության մեջ մարդկային կապիտալի քանակական ու որակական պարամետրերի անընդմեջ ու հետևողական բարելավումը:

Բանալի բառեր. զբաղվածություն, գյուղական գործազրկություն,

⁴ ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության 2013 թ. գործունեության վերաբերյալ հաշվետվություն, էջ 1:

մարդկային կապիտալը գյուղատնտեսության մեջ, զբաղվածության ռազմավարություն:

Գրականություն

1. ԼՂՀ 2013թ. պետական բյուջեի կատարման մասին հաշվետվություն, ք. Ստեփանակերտ 2014թ.:
2. ԼՂՀ ԱՎԾ քիզնես-ռեզիստրի հետազոտության զեկույց, ք. Ստեփանակերտ 2014թ.:
3. ՀՀ զբաղվածության 2013-2018թթ. ռազմավարություն, ՀՀ կառավարության N 45 որոշում առ 08.11.2012թ.:
4. ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության 2013 թվականի գործունեության վերաբերյալ հաշվետվություն:
5. Ա. Մելքումյան, «Աշխատանքի շուկան և բնակչության զբաղվածությունը», Երևան, Տնտեսագետ 2006 թ.:
6. Чукреев П.А., Кобытова Е.В., "Занятость населения и ее регулирование", Улан-Удэ, Издательство ВСГТУ, 2010г.
7. В.Т. Смирнов, И.В. Сошников, В.И. Романчин, И.В. Скоблякова, "Человеческий капитал", Москва, 2005г.

СТРУКТУРА И СТРАТЕГИЯ ЗАНЯТОСТИ В СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННОМ СЕКТОРЕ НКР

А.А. Марзпанян, А.А. Арутюнян

Резюме

Сельское хозяйство представляет собой сектор крайне важности и чуткости. Это естественно, с учетом того, что его основная цель производства продуктов питания, которая является важным фактором для человеческой жизни. Занятость сельского населения одна из актуальных проблем современного периода развития национальной экономики. Сельскохозяйственный сектор, по сравнению с другими секторами, имеет многоспециальные характеристики, которые делают его более трудным с точки зрения определения занятости в нем людей.

Ключевые слова: занятость, сельская безработица, человеческий капитал в сельском хозяйстве, стратегия занятости.

EMPLOYMENT STRUCTURE AND STRATEGY IN THE AGRICULTURAL SECTOR OF NKR

H.A. Marzpanyan, A.A. Harutyunyan
Summary

Agriculture is a sector of utmost importance and sensitivity. This is natural, given its primary purpose of producing food, which is essential to human life. Agricultural population employment one of actual problems of the modern period of development of national economy. The agricultural sector has many special characteristics that make it more difficult, compared to other sectors, to know precisely how many people it employs.

Key words: employment, rural unemployment, human capital in agriculture, employment strategy.

ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ԵՎ ԽԹԱՆՄԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ն. Լ. Կիրակոսյան

Մոտիվացիա հասկացությունը սերտորեն կապված է անձնակազմի կառավարման հետ: Շուկայական տնտեսությունը նոր պահանջներ է դնում կազմակերպության անձնակազմի առջև: Դա ոչ միայն կադրերի ընտրության, ուսուցման ու բաշխման խնդիրներ են, այլ նոր գիտակցության, մենթալիտետի ձևավորումն է, հետևաբար և՛ մոտիվացիայի նոր մեթոդների պահանջն է:

Մոտիվացիա ասելով հասկանում են մարդու վարքը որոշող շարժիչ ուժերը, իսկ մարդու վարքը միշտ մոտիվացված է կամ ներքին մղումներով, կամ արտաքին խթաններով¹: Ինչպիսի պայմաններում մարդը կարող է լավ կատարել ուրիշի կողմից առաջադրված աշխատանքը, ինչպես են առաջանում համապատասխան մոտիվները և ինչպիսին են դրանք, այդ հարցերը կարևոր են արտադրության յուրաքանչյուր ղեկավարի համար: Յուրաքանչյուր ղեկավար հավատացած է, որ կազմակերպությունում արդյունավետ աշխատելու համար, մարդկանց անհրաժեշտ է դրդել ու շատ դեպքերում նրանք դրա համար նյութական վարձատրուցումը բավարար են համարում և երբեմն այդ քաղաքականությունը հաջողությամբ է պսակվում, որը սակայն, կարծում ենք բավարար չէ: Մոտիվացումը և խթանումը այն հզոր միջոցներից են, որոնք ապահովում են անձնակազմի աշխատանքի արդյունավետությունը: Այդ միջոցներին տիրապետելու համար անհրաժեշտ է բազմակողմանի ու համակարգված ուսումնասիրել նշված երկու հասկացությունները:

Մեր կարծիքով, նեղ իմաստով մոտիվացիան որևէ մեկին պատճառաբանված /հիմնավորված/ գործողության դրդելու գործընթաց է: Այն կարող է իրականացվել անհատների ու մարդկային խմբերի նկատմամբ, որոնք իրենց գործունեությամբ մասնակցում են կազմակերպության աշխատանքներին:

Ըստ Մեկոնի կառավարման գործընթացում մոտիվացիայի դասական սահմանումը ձևակերպվում է հետևյալ կերպ. մոտիվացիան դա անձը, իր կամ կազմակերպության նպատակներին հասնելու համար, ի-

¹ Мексон М.Х. Альберт М. Основы менеджмента. М. Дело 2000, Стр. 29

րեն և այլ մարդկանց աշխատանքային գործունեության դրդելու գործընթաց է: Կամ՝ մոտիվացիան դա, արտաքին (խթաններ) և ներքին (մոտիվներ) գործոնների համալիր ազդեցությամբ որոշվող, մարդու կողմից գիտակցաբար ընտրված այս կամ այն տիպի գործելաձև է²: Մոտիվացիան՝ դա աշխատողի ձգտումն է բավարարել իր պահանջմունքները (ստանալ որոշակի բարիքներ) աշխատանքային գործունեության միջոցով³: Այս սահմանումներում, մեր կարծիքով շատ մեծ տեղ և դեր է հատկացվում աշխատողին, նրա նպատակներին ու պահանջմունքներին, որը նա ի գորու է իրականացնել միայն աշխատանքի միջոցով, բայց պետք է նշել, որ տվյալ աշխատանքի իրավահավասարագոր կողմ է հանդիսանում նաև գործատուն, այսինքն կազմակերպությունը: Այդ տեսակետից, մեր կարծիքով աշխատանքի մոտիվացիան նպատակահարմար է դիտարկել երկու սուբյեկտների՝ աշխատողի և կազմակերպության տեսանկյունից:

Ընդհանուր առմամբ, մարդու գործունեության մոտիվացիան հասկացվում է որպես շարժիչ ուժերի համակցություն, որոնք դրդում են մարդուն իրականացնել որոշակի գործողություններ հոգուտ այն կազմակերպության, որտեղ աշխատում է: Այդ ուժերը գտնվում են մարդու ներսում և ստիպում մարդուն կատարել գիտակցված և չգիտակցված արարքներ:

Ելնելով վերը շարադրվածից, կարելի է փաստել, որ աշխատանքի մոտիվացիան, կարելի է դիտարկել որպես մի գործընթաց, որտեղ աշխատողները իրենց նպատակների իրականացման արդյունքում առաջացող ակնկալիքների և պահանջմունքների բավարարումը, իսկ կազմակերպությունը իր նպատակները և խնդիրները, իրականացնում են փոխհամաձայնեցված գործողությունների՝ աշխատողները իրենց կողմից ընտրված աշխատանքի, իսկ կազմակերպությունը այդ աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելուն ուղղված համալիր միջոցառումների իրականացման միջոցով:

Այսպիսով, կարելի է ձևակերպել մոտիվացիայի մեր ընկալումը: **Մասնավորապես, մոտիվացիան միջոցների, լծակների, խթանների ամբողջություն է, ներքին ու արտաքին շարժիչ ուժերի համակցություն, որոնք դրդում են մարդուն ձևավորել որոշակի վարքագիծ, որում մարդիկ դրսևորում են հակվածություն՝ իրագործելու կազմակերպության առջև դրված նպատակները:**

² Мексон М.Х. Альберт М. Основы менеджмента. М. Дело 2000, Стр. 32

³ Травин В.В. Менеджмент персонала предприятия. М. Дело 2000, Стр. 76

Այս սահմանման մեջ զուգորդվում են երկու հիմնական ուղղությունները՝ մոտիվացիան և խթանումը, որոնք շատ հաճախ ղեկավարների կողմից նույնացվում են: Խոսելով խթանման կամ մոտիվացիայի մասին, այդ ղեկավարները մտածում են միևնույն բանի՝ լավ կատարված աշխատանքի դիմաց աշխատողի վարձահատուցման մասին: Իրականում, մոտիվացիան և խթանումը տարբեր բաներ են, չնայած, ծառայում են միևնույն նպատակի իրականացմանը՝ աշխատողի աշխատանքի արդյունավետության բարձրացմանը: Բավարարման գործընթացը, որը սահմանման մեջ առաջին տեղում է, դա մոտիվացիոն քաղաքականություն է, որը մշակվում է կազմակերպության ղեկավարության կողմից, իրենց հայտնի, աշխատողների ակնկալիքների և պահանջմունքների հիման վրա: Համալիր միջոցառումները, դա աշխատանքի խթանումն է, որը միշտ լրացնում է մոտիվացիոն քաղաքականությունը և հանդիսանում է աշխատողի, մեծամասամբ նյութական կոնկրետ պահանջմունքների բավարարման միջոց:

Մոտիվացիայի ազդեցությունը մարդու վարքի վրա կախված է շատ գործոններից, մեծամասամբ անհատական է և կարող է փոփոխվել կախված անձի գործունեությամբ ունեցած հետադարձ կապերից: Մոտիվացիայի հասկացությունը բազմակողմանի բացահայտելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել, թե մարդու գործունեության ընթացքում ինչն է կախված մոտիվացիոն ազդեցությունից, ինչպիսին է արտաքին ու ներքին ուժերի հարաբերակցությունը և ինչպես է մոտիվացիան հարաբերակցվում մարդու գործունեության արդյունքների հետ:

Մոտիվացիան կազմում է մարդու ղեկավարման հիմքը: Ղեկավարման արդյունավետության աստիճանը կախված է այն բանից, թե որքանով է հաջող իրականացվում մոտիվացիոն գործընթացը⁴: Կախված այն բանից, թե ինչ է հետապնդում, ինչպիսի խնդիրներ է լուծում և ինչի է ձգտում մոտիվացիան՝ կարելի է տարբերակել երկու տիպի մոտիվացիա.

- Առաջին տիպի էությունը կայանում է նրանում, որ մարդու վրա արտաքին ազդեցությունների ճանապարհով գործողության մեջ են դրվում որոշակի դրդապատճառներ, որոնք դրդում են մարդուն կատարել որոշակի գործողություններ և բերում են մոտիվացնող սուբյեկտի համար ցանկալի արդյունքի: Մոտիվացիայի այս տիպը շատ ան-

⁴ Шапиро С. А. Управления человеческими ресурсами. М. 2005, Стр. 139

գամ հիշեցնում է առևտրային գործարքների տարբերակը. ես քեզ տալիս եմ այն, ինչ դու ուզում ես, իսկ դու տալիս ես այն, ինչ ես եմ ուզում: Եթե երկու կողմերի մոտ չկան փոխազդեցության կետեր, ապա մոտիվացիայի պրոցեսը չի կարող կայանալ:

- Մոտիվացիայի երկրորդ տիպի դեպքում հիմնականում ուշադրությունը դարձվում է նրան, որ մոտիվացիոն սուբյեկտը փորձում է իր համար ցանկալի դրդապատճառները ուժեղացնել և զարգացնել տվյալ մարդու մոտ և հակառակը՝ թուլացնել այն դրդապատճառները, որոնք կարող են խանգարել տվյալ մարդու արդյունավետ ղեկավարմանը: Այս տիպը պահանջում է ավելի շատ ջանք, գիտելիքներ և ունակություններ դրա իրականացման համար: Սակայն նրա արդյունքները գերազանցում են մոտիվացիայի առաջին տիպի արդյունքներին:

Ժամանակակից կառավարման պրակտիկայում փորձում են համատեղել մոտիվացիայի այս երկու տիպերը:

Ըստ Տրավինի⁵ աշխատանքի խթանումը դա աշխատողի պահանջմունքների բավարարման հետ կապված նրան կոնկրետ աշխատանքային գոծողության դրդումն է: Աշխատանքի խթանումը ձևավորվում է այն ժամանակ, երբ աշխատանքային գործունեությունը հանդիսանում է նյութական և ոչ նյութական բարիքների ստացման, եթե ոչ միակ, գոնե գլխավոր պայմանը:

Կազմակերպության արդյունավետ գործունեությունը պայմանավորված է, թե որքանով է գործող խթանման համակարգը հաշվի առնում կազմակերպության աշխատողների մոտիվացիան: Կարելի է ասել, որ աշխատանքի խթանումը աշխատողի աշխատանքային վարքագծի վրա ազդեցությունն է մոտիվացիայի միջոցով:

Խթանները կատարում են ներգործության լծակների դեր, որոնք առաջ են բերում որոշակի դրդապատճառների գործողություններ: Որպես խթաններ՝ հանդես են գալիս առանձին առարկաներ, ուրիշ մարդկանց գործողությունները, խոստումները, պատասխանատվություն կրողները, մարդուն իր որոշակի գործողությունների կամ կատարած աշխատանքի դիմաց առաջարկվող փոխհատուցումները:

Մարդն արձագանքում է շատ խթանների՝ ոչ միշտ գիտակցված: Առանձին խթանների նկատմամբ նրա ռեակցիան կարող է չենթարկվել գիտակցության հսկողության: Կոնկրետ խթանների նկատմամբ ազդե-

⁵ Травин В.В. Менеджмент персонала предприятия. М. Дело 2000, Стр. 124

ցությունը տարբեր մարդկանց մոտ միանշանակ չէ: Այդ է պատճառը, որ խթանները չունեն բացարձակ նշանակություն կամ իմաստ, եթե մարդիկ դրան չեն արձագանքում: Օրինակ, դրամական համակարգի փլուզման ժամանակ, երբ պրակտիկորեն ոչինչ հնարավոր չէ գնել դրամի դիմաց, աշխատավարձը կորցնում է իր խթանիչ ազդեցությունը և կարող է շատ սահմանափակ օգտագործվել մարդկանց կառավարման գործում:

Խթանումն ունի տարբեր ձևեր, որոնք ունեն նյութական և ոչ նյութական դրսևորումներ⁶: Կառավարման պրակտիկայում ամենատարածված ձև նյութական խթանումն է, որի դերը բացառիկ կարևոր է: Նյութական խթաններից են աշխատավարձը, պարգևները, հավելավճարները, շահույթի կամ եկամուտների բաշխմանը աշխատողների մասնակցության զանազան եղանակները և այլն:

Ոչ նյութական խթանները կապված են ավելի բարձր մակարդակի պահանջմունքների բավարարման հետ, որոնք ներկայանում են երկու տեսակի խթանների տեսքով՝ սոցիալ-հոգեբանական և ստեղծագործական: Սոցիալ-հոգեբանական խթանները կապված են շրջապատի կողմից աշխատողի ճանաչման, հարգանքի պատկանելության, ինչպես նաև ինքնահաստատման պահանջմունքների հետ: Այդ խթանները կարող են արտահայտվել աշխատողին ծառայողական և մասնագիտական առաջխաղացման հնարավորության ընձեռմամբ, նրան առավել պատասխանատու և կարևոր աշխատանքներ վստահելով, կազմակերպության կառավարման գործընթացին աշխատողի մասնակցության ապահովման տարբեր ձևերի կիրառմամբ, աշխատանքային գործունեության ընթացքում շփման բավարար մակարդակի ընձեռմամբ և այլն:

Ստեղծագործական խթանները պայմանավորված են աշխատողի ինքնահաստատման, ինքնաիրացման, ինքնակատարելագործման պահանջմունքներով:

Դրանք կարող են արտահայտվել աշխատողին առավել հետաքրքրիկ և ստեղծագործական բնույթի աշխատանքի վստահմամբ՝ աշխատողի ներուժին համապատասխան և այն լրիվ բացահայտելու, զարգացնելու հնարավորություն ընձեռող պաշտոնի նկատմամբ և այլն:

Միևնույն ժամանակ, խթանման համակարգը միայն նյութական խթանների շուրջը կառուցելը և այլ խթաններն անտեսելը չի կարող ա-

⁶ Кибанов А. Я. Организация управление персоналом напредприятия. М. ГАУ 2007, Стр. 138

պահովել աշխատանքի ցանկալի երկարատև արդյունք: Նմանապես և սոցիալ- հոգեբանական խթանների դերի բացարձակացումը, և նյութա- կան խթանների անտեսումը որոշ ժամանակից կառաջացնի իր աշխա- տանքից աշխատողի անբավարարվածություն, հետևաբար, աշխատան- քային մոտիվացիայի թուլացում: Հարկ է նշել, որ նյութական և ոչ նյութա- կան խթանները փոխադարձ կապված են և փոխլրացնում են միմյանց:

Խթանները տարբերում են նաև ըստ ազդեցության աստիճանի՝ պասիվ և ակտիվ: Պասիվ խթաններն են.

- Աշխատատեղի պահպանման երաշխիքները,
- Սոցիալական կարգավիճակը,
- Կազմակերպության աշխատանքային քաղաքականությունը,
- Աշխատանքային պայմանները,
- Հարաբերությունները անմիջական ղեկավարի հետ,
- Անձնային հակումները,
- Միջանձնային հարաբերությունները կոլեկտիվում,
- Աշխատավարձը:

Ակտիվ խթաններն են.

- Աշխատանքային հաջողությունները,
- Ղեկավարի կողմից աշխատակցի արժանիքների գնահատումը,
- Պատասխանատվության աստիճանը,
- Ծառայողական առաջխաղացումը,
- Պրոֆեսիոնալ աճը,
- Ներքին՝ աշխատանքից ունեցած բավարարվածությունը, ճա- նաչումը, ինքնաիրացումը,
- Արտաքին՝ ինքնակատարելագործումը, պարզևատրումը, պատժումը:


Մեր կարծիքով, աշխատանքի մոտիվացիան և խթանումը լիարժեք իրացված կլինեն, եթե աշխատողները հնարավորինս շատ տեղեկաց- ված լինեն կազմակերպության նպատակների և խնդիրների մասին, այն է՝ կազմակերպության նպատակներին հասնելու կամ խնդիրները լուծելու համար ընտրված ուղու, մեթոդների, ձևերի, գործիքների, տնտեսական քաղաքականության և այլնի մասին, աշխատանքի վարձահատուցման համակարգի մասին, աշխատանքային կոլեկտիվի և կոլեկտիվում առկա խնդիրների ու մթնոլորտի մասին և այն ներքին ու արտաքին երևույթնե- րի ու իրադարձությունների մասին, որոնք անմիջական կապ ունեն կազ-

մակերպության հետ: Տեղեկատվության պակասը ծնում է անվստահություն և վախ, որոնք բացասաբար են ազդում աշխատանքի մոտիվացիայի վրա: Շատ ղեկավարներ կարծում են, թե աշխատողները պետք է տեղեկացված լինեն այն տեղեկատվությամբ, որը վերաբերվում է միայն իրենց, դրանով աշխատողներին մեկուսացնելով ընդանուր կոլեկտիվից: Սակայն, մեր կարծիքով, եթե աշխատողը տեսնի և պատկերացում կազմի կազմակերպության նպատակների ու խնդիրների վերաբերյալ, զգա դրանց հրատապությունը և անհրաժեշտությունը, ապա դրանց իրագործման համար նրա անձնական ողջ ունակությունների ու կարողությունների ներդրման հավանականությունը կմեծանա: Իհարկե, ցանկացած աշխատող մտածում է, որ ինքը ավելի քիչ է վարձահատուցվում, քան պետք էր, բայց իրականում հնարավոր է և հակառակը, համենայնդեպս ոչ ոք և ոչինչ չի կարող ստիպել մարդուն մտածել այլ կերպ, հետևաբար, պետք է ստեղծվի մի այնպիսի իրավիճակ, որ աշխատողները մտածեն, թե այն մասը, որը իրենց չի վարձահատուցվում, իրենք զոհաբերում են հանուն կազմակերպության նպատակների իրագործման, այսինքն՝ «բարի գործ» են կատարում: Իսկ մարդիկ հոժարակամ «բարի գործ» կկատարեն այն դեպքում, երբ զգան թե հանուն ինչի և ինչու են դա կատարում, այսինքն՝ լիաժեռ տեղեկացված լինեն գործընթացի վերաբերյալ: Կա աշխատողների մեկ այլ խումբ, որոնք իրենց պարտքն են համարում աշխատել այնպես և օգտագործել իրենց ողջ հնարավորություններն ու ունակությունները, որպեսզի իրենց կազմակերպությունը հասնի լուրջ հաջողությունների: Այդ կատեգորիայի մարդկանց համար տեղեկատվության պակասը աններելի է: Մյուս կողմից, եթե աշխատողները բավարար տեղեկատվություն ունենան կազմակերպության նպատակների իրագործման ուղիների, ձևերի, գործիքների, մեթոդների մասին, ապա նրանց աշխատանքի արդյունավետությունը ավելի կբարձրանա:

Եթե բարիքների ստացումը մեծ ջանքեր չի պահանջում կամ դրա ստացումը գրեթե անհնար է, ապա աշխատանքի մոտիվացիան հիմնականում չի ձևավորվում: Աշխատանքի մոտիվացիան ձևավորվում է, երբ կառավարման սուբյեկտը իր տրամադրության տակ ունենում է մարդու պահանջմունքներին համապատասխան բարիքների խումբ: Բարիքների ստացման համար պահանջվում է աշխատողի անձնական աշխատանքային ջանքերի գործադրում: Բարիքը դառնում է աշխատանքի խթան, եթե այն ձևավորում է աշխատանքի մոտիվացիա:

Մոտիվի ազդեցության ուժը որոշվում է աշխատողի համար այս կամ այն պահանջմունքի հրատապության աստիճանով: Ինչքան անհրաժեշտ է այս կամ այն բարիքի պահանջը, այնքան ուժեղ է այն ստանալու ձգտումը, հետևապես, աշխատողը կսկսի գործել նույնքան ակտիվ:

Այսպիսով, մոտիվացիայի և խթանների փոխկապվածությունը կարելի է ներկայացնել հետևյալ գծանկարով.



Գծանկար 1. մոտիվացիայի և խթանների փոխկապվածությունը

Բանալի բառեր. մոտիվացիա, մոտիվացիայի տիպեր, խթանում, դրդապատճառ, պասիվ և ակտիվ խթաններ, նյութական և ոչ նյութական խթաններ, ստեղծագործական խթաններ:

Գրականություն

1. Յու. Սուվարյան, Մենեջմենթ, Երևան 2006
2. Мексон М.Х. Альберт М. Основы менеджмента. М. Дело 2000

3. Травин В.В. Менеджмент персонала предприятия. М. Дело 2000
4. Шапиро С. А. Управления человеческими ресурсами. М. 2005
5. Кибанов А. Я. Организация управление персоналом напредприятия. М. ГАУ 2007
6. Ильин Е.П. Мотивация и мотивы. СПб Питер 2009
7. Маслоу А. Мотивация и личность. СПб. Евразия 2008
8. Унайтли Ф. Мотивация. М. 2011

РАЗЛИЧИЕ МОТИВАЦИИ И СТИМУЛИРОВАНИЕ

Н.Л. Киракосян

Резюме

В статье обсуждается суть мотивации и стимулирования, дано их определение. Особое внимание уделяется различиям между понятиями мотивации и стимулирования. Раскрываются типы мотивации, формы стимулирования, влияние на эффективность работы человека творческих стимулов. С помощью схемы представлена взаимосвязь мотивации и стимулирования.

Ключевые слова: Мотивация, спрос, типы мотивации, стимулирования, пассивные и активные стимулы, материальные и нематериальные стимулы, творческие стимулы.

DIFFERENCES THE MOTIVATION AND THE STIMULATION

N.L. Kirakosyan

Summary

The article, the nature of terms for the motivation and promotion was discussed, their definitions were given. The special attention was paid to the differences between the concepts of motivation and stimulation, and to peculiarities of their manifestation. The types of motivation, promoting forms, the influence of creativite stimulations on the labor productivity were identified. The interconnectivity between the motivation and stimulation was represented by a figure.

Key words: motivation, types of motivation, stimulation, passive and active stimulus, material and non-material stimulus, creative stimulus.

ՓՈՔԻ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԿՄԱՆ ՌԵԺԻՄՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Մ. Ռ. Մանվելյան

2014 թ. հոկտեմբերի 10-ին Եվրասիական տնտեսական միության անդամ 3 երկրները (Ռուսաստան, Ղազախստան, Բելառուս) ստորագրեցին համաձայնագիր, որով Հայաստանը դարձավ միության անդամ: Միության հիմնական նպատակներից է ազգային օրենսդրությունների մոտեցումը և ներդաշնակեցումը:

Այդ տեսանկյունից կարևոր է ուսումնասիրել նաև փոքր և միջին ձեռնարկությունների նկատմամբ անդամ երկրներում, մասնավորապես՝ ՌԴ-ում կիրառվող հարկային ռեժիմները:

ՌԴ հարկային օրենսգրքի համաձայն փոքր և միջին ձեռնարկատիրությանը հնարավորություն է ընձեռնվում օգտվել արտոնյալ հարկային համակարգերից՝

- Հաշվեգրված եկամուտներից միասնական հարկման համակարգ,
- Հարկման պարզեցված համակարգ,
- Հարկման արտոնագրային համակարգ:

Հաշվեգրված եկամուտներից միասնական հարկային համակարգը հարկ վճարողի կողմից ինքնակամ ընտրվող հատուկ հարկային ռեժիմ է, որը կարող են կիրառել որոշակի գործունեության տեսակներով զբաղվող հարկ վճարողները, մասնավորապես՝

- կենցաղային ծառայությունների մատուցում,
- անասնաբուժական ծառայությունների մատուցում,
- ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղիների ժամանակավոր վարձակալության տրամադրումը,
- ավտոտրանսպորտային միջոցների վերանորոգում, տեխսպասարկում և վնասում,
- ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների իրականացում, եթե իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը տիրապետում է 20 ավտոտրանսպորտային միջոցներից ոչ ավել,
- մանրածախ առևտուր, որն իրականացվում է 150 ք.մ. մակերեսը չգերազանցող առևտրի իրականացման վայրում,

- հանրային սննդի տրամադրման ծառայությունների մատուցում, որն իրականացվում է 150 ք.մ. մակերեսը չգերազանցող վայրում կամ առանց առանձնացված սրահի,
- գովազդի տեղադրում (ինչպես արտաքին, այնպես էլ տրանսպորտային միջոցների վրա) հատուկ գովազդային կոնստրուկցիաների կիրառմամբ,
- ժամանակավոր կացարանների տրամադրման ծառայությունների մատուցում, եթե այդ կացարանների ընդհանուր մակերեսը չի գերազանցում 500 ք.մ.-ը:

Միասնական հարկային ռեժիմ չեն կարող կիրառել այն հարկ վճարողները՝

- որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը նախորդ տարում գերազանցել է 100-ը,
- որոնց մասնաբաժինը այլ կազմակերպություններում գերազանցում է 25%-ը,
- որոնք իրականացնում են կրթական, առողջապահական և սոցիալական գործառույթներ և հանրային սննդի ծառայությունների տրամադրումն իրականացվում է այդ գործառույթների շրջանակում:

Միասնական հարկի վճարման դեպքում հարկ վճարողներն ազատվում են եկամտահարկի/շահութահարկի, ԱԱՀ-ի և գործունեության իրականացման ընթացքում կիրառվող գույքի նկատմամբ գույքահարկի վճարումից:

Տարբեր հարկային ռեժիմներով հարկվող գործունեության, ինչպես նաև միասնական հարկման ռեժիմով հարկվող առանձին գործունեության տեսակների համար վարվում է առանձնացված հաշվառում:

Որպես հարկման օբյեկտ ընդունվում է հաշվեգրված եկամուտը, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ՀԵ = \frac{ԲԵ \times ՖԳ}{ՕրացուցայինՕր} \times ՕրացուցայինՕր^*$$

որտեղ՝

ՀԵ – ամսական հաշվեգրված եկամուտն է,

ԲԵ – բազային եկամտաբերությունն է՝ ճշգրտված հակտուկ գործակիցներով,

ՖԳ – ֆիզիկական գործակիցն է,

Օրացուցային օր – ամսվա օրացուցային օրերի թիվն է,

Օրացուցային օր* – ամսվա ընթացքում փաստացի գործունեություն իրականացրած օրացուցային օրերի թիվն է:

Գործունեության տարբեր տեսակների համար բազային եկամուտը և ֆիզիկական գործակիցները սահմանված են օրենքով, օրինակ՝ անասնաբուժական գործունեության համար որպես ֆիզիկական գործակից կիրառվում է աշխատողների թվաքանակը, իսկ բազային եկամուտ՝ ամսական 7500 ռուբլին:

Միասնական հարկային դրույքաչափը սահմանված է 15%: Հարկի գումարը նվազեցվում է պարտադիր կենսաթոշակային, սոցիալական և բժշկական ապահովագրությունների, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակության վճարների գումարի չափով: Հաշվետու հարկային ժամանակաշրջան է համարվում եռամսյակը: Հարկը վճարվում է մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 25-ը:

Պարզեցված հարկային համակարգ կարող է կիրառվել իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից՝ կամավորության սկզբունքով: Հարկման պարզեցված համակարգի կիրառման դեպքում հարկ վճարողներն ազատվում են եկամտահարկի/շահութահարկի, ԱԱՀ-ի և գույքահարկի վճարումից:

Հարկ վճարողն իրավունք ունի անցնել հարկման պարզեցված համակարգին, եթե այդ համակարգին անցման վերաբերյալ դիմումի ներկայացման տարվա 9 ամսիների ընթացքում եկամուտները չեն գերազանցել 45 մլն ռուբլին (405 մլն ՀՀ դրամ):

Հարկման պարզեցված համակարգի կիրառման իրավունք չունեն՝

- այն հարկ վճարողները, որոնք ունեն մասնաճյուղեր և (կամ) ներկայացուցչություններ,
- բանկերը,
- ապահովագրական կազմակերպությունները,
- ոչ պետական կենսաթոշակային հիմնադրամները,
- ներդրումային հիմնադրամները,
- արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցները,
- ենթասկզբիցային ապրանքների արտադրությամբ և օգտակար հանածոների արդյունահանմամբ զբաղվող կազմակերպությունները,
- շահումով խաղերի կազմակերպիչները,

- նոտարները, դատապաշտպանները,
- հարկ վճարողները, որոնց մասնաբաժինը այլ կազմակերպություններում գերազանցում է 25%-ը,
- հարկ վճարողները, որոնց աշխատողների թվաքանակը գերազանցում է 100-ը,
- բյուջետային հիմնարկները,
- օտարերկրյա կազմակերպությունները:

Հարկման օբյեկտ են հանդիսանում՝

- եկամուտները,
- եկամուտները՝ ծախսերը նվազեցնելուց հետո:

Որպես հարկման ժամանակաշրջան ընդունվում է օրացուցային տարին, իսկ հաշվետվական ժամանակաշրջան՝ եռամսյակը, կիսամյակը և 9 ամիսները:

Այն դեպքում, երբ հարկման օբյեկտ հանդիսանում են եկամուտները, հարկման դրույքաչափը կազմում է 6%, իսկ ծախսերով նվազեցված եկամուտների դեպքում՝ 15%:

Արտոնագրային հարկման համակարգը կիրառվում է հետևյալ գործունեության տեսակների նկատմամբ՝

- բրդյա, մորթե և կաշվե իրերի վերանորոգում,
- կոշիկի վերանորոգում,
- վարսահարդարման և դիմահարդարման ծառայություններ,
- քիմմաքրման և լվացքատների ծառայություններ,
- ճանապարհային նշանների, բանալիների և այլ մետաղական իրերի վերանորոգում,
- կենցաղային ռադիոտեխնիկայի, ժամացույցերի, կենցաղային այլ իրերի վերանորոգում,
- կահույքի վերանորոգում,
- ֆոտո և կինո նկարահանումների ծառայությունների մատուցում,
- ավտո և մոտո տրանսպորտային միջոցների վերանորոգում,
- ավտոտրանսպորտային միջոցներով բեռնափոխադրում,
- ավտոտրանսպորտային միջոցներով ուղևորափոխադրումներ,
- բնակարանների և այլ շինությունների վերանորոգում,
- մոնտաժային, էլեկտրամոնտաժային, սանիտարատեխնիկական և եռակցման աշխատանքների իրականացում,

- պատշգամբների ապակեպատման ծառայություններ,
- կրկնուսույցների ծառայություններ,
- ապակյա ամանեղենի և երկրորդային հումքի ընդունման ծառայություններ (բացառությամբ մետաղի ջարդոնի),
- անասնաբուժական ծառայություններ,
- վարձակալության ծառայություններ,
- ազգային ավանդական իրերի պատրաստում,
- գորգագործություն և գորգերի վերանորոգում,
- ոսկերչական իրերի և զարդերի վերանորոգում,
- ոսկերչական իրերի փորագրում,
- ձայնագրման և տեսագրման ծառայություններ,
- բնակարանների մաքրման ծառայություններ,
- բնակարանների ինտերյերի ձևավորում,
- սպորտային պարապմունքների անցկացում,
- բեռնակրի ծառայություններ,
- վճարովի սանհանգույցների ծառայություններ,
- խոհարարական ծառայություններ,
- ջրային տրանսպորտով ուղևորափոխադրումներ և բեռնափոխադրումներ,
- գյուղատնտեսական արտադրանքի իրացում,
- դեկորատիվ բուսաբուծություն,
- որսորդական տնտեսությունների կազմակերպում և որսորդություն,
- ֆիզիկական անձի կողմից բժշկական և դեղագործական ծառայությունների մատուցում՝ համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում,
- հետախուզական ծառայությունների մատուցում՝ համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում,
- վարձակալության ծառայություններ,
- էքսկուրսիոն ծառայություններ,
- ծիսակարգային ծառայություններ,
- պահակային ծառայություններ,
- մանրածախ առևտուր, որի իրականացման վայրի մակերեսը չի գերազանցում 50 ք.մ.-ը,

- հանրային սննդի ծառայություններ, որի մատուցման վայրի մակերեսը չի գերազանցում 50 ք.մ.-ը:

Արտոնագրային գործունեության իրականացման դեպքում հարկ վճարողն իրավունք ունի ներգրավել աշխատողներ, որոնց միջին ցուցակային թվաքանակը հաշվետու ժամանակահատվածում չպետք է գերազանցի 15-ը:

Օրենքով սահմանվում է տարեկան պոտենցիալ եկամտի չափը, որը չի կարող պակաս լինել 100 հազար ռուբլուց (900 հազար ՀՀ դրամ) և ավել՝ 1 մլն ռուբլուց (9 մլն ՀՀ դրամ):

Արտոնագիր կիրառող ԱՁ-ներն ազատվում են եկամտահարկի, գույքահարկի և ԱԱՀ-ի վճարումից:

Որպես հարկ վճարողներ հանդես են գալիս անհատ ձեռնարկատերերը, իսկ հարկման օբյեկտ է հանդիսանում կոնկրետ գործունեության տեսակների մասով օրենքով սահմանված պոտենցիալ տարեկան եկամուտը:

Հարկման դրույքաչափը սահմանվում է 6%:

Եթե արտոնագիրը ձեռք է բերվել 6 ամսով, հարկի ողջ գումարը վճարվում է արտոնագրի գործունեության մեջ մտնելուց հետո ոչ ուշ 25 օրացուցային օրվա ընթացքում: Իսկ 6 ամսից մինչև 1 տարի ժամանակահատվածով ձեռքբերված արտոնագրերի գումարի 1/3-ը վճարվում է արտոնագրի գործունեության մեջ մտնելուց հետո ոչ ուշ 25 օրացուցային օրվա ընթացքում, իսկ 2/3-ը՝ ոչ ուշ, քան արտոնագրի գործունեության դադարումից 30 օր առաջ:

Արտոնագրային գործունեության տեսակների մասով հարկային հաշվետվություններ չեն ներկայացվում:

ՀՀ-ում կիրառվում են ՓՄՁ ոլորտի հարկման հետևյալ համակարգերը՝

- շրջանառության հարկ,
- արտոնագրային վճարներ,
- հաստատագրված վճարներ:

ՀՀ-ում կիրառվող շրջանառության հարկը, ըստ էության համադրելի է ՌԴ-ում կիրառվող պարզեցված հարկի հետ: Սակայն ի տարբերություն ՌԴ-ի, որտեղ սահմանված է հաստատուն դրույքաչափ (6%), ՀՀ-ում կիրառվում է տարբերակված մոտեցում (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Շրջանառության հարկի դրույքաչափեր

Եկամուտների տեսակը	Դրույքաչափը
Առևտրական (առքովաճառքի) գործունեությունից եկամուտներ	1%
Արտադրական գործունեությունից եկամուտներ	3.5%
Վարձակալությունից եկամուտներ, տոկոսներ, ռոյալթիներ, ակտիվների (այդ թվում՝ անշարժ գույքի) օտարումից եկամուտներ	10%
Նոտարական գործունեությունից եկամուտներ	20%
Այլ գործունեության (եկամուտների) տեսակներից եկամուտներ	5%

Նշենք նաև, որ ՌԴ-ում մանրածախ առևտուրը, որի իրականացման վայրի մակերեսը չի գերազանցում 50 ք.մ.-ը, հարկվում է արտոնագրային վճարով՝ 6% հարկային դրույքաչափով: Կարծում ենք, որ ՀՀ-ում կիրառվող շրջանառության հարկի 1% հարկային դրույքաչափը առավել բարենպաստ է փոքր և միջին ձեռնարկությունների համար:

ՀՀ-ում արտոնագրային վճարով հարկվող գործունեության տեսակներն են՝

- հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունը.
- թեթև մարդաստար մեքենայով ուղևորափոխադրումը.
- վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեությունը.
- ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեությունը.
- ավտոկանգառների գործունեությունը.
- բիլիարդ խաղի կազմակերպումը.
- սեղանի թենիս խաղի կազմակերպումը.
- մետաղադրամով շահագործվող ավտոմատների միջոցով սննդի առևտրի կազմակերպման գործունեությունը.
- մետաղադրամով շահագործվող ավտոմատների միջոցով խաղերի կազմակերպման գործունեությունը (բացառությամբ շահումով խաղերի և խաղատների գործունեության).
- ատամնաբուժական և ատամնատեխնիկական գործունեությունը.
- անշարժ գույքի առքովաճառքի կամ վարձակալության միջոցով գործունեությունը:

Նշենք, որ ի տարբերություն ՌԴ-ում գործող կարգի, ՀՀ-ում ար-

տոնագրային վճարները կատարվում են արտոնագիրը ստանալիս, ինչը լրացուցիչ հարկային բեռ է հանդիսանում հարկ վճարողների համար: Հատկապես կարևորում ենք նորաստեղծ հարկ վճարողների համար նման վճարումների բացասական հետևանքները, քանի որ, վերջիններս, նախքան եկամուտ ստանալը, ստիպված են վճարումներ կատարել: Ուստի առաջարկում ենք կիրառել ՌԴ օրինակը՝ 6 ամսից մինչև 1 տարի ժամանակահատվածով ձեռքբերված արտոնագրերի գումարի 1/3-ը վճարել արտոնագրի գործունեության մեջ մտնելուց հետո ոչ ուշ 25 օրացուցային օրվա ընթացքում, իսկ 2/3-ը՝ ոչ ուշ, քան արտոնագրի գործունեության դադարումից 30 օր առաջ:

Կարծում ենք, որ Արտոնագրային վճարների մասին ՀՀ օրենքի և Հաստատագրված վճարների մասին ՀՀ օրենքի սկզբունքների նմանությունից ելնելով, նպատակահարմար կլինի սահմանել մեկ միասնական վճար՝ արտոնագրային վճար, ինչը կպարզեցնի հարկային օրենսդրությունը և կնպաստի Գործարարությամբ զբաղվելը զեկույցում ՀՀ դիրքերի բարելավմանը:

Բանալի քառեր. փոքր և միջին ձեռնարկություններ, հարկման ռեժիմներ, հաշվեգրված եկամուտներից միասնական հարկման համակարգ, հարկման պարզեցված համակարգ, հարկման արտոնագրային համակարգ, շրջանառության հարկ, արտոնագրային վճարներ:

Գրականություն

1. Налоговый кодекс РФ (НК РФ) часть 2 от 05.08.2000 N 117-ФЗ Արտոնագրային վճարների մասին ՀՀ օրենք, ՀՕ-209-Ն, 22.12.2010թ.
2. Շրջանառության հարկի մասին ՀՀ օրենք, ՀՕ-236-Ն, 19.12.2012թ.
3. Հաստատագրված վճարների մասին ՀՀ օրենք, ՀՕ-236, 07.07.1998թ.

НАЛОГОВЫЕ РЕЖИМЫ ДЛЯ МАЛЫХ И СРЕДНИХ ПРЕДПРИЯТИЙ В РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ

М.Р. Манвелян

Резюме

9 октября 2014 года был подписан договор об увеличении Евразийского экономического союза между руководством Беларуси,

Казахстана и России, согласно которому Армения вступила в Союз. Одним из главных целей Союза является гармонизация национального законодательства государств-членов Союза.

В статье рассматриваются специальные налоговые режимы для малых и средних предприятий в Российской Федерации, и сравниваются с налоговыми режимами Армении.

В статье мы предлагаем отложить патентные платежи и оплатить их частично в соответствии с налоговым законодательством Российской Федерации. Также предлагается упростить налоговое законодательство с помощью унификации действующих законов о патентных платежах и фиксированных платежах.

Ключевые слова: малые и средние предприятия, налоговые режимы, система налогообложения в виде единого налога на вмененный доход, упрощенная система налогообложения, патентная система налогообложения, налог с оборота, патентная плата.

TAX REGIMES OF SMALL AND MEDIUM SIZED ENTERPRISES IN RUSSIAN FEDERATION

M.R. Manvelyan

Summary

On 9 October 2014 a treaty to enlarge the Eurasian Economic Union was signed between the leaders of Belarus, Kazakhstan, and Russia, according which Armenia joined the Union. One of the main aims of the Union is to harmonize national legislation of the member states.

In the article we discuss the special tax regimes of small and medium sized enterprises in Russian Federation and compare them with those in Armenia.

We suggest to develop partially patent payment system according to tax laws of Russian Federation. It is also suggested to simplify tax laws by the unification of current laws of Patent payments and Fixed payments.

Key words: small and medium sized enterprises, tax regimes, tax system of single tax on imputed income, simplified tax system, patent tax system, turnover tax, patent payments.

**ԲԱՆԿԻ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔՆԵՐԻ
ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՊՐՈԴՌՈՒԿՏՆԵՐԻ
ԱՌԱՋԱՐԿՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ
ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ա.Հ. Սպեփանյան

Այսօր յուրաքանչյուր բանկի առաջ ծառայած է մրցակիցներից առանձնանալու, մի քանի քայլով նրանցից առաջ անցնելու և, հատկապես, գրաված դիրքերը ամրապնդելու խնդիրը: Այս խնդիրների լուծման առաջնահերթ քայլերից է հաճախորդների հետ սերտ համագործակցությունը, նրանց պահանջմունքների բացահայտումն ու դրանց բավարարմանն ուղղված պատշաճ և ժամանակին գործողությունների շղթայի ապահովումը:

Հաճախորդների հետ աշխատանքների համար մշակված գրագետ և ճիշտ ռազմավարությունը կպահպանի և կընդլայնի բանկի «ոսկե ֆոնդը»՝ հավատարիմ հաճախորդների բազան: «Հաճախորդների հետ հարաբերությունների կառավարումը բիզնես ռազմավարություն է՝ նպատակաուղղված եկամուտների ավելացմանը, շահույթի մեծացմանը և հաճախորդների բավարարմանը»,- այսպես է մեկնաբանում հաճախորդների հետ հարաբերությունների ճիշտ կառավարման կարևորությունը «Գարթներ Գրուպ» ընկերությունը [1]: Գրեթե բոլոր ոլորտներում, ինչպես նաև բանկային համակարգում այս կամ այն կերպով փորձեր են կատարվում հաճախորդների հետ հարատև հարաբերություններ կառուցելու ուղղությամբ: Սակայն, Հայաստանում գործող բանկերից շատերի կողմից հաճախորդները դիտվում են որպես եկամուտի պարզ աղբյուր, մինչդեռ կատարյալ տարբերակը կլիներ այն, որ նրանք դիտարկվեին հեռանկարային ներդրումների տեսանկյունից, որի համար և կիրառվում է Հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման (CRM) համակարգը: Այն ուղղված է բանկերի և հաճախորդների միջև փոխհարաբերությունների բոլոր ուղղությունների կառավարմանը, հաճախորդների հետ հարաբերությունների կայունացմանը և նոր հաճախորդների ներգրավմանը, որոնց հիմքում ընկած է նրանց պահանջմունքների բացահայտումը և համապատասխան բանկային պրոդուկտների և ծառայությունների առաջարկումը:

Բանկերը, և առհասարակ հաճախորդների համար մրցակցող բոլոր կազմակերպությունները, ուղղակիորեն կախված են հաճախորդների ընտրությունից, ուստի նրանք պետք է նախ և առաջ կարողանան գրավել հաճախորդի ուշադրությունն ու վստահությունը, և հետո հասկանան հաճախորդի այդ ոլորտում ունեցած «կարիքներն ու խնդիրները» և դրանց համապատասխան մշակեն հնարավորինս ամբողջական սպասարկող պրոդուկտ և/կամ ծառայություն կամ դրանց համակցությունը, այլ կերպ ասած հաճախորդին առաջարկեն ամբողջական փաթեթ: Մասնակի, ոչ ամբողջական սպասարկվող հաճախորդը միշտ ունի լոյալության ցածր մակարդակ, և միշտ բարձր է նրա հեռանալու ռիսկը, ուստի անհրաժեշտ է բացահայտել յուրաքանչյուր հաճախորդի՝ բանկային ոլորտում առկա բոլոր պահանջմունքները և առաջարկել դրանց բավարարմանն ուղղված պրոդուկտների և/կամ ծառայությունների փաթեթներ՝ հաշվի առնելով պահանջմունքներում պրոդուկտների/ծառայությունների կամ դրանց գործոնների գերակայության հաջորդականությունը: Հաճախորդին ներգրավելու կամ նրան պահելու համար անհրաժեշտ է նաև հասկանալ յուրաքանչյուր պահանջմունքի կարևորության աստիճանը՝ տվյալ պահին կամ որոշակի ժամանակահատվածում:

Պահանջմունքները լիարժեք բացահայտելու համար անհրաժեշտ է դիտարկել հաճախորդի բոլոր տեսակի պահանջմունքները՝

- **Արտահայտված:** Արտահայտված պահանջմունքների բացահայտման գործընթացը և մեթոդները ավելի պարզ և մակերեսային են, քանի որ հաճախորդը ինքն արդեն վերլուծել և վերջնական հասկացել է՝ ինչ է անհրաժեշտ իրեն, և նա պարզապես բարձրաձայնում է դրա մասին: Այս դեպքում կարևորը դրանց գրանցումն ու հետագա մշակումն է:

- **Չարտահայտված:** Այս տիպի պահանջմունքները, ի տարբերություն նախորդ տիպի, հաճախորդների կողմից բացահայտվում են, սակայն նրանք չեն բարձրաձայնում դրանց մասին, համարելով դրանք չբավարարվող կամ բանկերի կողմից անուշադրության արժանացող: Հաճախորդների մոտ կարող են արտահայտվել ուղղակի որպես անհարմարության վերացում, բայց հաճախորդները հենց իրենք չեն կարողանում հստակ ասել, թե ինչն է անհարմարության պատճառը, որը պահաջում է հատուկ մասնագիտացված վերլուծություն:

- **Լափենյր:** Լատենտ պահանջմունքների բացահայտման նպատակով անհրաժեշտ է իրականացնել հաճախորդների խորը հոգեբանական վերլուծություն՝ անձնական տեղեկատվության հետ համադրմամբ: Լատենտ պահանջմունքները սովորաբար հիմնված են հաճախորդի արժեքային համակարգի և փորձի վրա ձևավորված կարծրատիպերի վրա: Մասնավորապես, բանկի ինտերիերի մասին հաճախորդների պատկերացումները կարող են կապված լինել սրահի մաքրության, ինտերիերի ճոխության, աշխատակիցների կեցվածքի, վերաբերմունքի և այլնի հետ: Նմանապես, ինտերիերից ստացված նախնական տպավորությունները ձևավորում են տվյալ բանկի մասին նախնական սպասումներ՝ կապված սպասարկման որակի, բանկի կարողությունների և վստահելիության աստիճանի և այլնի հետ: Լատենտ պահանջմունքների բացահայտումը իրականացվում է կոնկրետ հաճախորդի հետ հոգեբանական հարցումների միջոցով, որոնք իրականացվում են հատուկ մասնագետների կողմից: Այս տիպի հետազոտությունները բավականին թանկ են, և հիմնականում կրում են փոքրածավալ բնույթ՝ յուրաքանչյուր խմբի հաճախորդներից մի քանիսի քննությամբ:

Շատ կարևոր է բանկի հետևողականությունը հաճախորդի արտահայտված պահանջմունքների բացահայտման և դրանց բավարարման գործընթացում: Այլ կերպ ասած, այդ փուլում հետևողականություն չդրսևորած բանկը և/կամ ծառայություն մատուցող մեկ այլ հաստատություն միանշանակ կձախողի իրականացնել *չարտահայտված* կամ *լափենյր* պահանջմունքների բացահայտման և բավարարման գործընթացը, որովհետև դրանք պահանջում են ավելի խորքային ուսումնասիրություն և մասնագիտացված մոտեցում:

Շահութաբեր հաճախորդների ընտրության հարցում բանկերն արձանագրել են բավարար առաջընթաց: Սակայն նրանց կողմից բաց են թողնվում մարքեթինգային շղթայի որոշ օղակներ: Հաճախորդի մասին ամբողջական պատկերացում ունենալու համար պետք է հաշվի առնել ոչ միայն նրա անցյալը, այլ նաև ապագայի հետ կապված նրա մտադրությունները: Նման բացահայտումներ անելու ուղի կարող է հանդիսանալ հաճախորդների դասակարգումը ըստ տիպերի՝ կախված նրանց պահանջմունքներից, ծախսերի կազմից և կառուցվածքից, գործունեության ոլորտից, շրջանառության ծավալներից և այլ գործոն-

ներից: Նման դասակարգումը հնարավորություն է տալիս ուսումնասիրելու առանձին տիպերի առանձնահատկությունները, նրանց պահանջմունքների յուրահատկությունները բանկային պրոդուկտների նկատմամբ, և յուրաքանչյուր տիպի համար մշակել և առաջարկել նրանց պահանջմունքներին համապատասխան բանկային պրոդուկտներ և ծառայություններ: Հաճախորդների նման դասակարգումը անհրաժեշտ է նաև մարքեթինգային մյուս գործիքների կիրառման համար:

Առաջին հայացքից հաճախորդների ըստ տիպերի բաժանման և գնահատականի CRM մեթոդների և մարքեթինգային միջոցառումների միջև կապը կարող է թվալ միջնորդավորված: Սակայն, եթե բանկի հետգործառնական գրասենյակի աշխատակիցները բավականաչափ մասնագիտացված են, ապա նրանք ցանկացած պահի կարող են վերականգնել այս կամ այն հաճախորդի բանկային հաշվի պատմությունը՝ ծախսերի ընդհանուր վերլուծություն կատարելու նպատակով: Ամեն դեպքում, այն բանկերը, որոնք ունեն հաճախորդների արդյունավետ բազա, բաժանել են հաճախորդներին թիրախային խմբերի, ուսումնասիրել և բացահայտել են նրանց ֆինանսական պահանջմունքները, հաշվել են գործառնական ծախսերը և մշակել համապատասխան պրոդուկտներ, այլ կերպ ասած, կիրառում են կամ CRM համակարգը կամ ավելի մոտ են կանգնած վերջինիս: Շատ բանկեր սկսում են CRM համակարգի ներդրման աշխատանքները՝ չունենալով ճշգրիտ տվյալներ այն մասին, թե ինչքան եկամուտ է բերում բանկին այս կամ այն հաճախորդը: Հաճախ բանկերի կողմից մշակված պրոդուկտները լայն սպառում կամ եկամտաբերություն չեն ապահովում զուտ այն պատճառով, օրինակ՝ որ դրանք առաջարկվում են մասսայական և ոչ նպատակային ուղղված կոնկրետ թիրախային խմբերին, կամ մշակվել են ոչ ամբողջական և/կամ մասնակի են բավարարում հաճախորդի ֆինանսական պահանջմունքները և այլն, որի արդյունքում բանկի կողմից ծախսված ռեսուրսները տվյալ պրոդուկտի ստեղծման համար համարվում են անարդյունավետ, իսկ հաճախորդի մոտ նվազում է հետաքրքրությունն ու կապվածությունը տվյալ բանկի նկատմամբ, որն առաջարկել էր այնպիսի պրոդուկտ կամ ծառայություն, որ չի համապատասխանում իր պահանջմունքներին և/կամ ակնկալիքներին:

Բանկային համակարգի կայացման նախնական փուլում բանկ-հաճախորդ հարաբերությունների կարևորությունը կարելի էր համարել երկրորդական, քանի որ կային կոնկրետ ֆինանսական հաստատություններ/բանկեր, որոնց վարկավորումը ավելի բարդ և բյուրոկրատական գործընթաց էր, պայմանավորված շուկայում տիրող ֆինանսատնտեսական անկայունության հետ, և կային վարկավորման կարիք ունեցող կազմակերպություններ և ֆիզիկական անձինք, որոնք պատրաստ էին համալրել ցանկացած բանկի հաճախորդների բազան, որտեղ նրանց ֆինանսական պահանջմունքները կբավարարվեին: Սակայն զարգացման գործընթացում իրենց դերակատարությունն ունեցան նաև միջազգային բանկային փորձը Հայաստան ներմուծող բանկերը, որոնք լայն կիրառում ունեցող պրոդուկտներից և ծառայություններից բացի ներկայացրեցին նաև սպասարկման պատշաճ որակ և հաճախորդ-բանկ երկարաժամկետ հարաբերությունների արժևորում: Հետագայում սպասարկման որակն ու հաճախորդների կարիքներին ժամանակին արձագանքելը դարձան կարևոր չափորոշիչներ շուկայում առաջատար դիրքերի վերաբաշխման համար, այսինքն՝ հաճախորդների ակտիվ արտահոսք և ներհոսք:

Հաճախորդների հետ հարաբերություններում բանկի հիմնական նպատակը դարձավ պահանջմունքների բավարարումը, ուստի բանկը կարող խոսել CRM համակարգի ամբողջական ներդրման մասին, եթե հաճախորդների հետ աշխատող բոլոր աշխատակիցներին հասանելի է լիարժեք տեղեկատվություն յուրաքանչյուր հաճախորդի վերաբերյալ. դա աշխատակիցներին հաճախորդներին ճիշտ առաջարկներ կատարելու, ինչպես նաև նրանց հետ առաջացած և առաջացող խնդիրների լուծման հանարավորություն է տալիս: Այլ կերպ ասած, ավտոմեքենայի վարկ չի առաջարկվում այն հաճախորդին, որը իր սեփական միջոցներով արդեն իսկ գնել է բավականին շքեղ ավտոմեքենա:

Փորձը ցույց է տալիս, որ հաճախորդների մեծամասնությունը ցանկանում է, որ բանկի աշխատակիցները տեղեկացված լինեն իրենց գործունեության մասին, որպեսզի խնդիրների առաջացման պարագայում հեշտ և արագ լուծումներ տրվեն բանկի յուրաքանչյուր աշխատակցի կողմից: Բացի դրանից նրանց համար կարևոր է, որ բանկային պրոդուկտների/ծառայությունների վերաբերյալ իրենց ներկա-

յացված առաջարկները լինեն պրոֆեսիոնալ կերպով կազմված, ինչը հաճախորդի համար նշանակում է իր պահանջմունքների վրա հիմնված առաջարկ, որն արտահայտված է անհատական մոտեցմամբ, և մասսայական առաջարկի բնույթ չի կրում: Յուրաքանչյուր հաճախորդ նախընտրում է լավ սպասարկում և անհատական մոտեցում:

Համաձայն TQM/Total Quality management/ սկզբունքի շատ կարևոր է ամբողջովին պատկերացնել սպառողական ամբողջ շղթան, իսկ դա նշանակում է, որ անհրաժեշտ է ճանաչել բոլոր խմբերի հաճախորդներին, ինչպես նաև յուրաքանչյուր հնարավոր դեպքում փորձել ճանաչել նաև յուրաքանչյուր հաճախորդին առանձին, իսկ հաճախորդների շրջանակը պետք է ներառի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հաճախորդներին [2]:

Սովորաբար պահանջմունքներին ՀՀ-ում անդրադառնում են միայն որոշակի քանակի հաճախողների մոտ դրանց ի հայտ գալու կամ ակնհայտ դառնալու պարագայում: Եթե բացահայտված պահանջմունքը ունեցող հաճախորդների թիվը փոքր է, ապա այն հնարավորինս թողնում են հետագա մշակման՝ մինչև շուկան ինքը հասունանա այդ պահանջմունքը գիտակցելու համար, այնինչ այսօր արևմուտքը անցել է «Կապույտ օվկիանոսի» ռազմավարությանը [3]: «Կապույտ օվկիանոսի» ռազմավարության տեսության համաձայն այսօր մրցակցային շուկաներում պայքարը բավականին թեժ է, և շուկայի մասնակիցները կանգ չեն առնում ոչ մի միջոցի առաջ՝ առաջնորդվելով «պատերազմում բոլոր միջոցները արդարացված են և հաղթողներին չեն դատապարտում» սկզբունքներով, և դա ավելի շուտ հիշեցնում է անողոր ինչ-որ պատերազմ, որի կանոնները մրցակցության աճին զուգընթաց ավելի դաժան են դառնում: Այս շուկաները անվանվում են «կարմիր օվկիանոս» համարելով այն «հեղեղված արյամբ»:

ՀՀ բանկային համակարգում «կապույտ օվկիանոսի» սկզբունքի կիրառումը բավականին հեշտ է՝ պայմանավորված շուկայի թույլ զարգացվածությամբ և միջազգային շուկայում տարածված բազմաթիվ գործիքերի բացակայությամբ, չնայած, որ միևնույն ժամանակ շուկայի թույլ զարգացվածությունը թույլ չի տալիս որոշ գործիքների, անգամ ուլորտի, մասնավորապես արժեթղթերի շուկայի, կիրառումը: Բայց ամեն դեպքում շուկայի ձևավորման հարցը մնում է ամբողջովին կամ մասնակիորեն բաց բոլոր բանկերի համար: Կորպորատիվ հաճա-

խորդների խորհրդատվությամբ բանկերը մասնակիորեն կարողանում են «կրթել» հաճախորդին և ունենալ արդեն իսկ բանիմաց գործընկեր, իսկ ահա ՓՄՁ, Միկրո և անհատ հաճախորդների դեպքում «հաճախորդի կրթության» հարցը ամբողջովին բաց է: Դիտարկելով բանկային պրոդուկտների և/կամ ծառայությունների ոլորտը ՀՀ-ում ակնհայտ է դառնում բնակչության ֆինանսական կրթվածության ցածր մակարդակը, որի հիման վրա հաճախ հաճախորդի մոտ ձևավորվում են սխալ սպասումներ, որոնք բերում են արտահայտված կամ չարտահայտված դժգոհությունների կամ բողոքների՝ անդրադառնալով համապատասխան բանկի համբավի և, հետևաբար, և բրենդի արժեքի վրա: Նման խնդիրներ ունեն հայաստանյան մի շարք բանկեր՝ անգամ բրենդի մասին ամենաշատ հոգացող բանկերը: Մասնավորապես, բանկերը կամ վարկային կազմակերպությունները կարող են խնդիրներ ունենալ կապված տրամադրված գյուղացիական վարկերի հետ: Գյուղացիական վարկերից օգտված վարկառուները վարկի ոչ արդյունավետ տնօրինման կամ եղանակային անհաջողություններով պայմանավորված անարդյունավետ արդյունքների պատճառով չեն կարողանում իրականացնել իրենց վարկային պարտավորությունները, ինչի հետևանքով նրանց վարկերը դասակարգվում են որպես ժամկետանց, ապա խնդրահարույց, հետագայում իրականացվում է գույքի բռնագանձում և վաճառք, որից ստացված հասույթը ուղղվում է վարկի և տոկոսագումարների մարմանը: Արդյունքում հաճախորդը զրկվում է իր գույքից կամ գույքի առգրավման կամ բռնագանձման դեպքում դիմում է տարբեր ատյանների աջակցության համար՝ հաճախ օգտագործելով նաև ԶԼՄ-ների միջոցով բանկի համբավի վրա ազդելու լծակը: Յուրաքանչյուր բանկի համար շատ կարևոր է ունենալ ֆինանսական գործիքներից ճիշտ օգտվող «կիրթ» հաճախորդ, որը ոչ միայն օգտվում է տվյալ բանկի կողմից առաջարկվող պրոդուկտներից և ծառայություններից այլ նաև զուգահեռաբար ստիպում է բանկին պարբերաբար վերանայել առաջարկներն ու ավելի կատարելագործել դրանք:

Բանկային ոլորտում փորձը ցույց է տալիս, որ հաճախորդների պահանջմունքները ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական պետք է հավասարապես ուսումնասիրվեն և դիտարկվեն յուրաքանչյուր պրոդուկտի կամ ծառայության մշակման և հաճախորդներին առաջարկելու դեպքում:

Շատ հաճախ պրոդուկտ կամ ծառայություն առաջարկելու դեպքում աշխատակիցները հաճախորդների պահանջմունքներին համապատասխան պրոդուկտների առաջարկը կատարում են որպես պրոդուկտի կամ ծառայության պրեզենտացիա, արդյունքում հաճախորդները հիմնականում հրաժարվում են նմանատիպ «առաջարկներից», իսկ համաձայնելու դեպքում՝ պահանջմունքների լիարժեք բավարարում չի լինում: Պրեզենտացիայի ժամանակ բանկի աշխատակիցը հաճախորդին ներկայացնում է իր բանկը, պատմում նրա մասին, պատմում ապրանքի մասին, նրա յուրահատկությունների և առավելությունների մասին, սակայն այս դեպքում պրոդուկտի վաճառք տեղի չի ունենում: Վաճառքը մենախոսություն չէ, այլ երկխոսություն է: Առաջարկը ճիշտ ներկայացնելու համար անհրաժեշտ է երկխոսությունը սկսել հարցերով: Դա հնարավորություն է տալիս բացահայտել հաճախորդների պահանջմունքները և առաջարկել համապատասխան պրոդուկտներ կամ ծառայություններ:

Այժմ կետերով ներկայացնենք, թե սովորաբար ինչպես են բանկերի աշխատակիցները հաճախորդներին առաջարկներ ներկայացնում.

1. Նախնական կոնտակտ հաճախորդի հետ
2. Ապրանքի կամ ծառայության ներկայացում
3. Փաստարկներ ասվածի վերաբերյալ
4. Բազմաթիվ հարցեր և առարկություններ հաճախորդի կողմից:
Սա, սակայն, սխալ տարբերակ է:
Պետք է լինի.

1. Նախնական էմոցիոնալ կոնտակտ հաճախորդի հետ
2. Հարցումների միջոցով հաճախորդի պահանջմունքների, սպասելիքների ու ակնկալիքների բացահայտում
3. Ապրանքի կամ ծառայության ներկայացում՝ օգտագործելով հաճախորդի օգտագործած բառերն ու բառակապակցությունները

4. Փաստարկներ և հաճախորդի հարցերի պատասխաններ:

Մեր կարծիքով հաճախորդներին ներգրավելու և առաջարկներ ներկայացնելու այս տարբերակը ավելի արդյունավետ է: Իհարկե, այս դեպքում ևս լինում են հարցեր և առարկություններ հաճախորդների կողմից, սակայն անհամեմատելիորեն ավելի քիչ:

Բանալի բաներ. Հաճախորդների հետ հարաբերությունների կառավարում, պահանջմունքներ, հաճախորդների դասակարգում, սպասարկման որակ, «կապույտ օվկիանոսի» սկզբունք, մրցակցություն, բանկային համակարգ, ներգրավում:

Գրականություն

1. Gartner. Customer Relationship Management, <http://www.gartner.com/technology/core/products/research/topics/customerRelationshipManagement.jsp> (վերջին մուտքը՝ 20.06.2012թ.)
2. Общее управление качеством: личностные и организационные изменения: Рамперсад Хьюберт К., Олимп-Бизнес, 2009
3. Blue ocean strategy; W. Chan Kim, Renee Mauborgne; Harvard Businss School Press; 2005; Chapter 1-3 in short.

ВЫЯВЛЕНИЕ ПОТРЕБНОСТЕЙ КЛИЕНТОВ БАНКА И ПРЕДЛОЖЕНИЕ СООТВЕТСТВУЮЩИХ ПРОДУКТОВ КАК МЕТОД УДОВЛЕТВОРЕНИЯ ИХ ПОТРЕБНОСТЕЙ

А. Г. Степанян

Резюме

В армянских банковских кругах постепенно зреет понимание того, что от внедрения принципов работы с клиентами, которыми давно уже пользуются западные финансисты, получая в результате дополнительные конкурентные преимущества, им также не уйти. Принципы эти - обработка и автоматизация бизнес-процессов, направленных на привлечение и удержание наиболее выгодных клиентов; персонализация взаимоотношений с клиентами, позволяющая минимизировать операционные, административные и другие расходы на работу с ними. А помогают реализовать эти принципы CRM-системы (Customer Relationship Management) - программные продукты для автоматизации и повышения эффективности процессов взаимодействия с клиентами.

Основные термины. Потребности, управление взаимоотношениями с клиентами, классификация клиентов, качество обслуживания, принцип "голубой океан", конкуренция, в привлечение банковская система.

UNDERSTANDING BANK'S CUSTOMER NEEDS AND OFFERING PRODUCTS AS A METHOD OF THEIR SATISFACTION

A.H. Stepanyan

Summary

Traditionally, few people changed their banks unless serious problems occurred. In the past there was, to certain extent, a committed, often inherited relationship between a customer and his/her bank. The philosophy, culture and organization of financial institutions were grounded in this assumption and reflected in their marketing policies, which were product and transaction-oriented, reactionary, focused on discrete rather than continuous activities. Customer Relationship Management is the establishment, development, maintenance and optimization of long-term mutually valuable relationships between consumers and the organizations. Successful customer relationship management focuses on understanding the needs and desires of the customers and is achieved by placing these needs at the heart of the business by integrating them with the organization's strategy, people, technology and business processes.

Key words: Customer relationship management, needs, classification of customers, service quality, "blue ocean" principle, competition, banking system, involvement.

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

S.U. Բաղդասարյան

Առևտրային կազմակերպության գործունեության տնտեսական արդյունավետության, մրցակցային առավելությունների ու զարգացման հնարավորությունների կարևորագույն բնութագրիչ է նրա ֆինանսական դրությունը, որի անընդհատ բարելավումը հաճախ ամրագրվում է որպես հաստատության ռազմավարական նպատակ: Այդ նպատակի իրացման գործում զգալի դերակատարում ունի կազմակերպության ֆինանսական կառավարման մեխանիզմների, մասնավորապես՝ դրամական միջոցների կառավարման արդյունավետ գործիքակազմի ձևավորումն ու կատարելագործումը¹:

Կառավարել առևտրային կազմակերպության դրամական միջոցները գործնականում՝ նշանակում է ձեռք բերել և պահպանել իրացվելության այնպիսի մակարդակ, որը կառավարման ուրույն գործիքների նպատակային կիրառության միջոցով կապահովի նրա գործունեության շարունակականությունն ու արդյունքների բարելավումը: Իրացվելիությունը, որպես ֆինանսական դրության արտապատկեր, ներկայացնում է կազմակերպության դրամական միջոցների որոշակի մակարդակ, որը ձևավորվում է դրամական միջոցների մուտքերի ու ելքերի հաշվեկշռման արդյունքում:

Ինչպես վկայում են կատարված ուսումնասիրությունները, շատ կազմակերպություններ, տիրապետելով դրամական միջոցների կառավարման բավականին աղքատիկ գործիքակազմի, դրանով իսկ բավարար ուշադրություն չեն հատկացնում հենց հաստատության իրացվելության կառավարմանը. ի հետևանք՝ նրանց առջև ծառանում է ֆինանսական ակտիվների սահմանափակության (անբավարարության) դժվարին խնդիրը: Խոսքը վերաբերում է հատկապես փոքր, ինչպես նաև՝ միջին ձեռնարկություններին, որոնք, եթե չձևավորեն իրացվելության կառավարման բավականաչափ արդյունավետ լծակներ, համա-

¹ ՀՀ Հաշվապահական Հաշվառման Ստանդարտներ

պատասխան վճարումների չստացման և ընթացիկ եկամուտների կորստյան հետևանքով շատ արագ կծախողվեն²:

Ձեռնարկության դրամական միջոցների շրջանառությունը վճարվելիք և ստացվելիք հաշիվների սպասարկման մեխանիզմների ամբողջությունն է, որոնց անխափանության ապահովման նպատակով որոշակի ժամանակամիջոցի համար կպահանջվի որոշակի ծավալի անձեռնմխելի միջոցների, ասել է թե՛ չգործող կապիտալի, առկայություն: Հետևաբար, ձեռնարկության դրամական միջոցների կառավարման կարևոր նպատակներից է հաշիվների վճարման և գումարի ստացման գործընթացների արագացումը, որը կնպաստի ոչ միայն նրա իրացվելիության մակարդակի բարձրացմանը, այլև՝ տվյալ ժամանակատվածի համար տնօրինելի գործող կապիտալի ծավալների մեծացմանը: Վերջինիս մեծությունը հաշվարկվում է ընթացիկ ակտիվներից հանելով կարճաժամկետ պարտավորությունները:

Կազմակերպության դրամական միջոցների շրջանառության ժամկետը հաշվարկվում է հետևյալ բանաձևով³.

$$ԴՄՇԺ = \text{ՊՕ} - \text{ՍՀՍՕ} - \text{ՎՀՍՕ},$$

որտեղ՝

ԴՄՇԺ-ը դրամական միջոցների շրջանառության ժամանակամիջոցն է,

ՊՕ-ն՝ պահուստավորման օրերի թիվը,

ՍՀՍՕ-ն՝ ստացվելիք հաշիվների սպասարկման օրերի թիվը,

ՎՀՍՕ-ն վճարվելիք հաշիվների սպասարկման օրերի թիվը:

Ստացվելիք և վճարվելիք հաշիվների կառավարման արդյունավետությունն իր արտացոլումն է գտնում հենց չգործող կապիտալի ծավալների նվազեցման մեջ: Վերջինս նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է մշտապես ուշադրության կենտրոնում պահել ձեռնարկության հաճախորդներից ստացված պատվերների և նրանցից ստացվող վճարումների միջև ընկած ժամանակահատվածի կրճատման խնդիրը և համապատասխան լծակներ ստեղծել դրա լուծման համար: Այս դեպքում միայն հնարավոր կլինի մեծացնել ձեռնարկության դրամական միջոցների հավաքագրման արագությունը և այդպիսով բարձրացնել դրամական հոսքերի կառավարման արդյունավետությունը:

² (Denver, 2005)

³ (Randall & Farris, 2009)

Մյուս կողմից՝ դրամական հոսքերի կառավարման ոչ բավականաչափ արդյունավետ մեխանիզմներն ու մեթոդները կարող են զգալիորեն վատթարացնել կազմակերպության ֆինանսատնտեսական վիճակը, օրինակ՝ առաջ բերել տոկոսային եկամուտների կորուստ կամ վաճառքների ու վճարումների միջև ընկած ժամանակահատվածի երկարաձգում: Ընդհանրապես, անկախ կոնկրետ պատճառից ու դրսևորումից, ուշացած վճարումները միշտ էլ պարունակում են չհիմնավորված լրացուցիչ պարտավորությունների ստանձնման ռիսկեր:

Առևտրային կազմակերպության դրամական հոսքերի կառավարման արդյունավետության աճն իր դրսևորումն է գտնում դրանց շրջանառության արագացման, այսինքն՝ պտուտաժամանակի կրճատման և դրամական միջոցներով ապահովվածության համեմատաբար ավելի բարձր մակարդակի մեջ: Սա նշանակում է, որ, այլ հավասար պայմաններում, որքան ավելի փոքր է կազմակերպության դրամական հոսքերի պտուտաժամանակը, այնքան ավելի բարձր է նրա իրացվելիության աստիճանը:

Այսպիսով, ձեռնարկության դրամական հոսքերի պատշաճ կառավարումը ենթադրում է պատվերների, ստացվելիք և վճարվելիք հաշիվների, վճարման ժամկետների իրատեսական պլանավորում և վերահսկողություն, դրանց կարգավորման ուղղակի և անուղղակի մեթոդների լայնածավալ կիրառություն: Այդ պարագայում կազմակերպությունը հնարավորություն կունենա կրճատել անձեռնմխելի կապիտալի ծավալը և, սոսկ այդ ցուցանիշի բարելավման շնորհիվ, աշխատել ավելի արագ, ավելի ճկուն, վերջին հաշվով՝ ավելի արդյունավետ: Նշված խնդրի լուծումը լայն առումով առնչվում է կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության գրեթե բոլոր ուղղությունների հետ: Նեղ առումով՝ զուտ դրամական միջոցների շարժի արագացման դիտակետից, կարելի է առանձնացնել կազմակերպության դրամական հոսքերի կառավարման և վերահսկողության գործընթացներում կիրառվող մի քանի հիմնական վերլուծական գործիքներ, որոնց կոնկրետ դերն ու նշանակությունը ներկայացված են ստորև:

Ստացվելիք հաշիվների գրանցամատյանը կազմակերպության հաշվապահական հաշվառման ստորաբաժանման գործառույթների իրականացման կարևորագույն հիմքերից է: Այն իրենից ներկայացնում է հաշիվների մանրամասնեցված քարտեզ, որի հիմնական կիրառա-

կան նշանակությունը չմարված դեբիտորական պարտքերի վերաբերյալ մանրակրկիտ տեղեկությունների տրամադրումն է⁴:

Ստացվելիք հաշիվների գրանցամատյանի ժամանակակից տարբերակը՝ էլեկտրոնային գրանցամատյանը, որն ըստ էության իրենից ներկայացնում է յուրատեսակ համակարգչային ծրագիր, լայն հնարավորություններ է ընձեռում ձեռնարկության դրամական միջոցների կառավարման տեղեկատվական համակարգերի ներդրման և օգտագործման համար: Համակարգչային ծրագրերը մշակում, կորդինացնում, ամփոփում են բազմաթիվ տեղեկություններ և հաշվետվություններ համապատասխան գործընթացների ու ֆինանսահաշվարկային գործարքների վերաբերյալ: Էլեկտրոնային գրանցամատյանը, փաստորեն, ոչ միայն դյուրինացնում է հաճախողների սպասարկման գործընթացը, այլև՝ նրանց անհատապես կառավարելու հնարավորություններ է ստեղծում:

Կառավարման այդօրինակ համակարգի առաջնային խնդիրն է՝ պարզել, թե հաճախորդներին ներկայացվող հաշիվներն արդյո՞ք ճշտորեն համապատասխանում են նրանց կողմից կատարվող կամ կատարվելիք վճարումների մեծությանը: Գործընթացի հստակությունն ու ճշգրտությունն ապահովվում է ինվոյս թվանիշի կիրառման շնորհիվ, որը սովորաբար չի գերազանցում վեցանիշ թիվը՝ ավելացրած վերահսկման համարը: Գործընթացի ոխակային իրավիճակները նվազագույնի հասցնելու նպատակով անհրաժեշտ է հնարավորինս կրճատել վճարման հաշվառման ժամանակահատվածը, մասնավորապես՝ կարևորելով այն հանգամանքը, թե արդյո՞ք հաշիվն ուղարկվել է համացանցի միջոցով վճարում կատարող համապատասխան գնորդներին:

Խնդրի արդյունավետ լուծման նպատակով հարկ կլինի նաև մշակել և գործարկել ժամկետանց վճարումների տոկոսադրույքների հաշվառման և գրանցամատյանում համապատասխան գրառումների կատարման ավտոմատացված ծրագրեր: Այդպիսի ծրագրերը հնարավոր են դարձնում վճարումների իրականացման համակարգում պահանջվող ժամկետում ավտոմատ կերպով հաճախողների նախազգուշացումը, վճարման պահանջների ներկայացումը, վճարումների ուշաց-

⁴ (Kirkby, 1993)

ման կամ հետաձգման դեպքերում լրացուցիչ պարտավորությունների առաջաջումը և այլն:

Դեբիտորական պարտքերի վերլուծություն. գոյություն ունեն բազմաթիվ համաթվեր, գործակիցներ, նորմատիվներ, որոնց օգտագործմամբ կարող են վերլուծվել, գնահատվել և վերահսկվել դեբիտորական պարտքերը: Օրինակ, լայնորեն կիրառվում է ստացվելիք հաշիվների օրերի քանակի ցուցանիշը, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով⁵. (Դեբիտորական պարտքեր/Զուտ վաճառք)*365 = Ստացվելիք հաշիվների օրեր:

Համանմանորեն, համապատասխան ժամանակահատվածի համար հնարավոր և անհրաժեշտ է հաշվարկել նաև մի շարք այլ կարևոր գործակիցներ, ինչպիսիք են՝

- հաճախորդների տարբեր խմբերի համար առկա պարտավորությունների օրերի միջին տևողությունը,
- հաճախորդների տարբեր խմբերից ստացվելիք ժամկետանց հաշիվները,
- ապրանքների առաքման (ծառայությունների մատուցման) և դրանց դիմաց վճարումների հաշվարկման միջև առկա օրերի միջին տևողությունը,
- վերագզույցված վճարումների քանակը,
- տոկոսադրույքը, որը ենթակա է գանձման որպես տույժ
- և այլն:

Վճարման ժամկետները շատ կարևոր նշանակություն ունեն անձեռնմխելի կապիտալի մեծության սահմանման հարցում: Ինչպես հայտնի է, բազմաթիվ դեպքերում կազմակերպության հաճախորդներն ուշացնում են վճարումները, ինչը բացասական ազդեցություն է ունենում նրա ֆինանսատնտեսական վիճակի և, հետևաբար, գործունեության ընդհանուր արդյունավետության վրա: Հատկապես փոքր ձեռնարկություններում վճարումների ուշացման խնդիրը մղվում է առաջին պլան, քանի որ նրանք էապես ավելի խոցելի են բիզնեսի ծախողման ռիսկերի ծագման առումով: Այդպիսի ռիսկերից խուսափելու նկատառումով, կազմակերպությունը, բնականաբար, ձգտում է հնա-

⁵ (Randall & Farris, 2009)

րավորինս սեղմ ժամկետում գանձել ստանալիք հաշիվները, հատկապես՝ կանխիկով կատարվող վճարումների պարագայում⁶:

Գոյություն ունեն մի շարք գործոններ, որոնց պատճառով հաճախորդն ուշացնում է հաշիվների վճարումները կամ խուսափում վճարում կատարելուց: Դրանցից կարելի է առանձնացնել առավել ընդհանրական բնույթի հետևյալ գործոնները.

- համապատասխան հաճախորդների համար չեն հաշվարկվել տույժերի տոկոսադրույքները, հետևաբար և՛ դրանք չեն կարող գանձվել,
- համապատասխան հաճախորդներին ժամանակին չեն ծանուցվել կամ զգուշացվել վճարում կատարելու վերաբերյալ,
- բավականաչափ երկարատև ու ձգձգված են հաշիվների հատուկացման գործընթացները:

Անկախ պատճառից՝ գործունեության արդյունավետությունը չնվազեցնելու համար կազմակերպությունը պարտավոր է միջոցառումների համակարգ մշակել խնդրի լուծման նպատակով:

Հայաստանում սակավաթիվ ձեռնարկություններ են բավարար չափով ուշադրության կենտրոնում պահում վերոնշյալ խնդիրը: Այս առումով չափազանց ուսանելի և օգտակար կարող է լինել եվրոպական երկրներում առկա փորձի ուսումնասիրությունը և կիրառումը՝ տեղային առանձնահատկությունների հաշվառմամբ:

Օրինակ՝ Շվեդիայում գործունեություն իրականացնող կազմակերպությունների համար սահմանված է վճարման ժամկետ մինչև 30 օրվա սահմաններում: Այդ երկրում շրջանառվող ապրանքագրերում սովորաբար տեղ է գտնում ներքոհիշյալ վճարային ռեժիմներից որևէ մեկը⁷.

- վճարում կանխիկով,
- 30 օրվա հասունացում,
- տասնօրյա ժամկետում վճարման դեպքում՝ վճարման ենթակա գումարի նվազեցում 2%-ով:

Երբ կազմակերպությունն օգտագործում է 2%-անոց զեղչային տարբերակը, ապա հաճախորդն, իհարկե հնարավորություն է ստանում կատարել նշյալ չափով տնտեսում, իսկ կազմակերպությունն այդ

⁶ (Wilson, 2008)

⁷ (Larsson & Hammarlund, 2004)

նույն չափով կորուստ է ունենում: Այդ պատճառով նմանօրինակ զեղչային համակարգերը լայն կիրառություն չունեն:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ զեղչային համակարգն զգալիորեն արագացնում է կանխիկի հավաքագրման գործընթացը, իսկ գործնականում, ինչպես հայտնի է, առաջանում են իրավիճակներ, երբ նույնիսկ մեկ օրով ավելի շուտ կատարվող վճարումները կարող են դրականորեն անդրադառնալ կազմակերպության վաճառքներից ստացվող ընթացիկ հասույթների մեծության վրա: Ապրանքագրերով սահմանված վճարումների հնարավորինս արագ ստացումը, այսինքն՝ հաշիվների հատունացման օրերի քանակի նվազեցումը, ոչ բոլոր հաճախորդներին և ոչ միշտ է ձեռնտու: Հաճախորդների զգալի մասը գերադասում է գործ ունենալ այնպիսի մատակարարների հետ, ովքեր կիրառում են ավելի երկար ժամկետներով վճարային համակարգեր: Ամեն դեպքում անհրաժեշտ է շահել հաճախորդների վստահությունը՝ նրանց առաջարկելով փոխշահավետ վճարային համակարգ, ինչը մատակարարի և գնորդի միջև առողջ փոխհարաբերությունների ձևավորման կարևոր գրավական է:

Քանալի բառեր. Ֆինանսական դրություն, ֆինանսական կառավարում, դրամական հոսքեր, դրամական միջոցների շրջանառությունը, ստացվելիք և վճարվելիք հաշիվներ, վճարային համակարգ:

TRADING COMPANY CASH FLOW MANGEMENT IMPROVING PROCEDURE T.S. Baghdasaryan Summary

The main goal of the company's cash management is to accelerate the process of accounts payable and receivable which significantly contributes to the liquidity level, as well as to the capital increase put into disposal within the contemporary period of time. The proper management of the company's cash flow involves proper planning and payment term control over orders and accounts payable and receivables, with the expansive use of direct and indirect methods. The organization under such terms is able to reduce the amount of capital intact, work faster, more flexible and effective. The use of modern methods of management for the

accounts receivable records, detailed analysis of receivables and payment deadlines for reducing stimulation is of highly importance in the process of problem solution.

Key words: Financial situation, financial management, cash flow, cycle of cash flow, liquidity, accounts payable and receivables, payment system.

УЛУЧЩЕНИЕ ПРОЦЕССА УПРАВЛЕНИЯ ДЕНЕЖНЫМИ СРЕДСТВАМИ КОМПАНИИ

Т.С. Багдасарян

Резюме

Важнейшей целью управления денежными средствами компании является ускорение процесса платы по счетам и получения суммы, что способствует не только уровню потребления, но и, на данном промежутке времени, увеличению масштаба используемого капитала. Использование денежных средств компании по назначению подразумевает счета заказов, реальное планирование и контроль платежей, масштабное употребление прямых и косвенных методов их регулирования. В данных условиях компания имеет возможность сократить масштаб капитала, работать в более быстром темпе, гибко и результативно. В решении задачи имеют важное значение управление получаемыми счетами в журнале для записей, подробный анализ дебиторских долгов и способствование сокращению сроков платежей.

Ключевые слова: Финансовое состояние, финансовое управление, потребления, денежные потоки, циркуляции денежных средств, потребления, платёжные счета, системы платежей.

ԲԻԶՆԵՍԻ ԱՐԺԵՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ. ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վ. Ս. Մկրտումյան

Բիզնեսի արժեքի կառավարում հասկացությունը տարբեր հեղինակների կողմից մեկնաբանվել է յուրովի: Այդ մեկնաբանությունները կարելի է դասակարգել ըստ մասնագետների մոտ առկա այն պատկերացումների, որոնք նրանք ունեցել են բիզնեսի արժեքի կառավարման վերաբերյալ:

Մեկնաբանությունների առաջին խումբը կենտրոնացած է ընթացակարգերի և արդյունքի վրա.

- Բիզնեսի արժեքի կառավարումը կառավարման մոտեցում է, որտեղ բաժնետիրական արժեքի ստեղծումը դրված է կազմակերպության փիլիսոփայության կենտրոնում: Բաժնետիրական արժեքի մաքսիմալացումը ուղղորդում է կազմակերպության ռազմավարությունը, կառուցվածքը և ընթացակարգերը, այն կարգավորում է կազմակերպության ղեկավարների վարձատրությունը և թելադրում է այն չափանիշները, որոնցով պետք է գնահատվեն կազմակերպության արդյունքները:¹

- Բիզնեսի արժեքի կառավարումը կառավարման մոտեցում է, որտեղ գլխավոր նպատակը բաժնետիրոջ ունեցվածքի մաքսիմալացումն է: Կազմակերպության, դրա համակարգի, ռազմավարության, ընթացակարգերի, վերլուծության տեխնիկաների, գործունեության չափանիշների և կուլտուրայի նպատակը նույնպես բաժնետիրոջ ունեցվածքի մաքսիմալացումն է:²

- Բիզնեսի արժեքի կառավարման հիմնական սկզբունքը բխում է կազմակերպության արժեքի դիսկոնտավորված դրամական հոսքերի մոդելից: Բիզնեսի արժեքի կառավարումը ավելին է քան չափման համակարգ: Որպեսզի համակարգը հաջող գործի, այն պետք է կապ սահմանի գործունեության արդյունքների և վարձատրության մեջ:

¹ KPMG consulting, Value Based Management The growing importance of shareholder value in Europe, 1999, P 20

² Glen Arnold, Handbook of Corporate Finance: a Business Companion to Financial Markets, Decisions and Techniques, 2004, P 120

Բիզնեսի արժեքի կառավարման համակարգի կիրառման գլխավոր սկզբունքը կայանում է նրանում, որ բաժնետիրական արժեքի ստեղծմանն ուղղված չափման և վարձատրման գործառնությունները հանգեցնում են բաժնետիրական արժեքի մեծացմանը:³

- Բիզնեսի արժեքի կառավարումը ենթադրում է, որ մեծացված բաժնետիրական արժեքի բանալին ընկած է ռազմավարական կառավարման, գործունեության արդյունքների չափման և վարձատրության ինտեգրման մեջ:⁴

Երկրորդ խումբը նկարագրում է բիզնեսի արժեքի կառավարման արդյունքները.

- Բիզնեսի արժեքի կառավարումը կառավարման փիլիսոփայություն է, որը կիրառում է վերլուծական գործիքներ և գործընթացներ, որպեսզի հասնի կազմակերպության միակ նպատակին՝ բաժնետիրական արժեքի ստեղծմանը:⁵

- Բիզնեսի արժեքի կառավարումը տերմին է, որը նկարագրում է կազմակերպության տնտեսական արժեքի ստեղծման սկզբունքների վրա հիմնված կառավարման փիլիսոփայություն:⁶

- Բիզնեսի արժեքի կառավարման մոտեցումը հիմնված է այն տեսակետի վրա, որ բոլոր առևտրային կազմակերպությունների գլխավոր նպատակը բաժնետիրական արժեքի մաքսիմալացումն է: Քանի որ այն կազմակերպություններին առաջարկում է տրամաբանական և սիստեմատիկ ճանապարհ բաժնետիրական արժեքի բարելավման համար:⁷

- Բիզնեսի արժեքի կառավարումը կառավարման նոր մոտեցում է, որն ուղղված է իրական արժեքի ստեղծմանը, ոչ թե թղթի վրա գրված շահույթին: Իրական արժեք ստեղծվում է, երբ կազմակերպությունը ապահովում է ներդրումների ետ վերադարձ, դրան գումարած

³ MARTIN J.D. and PETTY J.W., Value Based Management – The corporate response to the shareholder revolution, Harvard Business School Press (2000), P 12

⁴ LEAHY T., Making their Mark, Business of Finance, June 2010

⁵ CONDON J. and GOLDSTEIN J., Value based management. the only way to manage for value, Accountancy Ireland, October 1998 P 3

⁶ ARMITAGE H.M. and FOG V., Economic value creation: What every management accountant should know, CMA Magazine, հոկտեմբեր 1996 P 4

⁷ BANNISTER R.J. and JESUTHASAN R., Is Your Company Ready for Value-Based Management? Journal of Business Strategy, March / ապրիլ, 1997. P 12.

հավելավճար, որն ավելին է քան լրացուցիչ ռիսկը, որն առաջանում է ներդրումը կատարելիս:⁸

Բիզնեսի արժեքի կառավարման գործընթացը ներկայացված է հետևյալ սահմանմամբ.

- Բիզնեսի արժեքի կառավարումը կառավարման ամբողջական մոտեցում է, որը ներառում է նպատակների վերանայում, կառուցվածքների և համակարգերի վերանախագծում, ռազմավարական և գործառնական գործընթացների թարմացում և մարդկային ռեսուրսների կառավարման մեթոդների կատարելագործում:⁹

Ստորև ներկայացվում է բիզնեսի արժեքի կառավարման մոտեցերը, գործընթացը և արդյունքները.

- Կառավարման մոտեցում, որտեղ կազմակերպության ընդհանուր ձգտումները, վերլուծական տեխնիկաները և կառավարման գործընթացները միտված են կազմակերպությանն օժանդակելու մաքսիմիզացնել իր արժեքը՝ կառավարչական որոշումներն ուղղելով դեպի բաժնետիրական արժեքի ստեղծման հիմնական գործոնները:¹⁰

Ստորև ներկայացվում է բիզնեսի արժեքի կառավարումը որպես մտածելակերպ.

- Բիզնեսի արժեքի կառավարումը մոտեցումների ամբողջություն է, որը թույլ է տալիս կառավարել արժեքը բիզնեսի յուրաքանչյուր մակարդակում: Արժեքի ստեղծումը դառնում է ոչ միայն կազմակերպության առաքելությունը, այն դառնում է ամենօրյա աշխատանքի փիլիսոփայություն: Այն դառնում է մեր գործունեության հիմքը:¹¹

Ըստ Ֆրիգոյի, եթե բիզնեսի արժեքի կառավարման համակարգը ճիշտ է ներդրված, ապա այն ղեկավարությանը կօժանդակի կենտրոնանալու արժեքի ստեղծման վրա, ինչպես նաև կմոտիվացնի և գոր-

⁸ CHRISTOPHER M. and RYALS L., Supply chain strategy: Its impact on shareholder value, International Journal of Logistics Management, vol. 10, no. 1, 1999 P 1

⁹ BOULOS F., HASPELAGH P. and NODA T., Getting the value out of value-based management, NSEAD survey, 2001

¹⁰ INSTITUTE OF MANAGEMENT ACCOUNTANTS (1997), Measuring and Managing Shareholder Value Creation, Statement Nr 4AA, Institute of Management Accountants, Montvale, N.J., March 31 P 1

¹¹ MORIN R. A. and JARRELL S. L., Driving Shareholder Value Value-Building Techniques for Creating Shareholder Wealth, Mc Graw-Hill, 2001 P 28

ծողությունները կուղղի այդ նպատակին հասնելու համար:¹² Սակայն դա պահանջում է մեծ նվիրվածություն, ճիշտ կառավարում և չափման համակարգ: Բիզնեսի արժեքի կառավարումը կարող է հաջողությամբ լուծել այս խնդիրը:¹³ Կոլլերը նշում է, որ բիզնեսի արժեքի կառավարումը լավ ներդրման արդյունքում բերում է հսկայական օգուտներ: Բիզնեսի արժեքի կառավարումը նման է վերակազմավորման և նպատակ ունի շարունակական հիմքով հասնել առավելագույն արժեքի, ունի մեծ ազդեցություն և հաճախ արտացոլվում է բարելավված տնտեսական արդյունքի մեջ:¹⁴

Ստարովիչը և այլոք այն կարծիքի են, որ բիզնեսի արժեքի կառավարումը ազդում է բաժնետիրական արժեքի որոշ չափորոշիչների վրա: Այդ չափանիշներն են.¹⁵

- Կառավարում և տնօրինում: Բիզնեսի արժեքի կառավարումը ապահովում է կորպորատիվ կառավարման նորմերի պահպանում, ապահովում է բաժնետերերի և կազմակերպության շահերի համապատասխանությունը, տեղեկատվության թափանցիկ և արդար բացահայտումը և բաժնետերերի ակտիվ ազդեցությունը:

- Վարձատրություն: Բիզնեսի արժեքի կառավարումը կապ է ստեղծում աշխատակիցների վարձատրության և այն հավելյալ արժեքի միջև, որը ստեղծվել է իրենց անմիջական գործունեության արդյունքում: Սա նպաստում է այն բանին, որ կազմակերպության աշխատակիցները սկսում են մտածել կազմակերպության բաժնետերերի պես և օժանդակում են երկարաժամկետ արդյունքի ստեղծմանը:

- Մշակույթ: Բիզնեսի արժեքի կառավարման համակարգը որդեգրած կազմակերպություններում նկատվում են կազմակերպական մշակույթի հետևյալ հինգ փոփոխությունները.

¹² FRIGO, M.L. 2002. Strategy execution and value-based management. Strategic finance, P. 1, Oct.

¹³ FRIGO, M.L. 2002. Strategy execution and value-based management. Strategic finance, P. 1, Oct.

¹⁴ http://www.mckinsey.com/insights/corporate_finance/what_is_value-based_management վերջին այցը՝ 19.05.2014

¹⁵ STAROVIC, D., COOPER, S. & DAVIS, M.. Maximizing shareholder value: achieving clarity in decision-making. The Chartered Institute of Management Accountants Technical Report 2004 November P 16-21

- Մոտավորապես բոլորը միտվում են դեպի բաժնետիրական արժեքի մեծացմանը:
 - Ուսուցումների միջոցով ստեղծվում է միջավայր, որն արագորեն արձագանքում է արտաքին միջավայրի փոփոխություններին:
 - Ուսուցումներն ամրապնդվում են լայնորեն կիրառվող խթանման համակարգերով, որոնք կապված են բիզնեսի արժեքի կառավարման արդյունավետության չափանիշների հետ և աշխատակիցների մոտ ստեղծում են կազմակերպության սեփականատեր լինելու զգացում:
 - Ցանկություն է առաջանում իրականացնել կազմակերպական մեծ փոփոխություններ, որոնք թույլ կտան աշխատակիցներին կատարել արժեք ստեղծող որոշումներ:
 - Կառավարման համակարգի և գործընթացների փոփոխություններն ընդհանուր և համակողմանի ուղղվածություն ունեն, այլ ոչ թե կենտրոնացած են ֆինանսական հաշվետվությունների վրա:
 - Կառուցվածք: Ստեղծելով լավագույն կազմակերպական կառուցվածքը՝ ղեկավարները հնարավորություն են ստանում հստակեցնել թե ինչպես կարելի է ստեղծել առավելագույն արժեք յուրաքանչյուր բիզնես միավորման շրջանակներում և ամբողջ կազմակերպությունում: Լիազորությունների և պարտավորությունների ճշգրիտ սահմանումը թույլ է տալիս յուրաքանչյուր աշխատակցից ստանալ առավելագույն ներդրումը բիզնեսի արժեքի բարձրացման գործում:
 - Շահառուներ: Չնայած նրան, որ թվում է, թե բիզնեսի արժեքի կառավարումը վերաբերում է միայն բաժնետերերին, սակայն բիզնեսի արժեքի մաքսիմալացումը չի կարող շրջանցել շահառուների հետաքրքրությունները: Կազմակերպությունները կարող են մեծացնել իրենց արժեքը, եթե նրանց գործունեությունը բավարարի հասարակության պահանջմունքները:
- Կուպերը և այլոք ամփոփել են բիզնեսի արժեքի կառավարման մեթոդների որդեգրման հետ կապված առավելությունները, որոնք ներկայացված են ստորև.¹⁶

¹⁶ COOPER, S., CROWTHER, D., DAVIES, M., & DAVIS, E.W. Shareholder or stakeholder value: the development of indicators for the control and measurement of performance. CIMA. 2001

- Ունի ընդհանուր լեզու, որը կիրառելի է կազմակերպության և՛ ներսում, և՛ դրսում:
- Համեմատության հզոր գործիք է մրցակցային արդյունավետության բենչմարքինգի համար:
- Օգտակար է ռեսուրսների տեղաբաշխման օպտիմալ գործընթացի ապահովման համար, տարանջատում է արժեք ստեղծող և վերացնող ներդրումները:
- Ունենում է դրական ազդեցություն ֆինանսական արդյունավետության վրա, որը ստացվում է կապիտալի նվազեցման միջոցով:
- Հզոր ռազմավարական գործիք է:
- Օժանդակում է ղեկավարությանը կենտրոնանալ արժեք ստեղծող գործունեների վրա:
- Օժանդակում է ստեղծել ավելի մեծ բաժնետիրական արժեք՝ ապահովելով բիզնեսի միավորի համար գործունեության չափման առավել արդյունավետ մոդել:

Ոչ բոլոր կազմակերպություններն են կարողանում իրականացնել բիզնեսի արժեքի կառավարման համակարգի ներդրումը: 2003 թվականի Ernst & Young-ի կողմից իրականացված կառավարչական հաշվառման հետազոտությունը ցույց տվեց որ հարցված կազմակերպությունների 30%-ն են կիրառում բիզնեսի արժեքի կառավարման սկզբունքները և նույն քանակով կազմակերպություններ փորձել և մերժել են այդ սկզբունքները:¹⁷ Բիզնեսի արժեքի կառավարման համակարգը միշտ չէ, որ ներկայացնում է արժեքի ստեղծման ճանապարհները: Այդ խնդիրը լուծելու համար Ֆրիգոն առաջարկում է բիզնեսի արժեքի կառավարման համակարգը ինտեգրել հավասարակշռված ցուցանիշների համակարգի հետ:¹⁸

Boots plc ընկերությունը բիզնեսի արժեքի կառավարման համակարգը ներդնելուց որոշակի ժամանակ անց այն ենթարկեց փոփոխու-

¹⁷ STAROVIC, D., COOPER, S. & DAVIS, M.. Maximizing shareholder value: achieving clarity in decision-making. The Chartered Institute of Management Accountants Technical Report 2004 November P 22

¹⁸ FRIGO, M.L. Strategy execution and value-based management. Strategic finance, Oct. 2002. P. 2,

թյան: Կազմակերպության ֆինանսական տնօրեն Հոուարդ Բուֆսը դա բացատրեց հետևյալով:¹⁹

Ձուտ ներկա արժեքի վրա կենտրոնացումը նշանակում է, որ շատ նախագծեր, որոնք ունեն մեծ զուտ ներկա արժեք, սակայն երկար ետզնման ժամկետ և փոքր կարճաժամկետ ներհուսքներ, դրական են գնահատվել կազմակերպության կողմից: Մյուս կողմից արդյունավետ ներդրումները գնահատվում են պակաս շահավետ և մերժվում են դեկավարության կողմից:

Կուպերը և այլք ընդանրացրեցին բիզնեսի արժեքի կառավարման համակարգի մոտեցումների որդեգրման թերությունները: Այդ թերությունները նրանք շարադրել են հետևյալ կերպ.²⁰

- Բիզնեսի արժեքի կառավարման տարբեր մեթոդները դժվարեցնում են խնդիրը,
- Ապագա արժեքի կանխատեսման խրթնությունը,
- Համակարգի ներդրման ծախսատարությունը,
- Սահմանափակումները հաշվի առնելու հետ կապված խնդիրները,
- Այն դժվարությունները, որոնք առաջանում են ֆինանսական ցուցանիշների և գործընթացների միջև համեմատական անցկացնելիս,
- Գործակիցների հաշվարկման հետ կապված դժվարությունները:

Չնայած իր թերություններին բիզնեսի արժեքի կառավարման համակարգը շատ հզոր գործիք է կազմակերպության կառավարման համար: Համակարգի ներդրումը կապահովի շուկայում բիզնեսի մրցունակության բարձրացում, գործունեության արդյունքների բարելավում և կազմակերպությանը գրավիչ կդարձնի նոր ներդրումների ներգրավման համար:

Բանալի բառեր. բիզնեսի արժեքի կառավարում, բիզնեսի արժեք, բաժնետիրական արժեքի ստեղծում, արդյունավետության կառավարում, վարձատրություն, բիզնես մշակույթ:

¹⁹ DODD, D. 2004. Get the share price you deserve, not the one you want. Available on the Internet:

<http://www.valuationissues.com/valiss/servlet/viewarticle;jsessionid=9515EA42DBC32437F1C22770601D798F?articleID=103>. վերջին այցը՝ 19.05.2014

²⁰ COOPER, S., CROWTHER, D., DAVIES, M., & DAVIS, E.W. Shareholder or stakeholder value: the development of indicators for the control and measurement of performance. CIMA. 2001

Գրականություն

1. KPMG consulting, Value Based Management The growing importance of shareholder value in Europe, 1999
2. Glen Arnold, Handbook of Corporate Finance: a Business Companion to Financial Markets, Decisions and Techniques, 2004 թ, 736 Pages
3. MARTIN J.D. and PETTY J.W., *Value Based Management – The corporate response to the shareholder revolution*, Harvard Business School Press, 2000
4. LEAHY T., Making their Mark, *Business of Finance*, June 2010,
5. CONDON J. and GOLDSTEIN J., Value based management. the only way to manage for value, *Accountancy Ireland*, October 1998
6. ARMITAGE H.M. and FOG V., Economic value creation: What every management accountant should know, *CMA Magazine*, October 1996
7. BANNISTER R.J. and JESUTHASAN R., Is Your Company Ready for Value-Based Management?, *Journal of Business Strategy*, March / April, 1997
8. CHRISTOPHER M. and RYALS L., Supply chain strategy: Its impact on shareholder value, *International Journal of Logistics Management*, vol. 10, no. 1, 1999
9. BOULOS F., HASPELAGH P. and NODA T., *Getting the value out of value-based management*, NSEAD survey 2001
10. INSTITUTE OF MANAGEMENT ACCOUNTANTS (1997), Measuring and Managing Shareholder Value Creation, Statement Nr 4AA, Institute of Management Accountants, Montuale, N.J., March 31
11. MORIN R. A. and JARRELL S. L., *Driving Shareholder Value Value-Building Techniques for Creating Shareholder Wealth*, Mc Graw-Hill, 2001
12. FRIGO, M.L. Strategy execution and value-based management. *Strategic finance 2002*
13. http://www.mckinsey.com/insights/corporate_finance/what_is_value-based_management
14. STAROVIC, D., COOPER, S. & DAVIS, M.. Maximizing shareholder value:achieving clarity in decision-making. The Chartered Institute of Management Accountants Technical Report 2004 November

15. COOPER, S., CROWTHER, D., DAVIES, M., & DAVIS, E.W. Shareholder or stakeholder value: the development of indicators for the control and measurement of performance. CIMA. 2001
16. DODD, D. Get the share price you deserve, not the one you want, 2004

УПРАВЛЕНИЕ СТОИМОСТЬЮ БИЗНЕСА: ПРЕИМУЩЕСТВА И НЕДОСТАТКИ

В. С. Мкртумян

Резюме

В этой статье представлены подходы определения управления стоимостью компании различных авторов. Можно увидеть, что в основном в определениях управления стоимостью компании признак того же мышления. Эти определения сгруппированы в пять групп. Первая группа определений описывает результат системы. Вторая группа авторов принимает во внимание процессы и результат. Один источник описывает только процесс, другой описывает систему как способ мышления и последний описывает входы, процессы и результат системы. В статье также описаны преимущества и недостатки системы управления стоимостью компании. В целом система очень полезна для эффективного управления компанией и она имеет больше преимуществ, чем недостатков.

Ключевые слова: управление стоимостью компании, стоимость бизнеса, создание акционерной стоимости, управление эффективностью, вознаграждение, бизнес-культура.

VALUE BASED MANAGEMENT: ADVANTAGES AND DISADVANTAGES

V.S. Mkrtyumyan

Summary

In this article is represented the definitions of value based management by various authors. However one can see that most definitions of value based management are a sign of the same way of thinking. These definitions have been grouped in five groups. The first

group of authors describes the output of the system. The second group of authors take into consideration processes and the outcome. One source described just the process another describes it as a way of thinking and the final defines inputs, process and outputs of value based management. It is also mentioned in the article the advantages and disadvantages of value based management. The approach overall is very useful tool for a governing the firm and it has more pros than cons.

Key words: Value based management, business value, shareholder value creation, performance management, remuneration, business culture.

ՀՀ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Լ.Մ. Դոխոյան

Ձեռնարկատիրական գործունեության համար կապիտալի ազատ հոսքին խոչընդոտող կարևոր և հիմնական գործոնը՝ հավասար մրցակցություն ապահովող միջավայրի ձևավորման բարդություններն են ինչպես օրենսդրական, այնպես էլ գործնական մեխանիզմների կայացման առումով: Այն, առաջին հերթին, պահանջում է գործող օրենսդրության երկակի ստանդարտների կիրառման բացառում և մենաշնորհացման կտրուկ սահմանափակում: Իրականում, բազմաթիվ են հակառակ դրսևորումները, որի հետևանքով ներմուծման, արտահանման, ինչպես նաև առևտրի, արտադրության առանձին ոլորտներ մենաշնորհացվում են: Դրանց զարգացումն ու արմատավորումը խաթարում են հավասար մրցակցության հնարավորությունները, որի պատճառով էապես սահմանափակվում են կապիտալի ազատ հոսքերը [1]: Հակամենաշնորհային օրենսդրության բացակայության պատճառով պետությունը ստիպված էր անցած տասը տարիների ընթացքում իրավիճակային և գրեթե անարդյունավետ պայքար մղել տեխնոգեն և կազմակերպական հիմքով ձևավորված մենաշնորհների դեմ: Համապատասխան օրենքը ընդունվեց միայն 2000թ., սակայն դեռևս անարդյունավետ են գործում օրենքի ընթացակարգային նորմերը:

Ձեռնարկատիրության ոլորտի զարգացման պետական քաղաքականության նպատակների իրականացման համար անհրաժեշտ էր ձևավորել ձեռնարկատիրության զարգացման և աջակցության պետական համակարգ: Այն պետք է ներառեր ինչպես պետական, այնպես էլ հասարակական, առևտրային և միջազգային կազմակերպությունները: Այս ուղղությամբ առաջին քայլերից մեկը «Ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի ընդունումն էր, որն առաջին անգամ սահմանեց ձեռնարկատիրության սուբյեկտների չափորոշիչները և պետական աջակցության հիմնական ուղղությունները ու սկզբունքները:

Մեր հանրապետությունում պետական աջակցությունը իրականացված է 2000թ. օգոստոսին ՀՀ կառավարության կողմից ընդունած

«Հայաստանում ՓՄՁ զարգացման քաղաքականության և ռազմավարության հիմնադրույթները» փաստաթղթի[2] հիման վրա ընդունված «ՓՄՁ պետական աջակցության մասին» օրենքով:

Նշված օրենքը հանդիսանում է ՓՄՁ պետական աջակցության իրավական հիմքը, որը սահմանում է ՀՀ-ում ՓՄՁ չափորոշիչներ, պետական աջակցության հիմնական ուղղությունները և այդ ոլորտում քաղաքականության իրականացման սկզբունքները:

Կարելի է առանձնացել Հայաստանում ձեռնարկատիրության, և հատկապես փոքր բիզնեսի գլխավոր խնդիրները և զարգացման նախադրյալները.

- ✓ հարկային անհամաչափ վարչարարությունը,
- ✓ միջին և երկարաժամկետ վարկերի գրեթե բացակայությունը,
- ✓ վարկային երաշխիքների և գրավի տրամադրման հարցերը,
- ✓ վարկատու կազմակերպություններում դիմումների կամ բիզնես պլանների քննարկման ծանր ընթացակարգը:
- ✓ գոյություն չունի ազգային բիզնես տեղեկատվական և խորհրդատվական համակարգ, որը ձեռնարկություններին կտրամադրեր ծառայություններ և տեղեկատվություն՝ լիարժեք գործունեություն ծավալելու համար:

Ձեռնարկությունների զարգացման համար հաջորդ լուրջ խոչնդուտը ներքին շուկայի ցածր պահանջարկն է:

Ձեռնարկատիրության կարգավորման պետական լծակների հիմնախնդիրը երկրում ձեռնարկատիրությամբ զբաղվող քաղաքացիների ինքնագիտակցության, ազգային, էթնիկ սովորությունների և տեխնոլոգիական հնարավորությունների զարգացման նուրբ քաղաքականության իրականացման հետ է կապված:

Մի կողմից եվրոպական, մյուս կողմից ռուսական արժեքների համակարգը լուրջ խնդիրներ են դնելու պետական լծակների արդյունավետության ապահովման առաջ:

Ինչպե՞ս անել, որ ՀՀ-ում ձեռնարկատիրությունը կարգավորված լինի նույն այն արժեքների վրա հիմնված օրենքներով և գործարար սովորույթներով, որոնք հարգվում են եվրոպացիների կողմից, և միևնույն ժամանակ պետությունը նվազագույն չափով, կամ միայն տնտեսական անվտանգության անհրաժեշտությունից ելնելով, կանոնակարգի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձի աշ-

խատանքի կազմակերպումը: Կարող ենք ասել, որ ամենաարդյունավետ լծակը ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվողի ազատության ապահովումն է:

Ձեռնարկատիրության կարգավորման առումով պետական կարևորագույն լծակները գործող իրավական դաշտի օրենքներն ու վարչարարության մշակույթն է: Կարգավորումը չպետք է ծնի բազում խոչընդոտներ և պատժամիջոցներ: Այսինքն, պատժի խստությունը, եթե համարժեք չէ, նրա կիրառումը նույնպես արդյունավետ լինել չի կարող:

Արդյունավետությունը պետք է նպատակաուղղված լինի ծառայելու.

- վարչարարության կամայականության վերացմանը,
- կոռուպցիայի բացառմանը,
- ձեռնարկատիրական ազատությունների դրսևորմանը,
- պատասխանատվության հասկանալի լինելուն և տնտեսական գործառույթների իրականացման արագության բարձրացմանը,
- փաստաթղթային ավելորդ ընթացակարգերի վրա ժամանակի վատնման նվազեցմանը,
- գործարար սովորույթների զարգացմանն ու տարածմանը չխոչընդոտելուն:

Ըստ «World Economic Forum»-ի Համաշխարհային մրցունակության Ձեկույցի 2008-2014թթ. ՀՀ ձեռնարկատիրական գործունեության հիմնական խոչընդոտող գործոնների մեջ առանձնացված են 15 հիմնականները՝ կոռուպցիա, հարկային կարգավորում, արտարժույթի կարգավորում, պետական բյուրոկրատիա, ֆինանսավորման հասանելիություն, ենթակառուցվածքների ոչ ադեկվատ սպասարկում, գնաճ, աշխատուժի կրթական անբավարար մակարդակ, հարկային դրույքաչափեր, քաղաքականության անկայունություն, ազգային աշխատուժի աշխատանքի ցածր էթիկա, կառավարության անկայունություն, հեղաշրջումներ, սահմանափակող աշխատանքային նորմեր, առողջապահական ցածր մակարդակ, հանցագործություններ: Վերջիններից, ըստ հարցվածների, երեք ամենամեծ հիմնախնդիրներն են հանդիսացել կոռուպցիան, հարկային կարգավորումը, պետական բյուրոկրատիան: Այս երեք խոչընդոտների ազդեցության խորության և վտանգավորության հիմնական պատճառներից մեկն այն է, որ վերջիններս հանդես են գալիս փոխսերտաճած և փոխկապակցված սխեմաներով, այսինքն կոռուպցիան չի կարող գործել առանց պետական

բյուրոկրատական համակարգում կամ հարկային վարչարարության մեջ առկա խեղումների և թերացումների, ինչպես նաև հակառակը: Այս իմաստով, առավել կոնկրետ է խնդրի այն ձևակերպումը, ըստ որի Հայաստանում կոռուպցիայի «դեմքը» հիմնականում երկփեղկված է. այստեղ առկա են և՛ մանր կոռուպցիայի, և՛ քաղաքական կոռուպցիայի հատկանիշները: Քաղաքական կոռուպցիայի գոյությունը ակնհայտ է դառնում, այսպես կոչված, «օլիգարխների» առկայությամբ, ովքեր, միևնույն ժամանակ, վայելում են «ստվերային տնտեսության» պտուղները: Տեսականորեն Հայաստանում առկա են ժողովրդավարական ինստիտուտներ, գործնականում, սակայն, ղեկավար շրջանակների հովանավորչությունը, կոռուպցիան և հովանավոր-հաճախորդ ցանցերը այդ ինստիտուտները դարձրել են անարդյունավետ: Համաձայն Յասեր Աբդիհի և Լեանդրո Մեդինյոյի, ովքեր Արժույթի միջազգային հիմնադրամի համար Կովկասում և Կենտրոնական Ասիայում 2013թ. հետազոտություն են կատարել ոչ ֆորմալ տնտեսության վերաբերյալ, Հայաստանում ոչ ֆորմալ տնտեսությունը կազմում է ՀՆԱի 35%-ը [3]: Համաձայն կառավարման համաշխարհային ինդեքսի (Համաշխարհային բանկ)՝ «կոռուպցիայի հսկողություն» ցուցիչի միավորը 2012թ. աճել է (2011թ. Հայաստանին տրված միավորը 32.7 էր, իսկ 2012թ.՝ 36.4՝ ըստ «0-ից 100» սանդղակի 20), ինչը, սակայն, ոչ էական բարելավում էր, նույն պատկերն է նաև Համաշխարհային տնտեսական ֆորումի մրցունակության ինդեքսի շրջանակներում հաշվարկվող «անկանոն վճարումներ և կաշառք» ցուցիչի մասով. 2012-2013թթ. ընթացքում Հայաստանի միավորը 3.7 էր, մինչդեռ 2013-2014թթ. այն կազմեց 3.8: Կարևոր է նշել նաև, որ և՛ «կոռուպցիան», և՛ «անարդյունավետ կառավարչական վարչարարությունը», համաձայն այս ինդեքսի, հանդիսացել են Հայաստանում բիզնեսով զբաղվելու համար ամենից խնդրահարույց 3 գործոններից 2-ը: Պետք է նշել նաև, որ կոռուպցիայի ընկալումը ևս աննշան զարգացում է ապրել: Համաձայն Թրանսփարենսի ինդեքսի կոռուպցիայի ընկալման 2012թ. համաթվի՝ Հայաստանը 34 միավորով գտնվում էր 105-րդ հորիզոնականում, 2013թ. միավորը կազմեց 36, իսկ հորիզոնականը դարձավ 94-րդ: Մյուս կողմից, ըստ Ֆրիդոմ Հաուզի կողմից կազմվող «Անցումային պետություններ» զեկույցի, «կոռուպցիայի հսկում» ցուցիչի հայաստանյան միավորը գտնվում է կայուն լճացման մեջ 5.25 նիշով, և երկիրն էլ

բնորոշվում է որպես «կիսահամախմբված ամբողջատիրական ռե-
ժիմ»[4]: Առավել մտահոգիչ են Թրանսփարենսի ինթերնեշնլի կոռուպ-
ցիայի համաշխարհային բարոմետր 2013թ. արդյունքները: Համաձայն
դրա, հարցվողների 63%-ը գտել է, որ շարքային քաղաքացին չի կա-
րող փոփոխություններ կատարել կոռուպցիայի դեմ պայքարում, ինչը
չափազանց մտահոգիչ է, քանի որ փաստացի վկայում է հակակո-
ռուպցիոն պայքարի մեջ ներգրավման՝ հանրության ցանկության գրե-
թե իսպառ բացակայության մասին: Ըստ արդարադատության նախա-
րարության ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության նախագծի հեղի-
նակների՝ ամենակոռումպացված ոլորտներն են առողջապահության,
կրթության, պետական եկամուտների հավաքագրման և ոստիկանու-
թյան ծառայությունների մատուցման ոլորտները, իսկ Թրանսփերենսի
ինթերնեշնլի կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի 2013թ.
արդյունքների համաձայն՝ ամենակոռումպացված ոլորտ/կառույցներն
են համարվել՝ դատական համակարգը՝ 69%, հանրային ծառայողնե-
րը՝ 68%, առողջապահական կազմակերպությունները՝ 68%, ոստիկա-
նությունը՝ 66% և կրթական համակարգը՝ 58 % [5]: «Policy forum
Armenia» անկախ մասնագիտական կազմակերպությունը 2013թ. կազ-
մած «Կոռուպցիան Հայաստանում» զեկույցի համաձայն՝ բյուջեի կո-
րուստներն ու եկամուտների թերի հավաքագրումը միասին մոտավոր-
ապես կազմում են տարեկան ավելի քան 750 միլիոն ԱՄՆ դոլար,
իսկ ՀՆԱ-ն 2013թ-ին կարող էր 55%-ով ավելին լինել եղածից, եթե ՀՀ-
ն ունենար Բոսովանայի և Նամիբիայի հետ համադրելի կառավար-
ման մակարդակ [6]: Չնայած այս հաշվարկներն մոտավոր են և չեն
կարող հաշվի առնել բոլոր համալիր գործոնները, այնուամենայնիվ,
դրանք տալիս են կոռուպցիայի հասցրած կորուստների մոտավոր
գնահատականը: ԱՄՆ Պետական դեպարտամենտը 2013թ. Հայաս-
տանում ներդրումային մթնոլորտի վերաբերյալ հայտարարությունում
նշել է, որ ազդեցիկ պաշտոնյաները շրջանային կամ համայնքային
մակարդակում ուղղակի, կիսով չափ կամ անուղղակի հսկողություն են
ձեռք բերում մասնավոր կազմակերպությունների վրա, ինչը իրակա-
նացվում է կամ թաքնված գործընկերության միջոցով, կամ մասնավոր
ընկերության մեծամասնության սեփականատեր լինելու ձևով, կամ ա-
նուղղակի ներգրավվածությամբ՝ մերձավոր ազգականների, ընկերնե-
րի միջոցով: Այս ամենն անկասկած, խրախուսում է մենաշնորհների

կամ օլիգոպոլիաների ստեղծմանը, թաքնված մրցակցության ստեղծմանը և խաթարում է կառավարության՝ որպես մասնավոր հատվածի զարգացման աջակցի, իմիջը [7]: Վերջինս խոչընդոտներ է հարուցում շուկայի նոր մասնակիցների համար, սահմանափակում սպառողների ընտրությունը, և կանխում անդրազգային ընկերությունների կողմից ներդրումները, որոնք պնդում են, որ գործընկերային հարաբերությունների մեջ կմտնեն քաղաքականապես անկախ բիզնեսների հետ [8]: Ներմուծման մեջ պետական պաշտոնյաների ներգրավվածության մասին խոսվում է նաև «Մենաշնորհները Հայաստանում 2013թ» զեկույցի շրջանակներում [9]: Չնայած մասնավոր բիզնեսի գործունեության մեջ անհարկի արտաքին միջամտությունները կանխելու նպատակով առկա են իրավական երաշխիքներ (օրինակ, համաձայն ՀՀ օրենսդրության՝ պաշտոնատար անձինք կարող են միջամտել բիզնեսների գործունեությանը՝ միայն ստուգումներ կամ քննություններ անցկացնելու միջոցով, իսկ ստուգումների և քննությունների ընթացակարգերը կարգավորվում են ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին օրենքով), սակայն մասնավոր բիզնեսների գործունեությանը արտաքին միջամտության և կառավարության օգտին և ի վնաս բիզնեսների՝ ընդունված կանոնակարգերի փաստերը բավականին շատ են: Օրենքների կիրառման առումով՝ իրավիճակն ընդհանուր առմամբ մտահոգիչ է, որի պատճառահետևանքային ամենամեծ արգելքներից է օլիգոպոլիաների և կառավարության հետ առնչություններ ունեցող բիզնեսների գոյությունը, որը, կոռումպացված դատական համակարգի հետ միասին, կա՛մ ուղղակիորեն և կա՛մ անուղղակիորեն բացասական ազդեցություն է թողնում բիզնեսի բնականոն գործունեության վրա: Մասնավոր սեփականությունը երաշխավորված է օրենքով, բայց ոչ օրենքների կիրարկումը, ոչ էլ դատական համակարգը համարժեք պաշտպանվածություն չեն ապահովում:

Չնայած բիզնեսի գրանցման ընթացակարգը հարաբերականորեն պարզեցվել է, սակայն բիզնեսի կանոնակարգման վրա դեռևս բավականին ուժեղ ճնշումներ կան, իսկ սեփականության, այդ թվում՝ մտավոր սեփականության իրավունքները գործնականում դեռևս համարժեք ձևով պաշտպանված չեն: Աշխատանքներ են տարվել նաև մաքսային բեռի թեթևացման և գոյություն ունեցող մաքսային համակարգի բարեփոխման ուղղությամբ (օրինակ՝ առցանց մաքսային հայ-

տարարագրերի համակարգը (էլեկտրոնային հայտարարագիր), ներմուծման փաստաթղթերի թվի կրճատումը իննից երեքի) [10]: Ամենամեծ խնդիրը սակայն, եկամուտների հավաքագրման ոլորտներում հանդիսանում է կոռուպցիայի և կոռուպցիոն ռիսկերի առկայությունը: Այս առումով, համամիտ ենք նախկին ՀՀ վարչապետ Տ. Սարգսյանի այն կարծիքի հետ, որ «Կոռուպցիայի բունը, որտեղից մենք պետք է սկսենք, որպեսզի ունենանք հաջողություններ, դա հարկային և մաքսային վարչարարության ոլորտն է: Այստեղ են բոլոր գաղտնիքները թաքցված: Ե՛վ ժողովրդավարական հասարակության կառուցման գաղտնիքը, ազնիվ և արդար ընտրություններ կազմակերպելու կարողությունը, ազատ մրցակցության խնդիրները, նորմալ բիզնես միջավայրի ձևավորման խնդիրը... Կոռուպցիոն բոլոր հիմքերը, կոռուպցիան սնուցող բոլոր հիմքերը հենց հարկային և մաքսային վարչարարության ոլորտում են գտնվում, և սա շատ խորքային խնդիր է» [11]: Կոռուպցիոն բարձր ռիսկի պարունակության առումով, օրինակ, հատկանշական է կողմնորոշիչ գների կիրառման գործելակերպը, որը, ինչպես նշված է նաև Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի (ՀՌԿԿ) իրականացրած «Հարկային բարեփոխումների ընկալումների հետազոտությունը» աշխատության մեջ գործարարների 79%-ի կողմից թերի է համարվում [12]: Բացի այդ ֆիսկալ եկամուտների հավաքման փաստացի մեթոդները շատերի կողմից ընկալվում են որպես ընտրովի, սուբյեկտիվ, կամայական և անարդար, ինչի պատճառով ձեռնարկատերերը հսկայական ժամանակ և ջանք են գործադրում ֆորմալ համակարգը շրջանցելու, իրենց գործունեության մասին տեղեկատվությունը թաքցնելու և խեղաթյուրելու, ունեցվածքը թաքցնելու համար, ինչպես նաև խթանում է կամայական հարկերի նշանակումից խուսափելու համար կաշառքներ տալուն, որը հանգեցնում է մրցակցային միջավայրի էլ ավելի աղճատմանը: Համաձայն ՀՌԿԿ «Հարկային ընկալումների 2013թ. ուսումնասիրության»՝ բիզնեսի ոլորտից հարկ վճարողների 71.8%-ը բացասական գնահատական է տալիս վերջին տարիներին հարկային օրենսդրության և հարկային վարչարարության ոլորտում ՀՀ կառավարության ձեռնարկած այն միջոցներին, որոնք ազդում են բիզնեսների և բիզնես միջավայրի վրա: Բացի այդ, տարբեր բիզնեսների հանդեպ ոչ արդարացի վերաբերմունքը հարցվողներին ավելի շատ է մտահոգում, քան օրենքներում կատար-

վող հաճախակի փոփոխությունները, հարկային բարդ ընթացակարգերը և հաճախակի հարկային ստուգումները, որոնք հարկային մարմնի միակ առաքելությունն են դարձել, այնինչ առաքելությունը պետք է լինի ոչ միայն հարկահավաքությունը, այլ նաև՝ հարկ վճարողներին օգնելը, որ հարկերը հաշվարկեն օրենսդրության պահանջներին համապատասխան: Հարկային և մաքսային մարմինների հետ շփումների, պետական եկամուտների հավաքագրման ոլորտում կոռուպցիոն խնդիրների շրջանակներում հիշատակվում են նաև հարկային տեսուչների կողմից էթիկայի կանոններին և անօրինական վարքագծի մասին, մաքսային տեսուչների կողմից քաղաքացիների միջև անհավասար պայմաններ ստեղծելու և այլ հարցերի մասին [12]:

Շուկայական տնտեսավարման պայմաններում արդյունավետ ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հիմնական գրավականներից է նաև թողարկվող արտադրանքը (մատուցվող ծառայությունները) պատշաճ մակարդակով շուկայում ներկայացնելը, սպառման ծավալներն ավելացնելը և, ընդհանուր առմամբ, թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջ մղելը: Ելնելով նշված նկատառումներից՝ պետք է ցուցաբերել աջակցություն ՓՄՁ սուբյեկտներում որակի կառավարման (ԻՍՕ 9000 շարքի), սննդամթերքի արտադրության ոլորտում արդյունաբերական վտանգների վերլուծության և կրիտիկական կետերի վերահսկման և այլ միջազգային ստանդարտների ներդրմանը: Մասնավորապես, աջակցություն ցուցաբերել ՓՄՁ սուբյեկտներում որակի կառավարման ԻՍՕ 9001-2000 համակարգի ներդրման (խորհրդատվական կամ հավաստագրման աշխատանքներ), ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման միջոցով ՓՄՁ սուբյեկտների կառավարման համակարգերի բարելավման ուղղություններով՝ ըստ ՓՄՁ սուբյեկտների կողմից ներկայացված հայտերի: Աջակցությունն առավելապես պետք է տրամադրել մարզերում գործող ՓՄՁ սուբյեկտներին:

Բացի դրանից, հարկավոր է համապատասխան միջոցառումներ իրականացնել նաև էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով, մասնավորապես, ճանաչված ինտերնետային կայքերում ՓՄՁ սուբյեկտների և նրանց կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) վերաբերյալ տեղեկատվության (մի քանի լեզուներով) տեղադրման ուղղությամբ, ինչը կխթանի տեղական և միջազգա-

յին շուկայում ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) առաջնորումը, որն էլ վերջին հաշվով կնպաստի ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) մրցունակության և ՓՄՁ սուբյեկտների հեղինակության բարձրացմանը: Միջոցառումներ են իրականացվել նաև ՓՄՁ սուբյեկտների շրջանում հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրերի և ավտոմատացված կառավարման համակարգերի ներդրման ուղղությամբ:

Բանալի բառեր. Ձեռնարկատիրություն, կոռուպցիա, կարգավորում, բիզնես միջավայր, մրցակցություն, մասնավոր սեփականություն, իրավական դաշտ, ընթացակարգ:

Գրականություն

1. «Անկախության և անցումային 10 տարիները», Մարդկային զարգացման գեկույց, ՄԱԿ, Հայաստան 2001, էջ 72
2. «Հայաստանում ՓՄՁ զարգացման քաղաքականության և ռազմավարության հիմնադրույթները», ընդունվել է ՀՀ կառ. կողմից 2000թ. օգոստ. 3-ին
http://www.mineconomy.am/up/files/Razmavarutyn_26_am-174.pdf
3. <http://transparency.am/files/publications/1430407491-0-887324.pdf>, էջ 72
4. <http://transparency.am/files/publications/1430407491-0-887324.pdf>, էջ 23
5. <http://iravaban.net/85738.html>
6. [http://www.pf-
armenia.org/sites/default/files/documents/files/PFA_Corruption_Report.pdf](http://www.pf-armenia.org/sites/default/files/documents/files/PFA_Corruption_Report.pdf)
7. <http://www.state.gov/e/eb/rls/othr/ics/2013/204593.htm>
8. http://www.buyusainfo.net/docs/x_8481630.pdf, էջ 32,42
9. <http://transparency.am/files/publications/1430407491-0-887324.pdf>, էջ 66
10. http://www.globalspc.am/download/Invest_Guide_web.pdf
11. <http://www.azatutyun.am/content/article/1596117.html>
12. <http://transparency.am/files/publications/1430407491-0-887324.pdf>, էջ 187
13. <http://armlur.am/356929/>

ПО ВОПРОСАМ РАЗВИТИЯ ПРЕДПРИНИМАТЕЛЬСКОЙ СРЕДЫ РА

Л.М. Дохолян

Резюме

Данная статья посвящена изучению проблем развития предпринимательства в Армении, выявлению основных предпосылок, а также изучению главных барьер основания конкурентной среды. В этом аспекте, как и показывает история Армении и других государств, коррупция является одним из основных препятствий на пути гармоничного развития предпринимательства и национального хозяйства в целом. Таким образом, одним из ключевых элементов государственной политики, по мнению автора, должна стать работа по формированию действенного антикоррупционного механизма. Данная работа посвящена изучению проявлениям взаимозависимости коррупционных и других барьеров развития бизнеса.

Ключевые слова: Предпринимательство, коррупция, регулирование, бизнес-среды, конкуренция, частная собственность, нормативно-правовая база, процедура.

ON ISSUES OF DEVELOPMENT OF THE BUSINESS ENVIRONMENT OF RA

L.M. Dokholyan

Summary

This article is devoted to studying the problems of development of business in Armenia, identifying the main prerequisites, as well as the study of the main barrier base competitive environment. In this aspect, as well as shows the history of Armenia and other countries, corruption is one of the main obstacles to the harmonious development of the enterprise and the national economy as a whole. Thus, a key element of public policy, in author opinion, should be the work on formation of an effective anti-corruption mechanism. This paper studies the interdependence of corruption and other barriers to business development and manifestations.

Key words: Entrepreneurship, corruption, regulation, business environment, competition, private property, legal and regulatory framework, measures for.

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Ս.Վ. Մարտոյան

Ցածր եկամուտ ունեցող և անցումային շատ երկրներում տնտեսական պայմանների վատթարացումով պայմանավորված առողջապահության անբավարար բյուջեն, կապված արագորեն աճող առողջապահական խնդիրների հետ, ինչպիսիք են՝ համաշխարհային ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համաճարակը, հանգեցրեց առողջապահության ցանցի աշխատակազմի, դեղորայքի ու բժշկական պիտույքների նվազմանը, բուժաշխատողների աշխատանքի ոչ համարժեք վարձատրությանը, ծառայությունների որակի վատթարացմանը, և բնակչությանը բուժճառայությունների անարդարացի մատուցմանը: Կոռուպցիայի արդյունքը՝ որպես պատճառ և հետևանք, զարգացող և անցումային երկրներում ընդհանուր առողջական վիճակի վատթարացումն ու առողջապահության համակարգի փլուզումն է¹:

Վերջին տասնամյակում ՁԻԱՀ-ի միջազգային և տեղական ֆինանսավորումը զգալիորեն աճել է: Ըստ ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերի համատեղ ծրագրի (ՄԱՁԻԱՀ) մինչև 2015թ. վերջը աշխարհում ակնկալվում է ՁԻԱՀ-ի ֆինանսավորումը հասցնել մինչև 22-24 մլրդ ԱՄՆ դոլարի: 1996 թ. այդ ցուցանիշը կազմել է 260 մլն ԱՄՆ դոլար: Գնալով ավելացող ֆինանսավորումը հիմնականում հնարավոր է դարձել նախաձեռնված մի շարք նոր ֆինանսավորումների և մեխանիզմների շնորհիվ, հատկապես ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամը, Համաշխարհային բանկի Գլոբալ ՁԻԱՀ ծրագիրը և ԱՄՆ նախագահի՝ ՁԻԱՀ-ի օգնության արտակարգ իրավիճակների պլանը²:

2013թ. դրությամբ աշխարհում կար 35մլն ՄԻԱՎ-ով ապրող մարդ. նրանց գերակշիռ մասը՝ 24,7մլն-ը բնակվում էր Սահարայից հարավ ընկած Աֆրիկայում, իսկ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնա-

¹ Lewis M. 2006. Governance and corruption in public health care systems. Working paper number 78. Washington, DC: Center for Global Development.

http://www1.worldbank.org/publicsector/anticorrupt/Corruption%20WP_78.pdf

² US President's Emergency Plan for AIDS Relief (PEPFAR)

կան Ասիայի տարածաշրջանում, որի մեջ մտնում են նաև Հայաստանը և նախկին Խորհրդային Միության հանրապետությունները, ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց թիվը հասել է 1,1մլն-ի:

2013թ. ընթացքում մոտ 2,1մլն մարդ է վարակվել ՄԻԱՎ-ով՝ նրանցից 110 հազարը՝ մեր տարածաշրջանում, դա 25%-ով գերազանցում է Հյուսիսային Ամերիկայի և Արևմտյան ու Կենտրոնական Եվրոպայի նոր դեպքերի թիվը: 2013թ. ընթացքում աշխարհում ՄԻԱՎ-ով վարակվել է 240 հազար երեխա:

2013թ. ընթացքում ՁԻԱՀ-ից մահացել է մոտ 1,5մլն մարդ, նրանցից 53 հազարը մեր տարածաշրջանում³:

Հայաստանում մինչև 2012թ. ՁԻԱՀ-ի միջազգային և տեղական ֆինանսավորումը կազմել է 2,145 մլրդ ՀՀ դրամ (5.3 մլն ԱՄՆ դոլար): Ըստ ՀՀ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրի⁴ 2013-2016թթ. Հայաստանում ակնկալվում է ՁԻԱՀ-ի ֆինանսավորումը հասցնել մինչև 10,253 մլրդ ՀՀ դրամ: Գլոբալ հիմնադրամը մինչ այսօր ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համար Հայաստանին տրամադրել է 53 մլն ԱՄՆ դոլար:

Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության շրջանակներում բնակչության բժշկական քննությունն, ինչպես նաև հիվանդանոցային հետազոտումն ու բուժումն իրականացվում է համաձայն «Պետության կողմից երաշխավորված անվճար և (կամ) արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տրամադրման չափորոշիչ»⁵ ՀՀ առողջապահության նախարարի 2013թ. նոյեմբերի 18-ի N 71-Ն և «Բնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում դիսպանսերային (շարունակական) հսկողության ծառայության կազմակերպման և կազմակերպամեթոդական աշխատանքների իրականացման չափորոշիչ»⁶ ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի նոյեմբերի 18-ի N 71-Ն հրամանների:

³ Տես՝ http://www.armmaids.am/main/free_code.php?lng=2&parent=3 Այցի օր՝ 18.04.2015թ.

⁴ ՀՀ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ, Երևան 2013, էջ 73

⁵ Տես՝ <http://www.arlis.am/documentview.aspx?docid=87826> ՉՍԸ ՍԻ՝ 23.04.2015թ.

⁶ Տես՝ <http://www.arlis.am/documentview.aspx?docid=88007> Այցի օր՝ 23.04.2015թ.

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համար տրամադրված հսկայական միջոցների աճն իր հետ բերում է նոր մարտահրավերներ, մասնավորապես, թե ինչպես ապահովել ֆինանսավորման արդյունավետ օգտագործումը: Այն նաև կոռուպցիային նպաստող բազմաթիվ հնարավորություններ է ստեղծում:

Քննարկենք կոռուպցիայի և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միջև եղած կապը: որտեղ այդ տիպի կոռուպցիան կարող է առաջանալ: ինչպես կոռուպցիան կարելի է վերագրել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին, և, մասնավորապես, թե ինչ դեր կարող են ունենալ խորհրդարանականները կոռուպցիայի նվազեցման գործում:

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԵՎ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-Ի ՄԻՋԵՎ ԵՂԱԾ ԿԱՊԸ:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հետ կապված կոռուպցիան նման է ընդհանրապես առողջապահության ոլորտում դիտարկված կոռուպցիային և ներառում է գնումների ոչ թափանցիկ գործընթացները, առողջապահական ծախսերին հատկացված միջոցների յուրացումն ու անվճար ծառայությունների համար պահանջվող ոչ պաշտոնական վճարումները:

Ընդհանուր առողջապահության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հետ կապված կոռուպցիայի միջև հիմնական տարբերություններն են՝ համավարակի մասշտաբները; վարակի փոխանցման ուղիները; հիվանդության հետ կապված խարանը; բուժման համար նախատեսված դեղերի թանկարժեքությունը; արմատական բուժման բացակայությունը; կոռուպցիայի կանխատեսվող բացասական ազդեցությունը որոշ ամենաաղքատ երկրների զարգացման հեռանկարների վրա; համավարակի ուղղությամբ աշխատող բազմազան մարմինների և կազմակերպությունների առկայությունը, որն անբավարար մոնիտորինգի դեպքում նպաստում է կոռուպցիայի աճին:

ԻՆՉՊԵՍ ԵՎ ԱՋԱՅՆԵԼ ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-Ի

ԱՍՊԱՐԵՁՈՒՄ: Առաքման հրատապության հետ կապված ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին տրամադրված միջոցների ավելացումը շատ արագ և հաճախ չհամաձայնեցված ճանապարհով է կատարվում: Միջազգային դրամաշնորհները կամ վարկերը հաճախ գնահատվում են ավելի արագ բաշխման, քան թե առողջապահական արդյունքների մոտեցումով:

Թե՛ դոնորները, թե՛ ռեցիպիենտ կառավարությունները կարևոր դեր ունեն կատարելու կոռուպցիայի, դրա ռիսկերի նվազեցման գոր-

ծում: Ռեցիպիենտ կառավարությունները կարող են մեծացնել թափանցիկությունը՝ ներառելով ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի բուժման և կանխարգելման ծրագրերի նախագծման բոլոր շահագրգիռ կողմերին, սկսած կառավարությունից և հասարակական կազմակերպություններից մինչև ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով տառապող մարդկանց: Դոնորները կարող են օգնել բարձրացնելու թափանցիկությունը՝ լինելով բաց և բացահայտելով, թե ի՞նչ են նրանք տալու, ե՞րբ և ու՞մ: Նրանք պետք է ապահովեն նաև, որ օգնությունը օգտագործվի համապատասխան գնումների ուղեցույցների և գնահատեն ծրագրերը առողջապահական արդյունքների առումով և ոչ թե վճարումների մակարդակով կամ արագությամբ:

Որպես բնակչության կողմից ընտրված ներկայացուցիչներ խորհրդարանականները առաջնորդման էական դեր են կատարում կոռուպցիայի դեմ պայքարում: Իրենց օրենսդրական, վերահսկողական և ներկայացուցչական դերերի միջոցով նրանք կարող են կոռուպցիայի կանխման համար իրավական դաշտ ստեղծել, վերահսկել օրենքների և քաղաքականությունների իրականացումը, և կառավարության ու իրենց ներկայացնող քաղաքացիների միջև կարևոր կամուրջ ստեղծել, որտեղ իշխում են թափանցիկությունը մատչելիությունն ու հաշվետվողականությունը:

Խորհրդարանականները կարող են իրենց օրենսդրական դերով ընկճել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հետ կապված կոռուպցիան: Օրինակ, նրանք կարող են ապահովել գնումների գործընթացին վերաբերող համապատասխան օրենքներով ու քաղաքականությամբ և հակակոռուպցիոն օրենքներով, որոնք կանխում են կոռումպացված գործողությունները և դատական կարգով հետապնդում կոռուպցիոն գործողություններ թույլ տված անձանց: Հասարակությանը կոռուպցիայից զերծ պահելու օրենսդրությունը, որպես կանոն, ներառում է՝

- Տեղեկատվության մատչելիության իրավունքը, այնպես, որ խորհրդարանները և քաղաքացիները կարողանան պահանջել, որ կառավարությունը բացահայտի իր գործողություններին վերաբերող տեղեկատվությունը,
- Օրենքները, որոնք պաշտպանում են կոռուպցիոն դեպքերը բացահայտողներին՝ խրախուսելով դրանց մասին հաշվետվությունը,

- Շահերի բախմանը և կողմերի ֆինանսավորմանն ուղղված օրենքներ,
- Փողերի լվացման դեմ կանոնակարգեր՝ սահմանափակելու կեղծիքի փորձերը:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ոլորտում ներկայացուցչությունը կարող է ընդգրկել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող մարդկանց կամ այլ խոցելի խմբերի քաղաքացիների հնարավոր մասնակցությունը, ՀԿ-ները, համայնքային կամ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, որոնք զբաղվում են կանխարգելման, բուժման, խնամքի և աջակցության հարցերով, ինչպես նաև գործարար միությունները, գիտահետազոտական կենտրոնները, գիտական համագործակցությունը, կրոնական կազմակերպությունները և ՋԼՄ-ները:

Բանալի բառեր. կոռուպցիա, ՄԻԱՎ/ՁԻԱՀ, առողջապահության կառավարում, առողջապահական քաղաքականություն:

Գրականություն

1. “Corruption and HIV/AIDS”
<http://www.parliamentarystrengthening.org/HIVmodule/pdf/unit9.pdf>
2. «ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ ՀՀ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման 2013-2016», Երևան 2013
3. «Պետության կողմից երաշխավորված անվճար եվ (կամ) արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տրամադրման չափորոշիչ» ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի նոյեմբերի 18-ի N 71-Ն հրաման <http://www.arlis.am/documentview.aspx?docid=87826>
4. «Բնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում դիսպանսերային (շարունակական) հսկողության ծառայության կազմակերպման և կազմակերպամեթոդական աշխատանքների իրականացման չափորոշիչ» ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի նոյեմբերի 18-ի N 71-Ն հրաման <http://www.arlis.am/documentview.aspx?docID=88007>

5. http://archive.transparency.org/global_priorities/other_thematic_issues/health/hiv_aids
6. http://www.armmaids.am/main/free_code.php?lng=2&parent=3

ПУТИ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ УПРАВЛЕНИЯ СИСТЕМЫ ЗДРАВООХРАНЕНИЯ

С. В. Мартоян

Резюме

Результаты исследования показывают, что одним из способов повышения эффективности управления здравоохранения является снижения риска коррупции в сфере ВИЧ/СПИДа. В Армении год за год увеличивается ясло людей зараженных ВИЧ инфекцией. Автор надеется, что подробная информация анализов данных мирового опыта и рисков коррупции в сфере ВИЧ/СПИДа может способствовать осуществлению эффективной реформы государственной политики в здравоохранении.

Ключевые слова: коррупция, ВИЧ/СПИД, управление здравоохранения, политика здравоохранения.

HEALTH MANAGEMENT EFFICIENCY INCREASE WAYS

S.V. Martoyan

Summary

Survey results indicate that HIV/AIDS corruption risk reduction is one of the ways to increase the efficiency of the health sector management. The number of HIV-infected population annually increases in Armenia. The author hopes that the further details of the analysis of global experience and HIV/AIDS corruption risks can contribute to the effective public policy reforms in the health sector.

Key words: Corruption, HIV/AIDS, health management, health policy.

**ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԵՏԵՎԱՆՔԵՐԸ ՀՀ-ՈՒՄ. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՄՈՂԵԼԸ
ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Ս. 4. Մարդոյան

Տնտեսական զարգացման արդի շրջանում կոռուպցիան շարունակում է մնալ մարտահրավեր և առողջապահության համակարգի կառավարման հզորացման համար կարևորվում է պետական կառավարման արդյունավետ համակարգի ձևավորումը, որը նախատեսում է սովերային տնտեսության ու կոռուպցիայի մակարդակների կտրուկ նվազեցում: Հանրային առողջապահության բարելավումը մարդկության զարգացումն ապահովող հիմնական նախապայման է: Մարդկության առողջության բարելավումը հնարավոր է առողջապահության համակարգի հզորացման միջոցով: Սակայն չնայած քաղաքականությունների անթիվ ախտորոշումների, տեղեկացվածությունը բարձրացնելուն ուղղված հանրային քարոզարշավների և հանրային կառավարումը բարելավելուն ուղղված ինստիտուցիոնալ ու իրավական բարեփոխումների, կոռուպցիան, ինչպես ցույց են տալիս բազմաթիվ հետազոտություններ, շարունակում է ծաղկել:

Բացի միջազգային կազմակերպություններից, կոռուպցիան տնտեսական վերլուծության են ենթարկել այնպիսի հայտնի տնտեսագետներ, ինչպիսիք են Ս. Ռոուզ-Ալկերմանը, Ս. Ալաթասը եւ այլն: Այսպես, Ս. Ռոուզ-Ալկերմանը, ում աշխատանքներն ունեն դասական բնույթ, այս ոլորտում հետազոտելով կոռուպցիան տնտեսական վերլուծության տեսանկյունից, չի տարանջատում կոռուպցիան կաշառակերությունից¹: Իսկ ըստ Ալաթասի՝ «Կոռուպցիան իրենից ներկայացնում է վստահության չարաշահում՝ ի շահ անձնական օգուտի»²:

Որակյալ բուժճառայությունների համընդհանուր և անաչառ հասանելիությունն ապահովելու համար պետությունը պետք է հասարակական եկամուտների մի բավականաչափ մասնաբաժին հատկացնի

¹ Роуз-Аккерманс, Коррупция и государство.Причины, следствия, реформы, Гл. 2, Экономическое последствия коррупции, М.: Логос, 2003.

² Alatas S.H., Corruption: its Nature, Causes and Consequences, Aldenshot: Avebury, 1990, Ch. 1.

առողջապահությանը: Մինչ բարձր եկամուտ ունեցող պետությունները առողջապահության վրա ծախսում են ՀՆԱ-ի նվազագույնը 5%-ը, ցածր եկամուտ ունեցող պետությունները առողջապահության վրա ծախսում են այս թվի կեսից էլ քիչը³: Հայաստանի կառավարությունը 2014թ. հանրային առողջապահական ծառայությունների վրա ծախսել է համախառն ներքին արդյունքի մոտ 1.9%-ը⁴: Առողջապահության ոլորտին ուղղված հատկացումների բաժինը ազգային բյուջեում 2014թ. կազմել է մոտ 6.5%:

Կոռուպցիան կարող է ազդել մակրոտնտեսական աճի վրա մի շարք ուղիներով: Ամենաակնհայտն ու ուղղակին արտադրողականության և աշխատուժի վրա ազդեցությունն է՝ վերարտադրողական տարիքի մարդկանց հիվանդության և մահացության աճի հետևանքով: Կոռուպցիան կարող է մակրոտնտեսական աճի վրա ազդել նաև փոխելով ռեսուրսների բաշխումը սպառման և խնայողությունների միջև: Աճող ծախսերը տանում են տնային տնտեսությունների ավելի բարձր սպառում/խնայողություններ հարաբերակցության ձևավորմանը, ինչն իր հերթին կրճատում է ներդրումները և տնտեսական աճը:

Մակրոտնտեսության մակարդակով կոռուպցիան սահմանափակում է տնտեսական աճը, քանի որ մասնավոր ընկերությունները կոռուպցիան ընդունում են որպես «հարկի» մի տեսակ, որից կարելի է խուսափել, կատարելով ներդրումներ ավելի քիչ կոռումպացված երկրներում: Իր հերթին, ցածր տնտեսական աճը բերում է ներդրումների համար առկա պետական եկամուտների նվազեցմանը, այդ թվում նաև առողջապահության ոլորտում ներդրումների: Կոռուպցիան ազդում է նաև պետության որոշման վրա, թե ո՞ր ոլորտներում ներդրումներ կատարել: Կոռումպացված կառավարությունը ավելի շուտ ներդրումներ է կատարում այնպիսի ենթակառուցվածքում, ինչպիսիք են՝ տրանսպորտային և ռազմական ոլորտները, որտեղ գնումների պայմանագրերը կաշառք կորզելու հիանալի պայմաններ են ստեղծում, քան թե սոցիալական ոլորտներում, ինչպիսիք են՝ առողջապահությունն ու կրթությունը:

Զբաղվածների թվի նվազումը և հիվանդության հետևանքով առաջատունակ դարձած անձանց թվի աճը պետական բյուջեի և սո-

³ Improving health financing in Armenia http://pdf.usaid.gov/pdf_docs/PNADR989.pdf

⁴ Stua' <http://data.worldbank.org/country/armenia> Այցի օր՝ 18.04.2015

ցիալական ապահովագրության մարմինների եկամուտների (ներառյալ չվճարված եկամտահարկ և սոցիալական վճարներ) կորստի և ծախսերի (ներառյալ հաշմանդամության թոշակներ, վճարներ ժամանակավոր անաշխատունակության դիմաց, մանկատներում երկկողմանի ծնողազուրկ երեխաների հոգածության ծախսեր) ավելացման պատճառ են հանդիսանում:

Կոռուպցիայի մոդելը ՀՀ առողջապահական համակարգում:

Հետազոտվել են ՀՀ-ում կոռուպցիայի սոցիալ-տնտեսական ազդեցության երեք հիմնական կողմերը:

- Առաջին, գնահատվել է կոռուպցիայի ազդեցությունը աշխատուժի և պետական բյուջեի եկամուտների վրա:
- Երկրորդ, գնահատվել է կոռուպցիայի ազդեցությունը առողջապահության ոլորտի վրա: Առողջապահության ծախսերը մոդելավորվել են SPSS փաթեթի օգնությամբ:
- Երրորդ, գնահատվել են կոռուպցիայի հետևանքները երկրի տնտեսական աճի և կյանքի տևողության վրա:

ՀՀ առողջապահական համակարգում կոռուպցիայի գնահատման համար առաջարկված՝ կոռուպցիայի և տնտեսական աճի միջև առկա կապի էմպիրիկ մոդելը մշակելիս օգտագործվել են հայաստանյան տնտեսությունում կատարված վերլուծություններ և մի շարք ընտրանքային հետազոտությունների (ԱՄՆ ՄՁԳ ԱԱՊԲ ծրագրի կողմից իրականացվող տնային տնտեսությունների հետազոտությունները, ՀՌԿԿ Կովկասյան բարոմետրը, ՀՀ ԱՎԾ - Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունը) առաջնային տվյալները: Զարգացվել է Սոլոուի տնտեսական աճի մոդելը՝ ընդգրկելով կոռուպցիան որպես բազմագործոն արտադրողականության որոշիչ գործոն, հիմնվելով Քոբ-Դուգլասի արտադրական ֆունկցիայի վրա:

Բացի աճի ցանկացած մոդելի դասական բաղկացուցիչ մասերից (թողարկվող արտադրանք, կապիտալ, աշխատանք), ավելացվել է նաև կոռուպցիան՝ որպես պետական ծախսերի, ներդրումների և արտաքին ռեսուրսների որոշիչ գործոն: Ենթադրություն է արվել, որ թողարկվող արտադրանքի և տնտեսական աճի վրա իր ազդեցությունն ունի կոռուպցիայի մակարդակը: Համաձայն առաջադրված տեսական մոդելի՝ կոռուպցիայի մակարդակը իր ազդեցությունն է թողնում ար-

տադրության ծավալի և տնտեսական աճի վրա: Եթե, ինչպես պարզաբանվում է տեսական մոդելում, կոռուպցիան ազդում է տնտեսական աճի վրա, ապա, արտադրության հիմնական գործոնները կոռուպցիայի առկայությունից որակազրկվում են, ապա դա նույնպես ազդում է տնտեսական աճի և արտադրության մակարդակի վրա:

Հետազոտությունն ընդլայնում է Սոլոուի մոդելը՝ ընդգրկելով կոռուպցիան որպես բազմագործոն արտադրողականության մեջ որոշիչ գործոն, որը, այս դեպքում, առողջապահական պետական ծախսերն են:

Տեսական մոդելը ընդգրկում է կոռուպցիայի, ֆիզիկական կապիտալում ներդրումների, բնակչության աճի, կապիտալի մաշվածության և բազմագործոնային արտադրողականության (պետական ծախսեր, արտաքին օգնություն և ներդրում) պարամետրեր:

$$\ln(GDP_t) = \beta_0 + \beta_1 \ln(\delta + POP_t + g_t) + \beta_2 \ln(INV_t) + \beta_3 \ln(EDU_t) + \beta_4 CRPT_t + \beta_5 CRPTsq_t + \beta_6 t + \varepsilon_t$$

որտեղ δ – ն կապիտալի մաշվածությունն է, POP_t -ը՝ բնակչության տարեկան աճը, INV ՝ իրական ներդրումների տեսակարար կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ, EDU ՝ կրթության վրա կատարված պետական ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ, $CRPT$ ՝ կոռուպցիայի չմշակված տվյալն է՝ փոխարկված 0-ից 1 սահմաններում ցուցանիշի (Հայաստանում 1985-2012 թթ. գրանցված միջին կոռուպցիան 0-ից 10 սահմաններում, որտեղ 10-ը վերաբերվում է ամենացածր կոռումպացված երկրին):

ՀՀ-ում կոռուպցիայի և տնտեսական աճի միջև գոյություն ունեցող կապի բազմագործոն ռեգրեսիոն էտապային (STEPWISE) վերլուծությունը ցույց է տալիս, որ բնակչության մեկ շնչի հաշվով կատարված առողջապահական ծախսերի ու ներդրումների արդյունավետությունը կապված է ոլորտում կոռուպցիայի մակարդակի հետ՝ որքան ցածր է կոռուպցիայի մակարդակը, այնքան բարձր է բնակչության մեկ շնչի հաշվով կատարված առողջապահական ծախսերի ու ներդրումների արդյունավետությունը, մասնավորապես՝

1. բնակչության մեկ շնչի հաշվով առողջապահական ծախսերի ԱՄՆ մեկ դոլարով աճը բերում է 11.5-ից 23.7 ԱՄՆ դոլարի սահմաններում բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի աճ;

2. ներդրումների ԱՄՆ մեկ դոլարով աճը բերում է 30.6-ից 90.4 ԱՄՆ դոլարի սահմաններում բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի աճ:

Արդյո՞ք բարձր կենսամակարդակ ապահովող գործոնները ազդում են նաև կյանքի տևողության վրա: Այս կարևոր գործոնները ընդգրկող մոդելը կարո՞ղ է արդյոք կանխատեսել կյանքի տևողությունը: Կատարվել է վիճակագրական վերլուծություն Հայաստանի բնակչության համար: Բնակչության կյանքի տևողության ու կոռուպցիայի միջև կապը մոդելավորվել է որպես:

$$\ln(LIFE_EXP_t) = \beta_0 + \beta_1 \ln(\delta + POP_t + g_t) + \beta_2 \ln(INV_t) + \beta_3 \ln(EDU_t) + \beta_4 PHE_t + \beta_5 OOPHE_t + \beta_6 t + \varepsilon_t$$

որտեղ δ – ն կապիտալի մաշվածությունն է, POP-ը՝ բնակչության տարեկան աճը, INV՝ իրական ներդրումների տեսակարար կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ, EDU՝ կրթության վրա կատարված պետական ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ, PHE՝ առողջապահական պետական ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ, OOPHE՝ գրպանից դուրս կատարված առողջապահական ծախսերի տեսակարար կշիռը ընդհանուր առողջապահական ծախսերի նկատմամբ:

Կյանքի տևողության բազմագործոն ռեգրեսիոն մեթոդով էտապային (STEPWISE) վիճակագրական վերլուծությունը սկսել ենք 12 փոփոխականներով, որոնք արտացոլում են կյանքի տարբեր կողմերը: Վերլուծությունը ցույց է տվել, որ սոցիալ-տնտեսական փոփոխականները, ներառյալ մեկ շնչի հաշվով առողջապահական ծախսերը, ինչպես նաև գրպանից կատարած առողջապահական ծախսերը իրենց էական ազդեցությունն են թողնում բնակչության կյանքի տևողության վրա, մասնավորապես՝

1. բնակչության թվաքանակի տարեկան մեկ մարդով աճը բերում է 4.2-ից 6.6 տարիների սահմաններում բնակչության կյանքի տևողության աճի (Հայաստանում բնակչության մոտ երկու երրորդը քաղաքաբնակ է, որը բնակվում է բժշկության և ժամանակակից առաջադիմությունների, բայց նաև աղմուկի ու աղտոտվածության կենտրոններում, սակայն՝ մյուս կողմից բնակչության աճը կարող է բերել նաև առկա ռեսուրսների կրճատման):

2. այցելուների գրպանից կատարված առողջապահական ծախ-

սերի մեկ միավորով աճը նվազեցնում է բնակչության կյանքի տևողությունը 0.031-ից 0.012 տարիների սահմաններում:

Այսպիսով, հասարակության առողջական վիճակի և տնտեսական զարգացման միջև առկա է որոշակի կապ, որն առողջությունը դնում է աղքատության հաղթահարման ռազմավարությունների ու շահերության կենտրոնում: Աղքատությունը նպաստում է կոռուպցիայի տարածմանը, իսկ զարգացող հիվանդությունները մարդկանց տանում են դեպի աղքատություն:

Բանալի բաներ. կոռուպցիա, առողջապահական քաղաքականություն, թափանցիկություն, սոցիալ-տնտեսական հետևանքներ:

Գրականություն

1. Improving health financing in Armenia
http://pdf.usaid.gov/pdf_docs/PNADR989.pdf
2. Роуз-Аккерманс, Коррупция и госуарство.Причины, следствия, реформы, Гл. 2, Экономическое последствия коррупции, М.: Логос, 2003.
3. Alatas S.H., Corruption: its Nature, Causes and Consequences, Aldenshot: Avebury, 1990, Ch. 1
4. The world bank data: <http://www.worldbank.org/en/country/armenia>
<http://www.transparency.org/research/cpi/overview>

СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИЕ ПОСЛЕДСТВИЯ КОРРУПЦИИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ: МОДЕЛЬ КОРРУПЦИИ В СФЕРЕ ЗДРАВООХРАНЕНИЯ РА

С. В. Мартоян

Резюме

Исследования показывают, что странах с высоким уровнем коррупции, как правило, существуют социально-экономические проблемы. Коррупция может тормозить экономический рост в различных направлениях. Самое очевидное это влияние на производительности труда и рабочей силы, в результате роста заболеваемости и смертности людей репродуктивного возраста. Автор надеется, что данный анализ может способствовать осуществлению

эффективной реформы государственной политики в здравоохранении.

Ключевые слова: коррупция, политика здравоохранения, прозрачность, социально-экономические последствия.

SOCIO-ECONOMIC IMPACTS OF CORRUPTION IN ARMENIA: CORRUPTION MODEL IN THE HEALTH SECTOR OF RA

S.V. Martoyan

Summary

Research findings show that in countries with high rates of corruption, as a rule, there are socio-economic problems. Corruption can stop economic growth in a number of ways. That is the impact on the labor productivity and workforce, as a result of morbidity and mortality growth in people of reproductive age. The author hopes that the analysis can contribute to effective public policy reforms in the health sector.

Key words: Corruption, health policy, transparency, socio-economic impacts.

НАЦИОНАЛЬНЫЙ БРЕНД, СОЗДАНИЕ И ПРОДВИЖЕНИЕ

Л. В. Тумян

Если обратиться к определению Американской Маркетинговой ассоциации, то бренд – это: название, термин, знак, символ или любая другая характеристика, которая бы идентифицировала товар или услугу как отличную от других товаров. (American Marketing Association, Филипп Котлер).

Однако уже давно бренд – это не просто товарный знак, это образ, имидж, репутация, “отпечаток пальца” компании. Это своего рода обещание клиентам, партнёрам, или общественности. Без особенного и привлекательного бренда, мало кто из сегодняшних ведущих компаний мог бы достигнуть, а тем более поддерживать уровень рентабельности, долю рынка, лояльность потребителей и сотрудников.

Бренд является критическим фактором, поскольку высокое качество товаров, производительность или надёжность являются необходимыми условиями для входа на большинство современных рынков, но недостаточными для создания прочного конкурентного преимущества или даже для регулярных продаж. Бренд - это именно то, что заставляет потребителя выбирать тот или иной товар, когда товары и услуги в целом идентичны.

Понятие бренда также применимо, когда мы говорим о стране и на самом деле играет огромную роль для ее экономического развития.

Далеко не все страны являются экономически развитыми, но практически каждая страна богата нематериальными активами и широким спектром культурных, исторических, географических, человеческих и интеллектуальных ресурсов. Однако, в большинстве своем, по той или иной причине, у стран нет или не было соответствующих условий, умений или мотивации чтобы перевести эти ресурсы в активы, последовательно генерирующие экономическую прибыль

Тем не менее, без мощной и положительной репутации или так называемого “национального бренда”, ни одна страна не может последовательно конкурировать за потребителей ее товаров,

туристов, инвесторов, иммигрантов, уважения и внимания других стран или мировых средств массовой информации.

Можно сказать что бренд это сумма нематериальных конкурентных активов страны: ее видение, ее уникальность, своеобразие или характер, история и т.д. Эти факторы, объединение четкой стратегией, могут дать конкурентное преимущество, право и возможность получения дополнительной прибыли. Как известно, рынок оценивает стоимость брендов многих компаний во много раз больше, чем материальные активы этих компаний, классический пример - Coca-cola. И если можно было бы измерить ценность бренда страны, он также может превышать свои физические ресурсы столь же много раз.

Так почему же нематериальные активы стран не всегда "поставлены за работу" для экономического роста и процветания страны? Причин может быть много, но теория бренда предполагает одну но очень значительную: отсутствие стратегии продуктивного и согласованного управления этими нематериальными активами.

Национальный брендинг:

Большинство людей знакомы с тем, что ученые маркетологи называют эффектом COO (country of origin) или эффектом страны происхождения - другими словами, способность географической индикации явно или неявно добавлять ценность продуктам и услугам, создать ценовую премию за них и стимулировать лояльность клиентов к ним. Например, японская электроника, немецкие автомобили, французские духи или итальянская мода, которые пользуются такой репутацией и за что многие потребители готовы платить дополнительную премию за ранее неизвестные бренды в этих секторах просто потому, что они звучат японский, немецкий, французский или итальянский.

Это основной принцип национального брендинга. Эффект страны происхождения влияет не только на экспортируемые товары и услуги, он имеет очень большое значение для восприятия миром людей страны (будь то в качестве сотрудников, инвесторов, иммигрантов, политиков), оценки спортивных и культурных достижений, политических и дипломатических отношений с другими

странами, туристической привлекательности, достопримечательностей и культурного наследия, инвестиционных предложений, и таким образом играет важную роль в экономической, социальной, политической и культурной составляющей прогресса страны.

Когда страна широко известна за свои достижения в определенных областях, за свои ценности или культуру, она имеет значительное преимущество по сравнению со странами, чья "личность" менее ясна, менее известна или менее положительна. Четкий, правдивый и привлекательный национальный бренд достигается тогда, когда основные органы страны, ее деятельность и инвестиции организованы вокруг четкого и общего видения, и когда каналы связи с остальным миром (диаспора, туризм, инвестиции, экспорт, культурные связи, дипломатия и т.д.) гармонизированы.

Основные каналы национальной коммуникации могут быть представлены в виде 7-ти угольника. Каждая из сторон семиугольника включает в себя различные аспекты интеллектуального капитала нации и соответственно страны, и вместе они складываются в единую "идею нации", которая может влиять на повышение эффективности во многих областях международной торговли, отношений и культурно-социального обмена. Как и любым другим видом интеллектуальной собственности, сторонами семиугольника необходимо управлять.

Только при наличии четкого управления, когда все "игроки" разделяют общее видение, представление о будущем и настоящем, при достижении определенного уровня гармонизации между их действиями и коммуникациями есть серьезные шансы на создание имиджа страны честно и позитивно отражающего реальность. Для формирования согласованного и положительного мнения о стране, большинство сообщений которые получает международная «аудитория» должны быть созвучны и со-направлены.

- Туризм: Зачастую наиболее заметным аспектом бренда страны, является туризм, который как правило, также является серьезной маркетинговой силой. Туристическая "идея" нации создает визуальный образ страны, которая может повлиять на многие другие области - иностранные инвесторы, например, вполне могут сделать выбор страны быть под этим влиянием, так что этот аспект ИК

страны следует рассматривать как гораздо большее, чем просто канал продаж.

- Экспорт: В развивающихся странах, большинство продуктов и услуг экспортируется как не-брендовые товары. Это представляет собой отказ заработать на значительном потенциале для увеличения рыночной стоимости товаров. Правительства, которые преуспевают в создании благоприятной среды для стимуляции инноваций, творчества и постоянного развития интеллектуального капитала нации, вероятно смогут достигнуть высокорентабельного экспортного сектора, что в свою очередь может повысить ценность национального бренда.

Мощный, узнаваемый и привлекательный национальный бренд является наиболее ценным подарком, который правительство может дать своим экспортерам: как например «Сделано в Японии» работает для электроники, или «Сделано в Италии» для моды. Сегодня, формирование и экспорт брендовых товаров один из самых мощных способов создания и поддержки имиджа страны. **Ибо продавать неизвестный товар из неизвестной страны – это нелегкая задача.**

- Государственное управление

О странах судят также и по той роли, которую их лидеры играют в зарубежных и внутренних делах, и “политическая” активность, как и любая другая, должна принимать во внимание стратегические императивы национального бренда. Когда политика находится в синергии с другими каналами, удается быстрее установить место страны в мировом сообществе.

“Политический ИК”, является еще одним фактором, который способствует развитию национального бренда: и является фактически репутацией которую правительство страны приобретает при проведении характерной политики, как в отечественных так и международных делах. Тем не менее, Политический ИК является, по разным причинам, одним из самых сложных для управления элементов интеллектуального капитала нации, но он имеет особенно сильное влияние на другие стороны семиугольника.

- Люди

Одним из самых масштабных “каналов связи” для представления миру сложность и многогранность страны является ее народ. Когда не

только дипломаты, политики или известные люди, а каждый рядовой гражданин становится страстным “послом” своей страны, тогда действительно могут произойти положительные изменения. Человеческий капитал нации, их коммуникации, взаимоотношения являются основным ресурсом создания “национального бренда”.

- Диаспора

Здесь нельзя обойти вниманием фактор диаспоры. Огромная роль для представления миру “лица” страны принадлежит именно ей. При общении с диаспорой создается первое представление о нации, о стране, о ее ценностях, культуре, традициях. Именно уважение или позитивное отношение, завоеванное диаспорой впоследствии проецируется на отношение и уважение к народу в целом или наоборот.

- Инвестиции и Иммиграция

Много примеров быстрого роста за последнее столетие произошло потому, что некоторые места стали магнитами для талантов, инвестиций и бизнес-проектов. Наличие большого интеллектуального капитала неизменно привлекает больше того же самого, создавая замкнутый круг ускорения развития качества и инноваций. Привлекательный бренд может дать серьезную фору стране и помочь получить первые места в “top” листе предпочтений.

- Культура и наследие

Интеллектуальный капитал наследия страны, истории, культуры и географии часто хорошо известен, но неэффективно или недостаточно эффективно используется для создания «добавочной стоимости» для продаж. Например, этот капитал часто неадекватно используется для развития туризма. Страны, которые рассматривают рост только как чисто экономический вопрос рискуют создать двухмерный бренд, представляющий интерес только для инвесторов или бизнесменов. Культура, наследие и спорт способны обеспечить третье измерение, давая таким факторам место как духовное богатство, достоинство, доверие и уважение как за рубежом, так и у себя дома.

На самом деле бренд или образ страны, будь он хорошим или плохим, редко совсем точно отражает действительность. В случае

развивающихся стран, наиболее распространенная причина разрыва между образом и реальностью, это то что страна может меняться довольно быстро, но ее образ или бренд отстает на годы или десятилетия. Большинство «переходных экономик» страдают от брендов которые родились в ранний или совсем другой политический период, и который сейчас постоянно препятствует политическим, экономическим, культурным и социальным устремлениям страны.

Однако широко распространено мнение, что мало что можно сделать чтобы исправить имидж страны: одни обвиняют СМИ, невежество людей, глобализацию или просто свою собственную историю, но даже не самые богатые страны могут многое сделать, чтобы изменить негативный стереотип.

Есть достаточно примеров доказывающих что международная репутация страны может управляться и меняться если существует четкая стратегия и должная координация между правительством, государственным и частным сектором и населением в целом.

Это особенно важно для развивающихся стран. Для них брендинг может стать способом, чтобы их усилия, достижения и амбиции стали бы видны, признаны и правильно интерпретированы мировым сообществом. В более широком смысле, брендинг также предоставляет собой способ для сравнительно маленьких и бедных стран по созданию и коммуникации своей истинной культурной, социальной и исторической ценности и возможности вырезать так сказать “нишу восприятия” для себя в мировом сообществе.

В этом смысле, национальный бренд это материальный, надежный, коммуникабельный и полезный инструмент для национального самосознания и восприятия нации.

Это, без сомнения, очень ценный объект интеллектуальной собственности, которым обладает любая нация, и знание как защитить, развить и использовать этот актив является ключом для перевода нематериального богатства развивающихся стран в экономический рост.

Перед Арменией этот вопрос стоит особенно остро. Страна обладает огромным нереализованным потенциалом и создание национального бренда могло бы стать тем необходимым толчком для

коммуникации своей истинной культурной, социальной, исторической и экономической “ценности”. Радует то, что уже делаются первые шаги в этом направлении. Однако вопрос не только и не столько в создании бренда, сколько в понимании того, что этим процессом надо управлять. Необходима четкая стратегия и должная координация между правительством, государственным и частным сектором. Только при наличии четкого управления, когда все “игроки” разделяют общее видение, представление о будущем и настоящем, при достижении определенного уровня гармонизации между их действиями и коммуникациями есть серьезные шансы на успех. Ибо Армения достойна национального имиджа, который сможет помочь ей раскрыть свою вековую уникальность и достичь успеха на мировых рынках, привлекая новых клиентов, партнеров и инвесторов.

Ключевые слова: интеллектуальный капитал (ик), политический ик, нематериальные активы, бренд, брендинг, инвестиции, экономическое развитие.

Литература

1. [http://page42.ru/files/2014/01/13/_Бренд России. Создание и продвижение национальных брендов.pdf](http://page42.ru/files/2014/01/13/_Бренд_России._Создание_и_продвижение_национальных_брендов.pdf)
2. <http://cheapfinance.ru/materials/predprinimatelstvo/drugie-preimushhestva-silnogo-nacionalnogo-brenda>
3. <http://www.ippnou.ru>
4. http://www.adbusiness.ru/content/document_r_3FEF5A79-7937-40F2-B3BF-FB54EF220F77.html

«ԱԶԳԱՅԻՆ ԲՐԵՆԴԻ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԻԱՂԱՑՈՒՄ»

L.Վ. Թումյան
Ամփոփում

Երկրի զարգացման և աճի ներուժը մեծապես կախված է ոչ նյութական ակտիվների (ինտելեկտուալ կապիտալի) զարգացման և արդյունավետ օգտագործման մակարդակից: Ժամանակակից աշխարհում ազգային հարստության ձևավորումը ենթադրում է ինտելեկտուալ կա-

պիտալի ռացիոնալ օգտագործումը, զարգացումը և կառավարումը: Ազգային բրենդը, որը հանդիսանում է ազգի կարևորագույն ոչ նյութական ակտիվներից և գիտելիքները, թե ինչպես զարգացնել, պաշտպանել և օգտագործել այս ակտիվը, անհրաժեշտ են երկրի ոչ նյութական հարստությունը օգտագործելու տնտեսական աճը ապահովելու համար:

Բանալի բառեր. ինտելեկտուալ կապիտալ (ԻԿ), քաղաքական ԻԿ, ոչ նյութական ակտիվների, բրենդ, բրենդինգ, ներդրումներ, տնտեսական զարգացում:

“NATIONAL BRAND, DEVELOPMENT AND PROMOTION”

L.V. Tumyan

Summary

The development and growth potential of the country is highly dependent upon the development and effective use of intangible (intellectual) assets. Creation of national wealth in a world economy today implies the owning, developing, and managing the intellectual assets. National brand is the nation's most important intangible assets and knowledge of how to develop, protect and utilize this asset is the key for translating the intangible wealth to the country's economic growth.


Key words: intellectual capital, political IC, intangible assets, brand, branding, investments, economic growth.

POSSIBILITIES OF INTRODUCTION AND APPLICATION OF INFORMATION TECHNOLOGY IN RURAL AREAS OF DEVELOPING COUNTRIES

A.H.M. Nemati

Introduction

More than 2.5 billion people (about 40 per cent of the world's population) live in the rural and remote areas of developing countries where access to telecommunications is still very limited, according to an ITU(International telecommunication union) worldwide survey on rural communications. Released in June 2004, the survey analysis indicates that many of the problems facing rural areas are outside the scope of telecommunications alone to resolve and require coordination of rural electrification, transport network development, education and training programmes. Of the small fraction of people in rural areas that have access to telecommunications, radio broadcasting and fixed-voice telephony have traditionally been the main services provided. In recent times, mobile telephony has been critical for enhancing this access, in some economies surpassing fixed lines. Internet-based services are yet to have any significant impact on most rural areas. Figure 1 provides an overview of the services available in the rural areas.



The needs of rural people in connection with e-services based on data from 25 economies E-health, e-education and e-administration top the list as primary needs. ICT training and the need to create awareness amongst rural people of the relevance of e-services were underlined. E-

business and e-banking also scored highly, with a number of respondents commenting on how e-business and e-commerce could play an important role in enabling local business, to reach national and international markets. Other needs include general ICT access, unrestricted or uncensored Internet access, as well as access to specific Internet services such as e-mail and Web publishing.

On the other hand, past century has witnessed extra-ordinary developments in technology. The Internet and the convergence of telecommunications with Information Technology, Voice, Data and Entertainment Electronics presents unique opportunities in the next millennium. Development of communication has traditionally been confined to urban areas in developing countries. Comprehensive policy framework for regulating and upgrading telecom services are being formulated in several developing countries but still it is a far cry for rural areas except for developed countries.

Possibilities and challenges

Rural information technology applications in the recent past have demonstrated the important role play in the realm of rural development. Several projects have attempted to improve the reach, enhance the base, minimize the processing costs, increase transparency, and reduce the cycle times .As an example, in India Several states have initiated the creation of State Wide Area Networks (SWAN) to facilitate electronic access of the state and district administration services to the citizens in villages .Studies and experiences of Center for Electronic Governance at Indian Institute of Management, Ahmedabad (CEG-IIMA) indicate that significant efforts are required to design, develop and internalize the ICT solutions through well managed reengineering of back-end processes and capacity building efforts to ensure sustainability. Suitable public-private partnership models have to be adopted to ensure rapid development and cost-effective solutions.

.Most of projects have seen developments in the Internet technology and dropping costs of PCs as opportunity to reach remote locations. They used the existing telecom infrastructure and the Internet access through ISPs as inexpensive connectivity solution. They tried to package in all possible information services for the rural citizens as a single point access

through PC based kiosks connected to ISPs. Some projects have experimented with the wireless technology to reach the remote locations. However, a large number of rural ICT applications have slipped in performance and are facing acute problems of sustenance after their successful launch by the dynamic project champions. Some of the important observations based on its evaluations of some of these projects and the experiences on developing proof-of-concept projects are :

- i. Design of citizen-centric services and dependable service delivery mechanisms.
- ii. Selection of appropriate (dependable, maintainable and cost effective) technologies for rural connectivity and information processing solutions
- iii. Design of cost-effective delivery stations (kiosks) to enable private entrepreneurs operate the services profitably and build new services for sustainability
- iv. Re-engineering of back-end processes and introduction of changes that take advantage of the storage, processing and distribution powers of the emerging ICTs
- v. Ensuring employee participation with well designed change management processes
- vi. Demonstration of transparency and efficiency to remove distrust and build confidence among the citizens on the functioning of service delivery mechanisms
- vii. Inviting private participation to reduce the burden on the central servicing agency, bring in the expertise, enhance the speed of implementation, and offer better value proposition to the citizens.
- viii. Identifying and preparing project champions, ensuring appropriate tenures, facilitating smooth transition, and internalization of the changed procedures .

ICT Availability for Rural Applications

Computers have become more powerful, user friendly and less expensive. The PC revolution has brought them closer to the users to the extent that in number cases users have designed and developed their own applications. However, till recently, it has not become easy to create local

content and regional language interfaces, to facilitate their use in villages. In addition, although the hardware costs are coming down, the total cost of ownership for rural applications is quite high. The costs of the minimum required gadgets like PC, Modem, Power stabilizer, and Printer along with the license costs of software (OS ,Database, and Application as applicable) does not justify their use for offering government related information services, just on the basis of return-on-investment criterion. These equipments become obsolete too soon, and have high maintenance costs in the rural areas .It is expected that most of the rural ICT applications are meant for socially and economically backward communities. Therefore the service delivery mechanisms must be aligned to this fact. These kiosks must be located in the areas convenient to them to approach and use. The kiosk operators must communicate well with the citizens and cordially deliver the services .

Private Participation

Almost all rural e-Government project champions have found it convenient to involve different private agencies for different tasks through appropriate public-private-partnership (PPP) contractual arrangements. These tasks include design and development of application software, population of data and content in the regional language, procurement and installation of networking and computer systems, deployment of software and delivery of services. Such arrangement seems to have helped in reducing the burden on the government ,brought in the expertise, enhanced the speed of implementation, and offered better value proposition to the citizens .While there are benefits of private participations, it is important to guard the social objective behind these applications. Pure commercial benefit should not determine which services to offer.

Capacity Building

A large number of people at various levels have to be trained on the changed environment with ICT applications to meet the citizen expectations .To start with, it is important to identify and prepare project champions. Functionaries attempting to design information technology applications must have adequate experience and training to design, implement and manage ICT applications. They must be able to adequately

reengineer the existing processes and introduce the desired changes in the system. They must be able to coordinate with number of agencies dealing with technology and citizen services. It is unlikely that the existing functionaries have exposure and adequate knowledge on all these aspects. Therefore, it is desirable for the governments to organize special training programmes which provide formal inputs on the planning and implementation of ICT systems in government. All functionaries of the government departments need undergo training on behavioral issues involving themselves, citizens, and private agencies. It is important that they are trained to accept the changed transparent environment facilitated through ICT based processing ,minimizing the paper transactions and reducing cycle time.

Barriers and Problems

The range of appropriate technology available for deployment in rural areas of developing countries is limited, as requirements vary from country to country and even place to place in the same country. In general, some of the problems to apply IT programs are:


- Lack of funding sources.
- Weak People's participation.
- Lack of dynamic policy frame-work.
- For many rural areas, ancillary services such as electricity supply are simply non-existent or insufficient.
- Insufficient infrastructure investment and capacity building.

Summary of Experiences and Results

The Information and Communication Technologies have facilitated the design of solutions to deliver government services for social development at the door step of rural poor .Successful ICT projects involved, in the design process, all stakeholders such as government officials, legislators, regulatory agencies, citizens, voluntary organizations, technology consultants and vendors, academics, researchers, funding agencies, and media. Most of these were accomplished using the public-private-partnership (PPP) model. The benefits derived from such projects are very significant .Based on observations and experiences, we consider the following as major factors responsible for successful implementation and sustenance of ICT projects for social development :

- Degree of efficiency and transparency demonstrated in citizen services
- Extent of reduction in cost and improvement of convenience for citizens
- Extent of reengineering and improvement of back-end services
- Extent of Integration of backend processes with front-end and web site
- Degree of employee involvement and change management
- Amenability for Public Private Partnership (PPP) arrangement
- Strength of PPP arrangement in the application development
- Strength of PPP arrangement in the service delivery
- Enhancement of Revenue for the government and the service provider

Figure 2 — Needs of rural populations in relation to IT



Key words: Information technology, Rural Area, Possibilities, Application

References

1. ITU News magazine / Sep. 2011
2. <http://www.revdept-01.kar.nic.in/Bhoomi/Home.htm>
3. <http://www.revdept-01.kar.nic.in/Bhoomi/Faq.htm>
4. <http://gyandoot.nic.in/>
5. <http://www.tenet.res.in/rural/sari.html>

6. <http://www1.worldbank.org>
7. <http://www.tenet.res.in/nlogue.htm>
8. <http://www.simputer.org/simputer>
9. <http://egov.mit.gov.in>, E-Governance Division, Department of Information Technology, May 2004.

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԵՎ
ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԱՐԳԱՑՈՂ ԵՐԿՐՆԵՐԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ**

**Ա.Հ.Մ. Նեմաթի
Ամփոփում**

Հոդվածում շեշտադրվում է գյուղական բնակավայրերում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման անհրաժեշտությունը քանի որ Ինտերնետային հենքով ծառայությունները գյուղերի մեծ մասում դեռևս որևէ էական դերակատարում չունեն: Ներկայացված են գյուղական բնակավայրերի հիմնական ենթակառուցվածքները, ինչպես նաև՝ դրանցում ՏՏ կիրառման հետ կապված մարտահրավերները: Հոդվածում ընդգծվում է գյուղական բնակչության՝ ՏՀՏ ուսուցման և էլեկտրոնային ծառայությունների գծով իրազեկվածության կարևորությունը: ՏՀՏ տեխնոլոգիաները նպաստում են կառավարության՝ գյուղական աղքատ բնակչության սոցիալական խնդիրների լուծմանը միտված ծրագրերի մշակմանն ու կենսագործմանը:

Բանալի բառեր. Տեղեկատվական տեխնոլոգիաներ, գյուղական շրջաններ, հնարավորություններ, կիրառում:

**ВОЗМОЖНОСТИ ВНЕДРЕНИЯ И ПРИМЕНЕНИЯ
ИНФОРМАЦИОННЫХ ТЕХНОЛОГИЙ В СЕЛЬСКИХ РАЙОНАХ
РАЗВИВАЮЩИХСЯ СТРАН**

**А.Г.М. Немати
Резюме**

В данной статье подчеркивается необходимость применения информационных технологий в сельских районах, так как в большинстве деревень интернет-услуги до сих пор не имеют

значительную роль. Представлены базовые инфраструктуры сельской местности, а также современные задачи их использования в сфере ИТ. В статье подчеркивается важность обучения и информационного обеспечения сельского населения в области ИКТ. ИКТ-технологии способствуют разработке и реализации социальных программ правительства, направленных на решение преодолению бедности в сельской местности.

Ключевые слова: Информационные технологии, сельские районы, возможности, применение.

THE ROLE OF INFORMATION AND COMMUNICATION TECHNOLOGIES IN RURAL DEVELOPMENT

A.H.M. Nemati

Introduction

Information technology is considered the most important strategic tool for the proper management of present day societies, and it is also developing at a remarkable speed. Development and application of information technology in rural areas, aiming at facilitating services and improving welfare indexes, initiates a new phase of rural development management which has formerly been considered by theorists and agents of rural development in many countries since the very last years of the 2nd millennium. This trend has accelerated at the beginning of the third millennium which is known as the age of information and the cyber and network world.

Many countries in the world today have made an attempt to provide the public with access to information technology in rural areas, and each has employed some strategies to achieve it. However, the common strategy to achieve public access to information and electronic services in rural areas has been in the form of telecommunications centers or information technology centers.

An electronic village is the one whose image is thoroughly changed by the wave of information technology and telecommunications, and the electronic applications play an obvious role in the life of the village people. People living in this village have access to different applications such as the electronic government, electronic trade, electronic learning and electronic hygiene and handle their daily tasks in agriculture, animal husbandry and trade through electronic systems. The electronic village serves as the point of access of the villagers to the outside world.

Definition of Information Technology

Information Technology Association of America, "ITAA", has defined information technology as "the study, design, development, application, implementation, support or management of computer-based information systems". In other words, Information Technology is the application of

computers and telecommunications equipment to safely store, retrieve, transmit and manipulate data.

Also, the network connection between the computers makes it possible for the users to have access to a wide range of software and data and provides easy access to the internet and the electronic mail for the organizations.

Features of Information and Telecommunication Technologies

- ✓ Widespread Presence: This quality roots in the fact that the impacts of the above mentioned technologies are now observed all over the world, even in the remotest regions, due to the range and diversity of telecommunications technologies. So, the isolated local cultures are now capable of moving beyond the limitations of time and space, and it has also enabled all forces around the world to come up and directly connect with the rest of the world. Therefore, information and telecommunication technologies have now covered the entire planet earth in the boundless space disregarding the time and space limitations. (Fat'hian 2006)
- ✓ Diversification: These represent the extremes of a spectrum such that the more diversified one gets the less condensed it becomes. Through development and expansion, information technology enables different people, groups and organizations to have access to it.
- ✓ Delocalization: Considering the range of spread of information and telecommunications technology, data is carried out in the cyber space. Therefore, information exists within this space and due to its dominance in the entire planet it is where information actually flows. It is such that under the present conditions information moves from one corner of the world to another by just pressing a button (Rajib M 2006).
- ✓ Decentralization: Due to the multidimensional nature of information, different people, organizations and groups may have access to it. In other words, the multitude of sources and the content of messages, connection routes, various senders and receivers of information lead to decentralization in supplying and

distributing information technology and consequently information flows at an extensive and complex level (Rajib M 2006).

- ✓ Flexibility: This quality enables data to be present around the world and accessible by all in different forms and numbers. Thanks to science, data is transmitted rapidly, and due to its mobility, activeness and adaptability, it is more flexible under different conditions (Rajib M 2006).
- ✓ Speed: Rapid growth of information technology and telecommunications, on the one hand, increases the speed of processing and computing in telecommunication systems such as computers and, on the other, immensely increases the speed of transmitting data.
- ✓ Openness and Clarity: This quality with its diversity and ever presence has indeed drawn the attention of all to itself and managed to reveal the hidden points to the public (Fat'hian, 2006).

The Role of the ICT in the Village Management

The impact of such a role is more pronounced when the management is based on the ICT as one of the main factors and objectives of development. Information and telecommunication are just one of the requirements of rural development and accelerate the process of development just like a catalyst. We have to bear in mind that although the ICT influences the productivity and efficiency of the rural managers, its impact brings about other advantages for the villages as well. The following cases are mentioned below based on expert views and the findings of the study:

- Villages with managers benefitting from the ICT are generally more flexible with regard to changes in the market and can better adjust themselves.
- The higher the rate and the level of the ICT, the greater the village manager's efficiency to respond to new means of production and the latest technologies, and he will advance in pace with the rapid changes of the industry.
- The impact of the ICT on village managers has positive side effects as well to the extent that it will also influence the other

groups from the village and consequently improve their productivity.

- ICT enables the village managers to make the most of the available resources.
- ICT improves the level of knowledge and skill of the managers and makes possible the better use of the available capacities in the village.
- Greater and better access of the rural managers to the ICT pronounces their greater participation in the society and accelerates the transmission from the traditional society to an industrial one (Amir Ahmadpoor,2010)

The Role of the ICT in Village Tourism

Village tourism and its exploitation as an income-earning advantage has the same quality in all under-developed to developed countries of the world; however, its features are more or less different. Planning is one of the success factors along with the essential potentials for the development of this kind of tourism. A proper planning and an efficient management are called for the village ecotourism to flourish. It can be a source of high income for village communities and ultimately result in the increased income of the villagers and the village managers. However, reaching this goal and changing ecotourism into a culture is faced with a lot of problems in different societies, and it influences the rise or fall of the income of the villagers, directly or indirectly. Removing these problems can greatly assist the achievement of the objectives of the rural tourism, particularly the increase in the income of the villagers.

The Role of the ICT in the Village Farming and Animal Husbandry

Technology plays a significant role in flourishing and improving the economic and sociocultural conditions of the villagers. Promotion of agriculture, as a component part of the rural management, has its own special place here. Organizations promoting agriculture play a key role in mediating between the information technologies and the providers of technologies and services to their users. In doing so, they must pay attention to the suitability of different technologies, accessibility to technologies in villages and remote regions, adjusting the issues related to

costs and benefits, assuring the access of different cultures to technologies, languages, social classes, age groups and sex-related issues (Richardson, D 2005).

The role of the ICT in the Development of the Electronic Government

Electronic government means providing the conditions under which the governments are able to offer their non-stop services to the citizens. This has been on top of the agenda of the states plans in the recent years and the intelligent statesmen have directed their goals towards realizing such conditions and tried to modify the socioeconomic and political issues with the aid of modern information technology and telecommunications and thus offer better services to the citizens. Good state management in the modern era means being accessible and the requirement of better governing is the fast and easy access of the citizens to information and qualitative services. Good state management means that the government offers its services at a greater speed with lower cost and more efficiency to a wide spectrum of its citizens.

Electronic government is a way for governments to apply new technologies which give necessary services to the individuals to have proper access to information and state services and improve their quality, and to offer them new opportunities for participation in democratic processes. Since the administrative offices cannot be set up all through the country, electronic state is most effective in accelerating and facilitating the administrative affairs and state services. To enable villages to have access to information, electronic government is planned on top of the agenda (Mal'ee 2012).

The Role of the ICT in the Development of Electronic Hygiene and Medicine in Villages

Words like Telemedicine, Telehealth, and the most recent term e-health, are more or less similar expressions used by communication tools to improve the uniform access of all users to medical care. Telemedicine ability to facilitate medical care online and in the absence of a caretaker on the spot is indeed vital and valuable. This phenomenon provides the best possible use of the limited manpower at the least cost and can decrease the rate of mortality in developing countries.

Telemedicine makes constant training of doctors, nurses and the medical staff in remote districts possible and provides the opportunity for consulting the expert on medical issues online (Seida'ee, 2012).

The Role of the ICT in the Development of Electronic learning in Villages

Electronic learning refers to a vast spectrum of applied software and the ways of technology-based education which includes training based on computer and internet as well as on online classes and colleges. In other words, electronic learning is the use of the ICT in education which can substantially improve the level of knowledge and science of deprived and inaccessible places or villages (Seida'ee, 2012).

The Role of the ICT in the Development of Electronic Insurance in Villages

The most significant reason for the close relation between electronic trade and the insurance industry: Considering the global and local presence of the electronic trade, insurance companies also make use of the IT and electronic trade for issuing their bills and paying for damages for the following reasons:

- Increasing the speed and quality of services offered by the insurance companies to the insurers.
- Increasing the speed and precision of recording the insurers information for better and faster services to them.
- Processing the recorded information to decrease human errors and increase the speed of decision-making.
- Decreasing the rate of illegal cheating and fabricated information.
- Improving the capacity of insurance companies to make connections with the international insurers for the use of updated knowledge.
- Creation of new risks which have necessitated new insurance requirements. All these cases can lead to better productivity and facilities in villages (Chera'ee 2007).

The Role of the ICT in the Social Welfare Services of the Village

The welfare organization is one of the most significant state-supported organizations that assist the deprived and the handicapped people in the society through the general budget. Thanks to the electronic

services available in this organization, these services are available in the villages through internet and different portals.

Conclusion

The examinations revealed that information technology can have potential positive and negative impact on different dimensions of the economic, social, political and even environmental life of the societies. Based on this assumption, any step taken towards development, be it national or rural, is rendered impossible ignoring the information technology and its capabilities. The truth, however, is that access to development is not just possible through the physical expansion of this technology; complete development and information development as a new model is a far too complicated process to be realized just by the physical expansion of a technology.

In other words, information technology as the axis of information development acts and grows on a social, economic, political and technical ground. Therefore, the more efficient the grounds for better use of this technology, the higher the rate of success of the society in developing information and arriving at information society.

Key words: Information and Communication Technologies (ITC), Rural Development, The Role of the ICT in Human Development

References:

1. Rajib M, "ICT support for Disabled person", Documentation Research and Training Center, Indian Statistical Institute Bangalore, DRTC – ICT Conference on Digital Learning Environment, 11 – 13 January, 2006.
2. Fathian Mohammad, Mahdavi poor Hatam, Basic and Management of Information Technology, Iran University of Technic and Science, Tehran, 2008 (16th edition, 2012).
3. Jalali Aliakbar and others, Electronic village, Iran technology and science university publishing, 2006.
4. Molaekomeil, "Application of ICT in development of rural and agricultural section", The first National congress of sustainable development in dry and semidry regions, Iran, 2012.

5. “Hamidreza Taherkhani”, Mahdi (1385). The industrial village, Fundamental of rural development strategy in future. Tehran: the industrial projects exploitation utilization of agriculture, volume 1.
6. Darnley, James; Phedre, John (1384). The world network: an income of the theory and practice about information society. Translated Nasrin Amin peasant and Mehdi Mahami. Tehran: chapar.

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ
ԴԵՐԸ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԳՈՐԾՈՒՄ
Ա.Հ.Մ. Նեմաթի
Ամփոփում**

21-րդ դարում նույնիսկ աշխարհի ամենա հեռավոր վայրերում մարդկանց ապրելակերպն իր վրա է կրում ժամանակակից տեղեկատվական պայթյունի ազդեցությունը: Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաները տեղեկատվության փոխանցման ու տարածման գործընթացների առանցքն են և զարգանում են որոշակի սոցիալական, տնտեսական, քաղաքական եւ տեխնիկական հիմքերի առկայության պայմաններում: Հետևաբար, որքան ավելի կայացած են այդ տեխնոլոգիաների օգտագործման նախադրյալները, այնքան ավելի մեծ են հասարակության տեղեկատվական զարգացման և տեղեկատվական հասարակություն թևակոխելու հնարավորությունները: Իրանում, ինչպես նաև շատ այլ զարգացող երկրներում, կարևորվում է ոլորտի զարգացմանը նվիրված ուսումնասիրությունների իրականացումը: Սույն հոդվածում փորձ է արվում բացահայտել գյուղական տարածաշրջաններում կառավարման տեղեկատվական համակարգերի կիրառման հնարավորությունները սոցիալական ծառայությունների ոլորտում առկա կարողությունների շրջանակում:

Բանալի բառեր. Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներ (ՏՀՏ), գյուղական տարածաշրջանների զարգացում, ՏՀՏ դերը մարդկային զարգացման գործում:

РОЛЬ ИНФОРМАЦИОННЫХ И КОММУНИКАЦИОННЫХ ТЕХНОЛОГИЙ В РАЗВИТИИ СЕЛЬСКИХ РЕГИОНОВ

А. Г. М. Немати

Резюме

В 21-м веке, даже в самых отдаленных пунктах земного шара образ жизни людей резко меняется под воздействием современного информационного взрыва. Информационные и коммуникационные технологии являются стержнем обмена и распространения информации и развиваются на базе создания необходимых социальных, экономических, политических и технических предпосылок. Следовательно, чем развиты предпосылки для использования этих технологий, тем больше возможности информационного развития и вступления в фазу информационного общества. Иран, как и многие другие развивающиеся страны, придает большое значение проведению исследований в отмеченной сфере. В настоящей статье предпринимается попытка - выявить в сельских регионах возможности применения информационных систем управления в сфере социальных услуг в рамках имеющихся возможностей.

Ключевые слова: Информационные и коммуникационные технологии (ИКТ), развитие сельских регионов, роль ИКТ в развитии человеческого потенциала.

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐՈՒՄ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՇՎԵԿՇՈՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ (BALANCED SCORECARD- BSC) ԿԻՐԱՌՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

Լ. Վ. Պեղրոսյան

Կառավարման տարատեսակ գործիքները վաղուց դարձել են գործարար կյանքի անբաժանելի մասը: Ներկայիս տեխնոլոգիական զարգացման առաջանցիկ տեմպերը, օրեցօր սրվող մրցակցությունը, սպառողների մշտապես աճող պահանջմունքները ստիպում են մենեջերներին կիրառել կառավարման նոր, ճկուն մեխանիզմներ ու մեթոդներ այդ մարտահրավերներին դիմակայելու համար: Նմանատիպ կառավարման գործիք է Ցուցանիշների հաշվեկշռված համակարգը (Balanced Scorecard-BSC), որը լայնորեն կիրառվում է աշխարհի տարբեր կազմակերպություններում և տարիների ընթացքում կարողացել է ապացուցել իր արդյունավետությունն ու ընկերությունների առջև ծառայած ռազմավարական և ընթացիկ խնդիրներ լուծելու ունակությունը:

Համաձայն Ռազմավարության և առաջնորդության համաշխարհային վիճակի մասին հարցման 2014թ. հաշվետվության՝ (2014 Global State of Strategy and Leadership Survey Report) 74 երկրների 1,266 ընկերությունների ղեկավարների շրջանակներում կատարված հարցման արդյունքում, պարզվել է, որ որպես ռազմավարության գնահատման և իրագործման մեխանիզմ, գործիք՝ հարցվածների 61%-ը կիրառում է SWOT վերլուծությունը, 55%-ը ֆինանսական մոդելավորումը, իսկ 49%-ը Ցուցանիշների հաշվեկշռված համակարգը (ՑՀՀ): Ընկերությունների 22%-ը ընդգծել է այն փաստը, որ կազմակերպության բոլոր մակարդակների և օղակների գործունեությունը կապված չէ ռազմավարության հետ և չի բխում դրանից: Մինչդեռ, ՑՀՀ համակարգով աշխատող ընկերություններից ընդամենը 8%-ն է նման խնդրի հետ բախվել[1]: Այս փաստը ևս մեկ անգամ վկայում է, որ այս գործիքը հաշվեկշռվածության և ճիշտ կառուցված պատճառահետևանքային կապերի շնորհիվ բացառում է որևէ ստորաբաժանման՝ ինքնանպատակ, ռազմավարությունից, ընկերության տեսլականից ու նպատակներից անկախ գործունեությունը:

ՅՀՀ-ի մեթոդաբան մշակվել է 1990-ական թվականների սկզբներին ամերիկացի գիտնականներ Դեվիդ Նորթոնի և Ռոբերտ Կապլանի կողմից: Նրանց կողմից արված հետազոտությունները ցույց տվեցին, որ հաճախ ընկերությունները կարճաժամկետ հատվածում բարձր ֆինանսական արդյունքներ ստանալու համար կրճատում էին այնպիսի ռազմավարական նշանակության ծախսային հոդվածներ, ինչպիսիք են մարքեթինգը, հաճախորդների սպասարկումը կամ անձնակազմի ուսուցումը: ՅՀՀ-ի հիմք հանդիսացող, պատճառահետևանքային կապերով ստեղծված ռազմավարական քարտեզի միջոցով նրանք ցույց տվեցին, թե ինչպես են ընկերության բոլոր մակարդակների արդյունքները կապված ֆինանսական ցուցանիշների հետ: Բացի այդ, գործունեության գնահատման ավանդական համակարգերը ուշադրություն են դարձնում ինքնարժեքի նվազման, որակի բարելավման և առկա բիզնես գործընթացների ժամանակային ցիկլի կրճատման վրա, իսկ ՅՀՀ-ը ի հայտ է բերում այն առանցքային գործընթացները, որոնք բաժնետերերի և սպառողների տեսանկյունից առավել էական են բարձր արդյունքներ ապահովելու համար [2, 19]:

Վերջին երկու տասնամյակներում Ցուցանիշների հաշվեկշռված համակարգը լայնորեն կիրառվել է տնտեսության տարբեր ճյուղերում, մասնավոր և պետական հատվածում, մեծ ու փոքր կազմակերպություններում: Համաձայն Bain & Company ընկերության կողմից կատարված վերլուծության՝ ՅՀՀ-ը 2013 թվականի ամենատարածված և կիրառելի կառավարման գործիքների տասնյակում է[3]: Ֆունկցիոնալության և արդյունավետության շնորհիվ Ցուցանիշների հաշվեկշռված համակարգը իր ուրույն տեղն ունի նաև տարբեր երկրների բանկերի կառավարման գործիքակազմում: ՅՀՀ-ի ներդրումը առևտրային բանկում հնարավորություն է տալիս բանկի ռազմավարությունը ներկայացնել կոնկրետ առաջադրանքների և ցուցանիշների տեսքով: Իսկ պատճառահետևանքային կապերի շնորհիվ բանկի յուրաքանչյուր ստորաբաժանմանը և նույնիսկ աշխատակցին հասու են դառնում բանկի ռազմավարությունը, երկարաժամկետ նպատակները և դրանց հասնելու գործում յուրաքանչյուրի դերն ու կատարած աշխատանքի կարևորությունը:

ՅՀՀ-ի մերթոդաբանության համատեքստում առևտրային բանկի գործունեությունը դիտարկվում է որպես հետևյալ բաղկացուցիչների ամբողջություն.

- ֆինանսներ
- հաճախորդներ
- բիզնես կամ ներքին գործընթացներ
- ուսուցում և աճ

Առևտրային բանկի օրինակով ՅՀՀ պլանի մշակումը կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակի տեսքով.

Աղյուսակ 1

Առևտրային բանկում Ցուցանիշների հաշվեկշռված համակարգ կառուցելու պլան

Ուղղություններ	Նպատակներ	Բնութագրիչներ	Խնդիրներ
<i>Ֆինանսներ</i>	Բանկային գործառնությունների շահութաբերության աճ	Եկամուտների աճ և ծախսերի կրճատում	Եկամտային և ծախսային հոդվածների կառուցվածքային փոփոխություններ
<i>Հաճախորդներ</i>	Բանկի հեղինակության և հաճախորդների բավարարվածության բարձրացում	Հաճախորդների թվի և շուկայում մասնաբաժնի աճ	Հաճախորդների նախասիրությունների, պահանջների ուսումնասիրություն և մատուցվող ծառայությունների տեսականորեն դնդայնում
<i>Ներքին գործընթացներ</i>	Մատուցվող ծառայությունների բարձր որակ	Հաճախորդների սպասարկման ժամանակի կրճատում, գործարքների թվի աճ	Խաչաձև վաճառքների կազմակերպում և հաճախորդների արագ և բարձրակարգ սպասարկում

Ուսուցում և ան	Աշխատողների արդյունավետության բարձրացում	Մեկ աշխատողի հաշվով շահույթի աճ և հոսունության նվազում	Որակավորման բարձրացում, մոտիվացիոն համակարգի ստեղծում և ռազմավարության իրագրություն
----------------	--	--	---

Առևտրային բանկերում ՅՀՀ-ի կիրառման որոշ օրինակներ ներկայացված են մեթոդի «կնքահայրերի» հեղինակած աշխատություններում, սակայն, լինելով ռազմավարական կառավարման գործիք, վերջինիս կիրառման միջազգային փորձը, դրա շնորհիվ ձեռք բերված արդյունքները և, առավել ևս, ներդրման սխեման, ռազմավարական քարտեզներն ու օգտագործված ցուցանիշները ոչ բոլոր բանկերի կողմից են հրապարակվում: Բացի այդ, վերջինիս կիրառելիությանը՝ իր ամբողջական իմաստով, որոշակի վերապահումով կարելի է մոտենալ, քանի որ շատ ընկերությունների ներկայացուցիչներ, ունենալով ռազմավարության քարտեզագրված տարբերակ կամ մի քանի փոխկապված ցուցանիշներ (KPI), կարող են իրենց համարել ՅՀՀ կիրառող կառավարիչներ: Այդ կապակցությամբ հիմնականում դիտարկվել են այն առևտրային բանկերը, որոնք Ցուցանիշների հաշվեկշռված համակարգի հաջող ներդրման և դրա հիմքի վրա կառուցված ռազմավարության իրագործման շնորհիվ բարձր արդյունքների հասնելու համար արժանացել են մրցանակի և դարձել Դ. Նորթոնի կողմից հիմնադրված Palladium Group ընկերության փառքի սրահի (Hall of Fame) անդամներ [4]:

Ցուցանիշների հաշվեկշռված համակարգը 1990-ական թվականների կեսերին ներդրվել է ԱՄՆ National բանկում: Վերջինիս National Bank Online Financial Services (OFS) ստորաբաժանումը առաջիններից էր ԱՄՆ խոշոր բանկերից, որ առաջարկեց ինտերնետային բանկային ծառայություններ: 1994թ. երբ հիմնադրվեց այս ստորաբաժանումը ինտերնետային ծառայություններից օգտվող հաճախորդների թիվը ընդամենը 20,000 էր [5, 116]: Բանկի ղեկավարությունը նպատակադրեց տասնամյակի վերջում օգտատերերի թիվը հասցնել մեկ միլիոնի: Սա հնարավոր էր տեխնոլոգիաների և ծրագրային ապահովման զարգացման նպատակով խոշոր ներդրումների իրականացմամբ, որն էլ

չէր համապատասխանում National բանկի ծախսերի կրճատման քաղաքականությանը: Այսպիսով, ի հայտ եկավ այնպիսի մեխանիզմի ներդրման անհրաժեշտություն, որը հնարավորություն կտար ռազմավարությունը հասու դարձնել ղեկավար անձնակազմին և բոլոր աշխատակիցներին: Խիստ մրցակցության պայմաններում ստորաբաժանման ղեկավարությունը որոշեց դիմել Յուգանիշների հաշվեկշռված համակարգի՝ որպես այնպիսի գործիքի կիրառմանը, որը հնարավորություն կտար ամենօրյա գործունեությունը համապատասխանեցնել ռազմավարությանը և վերջինս վերածել գնահատման ենթակա արդյունքների: Այսպիսով, սահմանվեցին երեք ռազմավարական ուղղություններ.

1. պահպանել ռազմավարական, շահույթաբեր հաճախորդներին և ներգրավել պոտենցիալ սպառողներ
2. խաչաձև վաճառքների շնորհիվ մեծացնել շահույթը մեկ հաճախորդի հաշվով
3. նվազեցնել սպասարկման ծախսերը մեկ հաճախորդի գծով, մեծացնել հաճախորդների բազան և դրանով իսկ բաշխել հաստատուն ծախսերը

Յուրաքանչյուր ուղղության համար սահմանվեցին նպատակներ և ցուցանիշներ, կազմվեց ռազմավարական քարտեզ՝ համապատասխան պատճառահետևանքային կապերով: Հետևելով նախանշված նպատակներին և ապահովելով հաշվեկշռվածություն երկարաժամկետ և կարճաժամկետ ցուցանիշների, կառավարման ռազմավարական և օպերատիվ նպատակների միջև, գործունեության անցյալ և ապագա արդյունքների, գործունեության ներքին և արտաքին գործոնների միջև՝ Natinoal Bank Online Financial Services (OFS) հասավ հաջողության: 1999թ. օգոստոսին բանկը սպասարկեց իր միլիոներորդ հաճախորդին: Բանկը արժանացավ մի շարք մրցանակների որպես լավագույն ինտերակտիվ բանկ: 1997թ-ից 1998թ. ընկած ժամանակահատվածում համակարգի խափանումները կրճատվեցին 71%-ով, ինչն էլ բերեց հաճախորդների կողմից բողոքների կտրուկ նվազմանն ու բանկի հեղինակության բարձրացմանը:

ՅՀՀ-ը կիրառվել է նաև ամերիկյան Chemical բանկում: Այս ուղղությամբ առաջին քայլերը Chemical բանկում կատարվել են դեռևս 1992թ-ին, երբ բանկի ղեկավարությունը ձեռնամուխ եղավ ռազմավարական

կառավարման նոր մեթոդների շնորհիվ բանկի բարգավաճման ու զարգացման գործին և մասամբ նաև ՑՀՀ-ի շնորհիվ ընկերությունը կարողացավ հաղթահարել Manufacturer's Hanover և Chase Manhattan ընկերությունների հետ միացման արդյունքում առաջ եկած դժվարությունները: ՑՀՀ-ի հիմնադրույթի համահեղինակ Դեվիդ Նորթոնն ինքը անձամբ հանդես եկավ խորհրդատուի դերում: Չորս ուղղությունների համար առանձնացվեցին ռազմավարական նպատակներ[6]:

Ֆինանսներ

1. Ծախսաձածկման մակարդակի բարձրացում
2. Ծախսերի կրճատում
3. Շահույթի աճ
4. Ռիսկերի նվազեցում

Հաճախորդներ

1. Հաճախորդների նպատակային խմբերի համար հատուկ առաջարկների մշակում

✓ հաճախորդների տարբեր խմբերի համար նպատակային հատուկ առաջարկների ստեղծում

✓ առաջարկների իրացման տնտեսական կողմի գնահատում

✓ առաջարկների ներկայացում շահութաբեր հաճախորդներին

2. Հաճախորդների պահանջմունքները հստակ գնահատելու, տեղեկատվության վերլուծության և մշակման հմտություններով օժտված աշխատակիցների հավաքագրում

3. Բոլոր գործառնությունների ճշգրիտ իրականացում հաճախորդի ներկայությամբ և նրա հետ համաձայնեցված

Ներքին գործընթացներ

1. Նորարարություն

✓ նոր շուկայի ստեղծում

✓ նոր պրոդուկտների ստեղծում

2. Ծառայությունների մատուցում

✓ ծառայությունների և պրոդուկտների խաչաձև վաճառք բանիմաց և կազմակերպված աշխատակիցների միջոցով

✓ հաճախորդների սպասարկման բարձր մակարդակի ապահովում աշխատակիցների մասնագիտացման խորացման շնորհիվ

Ուսուցում և զարգացում

1. Ռազմավարական տեղեկատվական ռեսուրսների կիրառում

2. Աշխատակիցների որակավորման մակարդակի բարձրացում
3. Աշխատակիցների պատասխանատվության աստիճանի բարձրացում և աշխատանքի արդյունքների ու պարգևատրման միջև կապի ապահովում
4. Ռեսուրսների տեղաբաշխում առավել շահութաբեր ոլորտներում

Յուրաքանչյուր նպատակի համար ընտրվեցին ցուցանիշներ, բացահայտվեցին այդ ցուցանիշների միջև առկա կապերը, որոնք շղթայական կապերի շնորհիվ հնարավորություն տվեցին հասնելու ռազմավարական նպատակներին: 1995թ. վերջին Chemical բանկը ԱՄՆ Յ-րդ խոշոր բանկն էր մոտ 183.9 տրիլիոն ԱՄՆ դոլար ակտիվներով[7]:

Wells Fargo Online Financial Services (OFS) կողմից ՅՀՀ-ի կիրառման արդյունքում 1997-1998թթ. մեկ հաճախորդի գծով ծախսերը կրճատվել են 22%-ով, հեռահար սպասարկվող հաճախորդների թիվը ավելացել է 250,000 մարդով[8]: Wells Fargo ընկերությունը 31.12.2014թ. դրությամբ 1.6 տրիլիոն ԱՄՆ դոլար ակտիվների արժեքով ամբողջ աշխարհի բանկային համակարգում 14-րդ տեղն է զբաղեցնում [9], իսկ ԱՄՆ-ում՝ 4-րդը [10]:

2006թ.-ի սեպտեմբերին Balanced Scorecard Collaborative (ներկայում Palladium Group) ընկերության կողմից Bank of Tokyo-Mitsubishi UFJ-ին շնորհվել է մրցանակ՝ Ցուցանիշների հաշվեկշռված համակարգի հաջող ներդրման, ռազմավարության արդյունավետ իրականացման և նշանակալից ձեռքբերումների համար[11]: Bank of Tokyo-Mitsubishi UFJ-ն Ճապոնիայի ամենամեծ բանկն է, որը ստեղծվել է 2006թ.-ին Bank of Tokyo-Mitsubishi և UFJ բանկի միավորման արդյունքում: Այն բազմաթիվ գրասենյակներ ունի ինչպես Ճապոնիայում, այնպես էլ աշխարհի 40 երկրներում[12]: Bank of Tokyo-Mitsubishi UFJ բանկում ՅՀՀ-ը առաջինը ներդրվել է ամերիկյան մասնաճյուղում, որի գլխամասային գրասենյակը գտնվում էր Նյու Յորքում: Այն կենտրոնացած էր հիմնականում խոշոր, «մեծածախ» բանկային գործարքների վրա: 2001թ.-ին ամերիկյան մասնաճյուղը վերակառուցվեց չորս առանձին միավորների (գլոբալ կորպորատիվ բանկ, ներդրումային բանկ, գանձապետարան և կորպորատիվ կենտրոն), որոնցից յուրաքանչյուրը ենթարկվում էր Ճապոնիայում գտնվող համապատասխան գրասենյակին: Այս վերակառուցման և օրենսդրական որոշակի փոփո-

խությունների արդյունքում պարզ դարձավ, որ բանկի ռազմավարությունը հնարավոր չի լինի իրագործել միայն բարձրագույն ղեկավարության իմացությամբ, անհրաժեշտ է բոլոր աշխատողների իրազեկվածությունը, որպեսզի յուրաքանչյուրի աշխատանքը ուղղվի կոնկրետ նպատակներին և ցուցանիշներին: Որոշվեց ռազմավարություն մշակել յուրաքանչյուր առանձին միավորի համար: Առանձնացվեցին ընդհանուր, համատեղ և միասնական նպատակներ, և այս դասակարգումն էլ ընկավ ինչպես ամբողջ ամերիկյան մասնաճյուղի, այնպես էլ առանձին միավորների համար ստեղծված ՑՀՀ-ի հիմքում:

Ռուսական ընկերություններից «Ուրալսիբ»-ը առաջիններից էր, որ որդեգրեց Ցուցանիշների հաշվեկշռված համակարգի մեթոդիկան և դրա հաջող ներդրման ու իրականացման համար 2008թ. արժանացավ մրցանակի և մտավ ՑՀՀ-ի փառքի սրահ (Hall of Fame): «Ուրալսիբ» բանկը հանդիսանում է «Ուրալսիբ» ֆինանսական կորպորացիայի կարևորագույն բաղկացուցիչը: Այն կորպորատիվ և ֆիզիկական անձ հաճախորդներին բանկային տարբեր ծառայություններ մատուցող քսանհինգամյա պատմությամբ ունիվերսալ բանկ է: 01.03.2015թ. դրությամբ բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 29.8 մլրդ ռուբլի, ակտիվները՝ 367.1 մրդ ռուբլի, սեփական միջոցները՝ 45.6 մլրդ ռուբլի[13]:

«Ուրալսիբ» բանկի հետ նույն թվականին մրցանակի արժանացավ նաև ռուսական «Լայֆ» ֆինանսական խումբը, որի կազմում էին “ВУЗ-Банк” “Пробизнесбанк”, “Ивановский Областной банк” բանկերը[14]: Ցուցանիշների հաշվեկշռված համակարգի կիրառման ժամանակաշրջանում “ВУЗ-Банк”-ի ակտիվները աճել են ավելի քան տասն անգամ

Palladium Group ընկերության փառքի սրահի (Hall of Fame) այլ անդամներից են.

Akbank, որը Թուրքիայի խոշոր բանկերից մեկն է: Այն հիմնադրվել է 1948թ.: 2014թ.-ին մի շարք պարբերականների կողմից անվանվել է Թուրքիայի լավագույն բանկը՝ 2014թ. վերջի դրությամբ ապահովելով մոտավորապես 1,452 միլիոն ԱՄՆ դոլար գույք շահույթ և 94 տրիլիոն ԱՄՆ դոլար գումարի ակտիվներ[15]: Բանկը ՑՀՀ-ի վրա հիմնված ռազմավարություն է որդեգրել 2008թ.-ից և վերջինիս հաջող իրագործման արդյունքում դարձել Թուրքիայի առաջատար բանկը: ՑՀՀ-ի ներդրումը

ի հայտ է բերել կառավարման ոլորտում առկա բացերը, համակարգված քայլերի և վերլուծական աշխատանքի արդյունքում առկա խնդիրները արդյունավետ լուծում են ստացել: Այս գործիքի կիրառման շնորհիվ բանկի հասույթը աճել է 46%-ով, զուտ շահույթը՝ 12%-ով:

BancoEstado Microempresas (BEME) լատինական Ամերիկայի բանկային համակարգում միկրո վարկավորման առաջատարներից է: Այն հիմնադրվել է Չիլիում և գլխավորապես աջակցում է փոքր և միջին ձեռնարկատերերին, ովքեր ֆինանսական շուկաներ ներթափանցելու և ռեսուրսներից օգտվելու հետ կապված որոշակի սահմանափակումներ ունեն: ՑՀՀ-ի ներդրման արդյունքում բանկը զգալի բարելավել է բոլոր ցուցանիշները՝ կրճատելով գործառնական ծախսերն ու ապահովել շահույթի կրկնակի աճ:

Bank Hapoalim Իսրայելի ֆինանսական շուկայի առաջատարներից է, որը ներկայացուցչություններ և մասնաճյուղեր ունի տասնյակ երկրներում: Տարբեր կազմակերպությունների և պարբերականների կողմից վերջին տարիներին ճանաչվել է Իսրայելի լավագույն բանկը [16]: Մոդելի կիրառմամբ ընկերությունը ավելի է ամրապնդել իր դիրքերը ֆինանսական շուկայում, օգտագործել է իր մրցակցային առավելությունները, ինչպես նաև փաստացի գործունեությունը համապատասխանեցրել ռազմավարական ծրագրով նախանշված ուղուն ու ցուցանիշներին:

Kiwibank Նոր Զելանդիայի առաջատար բանկերից է: ՑՀՀ-ի ներդրման շնորհիվ բանկի՝ շուկայում ունեցած մասնաբաժինը աճել է 35%-ով, զուտ շահույթը՝ 70%-ով:

Unibanco բրազիլական բանկում մոդելը կիրառվել է 1999թ.-ին: Կիրառման արդյունքում բանկը եռապատկել է հաճախորդների թիվը, ավելի արդյունավետ դարձրել խնդրահարույց վարկերի հավաքագրման պրոցեսը:

ՑՀՀ-ը կիրառություն է գտել նաև այնպիսի ընկերություններում, ինչպիսիք են Keybank ԱՄՆ-ում, Sociedad Hipotecaria Federal (SHF) բնակարանային զարգացման բանկ Մեքսիկայում, Հյուսիսային Եվրոպայի առաջատար Nordea բանկում, HSBC Bank Brasil և այլ ֆինանսական կազմակերպություններում:

Այսպիսով, տարբեր երկրների առևտրային բանկերում ՑՀՀ-ի ներդրման փորձի և ձեռք բերված արդյունքների ուսումնասիրությունը

ցույց է տալիս, որ ՅՀՀ-ը բանկային համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված և բանկի ռազմավարության իրագործման ժամանակակից և կարևոր գործիք է:

Բանալի բառեր. Ցուցանիշների հաշվեկշռված համակարգ (ՅՀՀ), առևտրային բանկեր, միջազգային փորձ, ռազմավարություն, կառավարման գործիք:

Գրականություն

1. <http://www.thepalladiumgroup.com/KnowledgeObjectRepository/Articles%20and%20white%20papers/2014%20Global%20State%20of%20Strategy%20and%20Leadership%20Survey%20Report%20August%202014.pdf> (մուտքի՝ ամսաթիվ՝ 10.04.2015թ.)
2. Каплан Р. С., Нортон Д. П. “Сбалансированная система показателей. От стратегии к действию”. Пер. с англ.-М.: “Олимп-Бизнес”, 2003, 210 с.
3. <http://www.bain.com/publications/business-insights/management-tools-and-trends.aspx> (մուտքի ամսաթիվ՝ 10.04.2015թ.)
4. <http://www.thepalladiumgroup.com/Results/hof/Pages/Overview.aspx> (մուտքի ամսաթիվ՝ 13.04.2015թ.)
5. Каплан Р. С., Нортон Д. П. “Организация ориентированная на стратегию. Как в новой бизнес-среде преуспевают организации, применяющие сбалансированную систему показателей”. Пер. с англ.-М.: “Олимп-Бизнес”, 2004, 392 с.
6. http://www.cfin.ru/management/controlling/bsc_chemical.shtml (մուտքի ամսաթիվ՝ 16.04.2015թ.)
7. http://en.wikipedia.org/wiki/Chemical_Bank (մուտքի ամսաթիվ՝ 17.04.2015թ.)
8. <http://www.balancedscorecardinstitute.co.uk/viewmembercontent.php?id=127> (մուտքի ամսաթիվ՝ 18.04.2015թ.)
9. <http://www.relbanks.com/worlds-top-banks/assets> (մուտքի ամսաթիվ՝ 19.04.2015թ.)
10. <http://www.bankrate.com/finance/banking/americas-biggest-banks-8.aspx> (մուտքի ամսաթիվ՝ 19.04.2015թ.)

11. <http://www.businesswire.com/news/home/20060904005036/en/Balanced-Scorecard-Collaborative-Honors-China-Resources-Microelectronics#.VTphryGqqko> (մուտքի ամսաթիվ՝ 25.04.2015թ.)
12. <http://www.bk.mufg.jp/global/aboutus/> (մուտքի ամսաթիվ՝ 25.04.2015թ.)
13. <https://www.bankuralsib.ru/bank/index.wbp> (մուտքի ամսաթիվ՝ 29.04.2015թ.)
14. <http://bankinform.ru/news/SingleNews.aspx?newsid=19276> (մուտքի ամսաթիվ՝ 29.04.2015թ.)
15. <http://www.akbank.com/en-us/investor-relations/Pages/Akbank-In-Brief.aspx> (մուտքի ամսաթիվ՝ 30.04.2015թ.)
16. www.bankhapoalim.com/wps/portal/int/article?WCM_GLOBAL_CONTEXT=bhint/int/home/awardsandrecognitionsa&contentIDR=e95117804bef13ce99d7d94f9ffc10c0&useDefaultDesc=0&useDefaultText=0&proceed=1 (մուտքի ամսաթիվ՝ 30.04.2015թ.)

МЕЖДУНАРОДНЫЙ ОПЫТ ПРИМЕНЕНИЯ СБАЛАНСИРОВАННОЙ СИСТЕМЫ ПОКАЗАТЕЛЕЙ В КОММЕРЧЕСКИХ БАНКАХ

Л.В. Петросян

Резюме

В течении последних двух десятилетий Сбалансированная система показателей широко использовалась в разных отраслях экономики, в частном и государственном секторе, в больших и малых предприятиях. В статье изучен международный опыт внедрения ССП в коммерческих банках и достигнутые результаты. Представлены статистические данные использования этого инструмента управления, его преимущества и примеры эффективной реализации стратегии на основе концепции Сбалансированной системы показателей.

Ключевые слова: Сбалансированная система показателей (ССП), коммерческие банки, международный опыт, стратегия, инструмент управления.

INTERNATIONAL EXPERIENCE OF BALANCED SCORECARD USAGE IN COMMERCIAL BANKS

L.V. Petrosyan

Summary

During the last two decades, the use of the BSC has been widely spread in various economic fields, public and private sectors, small and large firms. The idea of this paper is to investigate international experience and the contribution made by the Balanced Scorecard in commercial banks. This paper reveals usage statistics of this tool, presents benefits of using BSC and examples of strategy effective implementation using the concept of Balanced Scorecard.

Key words: Balanced Scorecard (BSC), commercial banks, international experience, strategy, management tool.

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ԵՎ ԽՈՂԸՆԴՈՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Ա.Մ. Հակոբյան

«Էլեկտրոնային առևտուր» հասկացությունը բնութագրում է համացանցի միջոցով իրականացվող ձեռնարկատիրական գործունեություն կամ ցանկացած գործարք, որն իրականացվում է էլեկտրոնային եղանակով տվյալների փոխանակմամբ և հանգեցնում է ապրանքների կամ ծառայությունների ամբողջական կամ մասնակի սեփականության իրավունքի փոխանցմանը:

Հայաստանի Հանրապետության ինտեգրումը էլեկտրոնային առևտրի միջազգային համակարգին հանդիսանում է տնտեսության զարգացման առաջնահերթություններից մեկը:


Հայաստանում էլեկտրոնային առևտրի զարգացման վրա էական ազդեցություն է գործում համացանց օգտագործողների թվի ավելացումը:

Հանրապետությունում օրեցօր մեծանում են լայնաշերտ ինտերնետային ծառայությունների մատուցման ծավալները, որի բաժանորդների թիվը (ներառյալ՝ շարժական 3G) 2014 թվականին կազմել է 1293467 բաժանորդ:

Ստորև բերված է (գծապատկեր 1) լայնաշերտ ինտերնետից օգտվող բաժանորդների քանակի աճի դինամիկան 2008-2014 թվականների համար¹.

¹ ՀՀ Հանրային Ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014թ-ի գործունեության հաշվետվություն:
Տես՝ <http://www.psrc.am/images/docs/reports/2014.pdf> Այցի օր՝ 13.06.2015

Գծապատկեր 1. Լայնաշերտ ինտերնետից օգտվող բաժանորդների քանակը



Որքան մեծ է համացանցի հասանելիությունը, այնքան մեծ է էլեկտրոնային առևտրի աճի հեռանկարները և արտոնությունները:

Համացանցից օգտվողների թվի աճը Հայաստանում պայմանավորված է մի քանի հանգամանքներով.

- ինտերնետ կապի արժեքի նվազումը միջազգային շուկայում,
- ներքին շուկայում տեղեկատվական հեռահաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) ոլորտի ազատականացում և սակագների իջեցում,
- համակարգիչների և շարժական սարքերի (սմարթֆոններ, պլանշետներ) ապառիկ վաճառքի ընդլայնում,
- հասարակության մեջ հետաքրքրության աճ:

2014 թվականի տարեվերջի դրությամբ միջազգային ԱՅՓԻ (**Internet Protocol**) տարանցման հոսքերի թողունակությունը հանրապետությունում կազմել է 87897 Մբիթ/վ, որը 2013 թվականի համեմատությամբ աճել է մոտ 16%-ով: Մրցակցության արդյունքում միջազգային ԱՅՓԻ տարանցման ծառայության հոսքերի աճի շնորհիվ այդ ծառայության սակագինը 2014 թվականին՝ 2013 թվականի համեմատությամբ նվազել է 32%-ով և կազմել 5200 դրամ²:

² ՀՀ Հանրային Ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014թ-ի գործունեության հաշվետվություն:

Տես՝ <http://www.psrc.am/images/docs/reports/2014.pdf> Այցի օր՝ 13.06.2015

Հայաստանում էլեկտրոնային առևտրի զարգացմանը էականորեն նպաստեց նաև 2010 թվականին ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հաստատված էլեկտրոնային փողերի թողարկումը կարգավորող կանոնակարգը:

2013 թվականի սեպտեմբերին ՀՀ կառավարությունը հաստատեց «ՀՀ էլեկտրոնային առևտրի զարգացման, ցանցային պատրաստվածության և տեխնիկական հագեցվածության ծրագիրը», որի իրականացման հիմնական նպատակներն են³.

- մշակել պետական քաղաքականության հիմնական սկզբունքները,
- ստեղծել էլեկտրոնային առևտրին օժանդակելու համար տեղեկատվական ժամանակակից ենթակառուցվածքներ,
- բարձրացնել համաշխարհային տեղեկատվական և տնտեսական գործընթացներին Հայաստանի ինտեգրման աստիճանը,
- բարձրացնել հայկական արտադրության ապրանքների մրցունակությունը համաշխարհային շուկայում,
- կատարելագործել էլեկտրոնային առևտրի ոլորտում իրավական և օրենսդրական դաշտը,
- էլեկտրոնային առևտրի գործարքների իրականացման նպատակով մշակել նույնականացման քարտերի կիրառման գործընթացի լուծումներ,
- հաղթահարել էլեկտրոնային առևտրի զարգացման ճանապարհին վարչական խոչընդոտները,
- Հայաստանի Հանրապետությունում ստեղծել էլեկտրոնային առևտրի կայուն զարգացման բարենպաստ միջավայր,
- օժանդակել փոքր և միջին ձեռնարկատիրությանը՝ ժամանակակից տեխնոլոգիաներ մշակելու և ներդնելու գործում,
- սահմանել էլեկտրոնային առևտրի զարգացման համար ֆինանսավորման առաջնահերթությունները,
- էլեկտրոնային առևտրի սուբյեկտներին մեթոդաբանական, տեղեկատվական, խորհրդատվական, կրթական և իրավաբանական աջակցություն ցուցաբերել (հատկապես՝ փոքր և միջին

³ ՀՀ էլեկտրոնային առևտրի զարգացման, ցանցային պատրաստվածության և տեխնիկական հագեցվածության ծրագիր, 2013: Տես՝ <http://www.irtek.am/views/act.aspx?aid=72853> Այցի օր՝ 12.05.2015

կազմակերպություններին) և օժանդակել նրանց արտաքին առևտրի ընդլայնմանը,

- աջակցել արտաքին շուկաներում հայկական արտադրանքի ճանաչմանը,
- աջակցել էլեկտրոնային առևտրի բնագավառում օտարերկրյա ներդրումների ներգրավմանը,
- աջակցել էլեկտրոնային առևտրի ոլորտում անձնակազմի ուսուցման և վերապատրաստման աշխատանքներին,
- ապահովել ֆինանսական գործարքների իրականացման անվտանգությունը:

Չնայած էլեկտրոնային առևտրի զարգացմանը նպաստող վերոհիշյալ բոլոր այս գործոններին՝ գոյություն ունեն նաև մի շարք գործոններ, որոնք խոչնդոտում են Հայաստանում էլեկտրոնային առևտրի զարգացմանը:

Այդ խոչընդոտներից է հանդիսանում էլեկտրոնային մեթոդով գնումներ կատարող անձանց տեղեկացվածության ու գիտելիքների պակասը, ինչի հետևանքով նրանք դառնում են համացանցային խաբեբաների զոհ: Հետևաբար էլեկտրոնային գործարքներ կատարող անձը նույնիսկ ամենասովորական գործարք կատարելիս պետք է առավել տեղեկացված լինի քան վաճառակետից գնումներ կատարող անձը:

Բացի այդ, Հայաստանն այն երկրներից է, ուր ամենաշատն են օգտագործում ապօրինի, արտոնագիր չունեցող ծրագրեր, չեն թարմացվում կամ չունեն արտոնագրված հակավիրուսային ծրագրեր, հստակ պատկերացում չեն կազմում անվտանգության լծակների մասին: Իսկ դա նշանակում է, որ նման համակարգիչները խոցելի են համացանցային հարձակումների համար: Հաշվի առնելով, որ Հայաստանում արդեն իսկ սկսվել է էլեկտրոնային առևտրի ժամանակաշրջանը, հնարավոր վտանգներն առաջիկայում միայն կավելանան, որի հաղթահարման առաջին քայլը պետք է լինի համատարած կրթությունը և համացանցի հուսալի կապի ապահովումը, քանի որ էլեկտրոնային առևտուրը ենթադրում է առցանց ֆինանսական գործարքներ:

Հայաստանում էլեկտրոնային առևտրի զարգացմանը խոչընդոտող գործոններից է նաև վճարահաշվարկային համակարգի բացթողումները: Հայաստանը կցված չէ աշխարհի ամենամեծ՝ «ՓեյՓայ»

(PayPal) վճարային համակարգին, որին մարդիկ վստահում են: Առայժմ ՓեյՓալ էլեկտրոնային վճարային համակարգը թույլ է տալիս Հայաստանից վճարումներ կատարել, սակայն չի սպասարկում վճարների ստացումը, քանի որ անվստահություն ունի մեր երկրի առցանց ֆինանսական համակարգի նկատմամբ: ՀՀ Կենտրոնական բանկը բանակցություններ է սկսել «ՓեյՓալ» ընկերության հետ՝ Հայաստանի Հանրապետությունում ընկերության կողմից մատուցվող ծառայությունների ընդլայնման վերաբերյալ, այն է՝ Հայաստանի Հանրապետությունում «ՓեյՓալ» ընկերության միջոցով հնարավոր լինի իրականացնել ոչ միայն գնումներ, այլ նաև վաճառք:

Խոչընդոտող գործոններից է նաև «Վիզա» (Visa) միջազգային քարտերի օգտագործման անհնարինությունը, քանի որ հայաստանյան բանկերը չունեն «Վիզա» ընկերության միջազգային էլեկտրոնային առևտուր իրականացնելու լիցենզիա (Visa International e-commerce license), որի ձեռքբերումը մեծ գումարների հետ է կապված⁴: Ներկայում այս ողողությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից բանակցային աշխատանքներ են տարվում «Վիզա» և «Մաստեր Քարդ» (Master Card) քարտային համակարգերի ներկայացուցիչների հետ՝ համակարգերում նախատեսված ինտերնետային միջավայրում սպասարկում իրականացնելու (էքվայրինգի) արտոնագիր ստանալու ուղղությամբ:

Հայաստանում էլեկտրոնային առևտրի զարգացմանը խոչընդոտող մեկ այլ գործոն է հանդիսանում մաքսային և հարկային օրենսդրությունը, որն «ուղղված» է միայն խոշոր ներմուծողների և արտահանողների իրավահարաբերությունների կարգավորմանը: Մինչդեռ պետք է կանոնակարգել նաև փոքր ծավալ ունեցող բեռների տեղափոխության խնդիրը: Որպես կանոն, էլեկտրոնային առևտրի շրջանակներում ապրանքի փոխադրումը իրականացվում է փոստային և սուրհանդակային ծառայություններով: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ներդնել հատուկ մաքսային հայտարարագրեր (CN22, CN23 և CP72), որի համար հիմք է հանդիսանում ապրանքի հաշիվ-ապրանքագիրը⁵:

⁴ Տես՝ <http://www.panorama.am> Այցի օր՝ 13.06.2015

⁵ ՀՀ էլեկտրոնային առևտրի զարգացման, ցանցային պատրաստվածության և տեխնիկական հագեցվածության ծրագիր, 2013
Տես՝ <http://www.irtek.am/views/act.aspx?aid=72853> Այցի օր՝ 13.06.2015

Ինչպես տեսնում ենք, խոչընդոտող գործոններն ու խնդիրները բազմաթիվ են, սակայն լուծելի և դրանց վերացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, անշուշտ, կխթանի էլեկտրոնային առևտրի զարգացմանը: Այսպիսով, անհրաժեշտ է ընդունել նոր իրողություն՝ խրախուսել էլեկտրոնային առևտուրը, որը հանդիսանում է երրորդ հազարամյակի տնտեսության զարգացման փուլերից մեկը:

Բանալի բաներ. էլեկտրոնային առևտուր, համացանց, հեռահաղորդակցում, էլեկտրոնային փողեր, վճարային համակարգ:

Գրականություն

1. UNITED NATIONS CONFERENCE ON TRADE AND DEVELOPMENT, “ELECTRONIC COMMERCE:LEGAL CONSIDERATIONS”, 15 May 1998, Study prepared by the UNCTAD secretariat.
2. Julia Doherty, Marketing for Small Businesses in Easy Steps, March 17, 2015
3. David B. Yoffie, Michael A. Cusumano, Strategy Rules: Five Timeless Lessons from Bill Gates, Andy Grove, and Steve Jobs, April 14, 2015
4. <http://www.psrc.am/images/docs/reports/2014.pdf>
5. <http://www.irtek.am/views/act.aspx?aid=72853>
6. <http://www.panorama.am>

ФАКТОРЫ СПОСОБСТВУЮЩИЕ И ПРЕПЯТСТВУЮЩИЕ РАЗВИТИЮ ЭЛЕКТРОННОЙ КОММЕРЦИИ В АРМЕНИИ

А.М. Аюбян

Резюме

Интеграция Армении в международную систему электронной коммерции является приоритетом для экономического развития.

В статье представлены факторы, которые способствуют и препятствуют развитию электронной коммерции в Армении. А так же представлены мероприятия, которые принимаются для устранения этих препятствий и будут способствовать развитию экономики.

Следует принять новую реальность и поощрять электронную коммерцию, которая является одним из этапов экономического развития в третьем тысячелетии.

Ключевые слова: электронная коммерция, интернет, телекоммуникации, электронные деньги, платежная система.

THE FACTORS THAT PROMOTE AND PREVENT THE DEVELOPEMENT OF ELECTRONIC COMMERCE IN ARMENIA

A.M. Hakobyan

Summary

Armenia's integration into the international system of e-commerce is a priority for economic development. The article introduces factors that promote and prevent the development of e-commerce in Armenia. The author highlights the activities that eliminate obstacles of e-commerce development which will support economic development.

Thus, it should be accepted the new reality and promote e-commerce, which is one of the important stages of economic development of third millennium.

Key words: E-commerce, internet, telecommunications, electronic money, payment system.

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԶԵՎԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈւՂԻՆԵՐԸ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆՈՒՄ

S.Ռ. Սարգսյան

Ինչպես աշխատողի, այնպես էլ գործատուի շահերին համապատասխանող գլխավոր պահանջը հանդիսանում է միավոր արտադրանքի վրա կատարված ծախսումների նվազման հիման վրա աշխատավարձի անհրաժեշտ աճի ապահովումը: Դա, կազմակերպության գործունեության արդյունավետության բարձրացմանը զուգընթաց, հանդիսանում է յուրաքանչյուր աշխատողի աշխատավարձի բարձրացման երաշխիք [1]: Այսինքն, կազմակերպության արդյունավետ գործունեության հիմնական պայմանը աշխատանքի վարձատրության այնպիսի կազմակերպումն է, որի դեպքում վերջինիս չափը ուղղակիորեն ազդում է տնտեսական արդյունքների վրա: Աշխատողի նյութական շահդրդվածությունը արտադրության արդյունավետության բարձրացման իրական միջոցի վերածելը հնարավոր է միայն աշխատավարձի չափի և աշխատանքի քանակի ու որակի միջև անմիջական փոխկապվածության սահմանման պայմաններում: Վերջինիս կարելի է հասնել աշխատավարձի ձևերի և համակարգերի սահմանման միջոցով:

Երևանի մետրոպոլիտենում ներկայումս կիրառվում է աշխատավարձի ժամանակավարձային ձևը, որի դեպքում աշխատանքի արդյունքի և վարձատրության միջև կապը թույլ է արտահայտվում և աշխատողներին չի շահադրդում ավելի արտադրողական աշխատանքի, ուստի առաջարկում ենք կիրառել ժամանակավարձա-պարգևատրական համակարգը:

Մետրոպոլիտենում մեր կողմից իրականացված աշխատանքի նորմավորման վիճակի վերլուծությունը ցույց տվեց, որ վերջինս կարող է աշխատել մոտ 10% քիչ աշխատուժով, որի արդյունքում կարճաճաճարկ աշխատավարձի ֆոնդի տնտեսում ամսական կտրվածքով մոտ 9.3 մլն դրամի չափով: Նշված գումարը մետրոպոլիտենը կարող է ուղղել աշխատողների պարգևատրմանը:

Պարգևատրման նպատակն է մետրոպոլիտենի փոխադրման գործընթացի արդյունավետության բարձրացումը, ֆինանսա-տնտեսական ցուցանիշների բարելավումը, աշխատակիցների նյութական

հետաքրքրվածության և անհատական նախաձեռնության ցուցաբերման աճը: Նախատեսվում է աշխատողներին պարգևատրել արտադրական գործունեության հիմնական արդյունքների համար: Ընդհանրապես պարգևատրման համակարգը իրենից ներկայացնում է փոխկապակցված տարրերի ամբողջություն, որոնք սահմանում են պարգևատրման կարգը և պարգևի մեծության կախվածությունը աշխատողի աշխատանքային գործունեության արդյունքներից:

Պարգևատրման համակարգի հիմնական տարրերն են.

1. պարգևատրման ցուցանիշներ,
2. պարգևատրման պայմաններ,
3. պարգևատրվողների շրջանակ,
4. պարգևի չափի սահմանում,
5. պարգևատրման աղբյուրներ,
6. պարգևատրման կարգ:

Պարգևատրման նպատակները և խնդիրները արտացոլվում են պարգևատրման ցուցանիշներում և պայմաններում:

Զարգացած շուկայական տնտեսությամբ երկրներում ներկայումս մեծ տարածում է ստացել պարգևատրման եռամակարդակ սկզբունքը[2]. *առաջին մակարդակը* նախատեսում է աշխատողների պարգևատրում ողջ կազմակերպության գործունեությունը բնութագրող ցուցանիշների կատարման համար, *երկրորդ մակարդակում* կառուցվածքային ստորբաժանումների աշխատողների պարգևատրման համար կիրառվում են տվյալ ստորբաժանմանը բնորոշ ցուցանիշներ, *երրորդ մակարդակում* պարգև վճարում են առանձին աշխատողի աշխատանքային գործունեության արդյունավետությունը բնութագրող անհատական ցուցանիշների համար:

Առաջարկում ենք Երևանի մետրոպոլիտենում կիրառել վերը նշված պարգևատրման համակարգը՝ հիմքում ունենալով եռամակարդակության սկզբունքը, մասնավորապես.

➤ *առաջին մակարդակը* սահմանում է պայմաններ, որոնց պահպանման դեպքում աշխատողն իրավունք է ստանում ներկայացվել պարգևատրման: Աշխատողների գերակշիռ մասի համար այս մակարդակում սահմանվում են գնացքների անվտանգ երթևեկության (վթարների և այլ խոչընդոտների բացակայություն) և աշխատանքի

պաշտպանության ապահովման մակարդակը բնութագրող ցուցանիշներ,

➤ երկրորդ մակարդակը կապված է արտադրա-տնտեսական գործունեության հետ և ուղղված է կառուցվածքային ստորաբաժանման հիմնական գործառույթների կատարման հարցում յուրաքանչյուր աշխատողի նյութական շահագրգռվածության և պատասխանատվության բարձրացմանը: Դրա հետ մեկտեղ սահմանվում է ստորաբաժանման գործունեությանը յուրաքանչյուր աշխատողի մասնակցության բաժնի որոշման շերտավորված մոտեցում: որքան բարձր է աշխատողի պաշտոնը, այնքան մեծ է պատասխանատվությունը ստացված արդյունքների համար: Այս աստիճանում կիրառվում է «շահագործական ծախսերի պլանի չգերազանցման» ցուցանիշը: Նյութերի, դետալների, վառելիքի, էլեկտրաէներգիայի տնտեսման պատասխանատվությունը պետք է տարածվի բոլոր աշխատակիցների վրա, քանի որ արտադրական գործընթացների տեխնոլոգիայի խախտման, սարքավորումների անսարքության, հումքի, նյութերի, էլեկտրաէներգիայի անխնայողաբար օգտագործման պատճառով շահագործական ծախսերի տնտեսման բացակայության դեպքում մինչ այժմ պատասխանատվություն կրում էին կոնկրետ մեղավորները: Սակայն, շատ հաճախ, մեղավորներին դժվար է բացահայտել: Այս պարագայում պատասխանատվություն կկրեն նաև այն աշխատողները, ովքեր վկա են եղել այդ խախտումներին, սակայն լռել են: Ներկա պայմաններում յուրաքանչյուր աշխատող պետք է գիտակցի, որ իրենից է կախված ոչ միայն սեփական, այլև ողջ կոլեկտիվի բարեկեցությունը: Իսկ տնտեսումը կարելի է սկսել փոքր գործողություններից՝ արտադրական հրապարակում լուսավորության ժամանակին անջատումը, արտադրական գործընթաց չիրականացնող հաստոցների հոսանքից անջատումը, արտահագուստին խնամքով վերաբերվելը, հումքի և էլեկտրաէներգիայի սահմանված նորմերին հետևելը և այլն: Մետրոպոլիտենի յուրաքանչյուր աշխատող պետք է հասկանա, որ ուղղակի կամ անուղղակի ազդում է մետրոպոլիտենի գործունեության վերջնական արդյունքների վրա:

➤ Ցուցանիշների երրորդ մակարդակը կապված է առանձին աշխատողի կամ կոլեկտիվի (կոմպլեքսային բրիգադ, հերթափոխ, բաժին) աշխատանքային գործունեության կոնկրետ արդյունքների հետ:

Նշենք, որ նախատեսվում է անհատական գործունեության արդյունքներից կախված պարզևի բաժինը սահմանել ոչ պակաս, քան 80%, այսինքն, պարզևի հիմնական բաժինը կախված է աշխատողի ցուցաբերած անհատական ջանքերից: Որպես պարզևատրման պայման է ընդունվում գնացքների անվտանգ երթևեկության ապահովման մակարդակը, աշխատանքի պաշտպանության և տեխնիկական անվտանգության, հակահրդեհային անվտանգության կանոնների պահպանումը:

Կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների, մասնագետների, ծառայողների և բանվորների պարգատրումը կիրականացվի ամսական կտրվածքով: Իսկ վարչակառավարչական անձնակազմի համար պարզևատրման ժամանակահատված նպատակահարմար է ընդունել եռամսյակը, քանի որ վերջիններիս պարզևատրման ցուցանիշները հաճախ կարող են որոշվել եռամսյակային հաշվետվությունների հիման վրա: Որպես պարզևատրման ցուցանիշ պետք է դիտարկել աշխատանքի արդյունավետությունը, որակը, ժամանակին կատարված աշխատանքը, իսկ որպես պայման՝ իր և կոլեկտիվի աշխատանքի արդյունքները վերլուծելու, ընդհանրացնելու և եզրահանգումներ անելու կարողություն, աշխատանքի կազմակերպման կատարելագործման, նյութական, աշխատանքային, ֆինանսական ռեսուրսների կորուստները վերացնելու հետ կապված հարցերում նախաձեռնություն ցուցաբերում:

Քանի որ մետրոպոլիտենում մինչ այժմ պարզևատրական համակարգ չի կիրառվել, իսկ մեր կողմից առաջարկվող համակարգը դեռ փաստացիորեն չի գործում, ուստի դժվար է հաշվել վերջինիս արդյունավետության ցուցանիշը: Առաջարկվող պարզևատրման համակարգի գործողության մեխանիզմը ցույց տանք օրինակի միջոցով.

Շարժակազմը վերանորոգող 5-րդ տարակարգի բանվորի ժամային տարիֆային դրույքը, կազմում է 897.2 դրամ, ամսական տարիֆային աշխատավարձը կլինի 152255 դրամ (897.2X169.7): Նշված կատեգորիայի բանվորների համար սահմանված է պարզև տարիֆային աշխատավարձի 20%-ի չափով, որը կկազմի 30451 դրամ: Աշխատողը պարզևն ամբողջությամբ (100%) կստանա շարժակազմի վթարների, երթևեկության անվտանգության, աշխատանքի պաշտպանության խախտման հետ կապված իրավիճակների բացակայության և պարզևատրման բոլոր ցուցանիշների կատարման դեպքում (երկրորդ

և երրորդ մակարդակի): Եթե ստորաբաժանումը փաստացի ժամանակահատվածում չկատարի պլանով սահմանված աշխատանքների ծավալը, ապա աշխատողը, տվյալ դեպքում՝ շարժակազմը վերանորոգող փականագործը, կարող է ստանալ պարգևի ամբողջ գումարի 80%-ը (24361 դրամ), ի հաշիվ պարգևատրման անհատական ցուցանիշների: Աշխատողը պարգև ընդհանրապես չի ստանա այն դեպքում, եթե արտակարգ իրավիճակ է տեղի ունեցել իր մեղքով կամ երկրորդ և երրորդ մակարդակի ցուցանիշներից ոչ մեկը չի կատարվել: Եթե արտակարգ իրավիճակը տեղի է ունեցել աշխատողի մեղքով, ապա տվյալ ստորաբաժանումը հաշվետու ժամանակահատվածում զրկվում է պարգևից (տե՛ս աղյուսակ 1): Պարգևատրման այս համակարգի առավելությունը կայանում է նրանում, որ խրախուսում է թիմային աշխատանքի գաղափարը:

Աղյուսակ 1

Աշխատողների պարգևատրման առաջարկվող համակարգի գործողության մեխանիզմը

	Պարգևի չափը (դրամ)	Պարգևատրման պայմանները (I մակարդակ)	Ստորաբաժանման հիմնական խնդիրների կատարումը (II մակարդակ)	Անհատական ցուցանիշներ (III մակարդակ)
Տարբերակ 1	18429 (100%)	Պահպանված են	20%	80%
Տարբերակ 2	14743 (80%)	Պահպանված են	0%	80%
Տարբերակ 3	3686 (20%)	Պահպանված են	20%	0%
Տարբերակ 4	0	Պահպանված են	0%	0%
Տարբերակ 5	0	Պահպանված չեն	0%	0%

Աշխատողի պարգևի չափը բացարձակ չկապել կազմակերպության կամ ստորաբաժանման աշխատանքի արդյունքների հետ, ճիշտ

չի լինի, քանի որ արտադրական ծրագրի թերակատարման կամ շահագործական ծախսերի գերակատարման դեպքում պարզևի վճարման աղբյուրներ ուղղակի չեն լինի: Յուրաքանչյուր աշխատող պետք է հասկանա, որ ուղղակի կամ անուղղակի ազդեցություն է ունենում մետրոպոլիտենի աշխատանքի արդյունքների վրա:

Ներկայիս պայմաններում յուրաքանչյուր աշխատողի համար նյութական խրախուսումը ունի կարևոր նշանակություն, սակայն ոչ պակաս կարևորություն ունի նաև ոչ նյութական խրախուսման կիրառումը: Մասնավորապես, Երևանի մետրոպոլիտենում չի գործում անձնակազմի զարգացման ոչ մի համակարգ՝ աշխատողները չեն վերապատրաստվում, չեն մասնակցում տվյալ ոլորտում կազմակերպվող գիտաժողովներին, կոնֆերանսներին, չի խրախուսվում նախաձեռնողականությունը և այլն: Քանի որ պատշաճ ուշադրություն չի դարձվում կադրերի հավաքագրման և ընտրության հարցերին, իսկ վերջինս շատ կարևոր է մետրոպոլիտենի համար, առաջարկում ենք.

ա) մետրոպոլիտենում ստեղծել ուսումնաարտադրական կենտրոն, որտեղ կպատրաստվեն մասնագետներ մետրոպոլիտենի համար կարևոր մի շարք մասնագիտությունների գծով, մասնավորապես՝ էլեկտրագնացքի մեքենավար, մեքենավարի օգնական, կենտրոնական կայանի օպերատոր և այլն,

բ) երիտասարդ մասնագետների գիտելիքների և գործնական հմտությունների նախնական գնահատման նպատակով այս ոլորտի ուսանողներին հնարավորություն տրվի Երևանի մետրոպոլիտենում անցկացնելու ուսումնա-արտադրական և նախադիպլոմային պրակտիկաները, ինչը կհեշտացնի հետագայում կադրերի ընտրության հարցը,

գ) մետրոպոլիտենը անդամակցում է տրանսպորտի ոլորտի մի շարք հայտնի կազմակերպությունների, մասնավորապես «Մետրոն միջազգային ասոցիացիային, Հասարակական տրանսպորտի միջազգային միությանը և այլն: Այս կազմակերպությունները պարբերաբար կազմակերպում են կոնֆերանսներ, ստեղծում են փորձի փոխանակման հնարավորություններ, որոնցից Երևանի մետրոպոլիտենի օգուրվելը, ոչ միայն կհանգեցնի տեխնիկա-տնտեսական ցուցանիշների բարելավմանը, այլև կնպաստի աշխատողների մոտիվացիայի աճին:

Այսպիսով, մեր կարծիքով, պարզևատրման զուգակցումը տարի-ֆային աշխատավարձին և ոչ նյութական խթանների կիրառումը կբարձրացնի աշխատանքի արտադրողականության մակարդակը Երևանի մետրոպոլիտենում և կհանգեցնի բարձր արտադրա-տնտեսական ցուցանիշների ապահովմանը:

Բանալի բաներ. աշխատավարձի ձևեր, պարզևատրման համակարգ, պարզևատրման ցուցանիշներ և պայմաններ, նյութական և ոչ նյութական խթաններ:

Գրականություն

1. Организация и регулирование оплаты труда: Учеб. пособие/ под ред. М.Е. Сорокиной.- М.: Вузовский учебник, 2006. – С. 238.
2. Рофе А. И. Экономика труда: учебник - М.: КНОРУС, 2010.- с. 352-353.
3. Вайсбурд, В. А. Экономика труда./ В. А. Вайсбурд.- М.: Издательство «Омега_Л», 2011.- (Высшее экономическое образование). С.310

ПУТИ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ФОРМ ОПЛАТЫ ТРУДА НА ЕРЕВАНСКОМ МЕТРОПОЛИТЕНЕ

Т.Р. Саргсян

Резюме

Заработная плата является основным источником дохода работника, от чего зависит его жизненный уровень. Чтобы работники были заинтересованы ростом эффективности производства, надо совершенствовать формы и системы оплаты труда, естественно, не забывая, что рост заработной платы должен находиться в определенных взаимоотношениях с ростом производительности труда. В настоящее время, когда в транспортной системе требуется рост качества труда и повышения конкурентоспособности метрополитена, стимулирование и прикрепление высококвалифицированных, инициативных и ответственных работников на рабочее место, получает приоритетное значение.

Ключевые слова: заработная плата, жизненный уровень работника, эффективность производства, рост производительности труда, премиальная система.

THE WAYS OF IMPROVING THE FORMS OF SALARY IN YEREVAN SUBWAY

T.R. Sargsyan

Summary

The salary is the main source of the employee's income and is strongly related to its quality of life. It is necessary to regularly improve the salary forms and systems to keep the employees motivated and interested in the growth of production efficiency. At the same time the salary increase must be correlated to the productivity increase. Currently, maintaining and promotion of highly qualified, responsible and initiative employees is high priority, when it comes to increasing the competitiveness and service quality of Yerevan subway in transportation system. The importance of professional qualification improvement for workers, specialists and managers also increases.

Key words: salary, quality of life, the salary forms and systems, the growth of production efficiency, productivity increase.

ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

S.U. Վարազդարյան

Բնական մենաշնորհը կարելի է սահմանել որպես այնպիսի ճյուղ, որում արտադրության մասշտաբների աճով պայմանավորված տնտեսումը կլինի ավելի մեծ, եթե մեկ ընկերության կողմից հնարավոր լինի ապրանքն արտադրել ավելի ցածր միջին ծախսերով, քան այն դեպքում, երբ այդ ապրանքի արտադրությամբ զբաղվեն ոչ թե մեկ, այլ մի քանի ընկերություններ¹:

Բնական մենաշնորհի շուկաներում մրցակցությունը ոչ միայն ցանկալի, այլև հնարավոր չէ²: Բնական մենաշնորհի շուկաները բավականաչափ կապիտալատար են, իսկ այդպիսի շուկաներն ընդլայնելու համար պահանջվում են հսկայական կապիտալ ներդրումներ, որոնք մշտապես դժվար է հայթայթել: Ավելին, հայթայթելն անիմաստ է՝ կապված միավոր ապրանքի ծախսերի ավելացման հետ³ (մասշտաբի էֆֆեկտ):

«Բնական մենաշնորհների մասին» ՌԴ օրենքով կարգավորվում են նավթի և նավթամթերքի հիմնական ուղիներով տեղափոխման, գազի խողովակաշարային տեղափոխման, երկաթգծային փոխադրումների, տրանսպորտային, նավահանգստային, օդանավակայանային տերմինալ ծառայությունների, էլեկտրական և ջերմային էներգիայի հաղորդման ծառայությունների, էլեկտրաէներգետիկայի օպերատիվ-ուղղորդիչ կառավարման ծառայությունների, ներտնտեսային ցանցերով ջրային ենթակառուցվածքների օգտագործման ծառայությունների ոլորտներում գործող բնական մենաշնորհները⁴: ԱՄՆ-ում պետական կարգավորումը տարածվում է հասարակական օգտագործման ճյուղերի վրա, մասնավորապես գազի, էլեկտրաէներգիայի, ջրի մատակարարմանը և այլն: Պատկերը գրեթե նույնն է եվրոպական մի շարք երկրներում:

¹ Макконнел К.Р., Брю С.Л. Экономикс: Принципы, проблемы и политика. В 2 т. Пер. с англ. Т. 2. – 11-е изд. – М.: Республика, 1992. стр. 94-95.

² Միքայելյան Մ.Վ. Տնտեսական մրցակցության և մենաշնորհների պետական կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Եր., Նահապետ, 2005, 253 էջ, էջ 46

³ Տե՛ս Միքայելյան Մ.Վ., նույն տեղում, էջ 51

⁴ Федеральный Закон «О естественных монополиях» РФ, прин. Государственной Думой 19.07.1995, Ст. 4

Հանրային օգտագործման ճյուղերում գների պետական կարգավորումը հետապնդում է 2 նպատակ: Առաջին հերթին, այն պետք է խթանի արտադրության ընդլայնումը և ապրանքների առաքումը տնտեսության այն ճյուղեր, որտեղ դրանք անհրաժեշտ են և այնպիսի գներով, որոնք ընդունելի են սպառող ընկերությունների կողմից: Երկրորդ հերթին, պետական կարգավորումը պետք է այդ ընկերությունների համար ապահովի որոշակի շահույթ՝ նպաստելով այդ ճյուղերում նոր կապիտալի ներգրավմանը: Գնագոյացման բնագավառում այդպիսի կարգավորումն իրականացվում է գների վերին շեմ սահմանելու միջոցով, որն ընկերությունները չպետք է գերազանցեն իրենց արտադրանքը վաճառելիս: Այսպիսի գների ձևավորման հիմնական սկզբունքը հանդիսանում է ծախսեր գումարած «ողջամիտ» շահույթ մեծության փոխհատուցումը: «Ողջամիտ» շահույթի տակ հասկացվում է շահույթի այնպիսի նորմա, որը բարձր է պետական պարտատոմսերի տոկոսադրույքից, բայց ցածր է բոլոր տեսակի մշակող արդյունաբերությունների շահույթի միջին նորմայից⁵:

Բնական մենաշնորհների պետական կարգավորման հիմնական մեթոդներն են⁶.

- բնական մենաշնորհի շուկաներում արտադրանքի գնագոյացումը («սոցիալապես արդար» գնի ձևավորումը),
- բնական մենաշնորհի շուկաներում գործող ընկերությունների եկամտաբերության սահմանափակումը,
- բնական մենաշնորհի շուկաներում գործող ընկերությունների սեփականության հարաբերությունների կարգավորումը:

Արտասահմանյան մի շարք երկրներում բնական մենաշնորհների պետական կարգավորման հիմնական մեթոդները մի փոքր այլ են, չնայած այս և վերը ներկայացված մոտեցումներում պետական կարգավորման հիմնական 2 գործիքները՝ գնագոյացումն ու շահույթի նորմայի սահմանափակումը, գլխավոր մեթոդներն են: Այս դեպքում որպես այդպիսի մեթոդներ են հանդիսանում.

⁵ Князева И. В. Антимонопольная политика в России: учеб. пособие для студентов вузов, обучающихся специальности «Нац. экономика» / И. В. Князева. – М.: Омега-Л, 2006. – 526 с. – (Высшее экономическое образование)., стр. 444

⁶ Авдашева С.Б., Розанова Н.М. Теория организации отраслевых рынков: Учебник. – М.: ИЧП «Издательство Магистр», 1998. – 320 с., стр. 259

- մրցակցությունը մենաշնորհի շուկայում,
- շահույթի նորմայի կարգավորումը,
- սակագների վերին շեմի կարգավորումը⁷:

Մենաշնորհի շուկայում մրցակցությունը կազմակերպվում է մրցույթի (աուկցիոնի) տեսքով, որի հաղթողը ձեռք է բերում երկրի մասշտաբով տեղական շուկայում արտադրության բացառիկ իրավունք: Մրցույթի հաղթողը հնարավորություն ունի իր գործունեությունն իրականացնել կա՛մ վարձավճարներով (ակտիվները պատկանում են պետությանը, իսկ կառավարումն իրականացվում է մասնավոր ընկերությունների կողմից) կա՛մ կոնցեսիոն համաձայնագրով (մասնավոր ընկերությունն իր սեփական միջոցներով իրականացնում է ներդրումներ՝ կապերի զարգացման և պահպանման նպատակով): Շահույթի նորմայի կարգավորումը կոչված է ընթացիկ ծախսերի որոշման, ներդրումների գնահատման և թույլատրելի շահույթի որոշման համար⁸:

Անդրադառնալով մեր երկրին՝ նշենք, որ չնայած ՀՀ օրենսդրությունում առկա չէ բնական մենաշնորհների մասին առանձին օրենք, այդուամենայնիվ ոլորտը կարգավորող պետական մարմինը ստեղծված է՝ ի դեմս ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով): «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքով սահմանվում է հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտը⁹, որը ներառում է՝

- ա) էներգետիկայի բնագավառը, որը ներառում է էլեկտրաէներգետիկական, ջերմամատակարարման, գազամատակարարման համակարգերը,
- բ) ջրային համակարգը, որը ներառում է խմելու, ոռոգման, տեխնիկական արդյունաբերական ջրի մատակարարումը, ջրահեռացումը և կեղտաջրերի մաքրումը,
- գ) հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառը,

⁷ Варламова А. Конкуренция и монополия: сравнительный анализ зарубежного опыта законодательного регулирования на предмет использования в российских условиях // Риск. 1997. № 5.

⁸ Տե՛ս Князева И. В., նույն տեղում, սր. 445-450

⁹ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենք, Հոդված 2: ՀՀՊՏ 2004.02.04/7(306), ընդ. 25.12.2003, ուժի մեջ է 14.02.2004:

- դ) փոստային կապի բնագավառը,
- ե) երկաթուղային տրանսպորտի բնագավառը՝ ենթակառուցվածքի օգտագործման վճարների հաշվարկման մեթոդաբանության, օգտագործման վճարի հաշվարկի իրականացման և օգտագործման վճարի հաստատման մասով,
- զ) տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման բնագավառ՝ միայն սակագների մասով:

Վերոնշյալներից միայն ա), բ) և ե) ոլորտների մի մասին են բնորոշ բնական մենաշնորհ շուկաները, իսկ մնացած ոլորտներում այդպիսի շուկաներ առկա չեն:

ՀՀ-ում բնական մենաշնորհ շուկաներում գործունեություն իրականացնող խոշոր ընկերություններից են՝ «Հայաստանի էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ-ն (էլ. էներգիայի բաշխում), «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն (էլ. էներգիայի հաղորդում), «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն (բնական գազի բաշխում), «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն (խողովակաշարերով խմելու ջրի մատակարարում և ջրահեռացում), «Երևան Ջուր» ՓԲԸ-ն (խողովակաշարերով խմելու ջրի մատակարարում և ջրահեռացում, կեղտաջրերի մաքրում), «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն (երկաթգծային փոխադրումներ), որը հանդես է գալիս կոնցեսիոն պայմանագրի հիման վրա՝ կնքված 13.02.2008թ. և այլն:

Վերջին ժամանակներում ՀՀ-ում ծավալված տնտեսական քաղաքականությունից անմասն չմնաց նաև վերոնշյալ ընկերությունների մի մասի կողմից նոր սակագների սահմանման մասին առաջարկների ներկայացումը Հանձնաժողովին, որով առաջարկվում էր վերանայել տնտեսության տարբեր ճյուղերում գործունեություն իրականացման համար անհրաժեշտ ծախսերի և պարտավորությունների մեծությունը: Վերջինս սակագների բարձրացման նպատակ էր հետապնդում: Արդյունքում, 2014 թ. հուլիսի 1-ին Հանձնաժողովը բավարարեց «Հայաստանի էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ-ի առաջարկը, և որոշեց սակագները բարձրացնել 2014 թ. օգոստոսի 1-ից: 2014 թ. հուլիսի 9-ին Հանձնաժողովը քննարկեց «Երևան Ջուր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված սակագնի փոփոխման հարցը, սակայն Հանձնաժողովի որոշմամբ վերջինս մնաց անփոփոխ:

Իհարկե, բնական մենաշնորհ շուկաներում գործող ընկերությունների կողմից սակագների վերանայման նպատակով պարբերական

առաջարկները Հանձնաժողովին ունեն իրենց օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները: Օբյեկտիվ պատճառներ են հանդիսանում հումքի ու նյութերի և այլ ռեսուրսների թանկացումը, իսկ սուբյեկտիվ պատճառներ կարող են հանդիսանալ օրինակ սպառողների կողմից էլեկտրաէներգիայի, ջրի անօրինական ձևով օգտագործումը (յուրացումը), որը կհանգեցնի արտադրանքի օգտակար առաքման կորստի: Ընդհանուր առմամբ, օբյեկտիվ գործոնների նկատմամբ անհրաժեշտ է պետության ուշադրության արժանացումը, իսկ սուբյեկտիվ գործոնների նկատմամբ վերահսկողություն պետք է իրականացնեն հենց վերոնշյալ ընկերությունները, քանզի օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով պայմանավորված կարող է թողարկվող միավոր արտադրանքի ինքնարժեքը բարձրանալ, որն անշուշտ կհանգեցնի սակագների բարձրացմանը, հետևապես նաև հասարակության դժգոհություններին:

Ուստի և կարծում ենք, որ պետությունն ու բնական մենաշնորհ շուկաներում գործող ընկերությունները միաժամանակ պետք է հանդիսանան սակագնային քաղաքականության մասնակիցներ թե՛ սակագների մշակման և թե՛ դրանց նկատմամբ վերահսկողություն իրականացնելու ժամանակ:

Բանալի բառեր. բնական մենաշնորհ, մասշտաբի էֆֆեկտ, «ծախսեր գումարած» մեթոդ, «սոցիալապես արդար» գին, սակագին:

Գրականություն

1. Макконнел К.Р., Брю С.Л. Экономикс: Принципы, проблемы и политика. В 2 т. Пер. с англ. Т. 2. – 11-е изд. – М.: Республика, 1992.
2. Միքայելյան Մ.Վ. Տնտեսական մրցակցության և մենաշնորհների պետական կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Եր., Նահապետ, 2005, 253 էջ
3. Федеральный Закон «О естественных монополиях» РФ
4. Князева И. В. Антимонопольная политика в России: учеб. пособие для студентов вузов, обучающихся специальности «Нац. экономика» / И. В. Князева. – М.: Омега-Л, 2006. – 526 с. – (Высшее экономическое образование).
5. Авдашева С.Б., Розанова Н.М. Теория организации отраслевых рынков: Учебник. – М.: ИЧП «Издательство Магистр», 1998.– 320 с.

6. Варламова А. Конкуренция и монополия: сравнительный анализ зарубежного опыта законодательного регулирования на предмет использования в российских условиях // Риск. 1997. № 5.
7. «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենք

ПРОЯВЛЕНИЯ ЕСТЕСТВЕННЫХ МОНОПОЛИЙ В РА

Т.С. Варздатян

Резюме

Общество в целом часто негативно воспринимает слово «монополия», однако между понятиями «монополия» и «естественная монополия» существует достаточно большая разница. Несмотря на это, «естественная монополия» трактуется обществом такой же рыночной ситуацией, когда товары или услуги поставляются потребителям более высокими ценами и одной и той же компанией, но по сути это не так.

В статье представлены концепции естественных монополий, их деятельность и сферы влияния.

Ключевые слова: естественная монополия, эффект масштаба, метод «затраты плюс», «социально справедливая цена», тариф.

NATURAL MONOPOLIES IN THE RA

T.S. Varazdatyan

Summary

Society often negatively interprets the word "monopoly", but there is quite a big difference between the concepts of "monopoly" and "natural monopoly". Despite this "natural monopoly" is treated by society as the same market conditions as when the goods or services are delivered to consumers by higher prices and by the same single company, but in fact that is not the way it is.

The article presents the concept of natural monopolies, their activities and spheres of influence.

Key words: natural monopoly, economies of scale, the method of "cost plus", "socially fair price", tariff.

ԲԱՆԿԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա.Ս. Մխիթարյան

Ֆինանսական շուկայի հարատև գարգացման կարևորագույն նախապայմաններից մեկը սպառողների կարիքների բավարարումն է նոր ապրանքների և ծառայությունների մատուցման միջոցով: Ֆինանսական նորարարությունները անհրաժեշտություն են տնտեսությունների գարգացման համար, անկախ տնտեսության գարգացման աստիճանից¹:

Հայաստանի ժամանակակից բանկային համակարգի անբաժանելի մասը կազմում է ֆինանսական նորարարությունների ներդրման և գարգացման կառավարման համակարգը, որպեսզի բարձրացվի առևտրային բանկերի վերարտադրության գործընթացը: Բանկային ֆինանսական նորարարությունների տակ ընդունված է հասկանալ նորարարություններ, որոնք գործում են ֆինանսական համակարգում և խթանում առևտրային բանկերի կողմից իրականացվող գործունեության արդյունավետությունը:

Բանկային բիզնեսի ընթացիկ իրողությունները թույլ են տալիս ակնհայտորեն տարբերակել բանկային նորարարական գործունեության երեք գործոն՝ համաշխարհային ֆինանսական շուկաների և բանկային ծառայությունների շուկաների գլոբալիզացիան, բանկային և ոչ բանկային հատվածում մրցակցության աճը, համաշխարհային ֆինանսական ճգնաժամը: Նկարագրված երևույթները էական ազդեցություն են ունենում բանկային ծառայությունների շուկայում մասնակիցների քանակական և որակական ցուցանիշների վրա և հանգեցնում սպառողների վարքագծի փոփոխության՝ բանկերի համար իրենց մրցակցային առավելությունները պահպանելու և բարձրացնելու համար միակ ելքը թողնելով նորարարությունների կիրառումը, որոնց ուղղվածությունը կորոշի բանկային համակարգի գարգացման միջնաժամկետ ռազմավարությունը:

¹ Научный журнал КубГАУ, №83(09), 2012 года

Ֆինանսական ինստիտուտներում նորարարությունների քաղաքականության իրականացումը չպետք է տեղի ունենա տարերայնորեն: Նորարարությունների ներդրումից դրական ազդեցություն կարելի է ստանալ միայն նորամուծական գործընթացը ամբողջությամբ կառավարելու արդյունքում, ինչը հնարավոր չի առանց լավ ընտրված բանկային նորարարության ձևաբանության, որն առնվազն թույլ կտա տարբերակել նորարարությունը և փոփոխությունները:

Բանկային ոլորտի նորամուծություն կարելի է համարել նոր բանկային ապրանքը կամ ծառայությունը, առկա ծառայության կամ ապրանքի էական բարելավումը կամ բիզնեսի վարման գործնական մեթոդի տեխնիկական, մարքեթինգային, կառավարչական կամ կազմակերպչական նորարարությունը: Այսպիսով, բանկային նորարարությունները իրենցից ներկայացնում են մտավոր աշխատանքի և տեխնոլոգիական զարգացումների արդյունք, որոնք ուղղված են բարելավելու ֆինանսական ինստիտուտների գործունեությունը: Բանկային նորարարությունները պետք է պարտադիր օժտված լինեն ավելի բարձր սպառողական հատկանիշներով, քան նախորդ նմանատիպ ապրանքները և ծառայությունները, ավելի շատ համապատասխանեն սպառողների արդի պահանջումներին: Պետք է հաշվի առնել նաև, որ բանկային նորարարությունները մեծապես կախված են նաև այլ ոլորտների գիտատեխնիկական առաջընթացից, հատկապես տեղեկատվական տեխնոլոգիաների: «The Banker» ամսագիրը ամեն տարի հրապարակում է բանկային ոլորտում տեխնոլոգիական նորարարությունների ցանկը: Նշենք, որ մրցանակակիրների շարքում ոչ ոք բացարձակ նոր լուծումներ չի առաջարկել, որոնք դեռևս չէին կիրառվել տնտեսության այլ ճյուղերում: Լրիվ նոր բանկային նորարարություն ստեղծելը մեծ կապիտալ ներդրումներ չի պահանջում, սակայն պահանջում է նորարարության իրացման հետ կապված խոշորամասշտաբ մարքեթինգային հետազոտություններ և չի բացառում իրականացման հետ կապված մեծ ռիսկի ի հայտ գալը²:

Հետազոտությունները թույլ են տալիս մեզ առանձնացնել բանկային նորարարությունների մի քանի առանցքային տիպեր, որոնք կարե-

² Bhatt V. Financial Innovations and Credit Market Evolution //Economic and Political Weekly. 1987. Vol. 22, p. 47

լի է անվանել նաև ունիվերսալ, քանի որ նույն տիպերը կիրառելի են նաև տնտեսության այլ ճյուղերում (աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Բանկային նորարարությունների հիմնական տեսակները³

<p><i>Ապրանքային նորարարություն</i> (նոր ապրանքի իրացումը արդեն գոյություն ունեցող շուկայում)</p>	<p>Տվյալ տեսակի նորարարությունները ընդունված է համարել առաջնահերթ, քանի որ յուրաքանչյուր բանկի աշխատանքի արդյունավետությունը առաջին հերթին կախված է իր կողմից առաջարկվող նոր ապրանքներով և ծառայություններով, ինչպես նաև դրանց պահանջարկով: Բոլոր այլ տեսակի նորարարությունները ունեն շուկայական կողմնորոշում՝ կախված շրջակա միջավայրի եւ հաճախորդների նախապատվություններից</p>
<p><i>Տեխնոլոգիական նորարարություն</i></p>	<p>Տվյալ տեսակի նորարարությունը վերաբերում է ապրանքների և ծառայությունների մատուցման նոր մեթոդի ներդրմանը, կամ նոր տեխնոլոգիաների, գործընթացների կամ գործողությունների ներդրմանը, որոնք կնվազեցնեն մատուցվող ծառայության կամ ապրանքի ինքնարժեքը և/կամ կբարձրացնեն որակը</p>
<p><i>Շուկայական նորարարություն</i></p>	<p>Տվյալ տիպի նորարարությունը վերաբերում է սկզբունքորեն նոր ապրանքների կամ ծառայությունների շուկայի ստեղծմանը: Շուկայական նորարարություն են համարվում նաև գոյություն ունեցող ապրանքների և ծառայությունների շուկայում նորովի մատուցումը</p>
<p><i>Մարքեթինգային նորարարություն</i></p>	<p>Սրանք նոր ռեսուրսների կիրառման, շուկայում աշխատանքի նոր մեթոդների կամ բիզնեսի նոր ձևերի հայտնաբերմանն ուղղված նորարարություններն են</p>
<p><i>Կառավարչական նորարարություն</i></p>	<p>Այս նորարարությունները ուղղված են կառավարչական նոր փոփոխությունների իրականացմանը, որոնք կբարձրացնեն բիզնես գործընթացի արդյունավետությունը</p>

³ Աղյուսակի կազմման հիմք է հանդիսացել բանկային նորարարությունների վերաբերյալ մասնագիտական գրականությունը

Բանկային նորարարությունները կարելի է դասակարգել նաև ըստ նորարարությունների առանձնահատկությունների⁴:

Նախ և առաջ տարանջատվում են ռեակտիվ և ռազմավարական նորարարություններ: Ռազմավարական նորարարությունների հիմնական նպատակը մրցակցային առավելությունների ստացումն է և նոր հաճախորդների ներգրավումը: Ռեակտիվ նորարարությունները, ընդհակառակը, հանդիսանում են բանկերի պաշտպանական քաղաքականության մասնիկ, այլ խոսքերով ասած իրենցից ներկայացնում են շուկայի այլ մասնակիցների արձագանքը կատարվող նորարարությունների վերաբերյալ:

Ըստ նորարարությունների խորության, տարանջատվում են արմատական, ֆունկցիոնալ և մոդիֆիկացիոն նորարարություններ: Արմատական նորարարություններին վերաբերում են շուկայում բոլորովին նոր ապրանքի, ծառայության, տեխնոլոգիայի կամ կառավարման նոր մոդելի ներդրումը, իսկ ֆունկցիոնալ փոփոխությունները առկա ապրանքի կամ ծառայության իրականացման բնույթի կամ ապրանքի ներկայացման և իրացման նոր մեթոդների կիրառումն է, որը կբերի սպառողների կարիքների բավարարման ավելի բարձր մակարդակի: Մոդիֆիկացիոն նորարարությունները նույնպես նախատեսում են առկա ապրանքի կամ ծառայության փոփոխություն, սակայն ավելի մակերեսային փոփոխություններ, որոնք հիմնականում ուղղված են գոյություն ունեցող նորամուծության կյանքի ցիկլի երկարացմանը:

Ըստ նորամուծության տարածման աստիճանի, տարանջատվում են համաշխարհային, միջազգային և տեղական նորարարություններ, ինչպես նաև նորարարություններ, որոնք հանդիսանում են նորարարություն միայն տվյալ կազմակերպության համար: Նորարարությունները կարող են իրականացվել տվյալ տարածաշրջանում, այսինքն տեղական շուկայում, սակայն ամենաբարձր մակարդակի նորարարությունը համաշխարհայինն է, որը ներառում է այնպիսի ապրանքի կամ ծառայության ստեղծումը, որը չունի նմանը աշխարհում: Գլոբալիզացիայի շնորհիվ, շատ նորարարություններ, որոնք նախկինում ունեին սահմանափակ տեղական շուկաներ, ներկայումս մեծ տարածում են գտել միջազգային շուկաներում:

⁴ Кох Л.В., Смольянинова Е.Н., Просалова В.С. Инновации в банковском бизнесе. СПб.: Изд-во Политехн. ун-та. 2009. с.3

Կախված տարածման մեխանիզմից, նորարարությունները լինում են էլակետային և ածանցյալ: Էլակետային նորարարությունները ի հայտ են գալիս, որպես նոր ֆինանսական պրոդուկտ կամ ծառայություն, այն ժամանակ, երբ ածանցյալ նորարարությունները էլակետային նորարարությունների արձագանքն են և տարածվում են վերջինից ածանցվելու կամ փորձի փոխանցման միջոցով: Էլակետային նորարարությունները համարվում են նաև նորարարություններ առաջնորդներ, քանի որ վերջիններիս բնորոշ են լրիվ նոր տեսակի ապրանքներ և ծառայություններ, որոնք ունեն նաև ռիսկայնության բարձր մակարդակ: Այդպիսի նորարարությունները բանկին կարող են տալ էական մրցակցային առավելություններ, կամ, ընդհակառակը, բանկին հասցնել մեծ կորուստներ:


Համաձայն արտադրական ցիկլում իրենց տեղի, նորարարությունները տարանջատվում են պատրաստի, տեխնոլոգիական գործընթացում գտնվող կամ ռեսուրսային (նոր ստեղծվող) նորարարությունների: Պատրաստի նորարարությունները նոր ապրանքներն ու ծառայություններն են, որոնք մուտք են գործել տեղական կամ միջազգային շուկաներ, օրինակ նոր քարտերի տեսակը, կամ նոր վարկատեսակը: Տեխնոլոգիական փուլում գտնվող նորամուծության օրինակ կարող է հանդիսանալ մագնիսական քարտերի աստիճանաբար վերափոխման գործընթացը չիպային քարտերի: Ռեսուրսային նորարարությունների օրինակ են էլեկտրոնային (անլար) փոխանցումները, կամ ինտերնետի միջոցով իրականացվող ֆինանսական ծառայությունները:

Ըստ ազդեցության մասշտաբի, նորարարությունները կարելի է տարանջատել ցածր ազդեցություն ունեցող և համակարգված: Ցածր ազդեցություն ունեցող նորարարությունները ուղղված են կոնկրետ գործունեության ոլորտի արդիականացմանը և մեծ ծախսեր չեն պահանջում, քանի որ կապված են որոշակի չափանիշների փոփոխության հետ և էական ազդեցություն չեն թողնում ընդհանուր բանկային համակարգի վրա: Համակարգված նորարարությունները ուղղված են բանկային համակարգում գլոբալ փոփոխությունների իրականացմանը: Օրինակ նման փոփոխություն բանկային համակարգի համար հանդիսացել են համակարգիչների կիրառումը, ինչը արմատապես փոխեց բանկերի աշխատանքի սկզբունքները:

Ըստ շուկայի ուղղվածության, նորարարությունները լինում են

գոյություն ունեցող սպառողների կարիքների բավարարմանն ուղղված նորարարություններ, ինչպես նաև նոր շուկաների ստեղծման և հաճախորդների ներգրավման նորարարություններ: Սեփական հաճախորդների կարիքների հստակ նույնականացումը բանկերին թույլ է տալիս տեխնոլոգիաների և մոդիֆիկացիաների միջոցով մշակել սպառողների կարիքներին ավելի մոտ ապրանքներ և ծառայություններ, ինչպես նաև բարելավել հաճախորդների սպասարկման տեխնոլոգիան: Ինչը վերաբերում է նոր շուկաներ և հաճախորդներ ստեղծելուն, ապա հարկ է նշել, որ վերջինս բանկի համար բավական բարդ և ռիսկային գործընթաց է, որն իր մեջ ներառում է մեծածավալ մարքեթինգային հետազոտություններ և կարող է ռիսկի առջև կանգնեցնել բանկի ողջ նորամուծական նախագծերը:

Ընդհանուր առմամբ բանկային ֆինանսական նորարարությունները կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերի միջոցով՝



Գծապատկեր 1. Բանկային ֆինանսական նորարարությունները⁵

⁵ Աղյուսակի կազմման հիմք է հանդիսացել բանկային նորարարությունների վերաբերյալ մասնագիտական գրականությունը

Վերոնշյալ կատեգորիաները իրենց մեջ չեն ներառում նորարարությունների այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են, օրինակ նորամուծության ազդեցության ինտենսիվությունը կամ արդյունավետության մակարդակը:

Այսպիսով, բանկային նորարարությունների զարգացման հիմնական միտումների հետ մեկտեղ առաջին հերթին պետք է ֆինանսական պրոդուկտների գնային և քանակական ռազմավարությունը փոխել ծառայությունների ընդլայնման և որակական հատկանիշների հետ, ինչպիսիք են հաճախորդներին անհատական մոտեցումը, ծառայությունների մատուցման որակը և արագությունը, հաճախորդների համար առավել մատչելի և հասանելի ծառայությունների առաջարկը:

Բանայի բաներ. նորարարություն, նորարարական ֆինանսական պրոդուկտ, տնտեսություն, կառավարում, ֆինանսական ինստիտուտներ, տեխնոլոգիաներ:

Գրականություն

1. Бархатов И.В. Особенности инновационных банковских услуг // Вестник Челябинского государственного университета. 2011. № 34. С. 130-135.
2. Викулов В.С. Концептуальный подход к разработке инновационных стратегий коммерческого банка // Финансовый менеджмент. 2010. № 5. С. 106.
3. Кох Л.В., Смольянинова Е.Н., Просалова В.С. Инновации в банковском бизнесе. СПб.: Изд-во Политехн. ун-та. 2009. 49 с.
4. Орловский В. Инновации на вырост // Банковские технологии. 2010. № 3. С. 26-29.
5. Roberts P.W., Amit R. The Dynamics of Innovative Activity and Competitive Advantage: The Case of Australian Retail Banking, 1981 to 1995. Organization Science. 2003. Vol. 14, No. 2. P. 107-122.
6. Bhatt V. Financial Innovations and Credit Market Evolution //Economic and Political Weekly. 1987. Vol. 22,
7. Современные направления развития финансовых инноваций в банковском деле, Научный журнал КубГАУ, №83 (09), 2012 г.

ESSENCE OF BANKING FINANCIAL INNOVATIONS AND ITS FEATURES

A.S. Mkhitaryan

Summary

In the article features of implementation and development of financial innovations in commercial banks activity are considered, objective need of their application for banking is proved.

Key words: innovation, innovative financial product, economics, management, financial institutions, technologies.

СУЩНОСТИ БАНКОВСКИХ ФИНАНСОВЫХ ИННОВАЦИЙ И ИХ ОСОБЕННОСТИ

А.С.Мхитарян

Резюме

В статье рассматриваются особенности внедрения и развития финансовых инноваций в деятельности коммерческих банков, доказывается объективная необходимость их применения в банковском деле.

Ключевые слова: инновации, инновационный финансовый продукт, экономика, управление, финансовые учреждения, технологии.

НАЛОГОВЫЕ РЕФОРМЫ ГРУЗИИ И ИХ РЕЗУЛЬТАТЫ

А.В. Карян, Д.Е. Джангириян

За последнее десятилетие в Грузии проведены масштабные и эффективные реформы налоговой системы. Сложившаяся до реформ 2005 г. налоговая система и структура налогообложения в Грузии была типична для стран с переходной экономикой и характеризовалась множеством взимаемых налогов, сложностью налогового администрирования, структурой основных налоговых поступлений, обеспечиваемых в основном за счет налога на прибыль, социальных начислений и НДС.

Главные цели налоговой реформы в Грузии сводились к: упрощению налоговой системы и налогового администрирования, снижению и более равномерному распределению налоговой нагрузки, ослаблению искажающего действия налоговой системы, путем отмены необоснованных преференций, льгот и освобождений, уменьшение налоговой нагрузки на экономику в целом.

Благодаря комплексным решениям и целенаправленным действиям основные цели налоговой реформы определенным образом были достигнуты. Наиболее значительный успех налоговых реформ Грузии это тотальное снижению числа налогов, повышение уровня эффективности налогового администрирования. Достаточно указать, что из более 20 налогов, которые существовали до 2005 г. по действующему Налоговому кодексу¹ в Грузии действуют пять общегосударственных и один местный налог. Потери бюджета от снижения налоговых ставок компенсированы за счет расширения налоговой базы, выхода бизнеса из «тени». Налоговая реформа имеет также непрямые дивиденды. Либерализация и упрощение налоговой системы, и усиление защищенности налогоплательщиков благоприятно отразились на инвестиционном климате и возврату в легальную сферу капиталов, выведенных из-под налогообложения.

¹ Налоговый кодекс Грузии, № 3591-III, 17 сентября 2010 г. <http://www.refworld.org/cgi-bin/texis/vtx/rwmain/opendocpdf.pdf?reldoc=y&docid=548f00b54>

Налоговые реформы Грузии экспертами условно подразделяются на 3 этапа². Первый этап - 2004-2007 гг., когда были приняты основные институциональные изменения, начата борьба с коррупцией, произведено глубокое урезание количества налогов, начато осуществление устранения излишних бюрократических препон. На этом этапе существенно снижено формальное налоговое бремя (устранение 15 видов налогов, снижение ставок и переформатирование налоговых ставок в формат плоских налогов). Устранение всех неприемлемых и неэффективных вмешательств со стороны правительственных структур в дела бизнеса. Принятие простых и справедливых правил игры и их гарантия для всех лиц. Переход налоговых и таможенных органов под эгиду министерства финансов. На первом этапе рост сбора налоговых доходов бюджета к ВВП вырос с 12% в 2003 г. до 21,6% на конец 2007 г. (данные по выше указанному источнику министерства финансов Грузии, Р. Кемулария).

Второй этап включает 2007-2009 гг., сопровождалось существенным улучшением институционального потенциала, становлением новых органов налогового администрирования, дальнейшим снижением налоговых нагрузок. Была произведена институциональная трансформация – создана Служба налоговых доходов, существенно улучшена инфраструктура, включая техническое оснащение таможенных контрольно-пропускных пунктов и центральной налоговой службы. Для повышения эффективности сбора налогов встроены комплексные ИТ решения, создана единая база данных налогоплательщиков (налоговой и таможенной службы). В 2008 г. снижен налог на прибыль с 20% до 15%. В один единый налог объединены социальный налог и подоходный налог с физических лиц (НДФЛ).

Третий этап включает 2010-11 гг., (хотя на наш взгляд можно указать, что этот этап продолжается до настоящего времени) сопровождается глубокими комплексными реформами налоговой политики, завершением таможенных реформ, определением приоритетов услуг, резким сокращением расходов по соблюдению

² R. Kemularia, Deputy Minister of Finance of Georgia, «Tax Reforms in Georgia» <https://www.imf.org/external/np/seminars/eng/2011/revenue/pdf/rusuda.pdf>

налогового законодательства посредством ИТ технологий. На третьем этапе принят новый Налоговый кодекс наиболее приближенный к методологии и положениям передовой международной практики. Введены особые режимы налогообложения в соответствии с потребностями для налогоплательщиков МСП. Более полное устранение бюрократических барьеров. Произведено резкое сокращение расходов по соблюдению налогового законодательства за счет повышения ИТ технологий - электронные услуги, перевод таможенного администрирования на формат контроля на основе риск контроля, с минимальным уровнем человеческого вмешательства и упорядоченное оформление (правило 10 минут).

Эффективное управление, улучшенные налогового администрирования, повышение эффективности государственных институтов и установление верховенства закона, привели к резкому сокращению неформальной деятельности по сравнению с периодом до налоговой реформы с периодом после налоговой реформы: количество налогов уменьшилось с 22 до 6, потенциальные налоговые поступления с уровня 40-45% снизились до 28-30% от ВВП, а уровень фактических налоговых поступлений от в 15,6% до 23,4% от ВВП, а уровень соблюдения налоговых обязательств от 35% до 78-85%³. (указанные оценки также приведены из вышеуказанного источника минфина Грузии). К существенным и видимым результатам налоговой реформы Грузии за последнее десятилетие следует отнести следующие введенные и действующие правовые, административные и процессуальные положения и режимы:

✓ Принятие ультра либерального налогового законодательства. Сначала был принят Налоговый кодекс в 2005 г. и затем в 2010 г., последний вступил в действие с 2011г. и в него вошел также Таможенный кодекс. В целом налоговое законодательство направлено на либерализацию и упрощение налоговой системы и усиление защищенности налогоплательщиков. Цель упрощения ведения бизнеса реализовано: повышением доверия налогоплательщиков и населения к налоговой системе, равномерного распределения

³ Kemularia R., Deputy Minister of Finance of Georgia, «Tax Reforms in Georgia» <https://www.imf.org/external/np/seminars/eng/2011/revenue/pdf/rusuda.pdf>

налогового бремени, формированием стабильной и устойчивой налоговой среды, упрощением правовых положений, удалением из законодательства противоречивых толкований законодательных норм, поощрением легализации бизнеса, снижением нагрузки на соблюдение налогового законодательства, упрощением налогового администрирования, деперсонификацией налогового администрирования, и все это с учетом и с использованием лучших международных налоговых практик и директив ЕС. По сути, созданы условия для вывода экономики из тени, т.к. бизнесу проще платить налоги, чем скрывать их.

✓ Упрощение налоговой системы выражено в сокращении числа налогов с 26 в 2003 г. до 6-и в 2008 г. и до 5-и 2012 г. Упрощение налогообложения для микро- и малого бизнеса. Для них установлены специальные режимы налогообложения, упрощены процедуры исчисления и уплаты налога. Микро бизнес (годовой валовой доход до 30 000 лари, с товарным запасом до 45 000 лари) освобожден от всех налогов. Для малого бизнеса (ежегодный валовой доход от экономической деятельности в размере до 100 000 лари, товарные запасы до 150 000 лари, и не зарегистрирован как плательщик НДС) установлен лишь единственный налог, исчисляемый в зависимости от оборота 3% оборота, если у налогоплательщика имеются документы, подтверждающие расходы в размере 60% от доходов (кроме расходов на зарплату), и 5% в случае отсутствия такой документации.

✓ В целях поддержания и развития в стране упрощения таможенного регулирования с 2006 г. вместо 16 таможенных тарифов действуют лишь три вида тарифа (0%, 5%, 12%) в частности, нулевая ставка была внесена на большинство товаров, кроме стройматериалов и продуктов сельского хозяйства, налогооблагаемая база сократилась на 90%. С января 2011 г. для прохождения таможенной границы требуется всего 2 документа, 85% товаров проходят через нулевой тариф. Все компании в Грузии по степени риска делятся на 3 группы – высокого, среднего и низкого риска. Компании высокого риска подвергаются государственному аудиту, среднего – могут выбрать либо государственный, либо частный аудит, компании низкого риска – подвергаются частному аудиту (на платной основе).

✓ Унификация и объединение налоговых и таможенных кодексов. Унифицированы налоговые и таможенные активы / обязательства налогоплательщика, и компании могут за счет избыточного количества налоговых выплат покрыть таможенные обязательства и наоборот. Объединенный Налоговый и Таможенный кодекс более систематизированы и удобны, упрощены по процедурам отчетности, в особенности за счет электронного ведения документооборота и архивации, представлена возможность для быстрого разрешения административных вопросов, уменьшено административное бремя для соблюдения налогового законодательства.

✓ Значительное улучшение таможенного администрирования. Введение системы таможенного контроля на основе риск-ориентированного механизма таможенного контроля. Принята соответствующая правовая база, четко регламентирован осмотр декларированных товаров по данной системе, на основе электронной базы данных (введен принцип «зеленого, синего, желтого и красного коридоров»). Значительно сокращено время прохождения товаров на таможенной границе, существенно снижены коррупционные риски. Внедрена также система таможенно-торгового сотрудничества «Золотой список», в который включены все добросовестные импортеры, в отношении которых применяются упрощенные процедуры. Импортеры должны в течение одного часа пройти через все процедуры таможенного оформления. Система таможенного управления рисками исключает любую возможность заключения сделок между сотрудником таможенного органа и импортера, и это является эффективным механизмом борьбы с коррупцией. Это также экономит административные ресурсы.

✓ Создание специальной таможенной зоны оформления (Customs Clearance Zone (GEZI)). Одновременно обслуживает неограниченное количество импортеров в течение часа. Для оформления товаров импортеру не приходится нанимать брокера, агента / декларанта или другого посредника и нести высокие расходы на их обслуживание. Услуги взноса можно отложить на 5 дней с

момента оформления товаров в таможенных зонах. Сборы сокращены вдвое.

✓ Смягчение штрафных санкций за налоговые правонарушения, в некоторых случаях вместо денежного штрафа введены меры ответственности в виде предупреждения.

✓ Замена прогрессивного подоходного налога со ставкой в 12-20% плоским со ставкой в 12%, затем 20%. До 2005 г. ставка подоходного налога была дифференцированной и прогрессивной. Целью прогрессивной ставки подоходного налога являлось предоставление льгот налогоплательщикам с низким уровнем доходов, однако эта задача не решалась из-за того, что при работе налогоплательщика в двух и более местах, доходы от неосновной работы облагались по максимальной шкале.

✓ Снижение налоговых ставок: по НДС с 20% до 18%, налоговые ставки для выплаты на дивиденды и проценты снижены с 10% до 5%, замена налога на прибыль со ставкой 20% на корпоративный подоходный налог со ставкой 15%.

business entities occupy a significant part of the market and establish their own rules of competition policy or in some cases completely absorb market. Due to such anti-competitive situation the prices on certain products are being set up in non-market ways but on a subjective basis. At the same time it must be emphasized that the Commission has repeatedly fined most of dominant economic entities in these markets for intentional increase or decrease in retail prices. Sanctions of the Commission were also introduced against those economic entities which were involved in price fixation, speculation, abuse of dominant position and anti-competitive agreements. Statistics show that the Commission periodically increases fines and penalties for such activities but despite this the actions of business entities aimed at violation of the terms of competition have not been reduced yet. The Commission annually records cases of distortion of competition rules by economic entities, most of which are dominant in the market.² In order to determine the circumstances and reasons of such violations we conducted a comparative analysis of different years and examined the indicators of the market participants which had violated any terms in competitive environment from 2001 to 2014. Having accompanied by the figures from the annual reports made by the Commission from 2001 to 2014, we came to the conclusion that the terms of market competition have been mostly violated by dominant economic entities from the presented above markets. Such circumstances may serve as an evidence of ineffectiveness of competition policy in these markets since they are the results of the fact that the Commission had failed to protect these markets from the oligopolistic and monopolistic entities having excessive market power and had not been able to ensure equal conditions for all entities in the presented markets. Currently, given the complex and unfavorable situation in food market of Armenia the Government and the Commission should play an important role in the formation of fair and equitable competitive environment in order to prevent any kind of fluctuations that lead to the destabilization of the economic competition in such markets. This approach is also shared by the international economic institutions with which Armenia cooperates on many socio-economic issues. According to The World Bank “Armenia will not be

² The statistics and characteristics of these disorders can be found on the official website of the Commission <http://competition.am/>

able to provide a higher level of economic development, until the oligopolistic structure of the national economy will not be changed”[4]. International Monetary Fund (IMF) shares the view of The World Bank concerning the monopolies and oligopolies in Armenia. According to IMF “Armenia’s economy is under the control of oligopolistic and monopolistic structures which hinder the development of the national economy. Armenia is not able to succeed until the most important sectors of the economy are under the control of monopolies and oligopolies”[5]. In the report on the implementation of the economic policy with Armenia, The European Commission noted that “The Armenian Government has taken a number of measures in competition policy but stronger efforts are needed to promote export diversification and to create conditions for transparent trade”[6]. At the present stage of development of the economic life of Armenia numerous discussions regarding the assessment of the competitive environment regularly take place. Currently, opinions are divided, on the one hand, a number of experts and economists believe that the recent years played an important role for the economy of Armenia. Armenia has made the number of steps in order to update the competition legislation and has participated in the number of international events on the competitiveness which had to give some experience to the competent authorities in Armenia to improve competition policy. However, on the other hand a significant part of the population of Armenia is convinced that in order to ensure the development of the above areas very little has been done and the result of that is high level of concentration in the commodity markets and the disastrous emigration today. We maintain that the problems of emigration may be associated with the inability to start own business and we also think that the competitive situation on many internal markets is not considered favorable. Taking into account these current realities, we believe that it is appropriate to apply a series of measures to improve the competitive environment and to increase the role and the authority of The State Commission for The Protection of Economic Competition of The Republic of Armenia.

For this purpose, we propose to take the following steps:

1. To give an opportunity to the Commission to initiate legal proceedings in the case of violation of the terms of market competition.
2. To establish a specialized department within the Commission

which will be empowered to investigate the causes and consequences of the abuse of market power by economic entities.

3. To assign criminal penalties instead of administrative in cases of gross violation of competition law and to prosecute those economic entities, activities of which infringe the rights of other market participants.
4. To conduct the studies of the structures of key food markets in Armenia on a regular basis.
5. To form a specialized department within the Commission to support small and medium-sized enterprises in the key food markets of Armenia.
6. To exercise more careful monitoring of the activities of the dominant business entities in the key food markets of Armenia.
7. To identify the distortion of competition rules by the dominant business entities and publish in annual reports of the Commission the characteristics of these violations.

Thus, we believe that the proposed directions of improvement of the competitive environment may contribute to the development of economic competition among numerous economic entities and may encourage the expansion of small and medium-sized businesses in the considered above markets. Some of the proposed by us directions had been discussed earlier in the National Assembly of Armenia but they had not been accepted. We believe that they should be promptly taken as the basis of competition policy in Armenia and should be widely used, if necessary.

Key words: competition policy, market concentration, market power, economic competition, market fluctuations, price fluctuations.

Literature and reference:

1. The Law of The Republic of Armenia on "Protection of Economic Competition", adopted on November 6, 2000 (as amended and supplemented by 12. 04. 2011).
2. В. Е. Ходжабекян. Формирование рыночных отношении и роль государства в Республике Армения // Общество и экономика/ М.: 1999г. N 10-11 С. 163.

3. ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հաճնաժողովի 2003 թվականի գործունեության հաշվետվություն, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով Մերթոդաբանության եւ ծրագրերի մշակման վարչություն, Երեւան 2004թ., 13-14 էջեր:
4. Armenia Warned to End "Oligopoly", Internet article from the official website of Radio Liberty, published in 19.10.2009.
<http://www.armenialiberty.org/content/article/1855547.html> the date of treatment 17.05.2015.
5. IMF Shares World Bank Concern About Monopolies In Armenia, Internet article from the official website of Radio Liberty and Radio Free Europe, published in 06.11.2009.
www.rferl.org/content/IMF_Shares_World_Bank_Concern_About_Monopolies_In_Armenia/1871216.html the date of treatment 18.05.2015.
6. Joint Staff Working Paper, Implementation of the European Neighbourhood Policy in 2010, Country report: Armenia, European Commission, Brussels, 25/05/2011, SEC(2011) 639, pp. 7-8, 10.

**ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ԵՎ
ՆՐԱ ԱՐՏԱՑՈՒՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՐԵՆԱՅԻՆ ՇՈՒԿԱՆԵՐԻ
ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ
Ա.Ա. Յախշիբեկյան
Ամփոփում**

Այս հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետության պարենային շուկաներում մրցակցային քաղաքականության հիմնախնդիրներին: Սույն հոդվածի շրջանակներում դիտարկվում են մի շարք հարցեր, որոնք ունեն ուղղակի ազդեցություն Հայաստանի մրցակցային քաղաքականության արդյունավետության վրա: Հոդվածում վերլուծվում են մրցակցային քաղաքականության առավելություններն ու թերությունները Հայաստանի որոշ պարենային շուկաներում: Այս համատեքստում սահմանվում է փոքր եւ միջին բիզնեսի զարգացման եւ ընդլայնման դերը պարենային շուկաներում: Հոդվածում բերվում են օրինակներ պարենային շուկաներում ազատ մրցակցության սահմանափակման վերաբերյալ եւ դիտարկվում են մի շարք միջազգային տնտես-

սական կառույցների տեսակետներ եւ դիրքորոշումներ Հայաստանում մրցակցային իրավիճակի մասին: Հեղինակը առաջարկում է կիրառել մի շարք մեթոդներ Հայաստանի պարենային շուկաներում մրցակցային քաղաքականության բարելավման համար:

Բանալի բառեր. մրցակցային քաղաքականություն, շուկայական համակենտրոնացում, շուկայական իշխանություն, տնտեսական մրցակցություն, շուկայական տատանումներ, գնային տատանումներ:

ОЦЕНКА КОНКУРЕНТНОЙ ПОЛИТИКИ И ЕЕ ОТРАЖЕНИЕ НА КОНКУРЕНТНУЮ СРЕДУ ПРОДОВОЛЬСТВЕННЫХ РЫНКОВ АРМЕНИИ

А.А. Яхшибекян

Резюме

Настоящая статья посвящена проблемам конкурентной политика на продовольственных рынках Республики Армения. В рамках настоящей статьи рассматривается ряд вопросов, имеющих прямое влияние на степень эффективности конкурентной политики в Армении. В статье анализируются преимущества и недостатки конкурентной политики в некоторых продовольственных рынках Армении. В этом контексте определяется роль и значение развития и расширения малого и среднего бизнеса на продовольственных рынках. В статье приводятся примеры ограничивающие развитие свободной конкуренции на продовольственных рынках и рассматриваются мнения и позиции некоторых международных экономических структур, насчет конкурентной обстановки в Армении. Автор статьи предлагает применять ряд мер по совершенствованию конкурентной политики на продовольственных рынках Армении.

Ключевые слова: конкурентная политика, рыночная концентрация, рыночная власть, экономическая конкуренция, рыночные колебания, ценовые колебания.

**«ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՒՂՂԱԿԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԾԱՎԱԼԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ
ԱՋԴԵՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԶԱՓԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ
ՀՀ-ՈՒՄ»**

Գ. Գ. Կուրդիյան

Ներդրումային միջավայրը տնտեսության ինստիտուցիոնալ համակարգում առանձնահատուկ ենթահամակարգ է, որը կոչված է հասարակության արտադրողական ուժերի զարգացման ու գիտատեխնիկական նորացման մեջ տնտեսական–հասարակական հարաբերությունների լավագույն հետազոտման համար նախադրյալներ ստեղծելուն՝ ակտիվ ներդրումային գործունեության միջոցով: Ուստի, ներդրումային միջավայրը, որպես ենթահամակարգ, գործում է այնպիսի ինստիտուցիոնալ համակարգում, որը բաղկացած է կազմակերպական ինստիտուցիոնալ միավորներից (հակամենաշնորհային քաղաքականության համապատասխան մարմիններ, ֆոնդային բորսաներ, բանկեր և այլն), վերահսկիչ ինստիտուցիոնալ միավորներից (լիազորված պետական կառավարման մարմիններ, որոնք վերահսկում են ներդրումային ծրագրերի իրականացումը), իրավունքի ինստիտուտներից, տեղեկատվական և խորհրդատվական ծառայությունների ինստիտուտներից և սոցիալական ինստիտուտներից: Ինստիտուտները ցանկացած համակարգի հիմնական տարրերն են, հետևաբար, այս երկու համակարգերի զարգացումը, միանշանակ, փոխկապակցված է և փոխապայմանավորված, այսինքն՝ արդյունավետ գործող ներդրումային միջավայր անհնար է կառուցել և զարգացնել առանց զարգացած, լավ գործող և շուկայական ներկա պայմաններին համապատասխանող ինստիտուցիոնալ միջավայրի և դրա բաղադրիչների ինչպես պահպանման, նորացման, այնպես էլ փոփոխության գործընթացների ուսումնասիրության:

Ներդրումների ներգրավումը կախված է բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններից, այդ թվում՝ ինչպես տվյալ երկրի ներքին սոցիալ-տնտեսական, քաղաքական իրավիճակից, այնպես էլ երկրին շնորհված միջազգային վարկանիշներից: Ներդրողները, նախքան որևէ ներդրումային նախագծի ֆինանսավորումը, սովորաբար ծանոթանում են տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից տվյալ երկ-

րին շնորհվող միջազգային վարկանիշներին: Փորձելով գնահատել, թե արդյոք այդ միջազգային վարկանիշները և տարբեր համաթվերը կարող են իրենց ազդեցությունն ունենալ օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալների փոփոխության վրա՝ մեր կողմից դիտարկվել են հետևյալ միջազգային կազմակերպությունների համաթվերը և ենթահամաթվերը 2005–2013 թվականների կտրվածքով՝ Հայաստանում կառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումների վերաբերյալ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի գնահատականները, Հայաստանի «Տնտեսական ազատության համաթիվը»՝ ըստ «Հերթի-թեյջ» հիմնադրամի գնահատականների, Հայաստանի համաթվերն՝ ըստ տարբեր ոլորտների՝ Միջազգային զարգացման ընկերակցության գնահատմամբ:¹ Մասնավորապես, հետազոտության ընթացքում մեր կողմից օգտագործվել է երկրում ինստիտուցիոնալ միջավայրի գնահատման 32 տարբեր ենթահամաթիվ, որոնց թվում են հետևյալները՝ գների ազատականացում, գործարարության ազատություն, սեփականության իրավունքի պաշտպանություն, առևտրի ազատականացում, կոռուպցիայից ազատություն, հարկաբյուջետային ազատություն, դրամավարկային ազատություն, ներդրումների ազատություն, ֆինանսական ազատություն, կառավարության ծախսեր, դրամավարկային և արժույթային քաղաքականություն, պարտքի քաղաքականություն և կառավարում, պետական հատվածի թափանցիկություն, մրցակցային քաղաքականություն, խոշոր չափի և փոքր չափի ձեռնարկությունների սեփականաշնորհում և այլն: Այս ենթահամաթվերից յուրաքանչյուրի փոփոխությունը հակված է որոշակի չափով ազդել գործարարների և հատկապես՝ օտարերկրյա ներդրողների որոշումների վրա: Հետևապես, ՕՌԻՆ-երի և վերոնշյալ ենթահամաթվերի կախվածության բացահայտումը թույլ կտա ոչ միայն արձանագրել կապը երկու ցուցանիշների միջև, այլև հասկանալ, թե ներդրողները ՀՀ տնտեսության զարգացման

¹ Աղբյուրը՝ «Կառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումների 2013 թ. ինդեքս», էջ՝ 5, ՀՀ ԿԲ հրապարակում, <https://www.cba.am/am/SitePages/panalyticalmaterialsresearches.aspx>, “Index of Economic Freedom”, The Wall Street Journal and The Heritage Foundation - <http://www.heritage.org/index/country/armenia>, «Երկրի քաղաքականությունների և ինստիտուցիոնալ կարողությունների գնահատման 2013 թվականի վարկանիշը», էջ 3, ՀՀ ԿԲ հրապարակում, <https://www.cba.am/am/SitePages/panalyticalmaterialsresearches.aspx>

ներկա և ապագա փուլերում հատկապես որ համաթվերի վրա են ուշադրություն դարձնում, և թե դրա արդյունքում կառավարությունն իր լծակներով և իրականացվելիք միջոցառումներով ինչպես կարող է փոփոխել այս կամ այն ենթահամաթիվը՝ նպաստելով ներդրումային գործընթացի ակտիվացմանը:

Վերլուծություն իրականացնելիս մեր կողմից դիտարկվել է նշված ցուցանիշների 2005-2013 թվականների վիճակագրությունը, քանի որ մինչև 2005 թվականը ցուցանիշների մի մասն առկա չէր, իսկ 2014-2015 թվականների համաթվերը դեռևս հայտնի չեն կամ չեն հրապարակվել: Բացի այդ, բոլոր ցուցանիշների մասով առկա էին միայն տարեկան տվյալներ, ուստի, դիտարկված համաթվերի արժեքների սակավությունը կարող էր էապես խոչընդոտել տնտեսաչափական վերլուծության նորմալ ընթացքին: Այդ նպատակով մեր կողմից փորձ է արվել հայտնի մեթոդներից մեկով տարեկան շարքերը վերածել եռամսյակային:² Յուրաքանչյուր համաթիվ վերածվել է եռամսյակային ցուցանիշի՝ ելնելով այն համոզմունքից, որ բոլոր 4 եռամսյակների միջինը պետք է հավասար լինի տարեկան ցուցանիշի արժեքին: Վերլուծության շրջանակում նույնպես օգտագործվել են ՕՌԻՆ-երի եռամսյակային ցուցանիշները:³

Հարկ ենք համարում նշել, որ ՕՌԻՆ-երի ծավալի վրա վերոնշյալ բոլոր համաթվերի ազդեցության դիտարկումը նոր մոտեցում է, քանի որ հնարավորություն է ստեղծվում դիտարկել ոչ միայն հիմնական գործոնների, ինչպիսիք են իրական ՀՆԱ-ն, գործազրկության մակարդակը, աղքատության աստիճանը և այլն, այլև այդ գործոնների հիման վրա ձևավորված ցուցանիշները:

Նախքան բուն տնտեսաչափական գնահատման իրականացումը կատարվել է կոռելյացիոն վերլուծություն ՕՌԻՆ-երի ծավալը նկարագրող ցուցանիշի և ներկայացված ենթահամաթվերի եռամսյակային ցուցանիշների միջև:⁴ Վերլուծելով իրականացված կոռելյացիոն հետազոտության արդյունքները՝ հանգել ենք այն եզրակացություններին, որ.

1. ՕՌԻՆ-երի դիտարկված մեծության հետ մեծ կապվածություն

² Աղբյուրը՝ EViews User Forum <http://forums.eviews.com/viewtopic.php?f=7&t=3799>

³ Նյութի աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության միջազգային ներդրումային դիրքը եռամսյակային», ՀՀ կենտրոնական բանկ,

<https://www.cba.am/am/sitepages/statexternalsector.aspx>

⁴ “Эконометрика”, учебник, под ред. И. И. Елисеовой, М.: Проспект, 2009 г., стр. 54-66

ունեն հետևյալ գործոնները՝ դրամավարկային և արժույթային քաղաքականության համաթիվ (ԴԱՔՀ), կոռուպցիայից ազատության համաթիվ (ԿԱԻ), գների ազատականացման համաթիվ (ԳԱՀ), դրամավարկային ազատության համաթիվ (ԴԱԻ) և այլն: Ստացվում է, որ նշված գործոններն ամենամեծ հավանականությամբ կարող են դիտարկվել տնտեսաչափական գնահատում իրականացնելիս՝ պարզելու վերջիններիս ազդեցությունը ՕՈՒՆ-երի ծավալի փոփոխության վրա: Ըստ էության, դրամավարկային և արժույթային քաղաքականությունը համարվում է այն հիմնարար գործոններից մեկը, որի միջոցով երկրում գործող ֆինանսական կառույցները և կենտրոնական բանկը հստակ ազդակներ են հաղորդում գործարարներին և պետական օղակներին այն մասին, թե որոնք են վարվող դրամավարկային քաղաքականության հիմնական ուղղությունները, և թե ինչպիսին է փոխարժեքի վարքագիծը:

2. Էական կապեր են նկատվում ոչ միայն կախյալ և անկախ փոփոխականների միջև, այլև բացատրող փոփոխականների միջև: Որոշ դեպքերում այդ կապերը չափազանց բարձր են, հետևաբար, տնտեսաչափական գնահատում իրականացնելիս դրանց միաժամանակ դիտարկումը բավական բարդ կարող է լինել: Այդ նպատակով բացատրվող փոփոխականների ազդեցությունը հասկանալու համար մեր կողմից դիտարկվելու են մի քանի մոդելներ:

Նախ, փորձել ենք պարզել, թե ինչպիսի ազդեցություն կարող են ունենալ անկախ փոփոխականները ԴԱՔՀ անկախ փոփոխականի վրա (վերջինիս ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դրա և ՕՈՒՆ փոփոխականների կապվածությունն ամենաբարձրն է): Ինչպես ցույց է տվել վերլուծությունը, ԴԱՔՀ փոփոխականն էապես կապված է գների ազատականացում համաթիվի (ԳԱԻ), դրամավարկային ազատության համաթիվի (ԴԱԻ), պարտքի քաղաքականություն և կառավարում համաթիվի (ՊՔԿ), շրջակա միջավայրի պահպանություն և կառույցներ համաթիվի (ՇՄՊԿ) հետ: Արդյունքում պարզ է դարձել, որ տնտեսաչափական գնահատման մոդելն անհրաժեշտ է ներկայացնել ոչ գծային հատուկացմամբ կամ փոփոխականների լրգարիթմված արժեքներով: Նկարագրվող բոլոր շարքերը ստացիոնար չէին, և ստացիոնա-

րությոնն ապահովելու համար նպատակահարմար էր վերջիններս մոդելում ներառել առաջին կարգի տարբերություններով:⁵ Մոդելում սեզոնայնությունը կեղծ փոփոխականի միջոցով նկարագրելու կարիք չկար, քանզի տարեկան շարքերն այնպես էին վերածվել եռամսյակայինի, որ եռամսյակների միջև փոփոխությունը բավականին չնչին է: Արդյունքում, մոդելը փոքրագույն քառակուսիների եղանակով⁶ գնահատելուց հետո կարելի է փաստել, որ ստացված մոդելի գործակիցները հուսալի են, քանի որ մոդելի որակական չափանիշները պահպանված են, հետևաբար, կարելի է ներկայացնել մոդելը հետևյալ վերջնական տեսքով.

$$\ln \widehat{\Gamma U \Phi \Psi} t = -5.41 + 0.51 \ln \Phi U \Delta t + 0.95 \ln \Gamma U \text{I} t + 0.12 \ln \Phi \Phi \Psi \Delta t + 0.33 \ln \Psi U \Phi \Phi \Psi \Delta t \quad (1)$$

որտեղ՝

$\ln \widehat{\Gamma U \Phi \Psi} t$ - $\Gamma U \Phi \Delta$ փոփոխականի լոգարիթմված մեծության t -րդ եռամսյակի կանխատեսվող արժեքն է,

$\ln \Phi U \Delta t$ - գների ազատականացման համաթվի լոգարիթմված մեծությունն է t -րդ եռամսյակում,

$\ln \Gamma U \text{I} t$ - դրամավարկային ազատության համաթվի լոգարիթմված մեծությունն է t -րդ եռամսյակում,

$\ln \Phi \Phi \Psi \Delta t$ - պարտքի քաղաքականություն և կառավարում համաթվի լոգարիթմված մեծությունն է t -րդ եռամսյակում,

$\ln \Psi U \Phi \Phi \Psi \Delta t$ - շրջակա միջավայրի պահպանություն և կառույցներ համաթվի լոգարիթմված մեծությունն է t -րդ եռամսյակում:

(1) տնտեսաչափական գնահատման մոդելի գործակիցները կարող ենք մեկնաբանել հետևյալ կերպ. բոլոր անկախ փոփոխականները դրականորեն են ազդում $\Gamma U \Phi \Delta$ կախյալ փոփոխականի վրա, առավելագույն ազդեցություն ունի $\Gamma U \text{I}$ -ն, նվազագույն ազդեցություն՝ $\Phi \Phi \Psi \Delta$ -ն, մասնավորապես՝

1. t -րդ եռամսյակում $\Phi U \Delta$ ցուցանիշի աճը 1%-ով, այլ հավասար պայմաններում, կարող է հանգեցնել t -րդ եռամսյակի $\Gamma U \Phi \Delta$ -ի ցուցանիշի 0.5%-ով աճին:

⁵ Я. Р. Магнус, П. К. Катышев, А. А. Пересецкий, “Эконометрика”, Издательство “Дело”, Москва 2004, ст. 268-273

⁶ Я. Р. Магнус, П. К. Катышев, А. А. Пересецкий, “Эконометрика”, Издательство “Дело”, Москва 2004, ст. 10

2. t-րդ եռամսյակում ԴԱԻ ցուցանիշի աճը 1%-ով, այլ հավասար պայմաններում, կարող է հանգեցնել t-րդ եռամսյակի ԴԱՔՀ-ի ցուցանիշի 0.9%-ով աճին:
3. t-րդ եռամսյակում ՊՔԿ ցուցանիշի աճը 1%-ով, այլ հավասար պայմաններում, կարող է հանգեցնել t-րդ եռամսյակի ԴԱՔՀ-ի ցուցանիշի 0.1%-ով աճին:
4. t-րդ եռամսյակում ՇՄՊՔԿ ցուցանիշի աճը 1%-ով, այլ հավասար պայմաններում, կարող է հանգեցնել t-րդ եռամսյակի ԴԱՔՀ-ի ցուցանիշի 0.3%-ով աճին:

(1) տնտեսաչափական գնահատման արդյունքում ունենալով ԴԱՔՀ-ի կանխատեսվող շարքը՝ այն կօգտագործենք հաջորդ տնտեսաչափական գնահատման մոդելում, որի նպատակն է պարզել՝ ինչպես են վերոնշյալ ենթահամաթվերն ազդում ՕՈՒՆ-երի ծավալի վրա: Այդ նպատակով կդիտարկենք երկու հիմնական մոդել, որոնցից առաջինը կարող ենք ներկայացնել հետևյալ կերպ.

$$\ln \widehat{\text{ՕՈՒՆ}}_t = 41,68 - 1,16 \ln \widehat{\text{ԱԱՀ}}_t + 1,51 \ln \widehat{\text{ԴԱՔՀ}}_t - 0,74 \ln \widehat{\text{ԿԱԻ}}_t + 0,04 q_t^4 - 0,56 \ln \widehat{\text{ՕՈՒՆ}}_{t-1} \quad (2)$$

որտեղ՝

$\ln \widehat{\text{ՕՈՒՆ}}_t, \ln \widehat{\text{ԱԱՀ}}_t, \ln \widehat{\text{ԴԱՔՀ}}_t, \ln \widehat{\text{ԿԱԻ}}_t$ – համապատասխան փոփոխականներն են լոգարիթմված վիճակում t-րդ եռամսյակում,

q_t^4 - կեղծ փոփոխական է, որը ներկայացնում է 4-րդ եռամսյակը և որի օգնությամբ փորձ է արվում մոդելում դիտարկել նաև ՕՈՒՆ փոփոխականի սեզոնայնությունը,

$(\ln \widehat{\text{ՕՈՒՆ}}_t - 1) - (t - 1)$ եռամսյակի ՕՈՒՆ-ի լոգարիթմված փոփոխականն է երկրորդ կարգի տարբերությամբ:

Վերլուծությունը վկայում է, որ մոդելի գործակիցները վստահելի են: Գնահատված (2) մոդելը կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ.

1. Տնտեսաչափական գնահատման մեջ ներառելով ԴԱՔՀ-ի կանխատեսվող արժեքները՝ հնարավորություն է ստեղծվել ոչ միայն դիտարկել բուն ԴԱՔՀ-ի ազդեցությունը ՕՈՒՆ-երի ծավալի փոփոխության վրա, այլև այն գործոնների անուղղակի ազդեցությունը, որոնք իրենց հերթին ազդում են ԴԱՔՀ-ի վրա: Մասնավորապես, ԴԱՔՀ-ի t-րդ եռամսյակի կանխատեսվող մեծության 1%-ով աճը, այլ հավասար պայմաններում, միջինում ՕՈՒՆ-երի t-րդ եռամսյակի ծավալը կավե-

լացնի 1.51%-ով: Ստացված մեկնաբանությունը նշանակում է, որ օտարերկրյա ներդրողի համար էապես կարևոր է նպատակադրված, արդյունավետ և թափանցիկ դրամավարկային և արժույթային քաղաքականության իրականացումը: Հիմք ընդունելով (1) մոդելը՝ կարելի է պնդել, որ, օրինակ, տ-րդ եռամսյակում ՊՔԿԿ ցուցանիշի աճը 1%-ով, այլ հավասար պայմաններում, կարող է հանգեցնել տ-րդ եռամսյակի ԴԱԲՀ-ի ցուցանիշի 0.1%-ով աճին, որն էլ իր հերթին կհանգեցնի տ-րդ եռամսյակի ՕՈՒՆ-ի ծավալի 0.15 %-ով աճին: Նույն կերպ կարելի է մեկնաբանել այդ մոդելի մյուս փոփոխականների ազդեցությունը ՕՈՒՆ-ի ծավալների վրա:

2. տ-րդ եռամսյակի ԱԱՀ-ի աճը 1%-ով, այլ հավասար պայմաններում, հանգեցնում է նույն եռամսյակի ՕՈՒՆ-երի ծավալների կրճատման 1.16%-ով: Սա, թերևս, կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ. առևտրի ազատականացումն իրականում երկրում չի խթանվում:

3. տ-րդ եռամսյակի ԿԱԻ-ի ցուցանիշի աճը 1%-ով, այլ հավասար պայմաններում, կհանգեցնի նույն եռամսյակի ՕՈՒՆ-երի ծավալների կրճատման 0.7%-ով: Այստեղից կարելի է եզրակացնել, որ կոռումպացվածության մակարդակն էականորեն ազդում է ներդրումների ծավալների վրա (օրենքի որոշ կետերի շրջանցումն ավելի հեշտ է դառնում):

4. Ստացվել է, որ 4-րդ եռամսյակում, համեմատած մյուս եռամսյակների հետ, 41.2%-ով ավել են օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալները:

5. Նախորդ եռամսյակի ներդրումների 1%-ով աճը, այլ հավասար պայմաններում, հանգեցնում է տվյալ ժամանակի ներդրումների կրճատման 0.6%-ով: Սա, ամենայն հավանականությամբ, կարող ենք բացատրել ներդրումային լազով:

Խոսելով երկրորդ տնտեսաչափական գնահատման մոդելի մասին՝ պետք է նշել, որ վերջինիս օգնությամբ փորձ է արվել դիտարկել ՕՈՒՆ-երի ծավալի վրա այնպիսի գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են գների ազատականացման համաթիվը (ԳԱԻ), գենդերային հավասարության համաթիվը (ԳՀՀ) և պետական հատվածում թափանցիկությունը, պատասխանատու գործելակերպը և կոռումպիան նկարագրող համաթիվը (ԹՊԳԿ)՝ նախապես ստուգելով ընտրված շարքերի ստացիոնարությունն ու սեզոնայնությունը: Հաշվի է առնված նաև այն հանգամանքը, որ տվյալ եռամսյակի ներդրումները կարող

են կախված լինել նախորդ եռամսյակի ներդրումների ծավալից: Արդյունքում, տնտեսաչափական գնահատման մոդելը ևս գնահատելով ՓՔԵ-ով՝ կունենանք հետևյալ արդյունքը.

$$\ln\widehat{\text{ՈՌԻՆՆ}} = 41,67 - 0,19\ln\text{ԳԱԻ} - 0,12\ln\text{ԳՀՀ} + 0,23\ln\text{ԹՊԳԿՀ} + 0,04q_t^4 - 0,56\ln\text{ՈՌԻՆՆ} - 1 \quad (3)$$

որտեղ՝

(lnԳԱԻ), (lnԳՀՀ), (lnԹՊԳԿՀ) – համապատասխան ցուցանիշներն են՝ լոգարիթմված վիճակում և առաջին կարգի տարբերությամբ վերցված:

(3) տնտեսաչափական գնահատման արդյունքները կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ.

1. t-րդ եռամսյակի ԳԱԻ ցուցանիշի աճը 1%-ով, այլ հավասար պայմաններում, հանգեցնում է նույն եռամսյակի ՕՌԻՆ-երի ծավալների կրճատման 0.19%-ով:

2. t-րդ եռամսյակի ԳՀՀ ցուցանիշի աճը 1%-ով, այլ հավասար պայմաններում, կհանգեցնի նույն եռամսյակի ՕՌԻՆ-ի ծավալների կրճատման 0.12%-ով:

3. t-րդ եռամսյակի ԹՊԳԿՀ ցուցանիշի աճը 1%-ով, այլ հավասար պայմաններում, կհանգեցնի նույն եռամսյակի ՕՌԻՆ-ի ծավալների աճին 0.23%-ով: Պետական հատվածի թափանցիկությունը դրականորեն է ազդում օտարերկրյա ներդրողների որոշումների վրա, քանի որ դա հնարավորություն է տալիս վերջիններիս հասկանալ, թե ինչպիսին է վարվող քաղաքականությունը, ինչ կարելի է կանխատեսել և ինչպիսի սպասումներ ձևավորել վարվող պետական քաղաքականության արդյունքում, բացի այդ, այն նաև բարձրացնում է պետական մարմինների հաշվետվողականության թափանցիկությունը:

Այսպիսով, երեք տնտեսաչափական գնահատման մոդելների շրջանակում ուսումնասիրվեցին ՕՌԻՆ-երի վրա ազդեցություն ունեցող հիմնական գործոն-ենթահամաթվերը: Մոդելները ևս մեկ անգամ փաստեցին ինստիտուցիոնալ գործոնների էական ազդեցությունն օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալի փոփոխության վրա՝ ապացույց հանդիսանալով այն բանի, որ արդյունավետ գործող ներդրումային միջավայր անհնար է կառուցել և զարգացնել առանց երկրում ճիշտ կայացնելու ինստիտուցիոնալ համակարգը: Կիրառված

տնտեսաչափական գնահատման ճկուն մեթոդների օգնությամբ հնարավորություն ստեղծվեց հնարավորինս խուսափել մուլտիկոլինարության երևույթից ու միաժամանակ ապահովել ուղղակի և անուղղակի առավելագույն թվով գործոնների ներառումն ՕՈՒՆ-երը նկարագրող էկոնոմետրիկ մոդելներում: Ստացված մոդելների հնարավորինս բարձր որակական հատկանիշները թույլ տվեցին խոսել վերջիններիս հուսալիության վերաբերյալ, որի հիման վրա տրվեցին ստացված արդյունքերի տնտեսագիտական հնարավորինս հիմնավոր բացատրությունները:

Բանալի բառեր. ներդրումային միջավայր, ինստիտուցիոնալ համակարգ, ՕՈՒՆ, ինստիտուցիոնալ գործոն, երկրի միջազգային համաթիվ, տնտեսաչափական գնահատում, տնտեսաչափական գնահատման մոդել:

Գրականություն

1. «Կառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումների 2013 թ. ինդեքս», ՀՀ ԿԲ հրապարակում, <https://www.cba.am/am/SitePages/panalyticalmaterialsresearches.aspx>
2. “Index of Economic Freedom”, The Wall Street Journal and The Heritage Foundation, <http://www.heritage.org/index/country/armenia>
3. «Երկրի քաղաքականությունների և ինստիտուցիոնալ կարողությունների գնահատման 2013 թվականի վարկանիշը», ՀՀ ԿԲ հրապարակում, <https://www.cba.am/am/SitePages/panalyticalmaterialsresearches.aspx>
4. «Հայաստանի Հանրապետության միջազգային ներդրումային դիրքը եռամսյակային», ՀՀ ԿԲ հրապարակում, <https://www.cba.am/am/sitemapages/statexternalsector.aspx>
5. Я. Р. Магнус, П. К. Катышев, А. А. Пересецкий, “Эконометрика”, Издательство “Дело”, Москва, 2004 г., 575 стр.
6. “Эконометрика”, учебник, под ред. И. И. Елисейевой, М.: Проспект, 2009 г., 288 стр.
7. EViews User Forum, <http://forums.eviews.com/viewtopic.php?f=7&t=3799>

**“THE ECONOMETRIC EVALUATION OF INSTITUTIONAL
FACTORS IMPACT ON THE FDI VALUE CHANGE
IN THE REPUBLIC OF ARMENIA”**

G.G. Kurghinyan

Summary

The article presents the evaluation of impact of several international organizations' indexes and sub indexes on the investment climate of the Republic of Armenia. Particularly, the FDI value change from 2005 to 2013 was presented depending on several institutional factors. The comprehensive analysis has been reflected by three econometric models on which respective economic conclusions have been provided.

Key words: Investment climate, institutional system, foreign direct investment, institutional factor, international index of a country, econometric evaluation, econometric model.

**“ЭКОНОМЕТРИЧЕСКАЯ ОЦЕНКА ВОЗДЕЙСТВИЯ
ИНСТИТУЦИОНАЛЬНЫХ ФАКТОРОВ НА ИЗМЕНЕНИЕ ОБЪЁМА
ПРЯМЫХ ИНОСТРАННЫХ ИНВЕСТИЦИЙ В
РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ”**

Г.Г. Кургиян

Резюме

В данной статье представляется оценка влияния индексов и суб-индексов нескольких международных организаций на инвестиционный климат Республики Армения. В частности, изменения прямых иностранных инвестиций с 2005 по 2013 гг. были представлены в зависимости от нескольких институциональных факторов. Всесторонний анализ нашел свое отражение в трех эконометрических моделях, с помощью которых соответствующие экономические выводы были предоставлены.

Ключевые слова: Инвестиционный климат, институциональная система, прямые иностранные инвестиции, институциональный фактор, международный индекс страны, эконометрическая оценка, эконометрическая модель.

«ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԻՄՔԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՓՈՐՁԻ ՇՈՒՐՁ»

Գ. Գ. Կուրդինյան

Իրական կյանքում շուկայական տնտեսությամբ երկրներում գոյություն ունի զարգացած ինստիտուցիոնալ կառուցվածք, որը համապատասխանում է տնտեսության համակարգման գերիշխող ձևին: Ընդհանուր առմամբ, ընդունված է առանձնացնել ինստիտուցիոնալ բարեփոխումների երկու խումբ՝ ներդրումային միջավայրի բարելավման միջոցառումներ (սեփականության իրավունքների պաշտպանվածություն, գրանցման ընթացակարգի պարզեցում, նոր ձեռնարկությունների համար հավասար պայմանների ստեղծում՝ ավանդական հատվածի հետ մրցակցության համար և այլն) և օրենսդրական փոփոխություններ (ձեռնարկություններում կորպորատիվ կառավարման արդյունավետ համակարգի ներդրում):¹

Այլ է իրավիճակը թույլ զարգացած կամ անցումային տնտեսությամբ երկրներում: Այստեղ շուկայական ինստիտուտները գտնվում են ձևավորման փուլում կամ բացակայում են, կամ էլ անցումային տնտեսությունների ինստիտուցիոնալ համակարգը ներառում է ինստիտուտներ, որոնք հատուկ չեն շուկայական տնտեսությանը, այդ պատճառով էլ տնտեսության կարգավորման տարբեր միջոցները հաճախ հակասության մեջ են մտնում:

Հատկանշական է, որ նույնիսկ զարգացած երկրներում ոչ մեծ ձեռնարկություններն աջակցության կարիք են զգում: Ուստի, օրինակ՝ Եվրոպայի և Ասիայի մի շարք զարգացած երկրներում և ԱՄՆ-ում պետությունն ավելի մասշտաբային ծրագրեր է իրականացնում ՓՄՁ խթանման համար:² Այս առումով, հատկապես տարածված են հետևյալ մեթոդները՝ կազմակերպատնթակառուցվածքային ձևերը (գրանցման հեշտացված ձև, կադրերի ուսուցում, վերապատրաստում,

¹ Մարկոսյան Ա., Հախվերդյան Դ., Հովասափյան Ա., «Ինստիտուտներ և տնտեսական աճ. հետաձգված բարեփոխումներ, բաց թողնված հնարավորությունների կորուստներ», Երևան, 2010թ., էջ՝ 59

² Киселева Н. В., Боровикова Т. В., Захарова Г. В., «Инвестиционная деятельность», Москва, КНОРУС, 2006г., стр. 32

ֆրանչայզինգ), ֆինանսական ձևը (հարկման և վարկավորման արտոնյալ դրույքաչափեր, բանկերի և ապահովագրական ընկերությունների խթանում պետության կողմից՝ ՓՄՁ ապահովագրելու և վարկավորելու միջոցով) և ունեցվածքային ձևը (գիտատեխնիկական օգնություն, սարքավորումների և տարածքի վարձակալության տրման արտոնյալ պայմաններ, որոնք պատկանում են պետությանը):

«Արևմտյան տնտեսական մոդելը» համեմատաբար երկար ժամանակ պահանջեց ձևավորվելու և զարգանալու համար՝ ողջ աշխարհին թելադրելով իր զարգացման չափորոշիչները, իսկ Ասիայի առաջավոր երկրները, որոնք տնտեսական բազմաթիվ ցուցանիշներով կարողացել են հասնել և որոշ դեպքերում անգամ անցնել այդ պետություններից, ստիպված էին հարմարվել արդեն գոյություն ունեցող իրավիճակին և առաջադրված պայմաններին: Ասիական երկրների արագ զարգացման համար խոչընդոտ էին հանդիսանում զարգացման՝ մինչ այդ գոյություն չունեցող նոր ծրագրերի մշակումն ու ներդրումը, ռեսուրսների անբավարարությունը, աղքատ բնակչությունը, կառավարման ուլորտում որակյալ մասնագետների պակասը կամ բացակայությունը և այլն: Կանգնած լինելով նման լուրջ խնդիրների առջև՝ այդ պետությունները կարողացան շատ կարճ ժամկետում հասնել մեծ հաջողությունների, որոնք պայմանավորված էին մի շարք գործոններով, օրինակ՝ զարգացած պետությունների արդեն իսկ գոյություն ունեցող մոդելի համադրումը սեփական սոցիալ-մշակութային յուրահատկություններին՝ հաշվի առնելով հասարակությունում հարաբերությունների ձևավորման առանձնահատկությունը կամ պետության մեծ դերն ու նշանակությունը զարգացման ողջ գործընթացում: Ասիական պետությունները ներդրումներն առաջին հերթին ուղղեցին նյութական ենթակառուցվածքի և արդյունաբերության զարգացմանը, որոնք բնույթով կապիտալատար են և կարճ ժամկետում եկամտաբերություն չեն ապահովում: Ասիական պետություններից Չինաստանը, Ճապոնիան, Սինգապուրը, Հարավային Կորեան բավական լուրջ քայլեր ձեռնարկեցին նաև ներդրումային միջավայրի օրենսդրափրավական դաշտը բարելավելու համար: Այդ բարեփոխումների արդյունքում նշված պետություններն իրենց երկրի սահմաններում են պահում սեփական կապիտալը՝ զարգացնելով և մրցունակ դարձնելով սեփական տնտեսությունը ողջ աշխարհի մասշտաբով:

Ընդհանրապես, ներդրումային ոլորտի հետ խիստ կապված է նաև նորամուծությունների ոլորտը: Զարգացած երկրներում անընդհատ մշակվում և ներդրվում են տարբեր մեթոդներ և ծրագրեր այս ոլորտի առաջընթացն ապահովելու համար: Օրինակ՝ Ֆրանսիայում, Ճապոնիայում, Մեծ Բրիտանիայում և Իսրայելում գիտատեխնիկական խնդիրների լուծման գործընթացում բավական ակտիվ մասնակցություն է ցուցաբերում պետությունը:

Տնտեսական բարեփոխումների իրականացման իռլանդական փորձը, որը ներառում է հիմնականում ներդրումային միջավայրի բարելավումը և տնտեսության մրցունակության բարձրացումը, դասվում է լավագույն օրինակների թվին:³ Իռլանդիայում տնտեսական բարեփոխումները սկսվել են դեռևս 1980-ական թվականների երկրորդ կեսին, իսկ 1990-ականների կեսին արդեն նկատվում էր տնտեսական կայուն աճ: Տնտեսական քաղաքականության նշանակալի փոփոխության շնորհիվ կառավարությունը կարողացավ սեղմ ժամկետում կտրուկ բարձրացնել ազգային ներդրումային միջավայրի գրավչությունը: Իռլանդական փորձի հիմնական տարրերն են՝ հարկային բեռի կրճատում և աշխատուժի արժեքի կրճատմանն ուղղված միջոցառումներ, պետական հատվածի էական կրճատում, աշխատուժի շուկայի ազատականացում, գործազրկության և սոցիալական նպաստների, զբաղվածության երաշխիքների կրճատում, կանանց զբաղվածության խթանում, արդյունաբերական քաղաքականության խորքային բարեփոխումներ, ենթակառուցվածքների զարգացում, սակագների և քվոտաների փոխարեն զարգացման գործակալությունների ձևավորում, նոր աշխատատեղեր ստեղծող խոշոր ներդրողների սուբսիդավորում, էական բարեփոխումներ կրթության և տեխնիկական վերապատրաստման ոլորտներում, սոցիալական համագործակցություն, Եվրամիությանն անդամակցության առավելությունների օգտագործում, որոնց թվին են դասվում ՕՌԻՆ-երի գրավչության գործոնը, ներքին շուկայի և արտաքին առևտրի ազատականացման խթանները, պետական ֆինանսների բարեփոխումների իրականացման խթանները և այլն: Ներդրումների համար մրցակցող այլ երկրների նման կարելի է առանձնացնել Իռլանդիայում օտարերկրյա ուղղակի ներդրումներ ներգ-

³ Фрейнкмен Л. М., Дашкеев В. В., Муфтяхетдинова М. Р., “Анализ институциональной динамики в странах с переходной экономикой”, М., ИЭПП, 2009г., стр. 118 – 124

րավելու մի շարք խթաններ, մասնավորապես՝ դրամաշնորհների, հարկային արտոնությունների տրամադրումը և հարկային բեռի թեթևացումը:⁴ Ներդրումների ներգրավման խթանման ոլորտում կարևոր և զգալի դերակատարում ունի նաև Իռլանդիայի արդյունաբերական զարգացման գործակալությունը: Վերջինս հանդիսանում է կիսով չափ պետական գործակալություն՝ ֆինանսավորվում է Իռլանդիայի կառավարության կողմից: Հիմնադրված լինելով 1960-ականների սկզբին՝ գործակալությունը դարձել է ներդրումների խթանման ամենահաջողված գործակալություններից մեկն ամբողջ աշխարհում:

Խոսելով ներդրումային գործընթացներում սփյուռքի ազդեցիկ ձեռնարկատերերին ներգրավելու մասին՝ անդրադառնանք Շոտլանդիային: «ԳլոբալՍքոթը» հանդիսանում է Շոտլանդիայում տնտեսական զարգացումը խթանող սփյուռքի հենքով կառույց: Այն ծագումով շոտլանդացի ազդեցիկ գործարարների, ձեռնարկատերերի և ղեկավարների ցանց է:⁵ Վերջինս ապավինում է իր անդամների փորձին և հեղինակությանը՝ Շոտլանդիան ներդրողների համար գրավիչ դարձնելու համար: Այն կազմավորվել է դեռևս 2001 թվականին՝ “Scottish Enterprise” տեղական ներդրումային գործակալության կողմից, և 2012 թվականին արդեն ներառում էր 600 անդամ 51 երկրից: «ԳլոբալՍքոթի» կազմակերպած միջոցառումներից են համաժողովներն ու տարբեր հանդիպումները՝ Շոտլանդիայում ներդրումների իրականացումը խթանելու նպատակով: Ըստ դրա տվյալների՝ վայելելով կառավարության բարձր աջակցությունը, սկսած իր գործունեության սկզբից՝ այն օգնել է Շոտլանդիային ստանալ շուրջ 30 մլն բրիտանական ֆունտ ստեռլինգին համարժեք համախառն ավելացված արժեք:

Մեկ այլ հետաքրքիր օրինակ է Չիլիի՝ արտասահմանում բնակվող ազդեցիկ չիլիցիների ցանցը՝ «ՉիլիԳլոբալը»:⁶ Վերջինս ստեղծվել է 2005

⁴ «Հայաստանում ՕՈՒՆ-երի խթանման և աջակցման քաղաքականության և պրակտիկայի ուսումնասիրություն», «Ի-Վի Քոնսալթինգ», ՀՀ էկոնոմիկայի նախարարության համար, Երևան, 2013թ., էջ՝ 98

⁵ Նյութի աղբյուրը՝ <http://www.globalscot.com/about>, ինչպես նաև՝ “Linking Multinational Enterprises and Armenian SMEs: The Case of the Construction Materials Sector”, Private Sector Development Policy Handbook, OECD, March, 2015, p. 78

⁶ Նյութի աղբյուրը՝ <http://www.chileglobal.net/que-es-chileglobal/>, ինչպես նաև՝ “Linking Multinational Enterprises and Armenian SMEs: The Case of the Construction Materials Sector”, Private Sector Development Policy Handbook, OECD, March, 2015, p. 79

թվականին և ունի ավելի քան 100 անդամ: Տանցը գործում է երեք հիմնական թիրախային ոլորտներում՝ բիզնեսի ստեղծում, տեխնոլոգիական փոխանցում և մարդկային կապիտալի զարգացում: Բացի այդ, վերջինս ֆինանսավորում է ձեռնարկությունների կապիտալը դրանց ստեղծման վաղ փուլերում: «ՉիլիԳլոբալը» համագործակցում է պետական այլ գերատեսչությունների հետ՝ նոր անդամներ գտնելու, ինչպես նաև տարբեր միջոցառումներ, համաժողովներ կազմակերպելու նպատակով:

Ինչ վերաբերում է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի տարածաշրջանին, ապա այստեղ մի շարք երկրներում գրանցվել է ներդրումային ինստիտուտների զարգացման էական առաջընթաց: Այս առումով առաջատարներ են 2004 թվականին Եվրամիությանն անդամակցած երկրները, և առաջին հերթին՝ Հունգարիան, Լեհաստանը և Չեխիան: Վերջին տասնամյակում երկրների այս խումբը համարվում է ներդրումային «ինստիտուտների ներմուծման» ամենահաջող տարբերակը: Այս երկրները, Եվրամիությանն անդամակցելու նպատակ հետապնդելով, իրենց ինստիտուցիոնալ չափորոշիչները հետևողականորեն մոտեցնում էին Եվրոպական չափորոշիչներին: Օրինակ՝ Չեխիայում ներդրումային արտոնությունների մասին օրենքը սահմանում է այն պայմանները, որոնց ապահովումը պարտադիր է՝ դիմելու ներդրումային արտոնությունների համար՝ շահութահարկի արտոնություն, հողատարածքի փոխանցում շահավետ գներով, աշխատատեղերի ստեղծման դրամաշնորհներ և վերապատրաստման ու զարգացման դրամաշնորհներ:⁷ «Չեխիավեստը», որը Չեխիայի ներդրումների և գործարարության զարգացման գործակալությունն է, արդյունաբերության և առևտրի նախարարությանն առընթեր կառավարական գործակալություն է ու հիմնականում ֆինանսավորվում է պետական բյուջեից:⁸ Հիմնադրվելով 1992 թվականին՝ այն իրականացնում է զարգացման ծրագրեր, որոնք ուղղված են ՕՈՒՆ-երի ներգրավմանը, չեխական ընկերությունների զարգացմանը և Չեխիայում կառուցվածքային ֆոնդերի իրա-

⁷ «Հայաստանում ՕՈՒՆ-երի խթանման և աջակցման քաղաքականության և պրակտիկայի ուսումնասիրություն», «Ի-Վի Քոնսալթինգ», ՀՀ էկոնոմիկայի նախարարության համար, Երևան, 2013, էջ՝ 101

⁸ Նյուֆի աղբյուրը՝ <http://czechinvest.org/en/about-czechinvest>, ինչպես նաև՝ “CzechInvest – Annual Report 2013”, <http://czechinvest.org/data/files/annual-report-czechinvest-2013-4360-en.pdf>

գործմանը: «Չեխինվեստն» աշխարհում առաջատարներից է ներդրումների խթանման գործակալությունների շարքում՝ ունենալով մասնագիտական փորձառության և կատարողականի բարձր մակարդակ:

Ներդրումային միջավայրի ինստիտուցիոնալ բարեփոխումներ են իրականացվել հետսոցիալիստական այլ երկրներում նույնպես, որոնք նախկինում բավական հետ էին առաջատար երկրներից (օրինակ՝ Սլովակիայում, Բուլղարիայում, Ռումինիայում): Ինչպես այլ երկրներում, այստեղ ևս Եվրամիությանը միանալու գործընթացը դարձավ բարեփոխումների արագացման կարևորագույն խթան: Եվրամիությունն այս երկրներին տրամադրեց նշանակալի տեխնիկական օգնություն՝ միաժամանակ իրականացնելով կարևորագույն ազգային ինստիտուտների գործունեության վերահսկողություն: Բացի դրանից, Եվրամիության կողմից, այլ միջազգային կազմակերպությունների հետ մեկտեղ, այդ երկրներում տրամադրվեց տարածաշրջանային խոշոր նախագծերի իրականացմանն աջակցություն, որոնք ուղղված էին առանձնահատուկ նշանակություն ունեցող ներդրումային ինստիտուտների արդիականացմանը, օրինակ՝ Հարավարևելյան Եվրոպայում տրանսպորտի և առևտրի աջակցության նախագիծը⁹, որի շրջանակներում պարզեցվել է մաքսային գործընթացը, բարձրացվել է սահմանապահ կետերի աշխատանքների արդյունավետությունը: Դա հանգեցրել է կոնկրետ Ռումինիայում և Բուլղարիայում մաքսակետերում կոռուպցիայի մակարդակի կտրուկ նվազեցմանը: Ընդհանուր առմամբ, կարելի է առանձնացնել ներդրումային միջավայրի բարելավման Կենտրոնական Եվրոպայի փորձի հետևյալ կողմերը՝ վարչական խոչընդոտների հաղթահարմանն ուղղված միջոցառումներ, մաքսային գործընթացների արդյունավետությանն ուղղված միջոցառումներ, հարկային վարչարարության ոլորտում իրականացված միջոցառումներ, պետական վարչակազմում կոռուպցիայի վերահսկողությանն ուղղված միջոցառումներ, ներդրումային բարեփոխումների նկատմամբ պահանջարկի ընդլայնում, դատական համակարգում իրականացվող բարեփոխումներ, քաղաքական միջավայրի բարեփոխումներ և այլն:¹⁰

⁹ “Trade and Transportation Facilitation Project in Southeast Europe – TTFSE”, “Trade and Transportation Facilitation Southeast Europe Project: Bulgaria”, World Bank, Washington D. C.

¹⁰ Anderson James H., Cheryl W. Grey, “Anticorruption in Transition – 3. Who is Succeeding and Why?”, World Bank, Washington D. C., 2006

Խոսելով Սինգապուրի զարգացման պատմության մասին՝ հարկ է ընդգծել, որ վերջին 25 տարվա ընթացքում ՕՌԻՆ-երի միջոցով ներդրվել է ընդհանուր ներդրումների ավելի քան 50%-ը:¹¹ Դեռևս 1961 թվականին ստեղծված «Տնտեսական զարգացման խորհուրդը» ռազմավարական ուրույն հարթակ է՝ տարբեր ոլորտներում ՕՌԻՆ-երի ներհոսքի ավելացման նպատակով: Սինգապուրում օտարերկրյա ներդրումների վաղ և զգալի ներկայությունը մեծ պահանջարկ առաջացրեց տեղի գործընկերների նկատմամբ, հետևաբար, ներդրումային բարենպաստ միջավայրը՝ զուգակցված կրթված աշխատուժի և ֆինանսական աջակցության ու զարգացման ծրագրերի միջոցով հզոր ՓՄՁ ոլորտի զարգացման կամքի առկայությամբ, հնարավորություն ընձեռեցին բազմազգ կորպորացիաներին ամուր կապեր ստեղծել տեղի ընկերությունների հետ: Ներդրումների հետագա ներգրավումն իրականացվեց կառավարության վարած հաջող քաղաքականության արդյունքում, որն ակտիվորեն ուղղված էր ՕՌԻՆ-ՓՄՁ կապին: Արդյունքում 1986 թվականին ներդրվեց «Տեղական արտադրության արդիականացման ծրագիրը»¹², որը նպատակ էր հետապնդում տեղի մատակարարների հզորացումը և դեպի օտարերկրյա մասնաճյուղեր ընդլայնվելը՝ դրանց արդյունավետությունը, հուսալիությունը և մրցունակությունը բարձրացնելու միջոցով:

Իսկ գործարար միջավայրը բարելավելու Վրաստանի տպավորիչ փորձը բազմիցս է ներկայացվել միջազգային հրապարակումներում, մասնավորապես՝ Համաշխարհային բանկի գնահատմամբ՝ Վրաստանը «Գործարարությամբ զբաղվելու» դյուրինությամբ երկրների ցանկում 5 տարիների ընթացքում 112-րդ տեղից 8-րդ տեղում հայտնվելու արդյունքում ճանաչվել է աշխարհում բարեփոխումներ իրականացնող լավագույն երկրներից մեկը՝ նշելով, որ որևէ երկիր այդքան խորը և համապարփակ բարեփոխումներ շարունակաբար չի իրականացրել տարբեր ոլորտներում այնպես, ինչպես Վրաստանը:¹³

Այսպիսով, կարող ենք նշել, որ երկրում վարվող ներդրումային քաղաքականությունը երկրի տնտեսական քաղաքականության

¹¹ “Linking Multinational Enterprises and Armenian SMEs: The Case of the Construction Materials Sector”, Private Sector Development Policy Handbook, OECD, March, 2015, p. 83

¹² “Local Industry Upgrading Program”

¹³ Աղբյուրը՝ <http://investingorgia.org/index.php?m=230> պաշտոնական կայք-էջ

կարևոր բաղկացուցիչն է, և ուղղված է արդյունավետ ու գրավիչ ներդրումային միջավայրի ձևավորմանն ու շարունակական զարգացմանը, որն, իր հերթին, անհնար է առանց կայուն և զարգացած ինստիտուցիոնալ միջավայրի: Իսկ ներդրումային միջավայրի վրա ազդող օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնները նպաստում են այդ միջավայրի զարգացմանն ու իրենց իսկ առանձնահատկություններով յուրահատուկ են դարձնում այն: Ինչպես նշել են Դ. Գելլապը, Ջ. Սաքսը և Է. Մելլինջերը, երկրի աշխարհագրական դիրքը կարևոր և վճռական նշանակություն ունի ինստիտուտների, ներդրումային միջավայրի և տնտեսական աճի վրա ու կանխորոշում է ինստիտուտների և մարդկային կապիտալի հետագա զարգացումը:¹⁴

Ամփոփելով կցանկանայինք նշել, որ ՀՀ տնտեսական զարգացման համար ևս կարևորագույն նախապայմաններից է ներդրումային և գործարար միջավայրերի բարելավումը: Ուստի, դրան հասնելու համար ՀՀ կառավարությունը նպատակ է հետապնդում Հայաստանում ստեղծել ձեռնարկատիրական գործունեության պետական կարգավորումների, ծառայությունների և վարչարարական ընթացակարգերի պարզ, թափանցիկ և քիչ ծախսատար միջավայր, հավասար մրցակցային պայմաններ, գործարարությանն օժանդակող զարգացած շուկայական ենթակառուցվածքներ, ինչպես նաև իրականացնել հարկային և մաքսային հավասարակշռված քաղաքականություն: Ինչպես ցույց են տալիս տնտեսական զարգացման ծրագրերը, ներդրումային և գործարար միջավայրի բարելավման խնդիրները շարունակելու են մնալ ՀՀ կառավարության առաջնահերթ բարեփոխումների օրակարգում՝ առանցքային շեշտադրումն ուղղելով ձեռնարկատիրության զարգացմանը, ռիսկերի վրա հիմնված ստուգումների համակարգի կայացմանը, կորպորատիվ կառավարման մշակույթի արմատավորմանը, կարգավորման ազդեցության գնահատման համակարգի բարելավմանը, վարչարարության և տնտեսվարողների ծախսերի նվազեցմանը: Այս ուղղությամբ բարեփոխումներ իրականացնելու նպատակով ՀՀ կառավարության կողմից ընդունվել է գործարար միջավայրի բարելավման միջոցառումների 6 ծրագիր, որոնց միջոցով բարեփոխումներ իրականացվել և ներկայում էլ շարունակում են իրականացվել տար-

¹⁴ Gallup J., Sachs J., Mellinger A., “Geography and Economic Development”, International Regional Science Review, 1999, Vol. 2, pp. 179-232

բեր ուղղություններով: Իսկ օտարերկրյա փորձն իրականացվելիք բարեփոխումների մասով կարող է արդյունավետ լինել այնքանով, որ դրա լավագույն դրսևորումները կարող են տեղայնացվել մեզ մոտ և տալ իրենց դրական արդյունքները:

Քանալի բառեր. ներդրումային միջավայր, ինստիտուցիոնալ բարեփոխում, ներդրումային գրավչություն, ներդրումային արտոնություն, ներդրումային միջավայրի բարելավման միջոցառում:

Գրականություն

1. Մարկոսյան Ա., Հախվերդյան Դ., Հովասափյան Ա., «Ինստիտուտներ և տնտեսական աճ. հետաձգված բարեփոխումներ, բաց թողնված հնարավորությունների կորուստներ», Երևան, Հդիթ պրինտ, 2010 թ., 246 էջ
2. «Հայաստանում ՕՈՒՆ-երի խթանման և աջակցման քաղաքականության և պրակտիկայի ուսումնասիրություն», «Ի-Վի Քոնսալթինգ», ՀՀ էկոնոմիկայի նախարարության համար, Երևան, 2013թ., 114 էջ
3. Киселева Н. В., Боровикова Т. В., Захарова Г. В., “Инвестиционная деятельность”, Москва, КНОРУС, 2006 г., 432 стр.
4. Фрейнкмен Л. М., Дашкеев В. В., Муфтяхетдинова М. Р., “Анализ институциональной динамики в странах с переходной экономикой”, “Научные труды” Номер 126, М., ИЭПП, 2009 г.
5. Anderson James H., Cheryl W. Grey, “Anticorruption in Transition – 3. Who is Succeeding and Why?”, World Bank, Washington D. C, 2006, 130 pages
6. Gallup J., Sachs J., Mellinger A., “Geography and Economic Development”, International Regional Science Review, 1999, Vol. 2
7. “Linking Multinational Enterprises and Armenian SMEs: The Case of the Construction Materials Sector”, Private Sector Development Policy Handbook, OECD, March, 2015, 131 pages
8. “Trade and Transportation Facilitation Southeast Europe Project: Bulgaria”, World Bank, Washington D. C., 4 pages
9. “CzechInvest – Annual Report 2013”,
<http://czechinvest.org/data/files/annual-report-czechinvest-2013-4360-en.pdf>
10. <http://www.globalscot.com>

11. <http://www.chileglobal.net>
12. <http://czechinvest.org>
13. <http://investingeorgia.org>

“AROUND THE FOREIGN EXPERIENCE OF FORMATION OF INSTITUTIONAL BACKGROUNDS FOR INVESTMENT CLIMATE”

G.G. Kurghinyan
Summary

The article presents the foreign experience of institutional reforms towards the improvement of investment climate. The main characteristics of “Western” and “Eastern” economic development models were presented within the article, particularly, the advanced practice of rising investment attractiveness and investors promotion of several countries, such as Ireland, Scotland, Czech Republic, Poland, Hungary, Slovakia, Bulgaria, Singapore, Chile and Georgia.

Key words: investment climate, institutional reform, investment attractiveness, investment privilege, investment climate reform measure.

“О ЗАРУБЕЖНОМ ОПЫТЕ ФОРМИРОВАНИЯ ИНСТИТУЦИОНАЛЬНЫХ ОСНОВ ИНВЕСТИЦИОННОГО КЛИМАТА”

Г.Г. Кургинян
Резюме

В статье представлен зарубежный опыт институциональных реформ, направленных на улучшение инвестиционного климата. В рамках статьи также были представлены основные характеристики “западных” и “восточных” моделей экономического развития. В частности, была предусмотрена передовая практика повышения инвестиционной привлекательности и продвижения инвесторов в нескольких странах, таких как Ирландия, Шотландия, Чехия, Польша, Венгрия, Словакия, Болгария, Сингапур, Чили и Грузия.

Ключевые слова: инвестиционный климат, институциональная реформа, инвестиционная привлекательность, инвестиционные льготы, мероприятие улучшения инвестиционного климата.

ԲԱՆԿԱՅԻՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ԴԵՐԸ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ

Վ.Ա. Երանոսյան

Հասարակության անդամները միշտ ընտրություն են կատարում ոչ միայն սպառման և խնայողությունների միջև, այլև խնայողությունների իրականացման ձևերի միջև, այսինքն՝ բարձր իրացվելիության և առավել քիչ իրացվելիության ակտիվների միջև: Իսկ եթե մարդիկ համոզված չեն ներդրումների արդյունավետության մեջ, ապա նախընտրում են խնայողությունների ծավալը մեծացնել առավել բարձր իրացվելի ակտիվների տեսքով: Քիչ, թե շատ, հավասարակշռված պայմաններում, եթե տոկոսի ցածր մակարդակը խթանում է միջոցների ներգրավումը ներդրումների գործընթացում, ապա աճող անորոշության պայմաններում մարդիկ չեն ցանկանում բաժանվել իրենց իրացվելի միջոցներից անգամ բարձր տոկոսի դեպքում¹:

Գոյություն ունեն բանկերի երկու խմբեր, որոնք առաջարկում են ավանդների ավելի բարձր տոկոսադրույքներ՝

- Բանկեր, որ հնարավորություն ունեն ձևավորել ռեսուրսների տեղաբաշխման ավելի բարձր եկամտաբերություն, քան պետական պարտավորությունները:
- Բանկեր, որոնք սկսել են բնակչության միջոցների ներգրավումը և ամրապնդված են այդ շուկայում: Այդ փուլում, ավանդների համանման տեսակների և ժամկետների նկատմամբ գործող տոկոսադրույքի համեմատ բարձր տոկոսադրույքի սահմանումը, գրավիչ է ավանդատուների համար:

Մեր կարծիքով, գործնականում կիրառելի են հետևյալ սկզբունքները, որոնց վրա պետք է հենվի տոկոսադրույքի բանկային օպտիմալ քաղաքականությունը՝

1. Առևտրային բանկի գործառնությունների գծով տոկոսադրույքի մակարդակը, պետք է գտնվի լրիվ կախվածության մեջ վարկային ռեսուրսների պահանջարկից: Պահանջարկի ցանկա-

¹ Макконнелл К. Р., Брю С.Л. Экономикс: В 2 т.: Т.1.- М.,1992., с 84

ցած մեծացում պետք է որոշի տոկոսադրույքի բարձրացման աստիճանը, բանկի ինչպես ակտիվ, այնպես էլ պասիվ գործառնությունների գծով:

2. Տոկոսադրույքի մեծությունը պետք է կապված լինի ավանդներում գտնվող միջոցների պահպանման ժամկետի հետ:
3. Տոկոսադրույքի մեծությունը պետք է հաշվի առնի բանկային գործունեության շահութաբերության ապահովման անհրաժեշտությունը, բացառի կամ սահմանափակի տոկոսադրույքի ռիսկի պայմաններում բանկի աշխատելու հնարավորությունը:
4. Տոկոսադրույքի «սոցիալական» տարբերակման սկզբունքի պահպանումը՝ ավանդների գծով: Գների մակարդակի աճի պայմաններում, ավանդների գծով տոկոսադրույքը պետք է կատարի երաշխիքային-ապահովագրական գործառույթ, այսինքն՝ լինի ավանդատուի սոցիալ-տնտեսական պաշտպանության ձև:

Տոկոսադրույքի բանկային արդյունավետ քաղաքականության ձևավորման ընթացքում այս սկզբունքները հաշվի պետք է առնել համալիր ձևով: Բնակչության խնայողությունների ներգրավման բանկային քաղաքականության վերաբերյալ բազմաթիվ ուսումնասիրություններ են կատարվել Օքսֆորդի և Փրինստոնի համալսարանների տնտեսագետների կողմից²: Ժամանակակից պայմաններում, առանձնահատուկ նշանակություն է ստանում տոկոսադրույքի տարբերակումը՝ կախված խնայողությունների մեծությունից և դրանց պահպանման ժամկետից:

Դիտարկենք ՀՀ բանկերում գործող մինչև մեկ տարի, մեկից երեք, և երեքից ավել տարով ՀՀ դրամով ավանդ ներդնելու համար առաջարկվող տոկոսադրույքները.³

² "Using Financial Innovation to support Savers: From Coercion to Exitement", 2008, 59 pages, page 5

³ Աղյուսակը կազմվել է <http://www.banks.am/am/deposits/> կայքում 02.04.2015 առկա տեղեկատվության հիման վրա

Աղյուսակ 1: ՀՀ առևտրային բանկերում առաջարկվող տոկոսադրույքները

	Բանկի անվանումը	խնայողական հաշիվ	կարճաժամկետ, մինչև երեք ամիս	մինչև 1 տարի ժամկետային ավանդ	1-3 տարի ժամկետային ավանդ	3-ից ավել տարով ժամկետային ավանդ
1	ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ	-	7,5	10,75	12	
2	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	-	7,5	10,9	11,5	12,5
3	ԱՆԵԼԻՔԲԱՆԿ	1	16,25	17,5	17,75	12
4	ԱՌՔԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՍԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ	-	7,5	11,5	12,3	10
5	ԱՐԱՐԱՏ ԲԱՆԿ	-	7	13	14	12
6	ԱՐԴՇԻՆԲԱՆԿ		16,25	17,5	15	-
7	ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ	2,5	15	14,5	14	-
8	ԱՐՑԱԽԲԱՆԿ	1,7	5	12	12	11
9	ԲԻԲԼՈՍ ԲԱՆԿ ԱՐՄԵՆԻԱ	5	9	10	11	
10	ԲՏԱ ԻՆՎԵՍՏ-ԲԱՆԿ	-	9	10	10	10
11	ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ	-	10,5	12	13,5	
12	ԷՅՉ ԷՍ ԲԻ ՍԻ ԲԱՆԿԵ		4,5	9	9	11
13	ԻՆԵԿՈՐԲԱՆԿ	0,1	16,5	11,5	12	12
14	ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ	-	7,5	11	ԿԲՏՀ + 1.5%	ԿԲՏՀ + Բոնուս 5% X ավանդի տարիներ X ավանդի միջին մնացորդ
15	ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ		8,5	11	13,5	14,5
16	ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ		8	10	12	12
17	ՄԵԼԼԱԹ ԲԱՆԿ	1	1,5	3		

18	ՅՈՒՆԻԲԱՆԿ	8	16	18		
19	ՊՐՈԿՐԵԴԻՏ ԲԱՆԿ	9	18	12	13,5	12
20	ՊՐՈՍԵԹԵՅ ԲԱՆԿ			9,5	-	-
21	ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ		17,25	17,5	15,25	13% (ՀՀ ԿԲ վերաֆինան- սավորման % + 3.50%)

Նշենք, որ աղյուսակում ներառված են ՀՀ առևտրային բանկերում 02.04.2015թ. դրությամբ նշված ժամանակաշրջանի համար առաջարկվող ամենաբարձր հնարավոր տոկոսադրույքները: Ընդհանրապես, հայկական բանկերում վարվում է բավականաչափ հետաքրքիր տոկոսային քաղաքականություն⁴: Նախ նշենք, որ որոշ բանկերում առկա բարձր տոկոսադրույքները պայմանավորված են 2014 թվականի վերջին տնտեսությունում տեղի ունեցած իրադարձություններով, երբ արժութային շուկայի կտրուկ տատանումները հանգեցրին դրամի գնի անկման, իսկ Կենտրոնական բանկը բարձրացրեց բանկերի դրամային պահուստի նորմը: Սրանով պայմանավորված, բանկերի մոտ առաջացավ կարճաժամկետ միջոցների խիստ անհրաժեշտություն, որից ելնելով էլ բազմաթիվ բանկեր սկսեցին առաջարկել բարձր տոկոսադրույքներ՝ մինչև երեք ամիս ժամկետով ժամկետային ավանդների համար: Մինչև երեք ամիս ժամկետայնությամբ ավանդների համար բարձր տոկոսադրույքներ սկսեցին առաջարկել ՎՏԲ բանկը՝ մինչև 17,25%, Պրոկրեդիտ Բանկը՝ առավելագույնը 18%, Անելիք բանկը և Արդշինինվեստբանկը՝ մինչև 16,25 %, Յունիբանկը՝ 16%: Մինչև մեկ տարի ավանդները համար բարձր տոկոսադրույքներ են առաջարկում ՎՏԲ բանկը՝ 17,5%, Անելիք բանկը և Արդշինինվեստբանկը՝ 17,5%, Յունիբանկը՝ 18%: 1-3 տարի ժամկետայնությամբ ավանդների համար բանկային տոկոսադրույքները համեմատաբար ցածր են, որովհետև բանկերի համար ձեռնտու չէ ներգրավել երկարաժամկետ թանկ միջոցներ, քանի որ, նախ, նրանք նման միջոցներ ներգրավում են այլ աղբյուրներից՝ վարկերի տեսքով և շատ ավելի ցածր տոկոսադրույքով, և երկրորդ՝ բավականին ռիսկային է կնքել երկարաժամկետ

⁴ ՀՀ բանկային համակարգի հնարավոր զարգացումները 2014-2016 թթ.
<https://www.cba.am/AM/panalyticalmaterialsresearches/BankHam%20Zargacum%2014-16.pdf>

պայմանագրեր ավանդային բարձր տոկոսադրույքով, քանի որ ապագայում հնարավոր են արժույթային տատանումներ, որոնք ոչ միշտ են ի շահ ավանդ ներգրավողի՝ ի շահ բանկի, լինում: Այս դեպքում, բանկերը կցում են երկարաժամկետ ավանդների տոկոսադրույքը ՀՀ ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքին, ինչը նվազեցնում է ապագայում հնարավոր ռիսկերի ծագումը: Այս հետազոտության շրջանակներում փորձել ենք տնտեսաչափական գնահատմամբ պարզել, թե ՀՀ-ում ինչպիսի վիճակագրական կախվածություն գոյություն ունի ավանդների, տոկոսադրույքի և ՀՆԱ միջև: Տրամաբանական է ենթադրել, որ ավանդային տոկոսադրույքի բարձրացմանը զուգահեռ առևտրային բանկերի կողմից ներգրավվող ավանդների ծավալը կաճի: Միաժամանակ համախառն ներքին արդյունքի աճը ևս, պետք է հանգեցնի բնակչության խնայողությունների և հետևաբար, նաև՝ ավանդների աճին: Ըստ այդմ, մեր կողմից դիտարկվող մոդելը մաթեմատիկորեն ունի հետևյալ տեսքը՝

$$D = a + b_1 R_i + b_2 Y_i + \varepsilon, i = 1, 2, \dots, 58$$

Վերլուծությունները կատարվել են հայտնի մեթոդներից մեկով, տարեկան շարքերը վերածելով եռամսյակայինի:⁵ Հավասարման մեջ i -ն եռամսյակի ցուցիչն է, ընդ որում, 2000թ. առաջին եռամսյակի դեպքում $i=1$, 2014թ. երկրորդ եռամսյակի դեպքում $i=2$, 2014թ. երկրորդ եռամսյակի դեպքում $i=58$: a -ն ազատ անդամի գործակիցն է, որն իրենից ներկայացնում է ավանդների այն փոփոխությունը, որը կապված չէ մեր կողմից ընտրված գործոնների հետ: D -ն Հայաստանում 2000թ. առաջին եռամսյակից մինչ 2014թ. երկրորդ եռամսյակը Հայաստանի առևտրային բանկերի կողմից ներգրավվող ավանդների ծավալներն են, մին ՀՀ դրամ: R -ով նշանակված է ավանդների տոկոսադրույքը, R_i -ն տոկոսադրույքի արժեքն է i -րդ եռամսյակում: Նշենք, որ մեր կողմից դիտարկվել են ավանդների տոկոսադրույքները ինչպես դրամով, այնպես էլ արտարժույթով և ելնելով վերջիններիս հարաբերական չափից, մեր կողմից, հաշվարկվել է պայմանական տոկոսադրույք՝ ելնելով կշռված միջինի բանաձևից: Այլ կերպ մեր R -ի ցուցանիշները ստացվել են ելնելով ՀՀ-ում դրամով և արտարժույթով ա-

⁵ Աղբյուրը՝ EViews User Forum <http://forums.eviews.com/viewtopic.php?f=7&t=3799>


վանդների տոկոսադրույքներից՝ կշռվելով ըստ իրենց ծավալների: Y-ով նշանակվում են ՀՆԱ ցուցանիշները, հետևաբար Y_i-ն ՀՀ ՀՆԱ ցուցանիշն է i-րդ եռամսյակում: ε-ը մոդելի սխալներն են: b-ն համապատասխան ռեգրեսորի գործակիցն է, որը ցույց է տալիս, թե տվյալ գործոնի 1 միավորով փոփոխությունը, որքանով է ազդում բացատրվող փոփոխականի վրա, մեր դեպքում՝ ավանդների վրա: Վերլուծությունները կատարվել են, դիտումների քանակական համապատասխան տեղեկատվության, ինչպես նաև, Միջին տոկոսադրույքի հաշվարկման համար անհրաժեշտ տվյալների հիման վրա, որոնք բոլորը ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կայքում⁶: Մոդելի արդյունքներից հետևում է, որ Հայաստանում ավանդների, տոկոսադրույքի և ՀՆԱ միջև ռեգրեսիոն հավասարումն ունի հետևյալ տեսքը.

$$D = -4.69 + 0.71R + 1.3Y \qquad \alpha = 0.95$$


Այս գործակիցները նշանակում են, որ Հայաստանում տոկոսադրույքի ավելացումը 1 տոկոսային կետով հանգեցնում է 0.71 տոկոսով ավանդների աճի, իսկ ՀՆԱ ավելացումը 1 տոկոսով հանգեցնում է ավանդների աճի 1.3 տոկոսով: Սա նշանակում է, որ ՀՀ բնակչությունը հակված է խնայողություններ կատարելու, եթե եկամուտները աճում են բավարար չափով: Ինչպես տեսնում ենք, տոկոսադրույքի և ՀՆԱ ավելացումը դրականորեն են ազդում ավանդների վրա, հետևաբար, մեր գործոնների կապի բնույթը համապատասխանում է տնտեսագիտության տեսության պահանջներին:

⁶ <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

Գծապատկեր 1: ՀՀ-ում առևտրային բանկերի միջին տոկոսադրույքի ազդեցությունը ավանդների ծավալի վրա



Գծապատկեր 2: ՀՀ տնտեսությունում ՀՆԱ-ի փոփոխության ազդեցությունը ավանդների ծավալի վրա



Այսպիսով, մշակված մոդելի բոլոր հիմնական պարամետրերը վկայում են մոդելի ռեգրեսորների և բացատրվող փոփոխականի միջև սերտ վիճակագրական կապի մասին և դրա արդյունքները կարող են օգտագործվել քանական գնահատականներ տալու նպատակով:

Բանալի բաներ' խնայողություններ, ավանդ, տոկոսադրույք, ներգրավում, առևտրային բանկ, էկոնոմետրիկ մոդել, փոփոխականներ:

Գրականություն

1. ՀՀ բանկային համակարգի հնարավոր զարգացումները 2014-2016 թթ.
<https://www.cba.am/AM/panalyticalmaterialsresearches/BankHam%20Zargacum%2014-16.pdf>
2. Макконнелл К. Р., Брю С.Л. Экономикс: В 2 т.: Т.1.- М.,1992., 800 стр
3. <http://www.banks.am/am/deposits/>
4. EViews User Forum
<http://forums.eviews.com/viewtopic.php?f=7&t=3799>
5. <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>
6. "Using Financial Innovation to support Savers: From Coercion to Exitement", 2008, 59 pages

РОЛЬ БАНКОВСКОГО ПРОЦЕНТА В ПРОЦЕССЕ ПРИВЛЕЧЕНИЯ ВКЛАДОВ НАСЕЛЕНИЯ

В.А. Ераносян

Резюме

В исследовании подчеркнуто значение банковского процента в рынке сбережений населения и принципы, которыми должна формироваться оптимальная политика банковского процента.

Представлено многосторонняя деятельность банков в привлечении сбережений населения. Подчеркнуто, что в современных условиях особую важность приобретает диверсификация процентов в зависимости от величины вклада и срока хранения.

Изучены различные изменения вкладов населения в банковской системе РА. Изучена статистическая зависимость между вкладами, процентами и ВВП в РА. Даны количественные зависимости корреляции.

Ключевые слова: сбережения, вклад, привлечение, коммерческий банк, эконометрическая модель, переменные.

THE ROLE OF BANK INTEREST IN THE PROCESS OF POPULATION SAVINGS ATTRACTION

V.A.Yeranosyan

Summary

The importance of bank interest has been underlined in the market of bank savings, presenting the principle that must be a basis for the formation of optimal bank interest policy.

The dynamics of bank interests for population savings have been observed. The importance of bank interest diversification has been presented based on the savings amount and deposit period.

The statistical dependence between bank interest, deposits and GDP has been revealed for RA. Quantitative dependencies of the correlation were given.

The multilateral activity of banks in the attraction of population savings has been

Key words: savings, deposit, commercial bank, attraction, econometric model, dummies.

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Ծ.Զ. Կարապետյան

Ինովացիոն տնտեսության ձևավորման ճանապարհին կարևորվում են մի քանի հիմնադրույթներ, որոնց վերաբերյալ ՀՀ հեռանկարային զարգացման ծրագրում կան համապատասխան ձևակերպումներ: Մեր կողմից, առանձնացվել են դրանցից մի քանիսը, որոնք հիմնավորում են, երկրի առանձին տարածքներում, ՀՀ ամբողջ ինովացիոն ներուժի մասնաբաժնի առկայության պայմաններում, ինովացիոն գործունեության կարգավորման անհրաժեշտությունը: Գիտության զարգացումը պահանջում է համակարգի ինստիտուցիոնալ բարեփոխումներ: Անհրաժեշտ է իրականացնել գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի օպտիմալացում և կառուցվածքային բարեփոխումներ՝ անկախ գերատեսչական պատկանելության՝ միավորելով միևնույն գիտական ուղղության պետական գիտական կազմակերպությունները¹: Տեղական իշխանությունները կարող են նպաստել գիտության և արտադրության խզված կապերի վերականգնմանը, ելման դիրք ունենալով այն, որ յուրաքանչյուր արտադրական ձեռնարկության գործունեության առաջնային նպատակը պետք է լինի նորարարությունը, որը կարող է նպաստել զարգացման նոր մակարդակների ձեռքբերմանը: Կարևոր է նաև գիտական կազմակերպությունների համար նպաստավոր տնտեսական միջավայրի ձևավորումը, դրանց ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունների ընդլայնումը:

ՀՀ Կառավարությունը հաստատել է ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային հայեցակարգը, որում առկա են ինովացիոն տնտեսության նպատակադրումները և ենթադրվում է, որ դրանով մինչև 2020 թվականը կստեղծվեն զլոբալ տեխնոլոգիական ընկերությունների Հայաստան մուտք գործելու անհրաժեշտ նախադրյալ-

¹ ՀՀ 2014-2025 ԹԹ. Հեռանկարային զարգացման ռազմավարակն ծրագիր, Հավելված ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442 - Ն որոշման, 231 էջ, էջ 141

ներ²: Ամենից առաջ, ինովացիոն համակարգը նոր գիտելիքների ստեղծմամբ, դրանց դրսից փոխառմամբ ու տեղական կարիքներին հարմարեցմամբ զբաղվող հետազոտական ու «ուղեղային կենտրոնների», համալսարանների, մասնավոր ֆիրմաների ու կազմակերպությունների ցանց է³:

Տնտեսության արդյունավետ զարգացման և ինտենսիվ տնտեսական աճի ձեռքբերման գործում, անկասկած, նշանակալի է ինովացիոն միջավայրի և ինովացիոն ենթակառուցվածքների ստեղծման անհրաժեշտությունը:

Ինովացիոն գործունեության և ընդհանրապես տնտեսական հարաբերությունների կարգավորումն ամբողջ տնտեսական տարածքում և դրա առանձին միավորներում, ուղղված է ապրանք արտադրողների և ծառայություն մատուցողների համար տնտեսական նպաստավոր միջավայրի ստեղծմանը և նրանց միջև առողջ մրցակցային պայքարի խրախուսմանը: Տնտեսական համակարգում խիստ կարևորվում են առանձին վարչատարածքային միավորների արդյունավետ զարգացման խնդիրները, որոնց լուծումն, ակնհայտորեն, կապահովի էական առաջընթաց երկրի սոցիալ-տնտեսական զարգացման համար՝ ստեղծելով համապատասխան նախադրյալներ: Առանձնակի կարևոր է դառնում ինովացիոն գործընթացների կարգավորման ու կառավարման մեջ տեղական իշխանությունների մասնակցությունը և հատկապես ՀՀ մայրաքաղաք Երևանի նման խոշոր քաղաքային համայնքի ինքնակառավարման մարմինների դերը: Երևանի տնտեսությունը ՀՀ գիտելիքատար ճյուղերի և ոլորտների ներուժային հետազոտական տարածք է, որը պատրաստ է նոր տեխնոլոգիաների յուրացման և տարածման համար և ամուր կապերով կապված է ինովացիաները նախագծող, ստեղծող կազմակերպությունների հետ: Գիտատեխնիկական աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների գերակշիռ մասը գործում է Երևանում:

Հարկ է նշել, որ գիտատեխնիկական աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների քանակի կրճատման առաջատարը

² «Ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարության հայեցակարգ», ՀՀ կառավարության 17.02.2011 թ. նիստի N 6 արձանագրային որոշման հավելված, 14 էջ, էջ 3, <http://mineconomy.am/arm/79/gortsaruyt.pastatuxt.html>

³ National Innovation Systems. // OECD. Paris. URL: <http://www.oecd.org>, C.7.

Երևան քաղաքն է, սակայն կազմակերպությունները, որոնք գործում են ընդամենը 5 մարզերում, ևս կրճատվել են, բացառությամբ Արարատի և Արմավիրի մարզերի⁴:

Աղյուսակ 1: Գիտատեխնիկական աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների քանակական բաշխվածությունն ըստ գիտատեխնիկական կազմակերպություններ ունեցող ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2004-2013թթ⁵.

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Երևան	73	83	81	69	70	70	69	62	62	53
Արագածոտն	5	5	5	5	3	3	3	3	3	3
Արարատ	1	1	1	1	1	1	1	1	1	1
Արմավիր	2	2	2	2	2	2	1	1	1	1
Կոտայք	7	6	6	6	3	3	3	3	3	1
Շիրակ	5	5	6	6	4	4	4	2	2	3
Ընդամենը	93	102	101	89	83	83	81	72	72	62

ՀՀ-ում 2004-2013թթ-ի ընթացքում գիտատեխնիկական աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների քանակական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում դրանք հիմնականում կրճատվել են: Ամենաշատը դրանց թիվը եղել է 2010 թ-ին՝ 102 կազմակերպություն, իսկ 2013թ-ին դրանք կազմում են 62, այսինքն ստացվում է, որ 8 տարվա ընթացքում թիվը կրճատվել է 39,21%-ով: Նման միտումը պայմանավորված է ինչպես գիտական կազմակերպությունների օպտիմալացմամբ, այնպես էլ առանձին գիտահետազոտական ինստիտուտներին հատկացվող ֆինանսական ռեսուրսների, ինչպես նաև անձնակազմի և դրանց աշխատելու արտադրողականությամբ, որոնք կենտրոնացված կարգավորելն ավելի նպատակահարմար է⁶:

Գիտահետազոտական կազմակերպությունների քանակական նվազեցումը չի նշանակում միայն, որ տեղի է ունեցել գիտությամբ զբաղվողների կամ գիտական ներուժի կրճատում, դրա արդյունքում տեղի է ունենում գիտական ոլորտում գործունեություն իրականացնող-

⁴ ՀՀ Սոցիալ-տնտեսական վիճակը 2013թ. Հունվար-դեկտեմբեր:

⁵ ՀՀ տնտեսության սոցիալ-տնտեսական վիճակը 2014 թ, ՀՀ ԱՎԾ

⁶ Յ. Սովադյան, Վ. Հարությունյան, Վ. Սարգսյան, Վ. Խաչատրյան, «Գիտակրթական համակարգը և տնտեսական զարգացումը», Երևան, 2011թ.

ների մասնագիտական ներուժի միավորում և համատեղ իրականացվող ծրագրերի շրջանակների մեծացում:

Ժամանակակից քաղաքների զարգացման դինամիկան մեծապես կանխորոշում է առանձին տարածքների և ամբողջ երկրի զարգացման մակարդակը⁷: Ներկայումս լիարժեք չէ ամբողջական պատկերացումը տարածքային ինովացիոն կենտրոնների ձևավորման, գործունեության, կառուցվածքի, սկզբունքների, գործառույթների վերաբերյալ, որոնք անհրաժեշտորեն կարող են իրականացնել ինստիտուցիոնալ փոփոխություններ՝ ժամանակակից ինովացիոն ենթակառուցվածքի զարգացման նպատակով⁸: Տարածքի ինովացիոն համակարգը, մեր կողմից դիտարկվում է, որպես առանձնահատուկ տնտեսական համակարգ, որ միավորում է պետական իշխանության տարածքային մարմինները, տնտեսվարող սուբյեկտները, և ինովացիոն ենթակառուցվածքը, որը նախատեսված է տարածքում ինովացիոն գործընթացի, ինովացիոն զարգացման ռազմավարության և պետության ինովացիոն քաղաքականության հիմնական ուղղություններին համապատասխան ինստիտուցիոնալացման համար: Այս բորորն ուղղված է տարածքի ինովացիոն ներուժի մեծացմանը: Այսպիսի մոտեցմամբ հնարավոր է ապահովել տարածքի ինովացիոն, ներդրումային զարգացման պայմանների բարելավում՝ միասնական հետզոտական տարածքի ձևավորման ճանապարհով: Տարածքում ինովացիոն գործընթացների խթանմանը նպաստում են ինովացիոն գործընթացների կլաստերային մոտեցումը, մրցունակ միջավայրի ձևավորումը: Ինովացիոն կլաստերը, դիտարկվում է, որպես աշխարհագրական իմաստով առանձնացված, համակցված ձեռնարկությունների ու կազմակերպությունների ամբողջություն, որ ունի ընդհանուր գիտական բազա և տեխնոլոգիական, լոգիստիկ ու ենթակառուցվածքային շրջաններ, հենված տարբեր շուկայական մեխանիզմների՝ կոոպերացման, մրցակցության, միաժամանակյա գործունեության առավելությունների օգտագործման վրա, ինչը թույլ է տալիս արագ և արդյունավետ նյութականացնել և տարածել նոր գիտելիքները և տեխնոլոգիաները: <<

⁷ Иван Тошич “Стратегическое планирование в городах Европы, Метрополитен Рисерч Институт, Подготовело для Фонда “Институт экономики города”, Москва 2003 г., 47с., 6 стр

⁸ Садков В. Г., Машегов П.Н. “Национальная инновационная система и ее регулирование компоненты// региональная экономика: теория и практика, 2008.-N23(80)

տնտեսական զարգացման և ազգային ինովացիոն համակարգի ձևավորման ներկա փուլում, տարածքային մակարդակում ինովացիոն գործունեության կարգավորման ինստիտուցիոնալ մեխանիզմների ձևավորումը կարևոր և անհրաժեշտ է: Ինովացիոն գործունեության նորմատիվ իրավական կարգավորման ավանդական ենթահամակարգերին զուգընթաց մեծ ուշադրություն պետք է դարձնել դրա համալրմանն ու թարմացմանը: Նախ, անհրաժեշտ է հիմնավորել տարածքի ինովացիոն ենթակառուցվածքի ռեինժինիրինգի և տարածքի ինովացիոն մարքեթինգի իրականացման անհրաժեշտությունը՝ տարածքի ներդրումային գրավչության ապահովման համար: Այս միջոցառումները անհրաժեշտ նախադրյալներ են ստեղծում, տարածքի մակարդակով ինովացիաների գեներացման և փոփոխություններին որակապես ադապտացվելու համար: Տարածքի տնտեսությունը զարգացման ինովացիոն ուղու փոխադրելու գործիք կարող են լինել տարածքի ինովացիոն համակարգի մեջ մտնող համալսարանները, գիտահետազոտական ինստիտուտները, տեխնոլոգիաների փոխանցման կենտրոնները, առևտրային կազմակերպությունների գիտական բաժինները, ինչպես նաև քաղաքային իշխանության մարմինները, որոնք զբաղվում են ինովացիոն քաղաքականության մշակմամբ: Սրանցից յուրաքանչյուրն ունի իր ռեսուրսները և գործառույթները, ինչը վկայում է, որ ինովացիոն համակարգի ձևավորման ընթացքում ենթադրվում է, որ աճում է սիներգետիկ էֆեկտը, որի համաձայն քաղաքի ինովացիոն համակարգի արդյունավետությունը կարելի է ապահովել դրա բոլոր մասնակիցների փոխգործունեության ռացիոնալ ուղիների որոշման և տնտեսական հարաբերությունների կատարելագործման հիման վրա:

Վերը նշված մոտեցումները, թույլ են տալիս ոչ միայն կենտրոնացնել ու ճշգրտել տարածքի ինովացիոն համակարգի կայացման ֆունկցիոնալ և կառուցվածքային հաջորդականությունը, այլև բացահայտել դրա ձևավորման առանցքային հիմնախնդիրները: Դրանք են՝

- ինովացիոն ենթակառուցվածքի գլխավոր տարրերի թերզարգացումը,
- ինովացիոն ներուժի բաղադրիչների միջև կոորդինացման բացակայությունը,
- գիտական մշակումների և հետազոտությունների առևտրայնացման ցածր մակարդակը,

- տեղերում ինովացիաների վերաբերյալ տեղեկատվության համակարգման և վերլուծության բացակայությունը,
- ինովացիոն տնտեսագիտության վերաբերյալ գիտելիքներով զինված ժամանակակից բարձր որակավորում ունեցող կադրերի պակասը:

Հետևաբար, տարածքի ինովացիոն զարգացմանը նպաստող ինստիտուտների առկայությունը, գիտական վերլուծություններն ու հետազոտությունները նպաստում են տարածքի ինովացիոն համակարգի, ֆինանսական, արտադրա-տեխնոլոգիական և տեղեկատվական ենթահամակարգերի գնահատման նոր մոտեցումների ձևավորմանը: Կարևոր է նշել, որ ինստիտուցիոնալ միջավայրը շատ դեպքերում որոշում է նորարարական զարգացման ու գիտելիքի տնտեսության անցման հաջողությունը:

Մեր կարծիքով, հետազոտական տարածքում ինովացիոն համակարգի ձևավորման հիմնական դրույթները և ցուցանիշներն անհրաժեշտ է ներառել այդ տարածքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի մեջ: Տեղական իշխանությունները գործնականում պետք է միջոցներ մշակեն ինովացիոն միջավայրի կազմակերպման, կարգավորման և տեղեկատվական ապահովության ծրագրերի համար: Տարածքի ինովացիոն զարգացումը բնութագրող ցուցանիշներ չեն սահմանվում և, հետևաբար, չեն հաշվարկվում ոչ մի տարածքային միավորի, նույնիսկ Երևանի բյուջետային հոդվածներով: Տարածքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում գիտական և ինովացիոն գործունեության գնահատման ցուցանիշների համակարգի ներդրումը կարող է գործնական մեծ նշանակություն ունենալ: Քաղաքային տնտեսությունում ինովացիոն գործունեության կառավարման բնագավառում համակարգված բարեփոխումները միտված կլինեն այդ գործունեությունից ստացված արդյունքների հաշվառմանն ու իրացմանը: Ինովացիոն ոլորտի զարգացումը, որպես հանրային ինստիտուտի, ներառելով կոլեկտիվ հետազոտությունների կազմակերպումը տարածքում հանգեցնում է նրան, որ ակնհայտ է դառնում գիտատեխնիկական և ինովացիոն զարգացման պատասխանատվության գիտակցման և որոտի կարգավորման գործառույթի անհրաժեշտությունը կառավարման տարածքային մարմինների կողմից:

Բանալի բառեր՝ փարածք, փեղական ինքնակառավարում, ինովացիա, գիտելիքահենք տնտեսություն, հետազոտական փարածք. ինստիտուցիոնալ:

Գրականություն

1. «Ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարության հայեցակարգ», ՀՀ կառավարության 17.02.2011 թ. նիստի N 6 արձանագրային որոշման հավելված, 14 էջ, էջ 3,
2. ՀՀ 2014-2025 թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, Հավելված ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442 - Ն որոշման, 231 էջ, էջ 141
3. ՀՀ Սոցիալ-տնտեսական վիճակը. 2013թ. Հունվար-դեկտեմբեր:
4. ՀՀ տնտեսության սոցիալ-տնտեսական վիճակը 2014 թ, ՀՀ ԱՎԾ
5. Յ. Սուվարյան, Վ. Հարությունյան, Վ. Սարգսյան, Վ. Խաչատրյան, «Գիտակրթական համակարգը և տնտեսական զարգացումը», Երևան, 2011թ.
6. Иван Тошич “Стратегическое планирование в городах Европы, Метрополитен Рисерч Институт, Подготовело для Фонда “Институт экономики города”, Москва 2003 г., 47с., 6 стр
7. Садков В. Г., Машегов П.Н. “Национальная инновационная система и ее регулирование компоненты// региональная экономика: теория и практика, 2008.-N23(80)
8. <http://mineconomy.am/arm/79/gortsaruyt.pastatuxt.html>
9. National Innovation Systems. // OECD. Paris.
URL: <http://www.oecd.org>, С.7.

ИНСТИТУЦИОНАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ ЕДИНОЙ ИССЛЕДОВАТЕЛЬСКОЙ ТЕРРИТОРИИ

Ц.Дж. Карапетян

Резюме

Была представлена необходимость формирования системы поддержки инноваций в РА и роль экономики основанной на знаниях.. Обосновано роль территориальных единиц в качестве участников

процесса экономического развития страны и в качестве разработчиков научных и образовательных традиций. Обсуждение проблем территориальных инновационных центров привело к выводу, что развитие стратегии инновационной деятельности на территориальном уровне может привести к генерации знаний и формированию национальной инновационной системы.

Ключевые слова: административная территория, местное самоуправление, инновации, экономика основанная на знаниях, исследовательская территория, институциональное.

THE INSTITUTIONAL ISSUES OF UNITED RESEARCH TERRITORY DEVELOPMENT

TS.J. Karapetyan

Summary

The necessity of assistance to the formation of innovations' support system has been presented, the role of knowledge based economy in current situation. The role given to territorial units has been observed as the participant of country's economic development process and developer of scientific and educational traditions. The issues of territorial innovative centers has been discussed and concluded that the development of innovative activities strategy on territorial level can result in generation of knowledge and formation of national innovative system.

Key words: administrative territory, local self-government, innovation, knowledge based economy, research territory, institutional.

HUMAN CAPITAL REPRODUCTION ISSUES IN MIGRATION FRAMEWORK

R.L. Markosyan

Human capital reproduction process is becoming actual on period of active mobility labor forces and integrations inter regional markets. The process of formation scientific based economy is bringing new challenges for using efficiently human capital, making optimal investments in relation to enlargement skills, ability and quality assurance of employment forces. However, the human capital reproduction process includes migration impact risks, concerning to manpower drain from developing countries, reevaluations of employability demands in labor markets, which is more obvious in Armenia. In fact, the country has faced tremendous social economy changes in post independence period. The substantial changes in economic and social sphere of early 1990's had a direct impact on human capital reproduction process through demographic situation in Armenia.¹

The advantages of such an approach to human capital index calculation are obvious, since it considers many factors: starting from human capital formation, ending with further investments in it. At the same time, in terms of assuring return on human capital, an individual's biophysical abilities, social interrelations, livelihood and development opportunities, characteristics forming mental results acquire a decisive role. Therefore, it is necessary to present the true value of human capital not only in economic-statistical, but also in social context, where not only the individual, but also social usefulness of human capital accumulation will be outlined.

As we know, the World Economic Forum regularly launches ranking of human capital, which reflects quantitative measurements of accumulated human capital in different countries from the perspective of economic growth, stability and competitiveness of these countries. In the

¹ Marzpanyan H., Tshughuryan A., //Migration Risks Influence on Human Capital Reproduction, Armenians around the World, Peter Lang Edition, Volum 20, Francfurt on Main, 2015

first dozen of this scale are mainly the developed European countries, and Switzerland is in the first place.²

According to the report in 2013, Armenia occupies the 73rd place among 122 countries (see appendix 2, table1), which is mostly conditioned by the high level of unemployment in the country, as well as weak competitive positions in business opportunities field, as compared to the developed countries. Comparative analysis shows that even among developing countries Armenia has not yet succeeded to occupy competitive position in such a field as ultimate realization of business capacities, which, naturally, creates some migration risks in the country.

However, in the case of Armenia, there are certain peculiarities. Thus, in stressing the role of human capital, a more positive role can be given to such an external factor as the availability of the Diaspora. Thus, in the mid-1990s there was an inflow of Armenian businessmen, who brought to Armenia a new culture of business organization, behavior peculiar to Western entrepreneurship, which was somewhat instructive for local businessmen.³

Surveys among experts indicate that this positive phenomenon mostly touches grand businesses and large capital. Whereas the representatives of small and medium enterprises in the Diaspora, not being familiar with the current business environment, economic relations and behavioral norms, often face serious risks of bankruptcy.

The realization of an individual's human capital occurs in the area of employment. In employment relations, the economic interpretations of the behavior of «homo economicus» are based on the assumption that he always strives to make rational decisions. For example: to the question "How are feminine professions created?" economists answer through bringing theoretical justifications of functional nature, such as a woman is not sure of the continuity of her employment, hereby she is involved in such field which makes it less harmful to terminate working experience. Sociologists will most likely focus on changes in the perception of professional orientation, social status, career, autonomy and financial

² The Human Capital Report, 2013, World Economic Forum

³ Hergnyan M., Makaryan A., //“The Role of the Diaspora in Generating Foreign Direct Investments in Armenia” ,Yerevan, 2006

independence of the material of women. In developed countries, the increase in the part-time employment scale is, from the economic perception, linked to the feminization of labor, which is also seen in the orbit of rationalism in sense that partial employment is more suitable for women who voluntarily choose not full working day. A Study of Contacts and Careers. Cambridge, Harvard University Press), which is more characteristic of the modern Armenian reality. He has stressed the way through which information on vacant positions is disseminated and which, in fact, is not less important in choosing a job than its specific characteristics.

Information gathering is not purely technical process and is not related only to individual actions. Empirical studies indicate that people who either found or changed their job mostly used the information from unofficial sources. In Armenia, personal contacts in club, workplace or café play a more important role than formal announcements on vacant positions or applications sent to the employers. Moreover, formal announcements, for example, in mass media, pass through filters of informal discussions and become widely acceptable only after certain “clarifications”.

It is noteworthy that people who used informal sources are more satisfied with the job they found, as well as the income. Moreover, the most effective are so-called distant connections, rather than close links with relatives and friends. If weak connections enable to significantly expand the scope of information, strong connections are becoming more effective in emergency situations when time is limited.

Hereby, success in finding a job is mainly based on the social position of an individual. In other words, apart from investments in the human capital it is necessary to invest in your own reputation and relations. An individual's social network structure, together with his professional qualification becomes an important non-economic factor for advancing in the labor market.

Similarly, when taking human capital as a factor for migration, the feasibility of the pure neo-classical economic interpretations may be doubted as well/ especially taking into account the current situation in Armenia/. Thus, neo-classical approach to labor migration in different

countries is reflected in differences between labor supply and demand, assuming that in light of such substantial differences labor resources migrate from one country to another, seeking a higher return on human capital. It is also assumed that migration is an integral element of the household strategy, the family members seek to increase their income through the migration of one of them and minimize the economic risks. Such a strategy explains the money transfers of labor migrants; migrants who are sending money from the host country to their homeland, in order to support the family.⁴

Of course, the neo-classical approach greatly helped the Armenian researchers to identify the causes of forced labor migration in the first decade of independence, when households were trying to survive an unprecedented economic recession. However, life has shown that migration conditioned by purely economic factors is only characteristic for that period of migration. In the 21st century, the migration behavior of the Armenian population does not fit into the framework of purely neo-classical approach, that is, changes in migration scales occur even when there is no link with economic factors. Therefore, the research methodology to the issue of migration should be based on the Circular cumulative causation theory by G.Myrdal. Here a key role is given to the social-networking and structural-historical approach in the analysis of migration. These approaches were first of all applied to explain the migration behavior of Armenians in particular: for centuries, lacking their own state and surrounded by large empires, Armenians were forced to migration as a means of survival. Armenians maintained the migration tradition and applied the labor migration model in the Soviet Union as well. Moreover, a new tradition of “labor migration” was formed.

Research shows that this tradition of labor migration reflected in almost ubiquitous labor migration of men has become a universal means of family livelihood, especially in the villages and small towns of the country. Many young men living in these areas did not make serious effort to find a job in Armenia. They simply left their homeland either for a short period of time, or permanently, acting just the same way as their

⁴ Migration and Development Armenia Country Study, 2009, International Labor Organization

fathers and grandfathers did. Thus, relying on migration as a vital means of solving problems is not a new phenomenon, over time it developed into cultural - behavioral stereotype reinforced by centuries of experience.

However, currently the behavior of only 1/3 of young migrants can be explained through such family strategy. The weakening link between migration processes and family strategy is conditioned by the modern stereotypes emerging among the Armenian young people; the migration policy of some great states promotes these stereotypes. In particular, the relatively favorable employment conditions for graduates of foreign universities in the host country have become one of the main factors in the new migration policy. The influence of this factor is especially vivid in the Central and Eastern European countries.

Hereby, if before migration had exceptionally socio-economic basis, then in modern era it also solves some geopolitical issues, also establishing certain connection with the state security issue⁵.

When analyzing the social motives for migration in Armenia or evaluating the efficiency of human capital use, it is impossible to neglect the impact of gender risks, which are evident in, for example, imbalance between employment and labor market demand. One of the numerous evidences that can prove the existence of this risk is the following: if the number of women and men among hired staff does not differ significantly (46% female, 54% male), then men's share among employers (80%) is much higher.

In RA employment field, horizontal discrimination in most cases is explained by gender preference. In fact, a more vivid manifestation of gender imbalance is vertical gender discrimination, when even in the fields of economy with rather "feminine character" the positions occupied by women and average salary are significantly lower as compared to men. Despite the fact that a woman's educational qualifications and professional training in such branches are better, the functioning institutions are mostly headed by men.

The latter is particularly eye striking in the healthcare system. Thus, currently the total number of doctors in Armenia is around 13200, of

⁵ Geopolitics, SPb, "Petersburg", 2007

which 8850 (66.5%) are women.⁶ Studies reveal that only 15 of the 100 medical centers have woman directors. If we also consider the fact that the lower layers of medical care system (caregivers, assistants, orderlies etc) are almost entirely occupied by women who are paid less, it will become clear that in the healthcare system income differentiation is intolerably high with a clearly manifested vertical discrimination characteristic. The picture is almost the same in public administration and local self-government bodies, industrial enterprises, service sector, financial-banking system.

Moreover, significant difference in the average monthly net income is formed and maintained in Armenia: women's average monthly net income in 2011-2012 made up 63% of men's net income. The average salary of hired men was 131293 AMD, the salary of women- 84992 AMD, the income of men employers exceeded that of women by 23%, and the income of self-employed men was almost twice as high as compared to women.

It is also necessary to note that in the RA labor market and employment sector specific problems have arisen for men as well. Hereby, since men are more widely involved in seasonal work (housing construction, road construction, agriculture etc), due to termination of temporary or seasonal work the number of unemployed men reaches 80%. We face the same statistics regarding individuals who died or got injured because of an accident at workplace.

Repeated sociological surveys with the method of interview amongst unemployed people registered in various territorial employment centers reveal that gender risks of having (lacking) a job most frequently dwell from the peculiarities of human capital use, which is reflected in different manifestations of human behavior.

First, it is necessary to note that absolute majority of people who apply to territorial employment centers are women (70% of the officially registered unemployed people) which is based not only on their wish to find a job, but also their willingness to receive unemployment pension, make use of certain privileges (including family subsidy and opportunities

⁶ www.armstat.am

for humanitarian aid) and, hereby, have certain investment into the family budget.

It is noteworthy that the vast majority of participants in training courses (90%) are also women, which proves that they are more active in the labor market, also flexible and adaptable. At the same time, it is obvious that in society the stability of values is displayed with negative effect, as well as the impact of migration risks induce women to stay within the limits of traditional lifestyle. In addition, loss of a job and, hence, long-term unemployment of women in the labor market with little competition opportunities leads to significant loss in their individual human capital.

Studies also show that among unemployed men and women in different age groups and with different educational backgrounds, there are several models of similar behavior depending on the value perception of previous job. Thus, a part of the unemployed take the previous job as merely a source of welfare. With their pragmatic behavior, these unemployed are determined in decreasing their personal risks. They are inclined to such ratio of expenditures and outputs which pre-determines their activeness in finding a job, willingness to get a new specialty through a training, wish to do business, to be involved in seasonal or temporary work. Unemployed with indifferent behavior show quiet or indifferent attitude towards previous work. Lacking any professional claims, representatives of the following group experience lower level of individual and group risks, and they have greater opportunities for relative luck or finding a job. The majority of people with professional behavior type, look for a job in the profession dwelling from the considerations of self-esteem and professional status. For that reason, the risks of using individual capital and prospects of finding a job are lower in this group of unemployed, but the timelines are longer than in other categories of interviewees.

The monitoring of the mentioned “structural strategies” of behavior through separating unemployed into groups allows to conclude that each behavior model can be planned dwelling from the viewpoint of reducing the risk of personal human capital use, also focusing on the readiness to acquire new professions. Anyway, imbalance between the labor market,

employment and income is a serious factor for extra migration risks. All the main factors bringing to emigration (poverty, unemployment, low income, lack of confidence) are in any way based on gender discrimination and result in inefficient use of human capital.

Key words: human capital formation, labor market, labor migrants, migration risks, gender issues in migration

Literature:

1. The Human Capital Report, 2013, World Economic Forum
2. Armenian Statistical Service, //www. armstat.am
3. Migration and Development Armenia Country Study, 2009, International Labor Organization
4. Geopolitics, SPb, “Petersburg”, 2007
5. Marzpanyan H., Tshughuryan A., //Migration Risks Influence on Human Capital Reproduction, Armenians around the World, Peter Lang Edition, Volum 20, Francfurt on Main, 2015
6. Hergnyan M., Makaryan A., //“The Role of the Diaspora in Generating Foreign Direct Investments in Armenia”, Yerevan, 2006

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

**Ռ.Լ. Մարկոսյան
Ամփոփում**

Մարդկային կապիտալի վերարտադրությունը սերտ առնչություն ունի աշխատանքային միգրացիայի հետ: Մի կողմից, մարդկային կապիտալի ձևավորմանն ուղղվում են հանրային և մասնավոր էական ֆինանսական ռեսուրսներ, մյուս կողմից, աշխատաշուկայի թերպահանջարկի հետևանքով տեղի է ունենում ձևավորված կապիտալի փոշիացում: Հոդվածում քննարկվում են միգրացիոն մի շարք ռիսկերի կանխարգելման ուղիներ, որոնք ազդում են մարդկային կապիտալի վերարտադրության վրա:

Բանալի բառեր. մարդկային կապիտալի ձևավորում, աշխատաշուկա, աշխատանքային միգրանտներ, միգրացիոն ռիսկեր, միգրացիոն գենդերային հիմնախնդիրներ:

ПРОБЛЕМЫ ВОСПРОИЗВОДСТВА ЧЕЛОВЕЧЕСКОГО КАПИТАЛА В КОНТЕКСТЕ МИГРАЦИИ

Р. Л. Маркосян

Резюме

Формирование человеческого капитала тесно взаимосвязано с трудовой миграцией. С одной стороны, для формирования человеческого капитала израсходуются существенные государственные и частные финансовые ресурсы, с другой стороны, исходя из неудовлетворительного спроса рынка труда, происходит распыление сформированного капитала. В статье обсуждаются пути предотвращения миграционных рисков, которые влияют на формирование человеческого капитала.

Ключевые слова: формирование человеческого капитала, рынок труда, трудовые мигранты, риски миграции, гендерные проблемы миграции.

INCOME TAXATION FRAMEWORK IN USA AND RA

A.G. Juguryan , J.A. Tadevosyan

Personal Income Tax in USA

The major sources of federal tax revenue are individual income taxes, Social Security and other payroll taxes, corporate income taxes, excise taxes, and estate and gift taxes. In FY2014, individual income taxes accounted for 46% of total federal revenue. Social Security taxes accounted for 35%. Corporate income taxes accounted for 10% while excise taxes accounted for 3%. Estate and gift, customs, and miscellaneous taxes accounted for the remaining 6% of total revenue. Over time, the corporate income tax has become much less important as a revenue source while Social Security taxes have provided a larger share of total revenues.

The individual income tax is the major source of federal revenues, followed closely by Social Security and other payroll taxes. As a revenue source, the corporate income tax is a distant third. Estate and gift and excise taxes play only minor roles as revenue sources in US.

The individual income tax is based on earnings individuals accrue from a variety of sources. Included in the individual income tax base are wages, salaries, tips, taxable interest and dividend income, business and farm income, realized net capital gains, income from rents, royalties, trusts, estates, partnerships, taxable pension and annuity income, and alimony received. Although the total tax contribution of GDP in Armenia is higher, than in US (because of higher US GDP combination), steel income tax contribution in US is more (see figure 1), and that is for the reason of efficient national taxation system.

The tax base is reduced by adjustments to income, some interest paid on student loans and higher education expenses, contributions to health savings accounts, and alimony payments made by the taxpayer. This step of the process produces adjusted gross income (AGI), which is the basic measure of income under the federal income tax. Deductions from the income tax base that result in an individual's AGI are also known

deductions. These deductions are available to all taxpayers, whether the taxpayer chooses to take the standard deduction or itemize deductions.

The tax base is further reduced by either the standard deduction or individuals' itemized deductions. Itemized deductions are allowed for home mortgage interest payments, state and local income taxes, state and local property taxes, charitable contributions, medical expenses in excess of 10% of AGI, and for a variety of other items. For taxable years 2004 through 2013, at the election of the taxpayer, state and local sales taxes can be deducted as an alternative to state and local income taxes.




Figure 1 Income tax contribution trend in US and RA⁷

The tax base is reduced further by subtracting personal and dependent exemptions. Exemptions are a fixed amount to be subtracted from AGI. Exemptions are allowed for the taxpayer, the taxpayer's spouse, and each dependent. For taxpayers with high levels of AGI, the personal and dependent exemptions are phased out.

The income tax system is designed to be progressive, with marginal tax rates increasing as income increases. At a particular marginal tax rate, all individuals, regardless of their level of earnings, pay the same tax rate on their first dollar of taxable income. Once a taxpayer's income

⁷ Sources: <http://data.worldbank.org/indicator/GC.TAX.TOTL.GD.ZS> <http://armstat.am>

surpasses a threshold level placing them in a higher marginal tax bracket, the higher marginal tax rate is only applied on income that exceeds that threshold value. Currently, the individual income tax system has seven marginal income tax rates: 10%, 15%, 25%, 28%, 33%, 35%, and 39.6%.⁸

These marginal income tax rates are applied against taxable income to arrive at a taxpayer's gross income tax liability.

After a taxpayer's tax liability has been calculated, tax credits are subtracted from gross tax liability to arrive at a final tax liability. Major tax credits include the earned income tax credit, the child tax credit, education tax credits, and the credit for child and dependent care expenses.

Not all income is subject to the marginal income tax rates noted above. Long-term capital gains—that is, gain on the sale of assets held more than 12 months—and qualified dividend income are taxed at lower tax rates. Net investment income is also subject to an additional tax for taxpayers above certain income thresholds.

Personal Income Tax in Armenia

In conformity with the new RA law “On Income Tax”, which has entered into force since January 01, 2013, the income tax and the compulsory social security payments have been replaced with a new unified tax.

In the Republic of Armenia both resident and non-resident physical persons are entitled to pay income tax. An individual shall be considered a resident if during any twelve month period starting or ending in a tax year (from January 1 to December 31 inclusive) he/she has been residing in the Republic of Armenia for a total duration of 183 days or more, or whose centre of vital interests is in the Republic of Armenia.

The income tax is a direct tax paid to the State budget of the Republic of Armenia by taxpayers (in cases as prescribed by law through the tax agent – an organization or individual entrepreneur or notary) in the manner, at the amounts and within the timeframe as envisaged by this Law. According to Armenian tax legislation, income taxpayers are natural persons, including individual entrepreneurs and notaries who are residents of the Republic of Armenia (hereinafter referred to as residents) and natural persons, including individual entrepreneurs and notaries who are

⁸ Internal Revenue Service, American Tax payer Relief Act, 2013

non-residents of the Republic of Armenia (hereinafter referred to as non-residents) shall be deemed as income taxpayers (hereinafter taxpayers). In the meaning of law a resident is considered to be the natural person who has resided in the Republic of Armenia for a total of 183 or more days during the course of the tax year at any stage of the 12-month period which starts and ends during the fiscal year (from January 1 through December 31) or who has the center of vital interests located in the Republic.⁹

Employers are required to calculate income tax on a monthly basis from their employees' salaries and transfer these amounts to the state budget, no later than the 20th day of the month following the month of calculation.

The employer must prepare and submit to the tax authorities a monthly report on the income paid to employees (individuals) and income taxes withheld and remitted. The monthly report should be submitted no later than by 20th of the second month. Taxpayers (namely who were engaged in business activities) have to file an Annual Income Calculation of business income and expenses by 15 April in the following year.

Income Tax Calculation Road Map

Income tax calculation is taking several steps, which is requiring simple road mapping process. A process map is the output of the mapping technique.¹⁰ This is diagram or flow chart that includes blocks and arrows, which depict the process from beginning to end. Each block represents an action within process. Income tax calculation road map in taxation practice in US is presented by figure 2. According to Armenian tax legislation, this process is looks like more uncomplicated (see figure 3).

Individual Income tax calculation framework in USA

Gross income includes all income earned or received from whatever source. This includes salaries and wages, tips, pensions, fees earned for services, price of goods sold, other business income, gains on sale of other property, rents received, interest and dividends received, alimony received, proceeds from selling crops, and many other types of income. Some income, however, is exempt from income tax. This includes interest on municipal bonds.

⁹ Rishma Vedd, Tax Accounting US-RA Comparative Interpretation, Agrarian Science, 2012, #4

¹⁰ Duncun M., Issues of Income taxation, New York, FinACC pub. House, 2012




Figure 2 Individual Income Tax Calculation Road Map in US¹¹

¹¹ Composed by authors.

Adjustments: (usually reductions) to gross income of individuals are made for alimony paid, contributions to many types of retirement or health savings plans, certain student loan interest, half of self-employment tax, and a few other items. The cost of goods sold in a business is a direct reduction of gross income.

Personal deductions: Individuals are allowed several non business deductions. A flat amount per person is allowed as a deduction for personal exemptions. Taxpayers are allowed one such deduction for themselves and one for each person they support.

Standard deduction: In addition, individuals get a deduction from taxable income for certain personal expenses. Alternatively, the individual may claim a standard deduction. For 2014, the standard deduction is \$6,200 for single individuals, \$12,400 for a married couple, and \$9,100 for a head of household.

Itemized deductions: Those who choose to claim actual itemized deductions may deduct the following, subject to many conditions and limitations: medical expenses in excess of 7.5% of adjusted gross income, state, local, and foreign taxes, home mortgage interest, contributions to charities, losses on non business property due to casualty, and deductions for expenses incurred in the production of income in excess of 2% of adjusted gross income.

Tax credits: All taxpayers are allowed a tax credit for foreign taxes and for a percentage of certain types of business expenses. Individuals are also allowed credits related to education expenses, retirement savings, child care expenses, and a credit for each child. Each of the credits is subject to specific rules and limitations. Some credits are treated as refundable payments.

Tax returns: Individuals must file income tax returns in each year their income exceeds the standard deduction plus one personal exemption, or if any tax is due. Other taxpayers must file income tax returns each year. These returns may be filed electronically. Generally, an individual's tax return covers the calendar year. Corporations may elect a different tax year. Most states and localities follow the federal tax year, and require separate returns.

Tax payment: Taxpayers must pay income tax due without waiting

for an assessment. Many taxpayers are subject to withholding taxes when they receive income. To the extent withholding taxes do not cover all taxes due, all taxpayers must make estimated tax payments.

Tax returns may be examined and adjusted by tax authorities. Taxpayers have rights to appeal any change to tax, and these rights vary by jurisdiction. Taxpayers may also go to court to contest tax changes. Tax authorities may not make changes after a certain period of time (generally 3 years).

Individual Income tax calculation framework in Armenia

In process of calculating incomes of taxpayers, the income tax shall be withheld (levied) by the tax agent. On a monthly basis, by the 20th day of the next month, tax agents must submit exclusively electronically to the tax office a summary income tax return in the defined format which shall contain the following:¹²

- personal data (first and last names, patronymic, residence (registration) address, social security card number) of the natural person receiving income from the given tax agent (except for those receiving only passive incomes), incomes calculated for these individuals, income tax withholdings, and for persons participating in the fully-funded pension system, also calculated and withheld fully-funded pension contributions, as well as other information identified in Article 7 of the Law “On Personified Record Keeping on Income Tax and Funded Contributions”;
- brief information from the given tax agent about passive income calculated by the tax agent exclusively for the natural persons gaining passive incomes and the income tax withheld from these incomes.¹³

When determining the tax base of income tax on business activities, apart from incomes deducted, the gross income shall be deducted, based on the declaration on annual income filed by the natural person, by the amount of costs which are directly related to the incomes gained from business activities and execution of civil-legal contracts and are supported

¹² Khachatryan N., Personal income tax accounting, library for accountant, # 17, “Edit Print”, Yerevan 2014

¹³ “Income Tax Law” of RA, 2011

by appropriate documentation. In particular, costs included: material costs; wages and salaries and payments made equal to wages and salaries; amortization allowances; rentals; other expenses.




Figure 3 Individual Income Tax Calculation Road Map in Armenia¹⁴

Conclusions

US-Armenia income tax framework comparative analyzing is showing, that still in Armenia is actual tax administration reform initiatives in following ways: increasing the number and volume of electronic services provided by the tax authorities and expand electronic reporting system for voluntary payment (assessment) of taxes, making structural reforms and improvements in higher and local tax bodies, improving tax legislation based on the best international practice, combat against tax deceptions and tax evasion, enhancing trust and transparency and improve collaboration between taxpayers and government.

Key words: taxable income, deductions, tax contribution in GDP, gross income, adjusted income, tax credits

¹⁴ Composed by authors.

Literature

1. “Income Tax Law” of RA, 2011
2. World Bank, <http://data.worldbank.org/indicator/GC.TAX.TOTL.GD.ZS>
3. Armenian Statistical Service, <http://armstat.am>
4. Internal Revenue Service, American Tax payer Relief Act, 2013
5. Duncun M., Issues of Income taxation, New York, FinACC pub. House, 2012
6. Rishma Vedd, Tax Accounting US-RA Comparative Interpretation, Agrarian Science, 2012, #4
7. Khachatryan N., Personal income tax accounting, library for accountant, # 17, “Edit Print”, Yervan 2014
8. Juguryan A., Tax accounting, (manual), “Edit Print”, Yerevan 2014

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՐԿՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ԱՄՆ-ՈՒՄ ԵՎ ՀՀ-ՈՒՄ

Ա.Գ. Ճուղուրյան, Զ.Ա. Թադևոսյան
Ամփոփում

ՀՀ հարկային համակարգը հիմնարար հիմքեր ունենալուն զուգահեռ, նաև համեմատած ԱՄՆ-ի՝ պարզեցված մեխանիզմով է գործում: Սակայն դրա հետ մեկտեղ, լինելով համեմատաբար բարդ, ԱՄՆ-ում հարկային համակարգը առավել ճկուն է և կրում է մի շարք դրական կողմեր, որոնք պետք է հաշվի առնվեն Հայաստանի հարկային համակարգի հետագա բարեփոխումների շրջանակում: Հարկվող եկամտից նվազեցումների ԱՄՆ փորձի կիրառումը լայն հնարավորություններ կընձեռնի հարկատուներին՝ իրենց հարկային պարտավորությունների ձևավորումը արդյունավետ պլանավորելիս: Հարկային կրեդիտների միջոցով պարտավորությունների հաշվանցման ԱՄՆ փորձի ներդրումը նույնպես կարող է արդյունավետ միջոց հանդիսանալ եկամտուների հարկման բարելավման գործընթացում: Այս նկատառումներով, հողվածում կատարվում է ԱՄՆ-ՀՀ եկամտային հարկի հարկման համեմատական վերլուծություն:

Բանալի բառեր. հարկվող եկամուտ, նվազեցումներ, հարկերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, համախառն եկամուտ, ճշգրտված եկամուտ, հարկային կրեդիտներ:

СФЕРА НАЛОГООБЛАЖЕНИЯ ДОХОДОВ В США И РА

А.Г. Джугурян, Дж.А. Тадевосян

Резюме

По сравнению с налоговой системой США, наряду с основополагающими принципами в Армении действует более простой механизм налогообложения. Между тем, имея более сложные черты, механизм налогообложения в США выступает более гибким и позитивным, что следует иметь в виду при дальнейшем реформировании налоговой системы Армении. Использование опыта США по налоговым вычитаниям даст широкие возможности налогоплательщикам при эффективном планировании своих налоговых обязательств. Опыт взаиморасчетов налоговых кредитов и обязательств также вносит весомый вклад в процесс налоговых реформ. В этих целях в статье проводится сравнительный анализ сфер налогообложения доходов в США и РА.

Ключевые слова: налогооблагаемый доход, вычитания, удельный вес налогов в ВВП, валовой доход, скорректированный доход, налоговые кредиты.

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԶՈՓԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Մ.Ս. Կասիմյան

ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանը և Վրաստանը, հանդիսանալով Հարավային Կովկասի երկրների միջև միջազգային տնտեսական հարաբերությունների հիմնական մասնակիցները, հայտնվեցին տարածաշրջանային նոր իրողությունների և տնտեսական ու քաղաքական նոր խնդիրների առջև, որոնք վարչահրամայական տնտեսական համակարգից դեպի անկախ պետականություն ստեղծելու ճանապարհին իրականացվող գործընթացների անմիջական հետևանքն էին:

Երկու երկրներն էլ, անկախացումից հետո անցնելով կառուցվածքային բարեփոխումների ճանապարհով, տնտեսության մեջ իրականացրել են էական կառուցվածքային փոփոխություններ՝ ձեռնամուխ լինելով անկախ պետություններին բնորոշ տարրերի կերտմանը, մասնավորապես, տնտեսական կապեր հաստատելով աշխարհի բազմաթիվ երկրների, այդ թվում նաև միմյանց հետ: Վրաստանը, լինելով Հայաստանի անմիջական հարևանը, նրա դարավոր բարեկամն ու գործընկերը, մշտապես եղել է ՀՀ արտաքին քաղաքականության առաջնահերթությունների օրակարգում: Վրաստանի հետ հաստատվել են բարիդրացիական հարաբերություններ, որոնց հետագա զարգացումը, խորացումն ու ամրապնդումը ներառվել են ՀՀ արտաքին քաղաքականության գերակայությունների շարքում:

Գաղտնիք չէ, որ ներկայումս հայ-վրացական տնտեսական համագործակցության գերակա ոլորտը հանդիսանում է արտաքին առևտուրը: Տնտեսական համագործակցությունը երկու երկրների միջև հիմնականում ներառում է տարանցման և վրացական տարածքով դեպի Հայաստան և հակառակ ուղղությամբ ապրանքաշրջանառությունն ու Վրաստանի տարածքով էներգառեսուրսների ներկրումը:

Ինչի հետ կապված էլ, Հայաստան-Վրաստան արտաքին տնտեսական հարաբերություններում մեծ նշանակություն ունի ՀՀ արտահանման և ներմուծման ծավալներում դեպի Վրաստան արտահանման

ծավալների վրա ազդող հիմնական գործոնների բացահայտումը և դրանց փոխկապվածությունների տնտեսաչափական գնահատականը: Այդ նպատակով ուսումնասիրենք վերջին ինը տարիներին ՀՀ արտահանման ընդհանուր ծավալների, այդ թվում դեպի Վրաստան արտահանման ծավալների և ՀՀ ՀՆԱ-ի ծավալների դինամիկան /տե՛ս աղյուսակ 1/:

Աղյուսակ 1

Հայաստանի արտահանման ընդհանուր և դեպի Վրաստան արտահանման ծավալները և ՀՆԱ-ի ծավալները 2005-2013թթ.[1,457-459, 477-482, 478-484, 473,476,478]

Տարիներ	Դեպի Վրաստան արտահանման ծավալները /մլն ԱՄՆ դոլար/	ՀՀ արտահանման ծավալները /մլն ԱՄՆ դոլար/	ՀՀ ՀՆԱ-ի ծավալները, ընթացիկ շուկայական գներով /մլն ԱՄՆ դոլար/
2005թ.	46.8	973.9	4900.4
2006թ.	54.6	985.1	6384.5
2007թ.	87.9	1152.3	9206.3
2008թ.	81.8	1057.2	11916.6
2009թ.	52.8	710.2	8648
2010թ.	49.0	1041.1	9260.3
2011թ.	61.9	1334.3	10142.1
2012թ.	70.9	1380.2	9958
2013թ.	85.2	1478.7	10431.1

Ուսումնասիրվող ժամանակահատվածում ՀՀ արտահանման ծավալները միջին հաշվով ավելացել են 9.9%-ով, ընդ որում, դեպի Վրաստան արտահանման ծավալները՝ 7.8%-ով, դրան զուգահեռ ՀՀ ՀՆԱ-ի ծավալներն ավելացել են 1.05 անգամ:

ՀՀ-ից Վրաստան արտահանման ծավալների վրա նշված գործոնների գնահատման նպատակով կառուցվել է բազմակի ռեգրեսիոն մոդել: Կառուցված տնտեսաչափական մոդելում արպես արդյունքային հատկանիշ ընտրվել է ՀՀ-ից Վրաստան արտահանման ծավալները

/yt/, իսկ որպես գործոնային հատկանիշներ՝ ՀՆԱ-ի ծավալները /x1t/ և ՀՀ արտահանման ծավալները /x2t/: IBM SPSS Statistics 20.0 ծրագրային փաթեթի օգտագործմամբ spss.sav միջավայրում տնտեսաչափական վերլուծության գործիքակազմի /ռեգրեսիոն մոդելավորում, Ֆիշերի դիսպերսիոն՝ F statistics վերլուծություն/ կիրառմամբ ստացվել են հետևյալ արդյունքները:

Աղյուսակ 2

ՀՀ-ից Վրաստան արտահանման ծավալների էկոնոմետրիկ վերլուծության արդյունքները

Ցուցանիշներ	Արդյունքներ
Մոդելի տեսքը [2, 121-125]	$\hat{y}_t = 4.806 + 0.004 x_{1t} + 0.023 x_{2t}$
Բազմակի կոռելյացիայի գործակիցը	$R = 0.738$
Բազմակի դետերմինացիայի գործակիցը [3, 74-75]	$R^2 = 0.545$
Մոդելի նշանակալիության գնահատականը [4, 104]	$F = 6.5$
$F(\alpha=0.05; k1=2; k2=6) = 5.14$	

Աղյուսակ 2-ում ներկայացված արդյունքներից երևում է, որ մնացած հավասար պայմանների առկայության դեպքում ՀՀ արտահանման ծավալների յուրաքանչյուր մեկ միլիոն ԱՄՆ դոլարով ավելացմանը զուգահեռ ՀՀ-ից Վրաստան արտահանման ծավալներն ավելանում են մինչև 2,3%-ով՝ 23,000.00 ԱՄՆ դոլարով, իսկ ՀՀ ՀՆԱ-ի ծավալների յուրաքանչյուր մեկ միլիոն դոլարով ավելացման հետ զուգահեռ ՀՀ-ից Վրաստան արտահանման ծավալներն ավելանում են մինչև 0,4%-ով՝ 4,000.00 ԱՄՆ դոլարով: Ստացված արդյունքները փաստում են, որ ընտրված գործոնները 95% հավաստիությամբ արտացոլում են դեպի Վրաստան արտահանման ծավալների փոփոխությունները և ուսումնասիրվող տարիներին ՀՀ-ից Վրաստան արտահանման ծավալների տատանումների շուրջ 54.5%-ը պայմանավորված է մոդելում ընդգրկված գործոնների համատեղ տատանումներով, իսկ մնացած 45.5%-ը՝ այլ և պատահական գործոններով:

ՀՀ և Վրաստանի միջև արտաքին ապրանքաշրջանառության ամբողջական վերլուծության համար կարևորվում է նաև ՀՀ ներմուծ-

ման ծավալներում Վրաստանից ներմուծման ծավալների գնահատականը և դրա վրա ազդող հիմնական գործոնների բացահայտումը: Այդ նպատակով նույն տնտեսաչափական վերլուծության միջոցով ուսումնասիրենք ՀՀ-ի ներմուծման ընդհանուր և Վրաստանից ներմուծման ծավալների և Վրաստանի ՀՆԱ-ի ծավալների դինամիկան նույն ժամանակաշրջանում:

Աղյուսակ 3

Հայաստանի ներմուծման ընդհանուր և Վրաստանից ներմուծման ծավալները և Վրաստանի ՀՆԱ-ի ծավալները 2005-2013թթ. [5]

Տարիներ	Վրաստանից ՀՀ ներմուծման ծավալները /մլն ԱՄՆ դոլար/	ՀՀ ներմուծման ծավալները /մլն ԱՄՆ դոլար/	Վրաստանի ՀՆԱ-ի ծավալները, ընթացիկ շուկայական գներով /մլն ԱՄՆ դոլար/
2005թ.	19.2	1801.7	6411.1
2006թ.	35.5	2191.6	7761.9
2007թ.	46.3	3227.8	10172.3
2008թ.	49.4	4426.1	12800.5
2009թ.	40.9	3321.1	10767.1
2010թ.	54.3	3748.9	11636.5
2011թ.	60.2	4145.3	14438.5
2012թ.	48.9	4261.2	15846.8
2013թ.	65.8	4385.9	16139.9

Ուսումնասիրվող ժամանակահատվածում ՀՀ ներմուծման ծավալներն ավելացել են շուրջ 1.11 անգամ, ընդ որում՝ Վրաստանից ներմուծման ծավալները՝ 16.6%-ով, դրան զուգահեռ Վրաստանի ՀՆԱ-ի ծավալներն ավելացել են 1.12 անգամ:

Վրաստանից ՀՀ ներմուծման ծավալների վրա նշված գործոնների գնահատման նպատակով ևս կառուցվել է բազմակի ռեգրեսիոն մոդել: Կառուցված տնտեսաափական մոդելում որպես արդյունքային հատկանիշ ընտրվել է Վրաստանից ՀՀ ներմուծման ծավալները /յտ/, իսկ որպես գործոնային հատկանիշներ՝ Վրաստանի ՀՆԱ-ի ծավալները:

րը /x1t/ և ՀՀ ներմուծման ծավալները /x2t/: Տնտեսաչափական վերլուծության գործիքակազմի էկոնոմետրիկ վերլուծության արդյունքները ներկայացված են ներքոնշյալ աղյուսակում:

Աղյուսակ 4

Վրաստանից ՀՀ ներմուծման ծավալների էկոնոմետրիկ վերլուծության արդյունքները

Ցուցանիշներ	Արդյունքներ
Մոդելի տեսքը	$\hat{y}t=1.934 + 0.002 x1t + 0.008 x2t$
Բազմակի կոռելյացիայի գործակիցը	$R = 0.893$
Բազմակի դեպրեմինացիայի գործակիցը	$R^2 = 0.797$
Մոդելի նշանակալիության գնահատականը	$F = 11.85$
$F(\alpha=0.05; k1=2; k2=6) = 5.14$	

Աղյուսակ 4-ում ներկայացված արդյունքներից երևում է, որ մնացած հավասար պայմաններում ՀՀ ներմուծման ծավալների յուրաքանչյուր մեկ միլիոն ԱՄՆ դոլարով ավելացմանը զուգահեռ Վրաստանից ներմուծման ծավալներն ավելանում են մինչև 0,8% կամ 8,000.00 ԱՄՆ դոլարով, իսկ Վրաստանի ՀՆԱ-ի ծավալների յուրաքանչյուր մեկ միլիոն դոլարով ավելացման հետ զուգահեռ Վրաստանից ներմուծման ծավալներն ավելանում են մինչև 0,2% կամ 2,000.00 ԱՄՆ դոլարով: Ստացված արդյունքների համաձայն, ուսումնասիրվող տարիներին Վրաստանից Հայաստան ներմուծման ծավալների տատանումների շուրջ 79.7%-ը պայմանավորված է մոդելում ընդգրկված գործոնների համատեղ տատանումներով, իսկ մնացած 20.3%՝ այլ և պատահական գործոններով:

Կատարված տնտեսաչափական վերլուծության արդյունքների համաձայն, կառուցված երկու ռեգրեսիոն մոդելները կարող ենք համարել նշանակալի: Մասնավորապես, Հայաստանի և Վրաստանի արտաքին ապրանքաշրջանառության ծավալների էկոնոմետրիկ վերլուծության արդյունքում Վրաստանից Հայաստան ներմուծման ծավալներ-

րի վրա մակրոտնտեսական ցուցանիշների ազդեցությունն ավելի նշանակալի է, քան Հայաստանից Վրաստան արտահանման ծավալների վրա, ինչի մասին վկայում են ստացված դետերմինացիայի և F չափանիշի փաստացի արժեքները:

Բանալի բառեր. տնտեսաչափական գնահատական, առևտրատնտեսական համագործակցություն, արտահանում, ներմուծում, մակրոտնտեսական ցուցանիշ, ազդեցություն:

Գրականություն

1. ՀՀ Վիճակագրական տարեգիրքը 2009 /589 էջ/, 2011 /624 էջ/, 2013 /598 էջ/, 2014 /606 էջ/
2. К. Доугерти, “Введение в эконометрику”, Москва – 2004. Инфра-М, 465 стр
3. Магнус Ян, Катышев П. К., Пересецкий А. А., - Эконометрика. Начальный курс, Москва – 2004, 503 стр.
4. Кремер Н. Ш., Путко Б. А., - Эконометрика, Москва – 2003. 272 стр.
5. URL http://geostat.ge/index.php?action=page&p_id=137&lang=eng, մուտքի ամսաթիվ՝ 09.03.2015թ.

ЭКОНОМЕТРИЧЕСКАЯ ОЦЕНКА АРМЯНО – ГРУЗИНСКОГО ТОРГОВО-ЭКОНОМИЧЕСКОГО СОТРУДНИЧЕСТВА

М.С. Касимян

Резюме

Объективные закономерности развития мирового хозяйства доказывают, что дальнейшее развитие и экономический рост всех стран мира в основном обусловлены тем, как глубоко они внедрены в международные экономические отношения.

В этой статье приведена значимость экономического сотрудничества Армении и Грузии и в связи с этим автор подчеркивает необходимость дальнейшего развития торгово-экономического сотрудничества двух стран и дает эконометрическую оценку основных макроэкономических показателей, которые влияют на дальнейшее развитие торговых отношений этих двух стран.

Ключевые слова: эконометрическая оценка, торговое сотрудничество, экспорт, импорт, макроэкономический показатель, влияние.

ECONOMETRIC ESTIMATION OF ARMENIAN-GEORGIAN TRADE-ECONOMIC COOPERATION

M.S. Kasimyan

Summary

World economic development objective regularities prove that world's further development and economic growth are largely conditioned by world integration and globalization processes. In order to be deeply involved in world integration processes countries at first cooperate with each other within regional integration processes, having a great opportunity to expand their further cooperation in future. There is introduced the necessity of Armenian-Georgian economic cooperation and, in this regard, author emphasizes the urgency of further development of the trade- economic cooperation between these two counties and provides the econometric estimate of the main macroeconomic indicators, which influence on the further development of trade relations between these two countries.

Key words: econometric estimation, trade cooperation, export, import, macroeconomic indicator, influence.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Գ.Ա. Ավագյան

Ներկայում միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացումը պայմանավորող հիմնական գործոնները՝ երկրների փոխկապվածության աճը, տնտեսական կյանքի միջազգայնացման խորացումը, տնտեսության բացության մակարդակի մեծացումը, գլոբալացումը և գլոբալ մրցակցության աճը, կայուն և հավասարակշիռ զարգացում ապահովելու նպատակ հետապնդող միջազգային ու տարածաշրջանային կազմակերպությունների ձևավորումը, վերազգային կորպորացիաների գործունեության ընդլայնումը, միջազգային տրանսպորտային ցանցի կատարելագործումը, կոմունիկացիաների, բարձր տեխնոլոգիաների ինտենսիվ զարգացումը, միջազգային առևտրային և ֆինանսական համակարգերի ձևավորումը, երկրների քաղաքական հետաքրքրությունները, տանում են նրան, որ երկրները սեփական ռեսուրսներով միայնակ չեն կարող դիմակայել համաշխարհային տնտեսության մարտահրավերներին, նամանավանդ, որ դրանք վերջին տասնամյակում դարձել են առավել խոցելի և ավելի հաճախ են «թակում» երկրների «դուռը»: Այս համատեքստում, լուրջ վտանգ են ներկայացնում հատկապես միջազգային և տարածաշրջանային ֆինանսատնտեսական ճգնաժամերը, որոնք շատ արագ ներթափանցում են ազգային տնտեսությունների նույնիսկ ամենակայուն աճի տեմպեր ունեցող ոլորտներ՝ զգալիորեն վնաս հասցնելով երկրի ողջ տնտեսական համակարգի բնականոն զարգացման ընթացքին: Այս առումով, կարևոր է, որ երկրներն ունենան դրանց դիմակայելու համար մշակված հատուկ ռազմավարություն, իսկ, անհրաժեշտության դեպքում, այս կամ այն ոլորտի անկումը զսպելու նպատակով ցանկացած պահի կարողանան արտաքին ֆինանսական շուկաներից ներգրավել մատչելի ֆինանսական ռեսուրսներ, այլ ոչ թե թանկ վարկային միջոցներ, որոնց հետագա սպասարկումը կարող է առաջ բերել լուրջ տնտեսական խնդիրներ և ծանր բեռ դառնալ հետագա սերունդների համար:

Մատչելի ֆինանսական ռեսուրսների ներգրավումն այսօր կարևոր խնդիր է նաև Հայաստանի համար՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջին տարիներին ՀՀ կառավարությունը անցել է արտաքին ֆինանսական միջոցներ ներգրավելու նոր քաղաքականության՝ եվրապարտատոմսերի թողարկման, որոնք աչքի են ընկնում զգալիորեն բարձր տոկոսադրույքներով, այն դեպքում, երբ առաջիկա տարիներին երկրի տնտեսական աճի վերաբերյալ բոլոր կանխատեսումներն անհամեմատ զիջում են թողարկվող եվրապարտատոմսերի տոկոսադրույքներին: Անշուշտ, դա պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջին մեկ-երկու տարիների ընթացքում կրճատվել են հատկապես էժան ֆինանսական միջոցներ տրամադրող միջազգային կազմակերպությունների կողմից տրվող վարկերի ծավալը, ինչը, կարծում ենք, Հայաստանի՝ արտաքին տնտեսական քաղաքականության նոր կուրս (ինտեգրում եվրասիական տնտեսական միությանը) որդեգրելու և միջազգային վարկանիշի նվազման արդյունք է:

Հարկ է նշել, որ ՀՀ կողմից բարենպաստ պայմաններով միջազգային վարկերի ներգրավման հեռանկարները պայմանավորված են այնպիսի կարևորագույն գործոններով, ինչպիսիք են.

1. ՀՀ արտաքին տնտեսական քաղաքականության ռազմավարությունը,
2. երկրի նկատմամբ միջազգային վստահության մակարդակը՝ որպես հուսալի տնտեսական գործընկերոջ,
3. միջազգային վարկանիշային կազմակերպությունների կողմից Հայաստանին տրվող գնահատականները,
4. միջազգային տնտեսական գործընթացներում ՀՀ ներգրավվածության աստիճանը,
5. ՀՀ կառավարության և կենտրոնական բանկի կողմից ստանձնած արտաքին վարկային պարտավորությունների պատշաճ կատարման գործընթացը՝ թե՛ դրանց ժամանակին սպասարկման, և թե՛ միջազգային վարկային համաձայնագրերով նախատեսված նպատակների իրագործման տեսանկյունից,
6. ՀՀ ֆինանսաբանկային համակարգի կայուն զարգացման տեմպերը,
7. ներքաղաքական կայունությունը,

8. երկրում ժողովրդավարական արժեքների ներդրման, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մակարդակը, կոռուպցիայի կրճատմանն ուղղված քայլերի իրականացումը և այլն:

Միջազգային ֆինանսական շուկաներից արտաքին վարկերի և փոխառությունների ներգրավման համար կարևոր է, թե երկիրն ինչպիսի արտաքին տնտեսական քաղաքականություն է որդեգրել: Ինչպես գիտենք, 2015թ. հունվարի 2-ից Հայաստանը «Հայաստանի Հանրապետության՝ Եվրասիական տնտեսական միության ստեղծման մասին 2014թ. մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի հիման վրա անդամակցեց նոր ինտեգրացիոն խմբավորման՝ Եվրասիական տնտեսական միությանը (ԵՏՄ), որի անդամ երկրներն են Ռուսաստանը, Բելառուսը և Ղազախստանը: Իհարկե, Հայաստանի արտաքին տնտեսական քաղաքականության օրակարգից դուրս չի եկել ԵՄ հետ համագործակցության խորացման վերաբերյալ հարցը, սակայն ելնելով այն հանգամանքից, որ ԵՄ-ին ինտեգրվել ցանկացող երկրները այլ տնտեսական միավորումների հետ հարաբերությունների զարգացման տեսանկյունից պետք է առաջնորդվեն «կամ-կամ», այլ ոչ թե «և-և» սկզբունքով, ուստի կարծում ենք, որ ԵՏՄ-ին անդամակցումը սկզբունքորեն կսահմանափակի ԵՄ երկրների հետ տնտեսական բոլոր ոլորտների, այդ թվում՝ ֆինանսական (ներառյալ՝ նաև վարկային ծրագրերի ներգրավման հետ կապված) համագործակցությունը:

Թվում է, թե ԵՏՄ-ին Հայաստանի անդամակցությունը կարող է հանգեցնել ԵՏՄ անդամ պետությունների, մասնավորապես՝ Ռուսաստանի կողմից մատչելի վարկերի տրամադրմանը, սակայն 2013թ.-ի՝ Մաքսային միությանը անդամակցելու վերաբերյալ վերոնշյալ որոշումից հետո, ընդհակառակը, 700 մլն ԱՄՆ դոլար գումարի չափով եվրապարտատոմսերի թողարկմամբ, առաջին հերթին, մարվեց Ռուսաստանից 2009թ. ստացված 500 մլն ԱՄՆ դոլար գումարի վարկը, ընդ որում, եվրապարտատոմսերով ստանձնած պարտավորություններն ունեն ավելի բարձր տոկոսադրույք (6.25%՝ ռուսական վարկի Libor+3%-ի փոխարեն): Ավելին, եթե համեմատենք 31.12.2014թ. դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտքի (բացառությամբ ոչ ռեզիդենտների կողմից ձեռք բերված պետական պարտատոմսերի) կա-

ռուցվածքը՝ ըստ ԵՄ և ԵՏՄ անդամ պետությունների կողմից ներգրավված վարկերի համամասնության, ապա կտեսնենք, որ ԵՄ անդամ պետություններից ներգրավված վարկային միջոցների ընդհանուր մնացորդը կազմում է 236.9 մլն ԱՄՆ դոլար կամ երկկողմանի վարկային ծրագրերի շրջանակներում ստացված վարկերի մոտ կեսը (45.5%-ը), իսկ եթե հաշվի առնենք նաև Եվրոպական ներդրումային բանկից և անմիջապես ԵՄ-ից ստացված վարկային միջոցները, ապա այն կկազմի 360.5 մլն ԱՄՆ դոլար (կամ ընդհանուր արտաքին պետական պարտքի (բացառությամբ ոչ ռեզիդենտների կողմից ձեռք բերված պետական պարտատոմսերի) 11.5%-ը), մինչդեռ ԵՏՄ անդամ պետություններից և ոչ մեկի հետ Հայաստանը գործող վարկային ծրագրեր 2014թ. վերջի դրությամբ չի ունեցել:

Նշենք, որ Ռուսաստանի կողմից արտաքին վարկավորման ծավալների կրճատումը, նախ և առաջ, կապված է վերջինիս՝ արտաքին քաղաքական և տնտեսական գործընթացների արդյունքում միջազգային տնտեսական սահմանափակումներով և ճնշումներով պայմանավորված տնտեսական վիճակի վատթարացման և միջազգային պահուստների նվազման հետ, սակայն, կարծում ենք, որ Ռուսաստանի կողմից հնարավոր վարկավորման դեպքում անգամ տրամադրվող վարկային միջոցների տոկոսադրույքը չի կարող համեմատելի լինել ԵՄ անդամ երկրներից կամ միջազգային ֆինանսատնտեսական կազմակերպություններից ներգրավվող վարկերի և փոխառությունների տոկոսադրույքների հետ և կլինի բավականաչափ բարձր, ինչպես և Ռուսաստանից նախկինում ներգրավված բոլոր վարկերի դեպքում, որոնց մի մասը մարվել է «գույք պարտքի դիմաց» ծրագրի շրջանակներում՝ ռազմավարական նշանակության օբյեկտների՝ Ռուսաստանին հանձնելու տարբերակով, որի պատճառներից մեկն էլ այդ միջոցների կարճաժամկետ լինելն էր:

Չթերագնահատելով երկկողմանի վարկային ծրագրերի շրջանակներում առանձին պետություններից ներգրավվող վարկերի դերը և նշանակությունը՝ կարծում ենք, որ, այնուամենայնիվ, թե՛ իրենց մատչելիությամբ, թե՛ ծավալներով և թե՛ վարկային ռեսուրսների նպատակային օգտագործման նկատմամբ վերահսկելիության առումով, Հայաստանի տնտեսության զարգացման գործում կարևոր տեղ ունեն միջազգային կազմակերպություններից ներգրավված վարկերը:

Ընդհանրապես, միջազգային և տարածաշրջանային տնտեսական և կառույցների հետ զարգացումը համարվում է ՀՀ կառավարության հիմնական նպատակներից մեկը: Դրանց շարքում մեծ դեր են խաղացել հատկապես Համաշխարհային բանկը և Արժույթի միջազգային հիմնադրամը, որոնք սկսած 1992թ.-ից մեծապես նպաստել են Հայաստանի տնտեսության զարգացմանը՝ իրենց ներդրումն ունենալով ենթակառուցվածքների արդիականացման, պետական կառավարման տարբեր ոլորտներում բարեփոխումների իրականացման, աղքատության մակարդակի կրճատման և բնակչության սոցիալական ապահովության բարձրացման, մակրոտնտեսական կայունության ապահովման, համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամերն անցընցում հաղթահարելու, երկրի միջազգային մրցունակության բարձրացման, էներգետիկ անվտանգության ապահովման և բազմաթիվ այլ խնդիրների իրականացման գործում՝ դրանով իսկ նպաստելով Հայաստանի միջազգային համբավի բարձրացմանը և օտարերկրյա ներդրումների ներգրավմանը:

31.12.2014թ. դրությամբ ՀՀ արտաքին պարտքի (բացառությամբ ոչ ռեզիդենտների կողմից ձեռք բերված պետական պարտատոմսերի) գերակշիռ մասը՝ մոտ 83%-ը, ձևավորվել է միջազգային ու տարածաշրջանային ֆինանսական կազմակերպություններից, իսկ միայն փոքր մասը՝ 17%-ը՝ տարբեր պետություններից ներգրավված վարկային միջոցներից: Ուսումնասիրելով բազմակողմանի վարկային ծրագրերի շրջանակներում Հայաստանի ներգրաված վարկերի և փոխառությունների պայմանները՝ կարող ենք հստակորեն նշել, որ դրանց բնորոշ են առավել ցածր տոկոսադրույքները, սպասարկման և պարտավորության ցածր վճարները, որոնք որոշ դեպքերում կազմում են զրո (օրնիակ, Արժույթի միջազգային հիմնադրամից 2010թ. «Extended Credit Facility» («Ընդլայնված վարկային գործիք») ծրագրով ստացված 101.8 մլն ՀՓԻ գումարի վարկը, որի և՛ սպասարկման ու պարտավորության վճարները, և՛ տարեկան տոկոսադրույքը կազմում են զրո տոկոս):

Հարկ ենք համարում նշել, որ երբեմն երկրում քաղաքական գործընթացները, դատաիրավական անկախ համակարգի առկայությունը, մարդկային կայուն զարգացման տեմպերը և, ընդհանրապես, ժողովրդավարական արժեքների ներդրումը ևս կարող են էապես ազդել


արտաքին ֆինանսական շուկաներից վարկային ծրագրերի ներգրավման վրա: Դրա վառ օրինակն է ԱՄՆ կառավարության «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի կողմից իրականացվող «ՀՄՀ-Հայաստան» ծրագրի դադարեցումը, որի շրջանակներում 27.03.2006թ. կնքված և 29.09.2006թ.-ից ուժի մեջ մտած 235.6 մլն դոլար արժողությամբ համաձայնագրի նպատակն էր գյուղատնտեսական ոլորտի բարելավմամբ գյուղական աղքատության կրճատումը՝ գյուղական ճանապարհներում, ոռոգման ենթակառուցվածքներում ռազմավարական ներդրումներ կատարելու, ֆինանսական ու տեխնիկական աջակցություն ցուցաբերելու և ագրոբիզնեսին աջակցելու միջոցով: Սակայն «2009թ. հունիսին քաղաքական պատճառներով «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի խորհրդի որոշմամբ դադարեցվեց ՀՄՀ-Հայաստանի ենթածրագրերից մեկը՝ «Գյուղական ճանապարհների վերականգնման» ենթածրագիրը, որով նախատեսվում էր 67 մլն ԱՄՆ դոլար՝ շուրջ 350 կմ գյուղական նշանակության ճանապարհների վերականգնման համար»¹: Այդ իսկ պատճառով, միջազգային կազմակերպություններից և տարբեր պետությունների կառավարություններից մատչելի ֆինանսավորում ստանալու համար անհրաժեշտ է ակտիվորեն իրականացնել իրական քայլեր՝ ուղղված երկրում ժողովրդավարական հիմնական չափանիշների ներդրմանը և դրանց պահպանմանը:

Ընդհանրացնելով, նշենք, որ միջազգային վարկային տարբեր ծրագրերի ներգրավումը, դրանց արդյունավետ տեղաբաշխման դեպքում, նպաստում է երկրի առջև ծառայած սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը, տնտեսական զարգացմանը, ենթակառուցվածքների կատարելագործմանը, սակայն չպետք է մոռանալ, որ, համաձայն «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ կետի՝ «Պետական պարտքի տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ չպետք է գերազանցի Հայաստանի Հանրապետության նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի 60 տոկոսը»²: 31.12.2014թ. դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է ՀՆԱ-ի

¹ Հազարամյակի Մարտահրավեր Հիմնադրամ-Հայաստան ծրագրի պաշտոնական էլեկտրոնային կայք՝ <http://www.mca.am/am/overview> (մուտքի ամսաթիվ՝ 25.03.2015թ.)

² Տես՝ «Պետական պարտքի մասին» ՀՕ-78-Ն ՀՀ օրենք (25.06.2008թ.), ՀՀ պաշտոնական տեղեկագիր. N 39(629)

40.8%-ը, ընդ որում, ՀՀ պետական պարտքի գերակշիռ մասը (85.2%) բաժին է ընկնում արտաքին, իսկ մնացած մասը (14.8%)՝ ներքին պարտքին³: Թեև նշված օրենքում սահմանված է միայն ընդհանուր պետական պարտքի՝ ՀՆԱ-ի նկատմամբ առավելագույն թույլատրելի սահմանը, սակայն կարծում ենք, որ, ելնելով արտաքին պարտքը ներքինով փոխարինելու կարևորությունից, անհրաժեշտ է սահմանել նաև արտաքին պարտք/ՀՆԱ թույլատրելի առավելագույն սահմանաչափ, որը կախված կլինի տնտեսության զարգացման հեռանկարներից և ռազմավարությունից: Այնուամենայնիվ, նշենք, որ ՀՀ արտաքին պետական պարտքը 2014թ. տարեվերջին կազմել է ՀՆԱ-ի 35%-ը, որը վերջին երեք տարիներին գրանցել է բարելավման միտում (տես՝ գծապատկեր 1):



Գծապատկեր 1. ՀՀ Պետական պարտք/ՀՆԱ և Արտաքին պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 1999-2014թթ. ընթացքում (%)⁴

³ Ցուցանիշները հաշվարկվել են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության էլեկտրոնային կայքի (<http://www.armstat.am>) տվյալների հիման վրա

⁴ Գծապատկերը կազմվել է «ՀՀ պետական պարտքը. Տարեկան հաշվետվություն 2008» (էջ 2), «ՀՀ պետական պարտքը. Տարեկան հաշվետվություն 2009» (էջ 5), «ՀՀ պետական պարտքը. Տարեկան հաշվետվություն 2012» (էջ 5), «ՀՀ պետական պարտքը. Տարեկան հաշվետվություն 2013» (էջ 5), «ՀՀ պետական պարտքի մասական տեղեկագիր. դեկտեմբեր, 2014» (աղբյուրը՝ <http://minfin.am/index.php?cat=159&lang=1>, մուտքը ամսաթիվը՝ 25.03.2015թ.) վիրակագրական ժողովածուների տվյալների հիման վրա, ՀՀ Ֆինանսների նախարարություն

Այսպիսով, վերլուծելով երկկողմանի և բազմակողմանի վարկային ծրագրերի ներգրավման հեռանկարները և միջպետական վարկային հարաբերությունների համատեքստում կարևորելով ցածր ռիսկայնություն ունեցող վարկային պորտֆելի առկայությունը՝ առաջարկում ենք.

- արտաքին վարկային ծրագրերի ներգրավման գործընթացում նախապատվությունը տալ միջազգային և տարածաշրջանային ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկերին, որոնց բնորոշ են ցածր տոկոսադրույքները, մարման համեմատաբար երկար ժամկետները և բազմաողորտ տեղաբաշխման հնարավորությունները,

- ԵՄ երկրներից միջազգային վարկային ծրագրերի ներգրավման ուղիներն ընդլայնելու նպատակով՝ զարգացնել երկկողմ տնտեսական կապեր ԵՄ անդամ պետությունների հետ և մշակել եվրոպական տնտեսական ինտեգրման գործընթացի շարունակությունն ու խորացումն ապահովող գործողությունների ծրագիր,

- ԱՄՆ-ից և Ճապոնիայից՝ որպես զարգացած տնտեսություն ունեցող և միջազգային վարկային հարաբերություններում խոշոր վարկատու հանդիսացող երկրներ, միջազգային ֆինանսական (այդ թվում՝ վարկային) միջոցների ներգրավման հետագա հնարավորությունները պահպանելու և է՛լ ավելի մեծացնելու նպատակով՝ ապահովել այդ երկրների կողմից նախկինում ստացված վարկերի նպատակային և արդյունավետ օգտագործումը, ինչպես նաև մասնակցել միջազգային տնտեսական հարաբերություններում ընթացող գործընթացներին՝ հատկապես համընդհանուր նշանակություն ունեցող ծրագրերում (սոցիալական, բնապահպանման, առողջապահական, մարդասիրական և այլն) ցուցաբերելով ակտիվ ներգրավվածություն,

- արտաքին քաղաքական ազդեցություններից զերծ մնալու նպատակով՝ խուսափել այնպիսի պետություններից վարկերի ներգրավումից, որոնք ակնհայտորեն միջազգային հարաբերություններում հետապնդում են իրենց աշխարհաքաղաքական ազդեցությունը ընդլայնելու և երկկողմ հարաբերություններում քաղաքական և տնտեսական կախվածություն առաջացնելու նպատակ (անշուշտ, միջազգային վարկային հարաբերություններում արտաքին վարկերը շատ հաճախ

կրում են այդ առանձնահատկությունը, սակայն այստեղ խոսքը գնում է այն մասին, որ այդ ազդեցությունը կարելի է հասցնել նվազագույնի, եթե դրանք ներգրավվում են բարենպաստ պայմաններով՝ ցածր տոկոսադրույքով, երկար մարման և արտոնյալ ժամկետներով, և, որ ամենակարևորն է, անհրաժեշտ է համադրել այդ վարկերի մարման ժամանակացույցով նախատեսված վճարման ենթակա գումարները դրանց միջոցով իրականացվող ծրագրերի օգուտների հետ):

Բանալի բառեր. տնտեսական կյանքի միջազգայնացման խորացում, ֆինանսական ռեսուրսների ներգրավում, արտաքին ֆինանսական շուկաներ, միջազգային վարկեր, ֆինանսաբանկային համակարգ, արտաքին պարտք, միջպետական վարկային հարաբերություններ, տնտեսական աճ, միջազգային փոխառություն, տնտեսական բարեփոխումներ:

Գրականություն

1. «Պետական պարտքի մասին» ՀՕ-78-Ն ՀՀ օրենք (25.06.2008թ.), ՀՀ պաշտոնական տեղեկագիր. N 39(629)
2. «ՀՀ պետական պարտքը. Տարեկան հաշվետվություն 2008» (20 էջ), «ՀՀ պետական պարտքը. Տարեկան հաշվետվություն 2009» (50 էջ), «ՀՀ պետական պարտքը. Տարեկան հաշվետվություն 2012» (42 էջ), «ՀՀ պետական պարտքը. Տարեկան հաշվետվություն 2013» (46 էջ), «ՀՀ պետական պարտքի ամսական տեղեկագիր. դեկտեմբեր, 2014» (7 էջ) վիճակագրական ժողովածուներ, ՀՀ Ֆինանսների նախարարություն

ПЕРСПЕКТИВЫ ПРИВЛЕЧЕНИЯ МЕЖДУНАРОДНЫХ КРЕДИТОВ В РА

Г.А. Авагян

Резюме

Привлечение доступных финансовых ресурсов сегодня важная задача для Армении. Учитывая тот факт, что в последние годы Правительство Армении начало новую политику привлечения внешних финансовых средств, выпуская еврооблигации, которые имеют большие процентные ставки. Анализируя перспективные привлечения двухсторонних и многосторонних кредитных программ, в контексте

межгосударственных кредитных отношениях, выделяя важность наличия кредитного портфеля, имеющего низкую рискованность, предлагались несколько путей для повышения эффективности привлечения международных кредитов со стороны РА.

Ключевые слова: углубление интернационализации экономической жизни, привлечение финансовых ресурсов, внешние финансовые рынки, международные кредиты, финансово-банковская система, внешний долг, межгосударственные кредитные отношения, экономический рост, международный заем, экономические реформации.

INTERNATIONAL LOANS INCLUSION PERSPECTIVES IN THE REPUBLIC OF ARMENIA

G.A. Avagyan
Summary

Nowadays, the inclusion of available financial resources is an important issue for Armenia, taking into consideration the point that Armenian government has taken up a new policy of inclusion of foreign financial resources providing with Eurobonds which are of significantly high interests. Analyzing bilateral and multilateral programs inclusion prospects, highlighting the existence of low credit risks of loan portfolio on the base of interstate relation, several ways have been proposed of increasing productivity of international loans inclusion by the republic of Armenia.

Key words: Deepening the internalization of economic life, inclusion of financial resources, external financial market, international loans, Bank financial system, external debt, interstate loan relations, economic growth, international borrowing, economic reforms.

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՈՐՈՇ
ՌԻՍԿԵՐԻ ՄԱՍԻՆ**

Գ.Մ. Միքայելյան

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում 2011 թվականի ապրիլի 12-ին կատարված դրական փոփոխություններով հանդերձ, միաժամանակ, առանձին հոդվածներում տեղ են գտել կոռուպցիոն ռիսկեր պարունակող դրույթներ:

Մասամբ կարելի է ընդունել այն կարծիքը, համաձայն որի՝ օրենքի փոփոխություններով և լրացումներով՝ «Գնային չարաշահումների դեմ առավել արդյունավետ պայքար մղելու նպատակով օրենքում հստակ կարգավորում են ստացել գների չիմնավորված բարձրացման, իջեցման և պահպանման հետ կապված հարաբերությունները» [5, էջ 15]: Այսպես, օրինակ, դրական կարելի է համարել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում /այսուհետև՝ Օրենք/ «տնտեսական պայմաններ /գործոններ/, «գների չիմնավորված բարձրացում», «գների չիմնավորված իջեցում», «գների չիմնավորված պահպանում» հասկացությունների ներառումը /հոդված 4/ և որպես մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահում /հոդված 7/ դիտարկելը:

Արժեքավոր լրացում է հոդված 2-ի վեցերորդ մասը, որը նախատեսում է տնտեսական համակենտրոնացման /միաձուլման, միացման, ֆիրմայի կանոնադրական կապիտալում բաժնի /փայի/ ձեռքբերման/ դեպքում տնտեսավարող սուբյեկտ դիտել նաև «ֆիզիկական անձին»՝ դրանից բխող հետևանքներով: Դրա անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ այլ տնտեսավարողների բաժինների /փայերի/ ձեռքբերման ժամանակ ֆիզիկական անձը կարող է տվյալ սուբյեկտի որոշումների կայացման վրա նույն ազդեցությունը ունենալ, ինչ իրավաբանական անձը: Հետևաբար, տնտեսական համակենտրոնացումների կարգավորման դեպքում անհրաժեշտ է ֆիզիկական անձի նկատմամբ էլ նույն մոտեցումը ցուցաբերել:

Ինքնանպատակ է ստացվել հակամրցակցային համաձայնությունների հորիզոնական, ուղղահայաց և խառը տեսակների տարբե-

րակումը [1, էջ 165], [3, էջ 83]: Նման տարբերակումն իմաստավորված կլիներ, եթե այն օգտագործվեր հակամրցակցային համաձայնությունների բացահայտման մեխանիզմներում, և /կամ/ տարբերակված պատժամիջոցներ սահմանվեր: Մինչդեռ, Օրենքի փոփոխության 5-րդ մասը, որը վերաբերում է հակամրցակցային համաձայնությունների ապացուցմանը, երկու ենթակետ ունի: Դրանցում չի նախատեսում այդպիսի տարբերակման միջոցով հակամրցակցային համաձայնությունների ապացուցման մեխանիզմ /5-րդ մասի 2-րդ ենթակետ/: Այդ հոդվածի 5-րդ մասի առաջին ենթակետը շատ ընդհանուր է¹: Առանց տարբերակման էլ այն կվերաբերեր հակամրցակցային համաձայնությունների բոլոր տեսակներին: Իսկ երկրորդ ենթակետը հղում է անում Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերին, որոնցում ներկայացված են հորիզոնական, ուղղահայաց և խառը հակամրցակցային համաձայնությունների դրսևորումները: Հակամրցակցային համաձայնությունների բերված դրսևորումները, եթե տարբերակված էլ չլինեին հակամրցակցային համաձայնությունների բացահայտման առումով, նույն արդյունքը կունենային, ինչը՝ համաձայնությունների տարբերակումից հետո: Այսինքն՝ Օրենքում արված լրացումների տեսքով հակամրցակցային համաձայնությունների անպտուղ տարբերակումը ապացուցողական ոչ մի մեխանիզմ չի պարունակում: Այն չի պարունակում նաև բացառություններ համաձայնությունների այս կամ այն տեսակի վերաբերյալ: Մինչդեռ միջազգային նման փորձ կա: Օրինակ, ՌԴ «Մրցակցության պաշտպանության մասին» օրենքի 12-րդ հոդվածը նման բացառություն նախատեսում է ուղղահայաց համաձայնությունների համար [6]: Հակամրցակցային համաձայնությունների տարբերակում արտացոլված չէ նաև պատժամիջոցների սահմանման ժամանակ: Անկախ հակամրցակցային համաձայնությունների տեսակից Օրենքում միևնույն դրույքաչափն է սահմանված: Սակայն մրցակցության սահմանափակման կամ արգելման առումով առավել վտանգավորը հորիզոնական համաձայնություններն են: Այդ պատճառով էլ հարկավոր է այդպիսի համաձայնությունների նկատմամբ Օրենքում

¹ Այն բառացիորեն հետևյալ բովանդակությունն ունի. «1/առկա է այդ մասին վկայող որևէ փաստական տվյալ /այդ թվում՝ ցանկացած գրավոր փաստաթուղթ կամ գրավոր այլ ապացույց, տեսագրություն կամ ձայնագրություն/ կամ օրենքով չարգելված ցանկացած այլ ապացույց»:

առավել խիստ պատժամիջոց նախատեսել: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ մրցակցության սահմանափակման առումով «պակաս վնասակարը» խառը համաձայնություններն են: Հետևաբար, հակամրցակցային համաձայնությունների համար պատժամիջոցներ նախատեսելիս առավել մեղմ պատիժը հարկավոր է սահմանել խառը համաձայնությունների դեպքում: Մրցակցությունը խաթարելու առումով՝ հակամրցակցային համաձայնությունների նշված երկու տեսակների համեմատ միջին ազդեցություն ունի ուղղահայաց համաձայնությունը: Հետևաբար, նման համաձայնությունների դեպքում պատժամիջոցն էլ պետք է միջին լինի: Այսպիսով, Օրենքում հակամրցակցային համաձայնության տարբերակումը «կիմաստավորվի», եթե այն օգտագործվի այդպիսի համաձայնությունների բացահայտման մեխանիզմներում և /կամ/ տարբերակված արտացոլվի նաև պատժամիջոցների սահմանման ժամանակ:

Դրական պետք է համարել Գերիշխող դիրքը ճանաչելու համար որակական չափանիշների սահմանումը [2, էջ 113-120]: Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի որպես որակական չափանիշ դիտվել է «էական մրցակցության չհանդիպելու» հանգամանքը և /կամ/ «ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա ազդելու հնարավորությունը»: Սակայն տվյալ փոփոխությամբ նոր անհայտներ են ի հայտ գալիս՝ «էական մրցակցության չհանդիպելու» և «ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա ազդելու հնարավորությունը» տեսքով: Օրենքում նշված հասկացությունները մեկնաբանված չեն: Եթե բաժնետիրական կամ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների համար «ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա ազդելու հնարավորությունը» զարգացած ապրանքային շուկա ունեցող երկրներում կանոնադրական կապիտալի 50 տոկոսից անհամեմատ ցածր տոկոսի դեպքում է հնարավոր, ապա Հայաստանի պայմաններում՝ 50-ից ավել տոկոսի դեպքում: Օրենքում մեկնաբանության անհրաժեշտություն կա նաև «էական մրցակցության չհանդիպելու» հասկացության վերաբերյալ:

Մեր կարծիքով, միանշանակ չէ այն տեսակետը, թե Օրենքի փոփոխություններով և լրացումներով. «...առավել հստակեցվել և խստացվել են օրենքով նախատեսվող տուգանքի չափերը [4, էջ 132]: Օրենքի փոփոխությունների և լրացումների 25-րդ հոդվածով առա-

ջարկվում է 36-րդ հոդվածի նոր խմբագրում, որի համաձայն, եթե օրենսդրության որոշ խախտումների համար իրոք խստացվել են պատժամիջոցները, ապա մյուսների համար մեղմացվել են: Մասնավորապես, եթե անբարեխիղճ մրցակցության գործողության համար, հանձնաժողովի որոշմամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն չներկայացնելը կամ ոչ հավաստի կամ կեղծ տեղեկատվություն ներկայացնելը, ինչպես նաև հանձնաժողովի անդամների կամ աշխատակիցների՝ օրենքով վերապահված իրավունքները կամ պարտականությունների կատարումը խոչընդոտելը նախկինում առաջացնում էր տուգանքի նշանակում 500 հազար դրամի չափով, ապա Օրենքի փոփոխություններով և լրացումներով՝ անբարեխիղճ մրցակցության դեպքում՝ նախորդ տարվա հասույթի մինչև մեկ տոկոսի չափով, հանձնաժողովի որոշմամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն չներկայացնելու կամ ոչ հավաստի կամ կեղծ տեղեկատվություն ներկայացնելու պարագայում՝ 5 մլն դրամի չափով, հանձնաժողովի անդամների կամ աշխատակիցների՝ օրենքով վերապահված իրավունքները կամ պարտականությունների կատարումը խոչընդոտելու համար՝ 2 մլն դրամի չափով: Մեր կարծիքով, անբարեխիղճ մրցակցության համար «մինչև մեկ տոկոս» տուգանքն իր մեջ կոռուպցիոն ռիսկ է պարունակում: Անբարեխիղճ մրցակցության համար տուգանքի նախկին չափը (500 հազ. դրամը), եթե օրենսդիրը համարում է քիչ, ապա բանականության սահմաններում թող ավելացնի: Մասնավորապես, այն տարբերակված լինի, ՓՄՁ-ների համար՝ 500 հազ. դրամ (գերփոքր ձեռնարկությունների համար), 1 մլն դրամ (փոքր ձեռնարկությունների համար), 2 մլն դրամ (միջին ձեռնարկությունների համար), իսկ խոշոր ձեռնարկությունների համար՝ 10 կամ 20 մլն դրամ, բարց ոչ «մինչև» կամ «այսքանից այսքան» չափաքանակներով:

Վերոհիշյալի հետ միասին մրցակցության պաշտպանության այնպիսի էական խախտումների համար, ինչպիսիք են հակամրցակցային համաձայնությունները, գերիշխող դիրքի չարաշահումները և արգելված պետական օժանդակությունը, պատժամիջոցները մեղմացվել են: Այսպես, օրինակ, եթե հակամրցակցային համաձայնությունների և գերիշխող դիրքի չարաշահումների համար տուգանքի նախկին չափը նախորդ տարվա հասույթի 2 տոկոսի չափով էր, բայց ոչ ավել, քան

300 մլն դրամը², ապա Օրենքի փոփոխությամբ՝ տուգանքի չափը 5 միլիոնից մինչև 200 մլն դրամ է սահմանվում: Տվյալ պատժամիջոցը նախկինի համեմատ ոչ միայն մեղմացվել է, այլև կոռուպցիոն ռիսկ է պարունակում, ինչն ակնառու է նաև մնացած բոլոր խախտումների համար նախատեսվող տուգանքների դեպքում³: Մինչև օրենքի փոփոխությունը արգելված պետական օժանդակություն ստանալու համար տուգանքի չափը նախորդ տարվա հասույթի 2 տոկոսի չափով էր, բայց ոչ ավել, քան 300 մլն դրամը, ներկայումս՝ նախորդ տարվա հասույթի մինչև 1 տոկոսի չափով է, բայց ոչ ավել, քան 100 մլն դրամը:

Այսպիսով, Օրենքի փոփոխությունները և լրացումները, որոշ դեպքերում բարելավելով երկրի մրցակցության պաշտպանության օրենսդրությունը, միաժամանակ պարունակում են այնպիսի սխալներ, բացթողումներ և կոռուպցիոն ռիսկեր, որոնց վերացումը և լրացումը հրամայական է մրցակցության հուսալի պաշտպանության համար:

Բանալի բառեր. մրցակցություն, կոռուպցիա, գերիշխող դիրք, պայտժամիջոց:

Գրականություն

1. Մ.Վ.Միքայելյան, Տնտեսական մրցակցության և մենաշնորհների պետական կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2005, 254 էջ
2. Գ.Մ. Միքայելյան, ԱՊՀ երկրների ապրանքային շուկաներում ֆիրմաների գերիշխող դիրքի կարգավորումը, Լրաբեր հասարակական գիտությունների N 3(623), էջ 113-120
3. Մ.Վ.Միքայելյան, Գ.Մ.Միքայելյան, ԱՊՀ-ում համաձայնեցված հավանենաշնորհային քաղաքականության մի քանի հարց, Հայաստանի տնտեսության զարգացման արդի հիմնախնդիրները (հանրապետական գիտաժողովի նյութեր, 17-18 մայիսի, 2010թ., էջ 83
4. Մուսաելյան Տ.Վ., Հակամենաշնորհային քաղաքականության հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Ը.00.02 «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» մաս-

² Խոշոր տնտեսավարող սուբյեկտների տարեկան հասույթների 2 տոկոսը զգալիորեն գերազանցում է 300 մլն դրամը:

³ Մինչև 2 մլն /5 մլն դրամ/, մինչև մեկ տոկոս և այլն:

նագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Եր., 2013, էջ 132

5. Ն.Ռ.Քոչարյան, Փոքր և միջին ձեռնարկությունների տնտեսական գործունեության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները, Ը.00.02 «Տնտեսության, դրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2013, էջ 15
6. Федеральный закон N 135-ФЗ “О защите конкуренции”, Российская газета, 27.07.2006г

**О НЕКОТОРЫХ КОРРУПЦИОННЫХ РИСКАХ В
ЗАКОНОДАТЕЛЬСТВЕ О ЗАЩИТЕ ЭКОНОМИЧЕСКОЙ
КОНКУРЕНЦИИ
Г.М. Микаелян
Резюме**

В статье комментируется ряд изменений и дополнений в законе РА «О защите экономической конкуренции» от 12.04.2011 г. и сделаны предложения по улучшению некоторых статей и избежанию от коррупционных рисков.

Ключевые слова: Конкурс, коррупция, доминирующее положение, санкция.

**OME CORRUPTION RISKS IN LEGISLATION ON THE PROTECTION
OF ECONOMIC COMPETITION
G.M. Mikayelyan
Summary**

The article commented on a number of amendments to the RA Law "On Protection of Economic Competition" from 12.04.2011, and give some suggestions to improve the article and to avoid from corruption risks.

Key words: competition, corruption, dominant position, sanction.

**ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՇՈՐ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ՆԱԽԱԳԾԵՐԻՆ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Լ.Կ. Սարգսյան

Համաշխարհային տնտեսության մեջ տեղի ունեցող զարգացումները, առանձին տարածաշրջաններում նկատվող աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական փոփոխությունները ստիպում են տարբեր երկրների վերանայել իրենց տնտեսական քաղաքականությունը, մշակել մրցակցային պայքարում հաղթող դուրս գալու համար ուժեղ ռազմավարություններ և որ ամենակարևորն է՝ ձևավորել մրցունակ ազգային ինովացիոն համակարգ: Այս առումով կարևոր նշանակություն են ստանում և՛ պետական մարմինների կողմից ինովացիոն համակարգի ձևավորմանն ուղղված միջոցառումները, և՛ առանձին գիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեությունը, և՛, վերջապես, այս շրջան սահմանափակող առևտրային կազմակերպությունների կողմից ինովացիաների առևտրայնացումը: Կարելի է պնդել, որ այս շրջան համարվում է ազգային ինովացիոն տնտեսության ձևավորման հիմնական շարժիչ մեխանիզմը:

Այս համատեքստում կարող ենք նշել, որ վերջին տարիներին ՀՀ-ում փորձ է արվում ձևավորել ինովացիոն տնտեսություն, սակայն, մակրոտնտեսական որոշ ցուցանիշներ, մասնավորապես, մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ոչ բավարար մակարդակը և համաշխարհային տնտեսության մեջ ընդունված ինովացիոն տնտեսության չափանիշները ստիպում են մտածել, որ ՀՀ-ի համար ինովացիոն տնտեսություն ունենալու գաղափարը դեռևս կարճաժամկետ ժամանակահատվածում իրականության վերածվել չի կարող:

Իհարկե, այս համակարգում առկա է որոշակի ձևավորված իրավական դաշտ, ստեղծվել են այս հարցերով զբաղվող համապատասխան կառավարման մարմիններ, փորձ է արվում վենչուրային հիմնադրամների ձևավորման միջոցով լուծել ֆինանսական ներդրումների և ինովացիաների ֆինանսավորման խնդիրը՝ օտարերկրյա ու միջազգային կազմակերպությունների կողմից կատարվող ներդրումների հաշվին և այլն: Սակայն իրատեսական լինելու համար նշենք, որ հա-


մաշխարհային տնտեսության վերջին զարգացումները հանգեցրել են նրան, որ դեռևս կան երկրներ, որոնց չի հաջողվում իրենց ուրույն տեղը գտնել տեխնոլոգիաների համաշխարհային շուկայում, որն առաջին հերթին պայմանավորված է ազգային թույլ և ոչ մրցունակ ինովացիոն համակարգ ունենալու հանգամանքով: Մյուս կողմից առկա են նաև այդ շուկաներ ներթափանցելու մի շարք խոչընդոտներ, որոնց հաղթահարումը խրթին է հատկապես փոքր տնտեսություն ունեցող երկրների համար: Այս հիմնահարցերի լուծման հիմքերը հարկավոր է փնտրել տեխնոլոգիաների միջազգայնացման հայեցակարգի ձևավորման և փուլ առ փուլ այն կյանքի կոչելու գաղափարի մեջ: Այսինքն՝ ազգային ինովացիոն համակարգի ձևավորման գործընթացում առանձնապես կարևորվում է տեխնոլոգիաների միջազգայնացման հիմնահարցը: Սկզբունքորեն շատ երկրներ իրենց տեխնոլոգիաների միջազգայնացման խնդիրը թողնում են ձեռնարկությունների վրա և ձեռնարկությունները սեփական ուժերով կարողանում են լուծել այդ խնդիրը: Իհարկե, որոշ երկրներում (օրինակ՝ Ճապոնիայում, ԱՄՆ-ում և այլն) մենք հանդիպում ենք հստակ մշակված պետական քաղաքականության, և դա այն դեպքերում է, երբ կազմակերպությունները կամ երբեմն խոշոր կորպորացիաներն իրենց սեփական միջոցներով չեն կարողանում լուծել խնդիրը: Այս հարթությունում Հայաստանի ընտրությունը կարծում ենք կարճաժամկետում մեկն է՝ աստիճանաբար ինտեգրվել համաշխարհային խոշոր հետազոտական նախագծերին, դրանով իսկ ուղի հարթել տեղայնացնելու միջազգային փորձը և դրա հիման վրա ստեղծել ազգային ինովացիոն համակարգ:

Նման պարագայում, փորձել ենք մշակել զարգացման ներքոնշյալ հնարավոր սխեման, (տես՝ գծապատկեր 1), որի գործունեության հաջորդական տրամաբանությունը կառուցվում է այն գաղափարի վրա, որ բացակայում է ազգային ինովացիոն համակարգը և առկա են միայն որոշ ինովացիոն նախագծեր: Դա այն սկզբնակետն է, որից ելնելով կարելի է սկսել ազգային ինովացիոն համակարգի ձևավորումը՝ միջազգային խոշոր ինովացիոն հետազոտական նախագծերին ինտեգրվելու ճանապարհով: Առաջարկվող մոտեցումն այն է, որ անհրաժեշտ է գիտական առանձին հետազոտությունների բնագավառում առաջնայնություն տալ հենց այն հետազոտական նախագծերին, որոնք հնարավորություն ունեն ինտեգրվել համաշխարհային խոշոր հետա-

զոտական ծրագրերին և այդ փորձը բերել Հայաստան: Սակայն այստեղ էլ առաջանում է մեկ այլ խնդիր, այն է՝ Հայաստանը չունի մեծ ֆինանսական ռեսուրսներ և գիտահետազոտական նախագծերի մեջ որպես համաֆինանսավորող կողմ հանդես գալ շատ դեպքերում չի կարող, քանի որ գիտությանը հատկացվող միջոցներն այնքան քիչ են, որ դրանք պարզապես գիտահետազոտական աշխատանքով զբաղվողների գոյությունն են ապահովում:

Գծապատկեր 1

Առանձին ինովացիոն ծրագրերի ինտեգրումը համաշխարհային խոշոր հետազոտական նախագծերին, որպես ազգային ինովացիոն համակարգի ձևավորման հենք (փուլային տրամաբանություն)



Այս պարագայում մնում է միայն հուսալ, որ գիտահետազոտական աշխատանքով զբաղվող կադրերը, լիարժեք օգտագործելով իրենց ներուժը, կկարողանան ներգրավել նաև ֆինանսական ռեսուրսներ: Մեր առաջարկվող սխեմայում կարևորվում են առանձին ինովացիոն նախագծերը և դրանք կատարող խմբերը, որոնք համագործակցում են ինովացիոն նախագծեր ֆինանսավորող միջազգային կազմակերպությունների հետ և համատեղ իրականացնում են տարբեր հետազոտական նախագծեր: Հետաքրքիր հարցադրումներից է նաև այն, թե ինչու՞ ենք մենք կարևորում համաշխարհային և տարածաշրջանային «խոշոր», այլ ոչ թե միջին կամ փոքր նախագծերին ինտեգրման խնդիրը: Դա ունի իր տրամաբանական բացատրությունը, այն է՝ խոշոր նախագծերն ունենում են նաև մեծ ֆինանսական ռեսուրսներ, ունեն ավելի բազմաֆունկցիոնալ բնույթ, ընդգրկում են տնտեսության և գիտության մի շարք ոլորտներ և այլն: Այսինքն՝ ազգային ինովացիոն համակարգը պետք է ձևավորել նման սկզբունքներից ելնելով, որպեսզի վերջինս ունենա համընդգրկուն բնույթ, իր մի քանի գերակա ուղղություններով:

Լուծելով առանձին ինովացիոն խոշոր նախագծերում ընդգրկված լինելու խնդիրը՝ առաջին հերթին հնարավորություն է ստեղծվում գործնական հարթությունում տիրապետել նման նախագծերում աշխատելուն: Դա կարող է նաև հետագայում ուղղվել Հայաստանում այդ փորձի տեղայնացմանը, ինչպես նաև վերջինիս վրա հիմնվելով ազգային ինովացիոն համակարգի ձևավորմանը: Այսինքն՝ այստեղ, կարելի է ասել, կիրառում ենք հակառակ մոտեցումը, ոչ թե ունենք ազգային ինովացիոն համակարգ, որը թույլ է տալիս մասնակցել խոշոր հետազոտական նախագծերին, այլ տվյալ նախագծերին մասնակցության հնարավորություն ստեղծելով՝ փորձը բերում ենք Հայաստան՝ ստեղծելու մեր սեփական ինովացիոն համակարգը:

Այս առումով պետք է նշել, որ կարևորվում է աշխարհի 50-100 լավագույն նորամուծական ընկերությունների հետ համագործակցությունը [1]: Բոստոնի խորհրդատվական խմբի [2] կողմից ներկայացված այդ կազմակերպությունները (տես՝ աղյուսակ 1) պետք է նաև գտնվեն նորամուծությունների բնագավառում հավակնություններ ունեցող պետությունների և կազմակերպությունների ուշադրության կենտրոնում,

ինչպես նաև ստեղծվեն հնարավոր բոլոր պայմանները վերջիններիս հետ համագործակցության եզրեր գտնելու, ինչպես նաև իրական նախագծեր համատեղ մշակելու և իրականացնելու համար: Ներկայացնելով աշխարհի 50 առաջատար կազմակերպությունների ցանկը, որոնք հաջողության են հասնել համաշխարհային շուկայում նկատում ենք նաև, որ դրանք հայտնի բրենդեր են, որոնք լուրջ ֆինանսական ռեսուրսներ ունեն և դրանք չեն խնայում միջոցներ R&D ոլորտում ներդրումներ կատարելու և ավելի մեծ հաջողությունների հասնելու համար:

Իհարկե, մրցակցել վերոնշյալ կորպորացիաների հետ բավականին դժվար է, սակայն հասնել նրան, որպեսզի վերջիններիս համար անհրաժեշտ ինչ որ արտադրական դետալներ կամ անհրաժեշտ նյութեր մատակարարել, իրականում հնարավոր է: Այս պարագայում հարկավոր է նաև օգտագործել կազմակերպությունների հետ համագործակցող սփյուռքահայերի ներուժը:

Աղյուսակ.1

Աշխարհի ամենանորամուծական կազմակերպությունները 2014թ. [2]

1 to 10		11 to 20		21 to 30		31 to 40		41 to 50	
1	Apple	11	Hewlett-Packard	21	Volkswagen	31	Procter & Gamble	41	Fast Retailing
2	Google	12	General Electric	22	3M	32	Fiat	42	Wal-Mart
3	Samsung ¹	13	Intel	23	Lenovo Group	33	Airbus	43	Tata Consultancy Services
4	Microsoft ²	14	Cisco Systems	24	Nike	34	Boeing	44	Nestlé
5	IBM	15	Siemens	25	Daimler ³	35	Xiaomi Technology	45	Bayer
6	Amazon	16	Coca-Cola	26	General Motors	36	Yahoo	46	Starbucks
7	Tesla Motors	17	LG Electronics	27	Shell	37	Hitachi	47	Tencent Holdings
8	Toyota Motor	18	BMW	28	Audi	38	McDonald's	48	BASF
9	Facebook	19	Ford Motor	29	Philips	39	Oracle	49	Unilever
10	Sony	20	Dell	30	SoftBank	40	Salesforce.com	50	Huawei Technologies

Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ վերոնշյալ կազմակերպությունների մեծ մասը մասնագիտացած են տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) բնագավառում, ինչպես նաև ավտոմեքենաշինու-

թյան, իսկ ՏՏ ոլորտում Հայաստանը բավականին հաջողությունների է հասել և իր այդ ներուժը պետք է օգտագործի ազգային ինովացիոն համակարգի առաջատար կամ գերակա ուղղություններից մեկը լինելու և իր դիրքերը չթուլացնելու համար:

Համագործակցության մյուս կարևոր ուղղությունը կապվում է կրթական և, հատկապես, բարձրագույն կրթության հետ: Համաշխարհային տարբեր դասակարգման աղյուսակներում միշտ հայտնվում են նաև աշխարհի առաջատար բարձրագույն ուսումնական հաստատությունները, սակայն հետաքրքիր փաստերից է նաև այն, որ գոյություն ունի նաև նորամուծական գործարար (բիզնես) դպրոցների դասակարգում [3]: Այս դասակարգումն, իհարկե, իրականացված է ԱՄՆ բուհերի կտրվածքով, սակայն սա ցույց է տալիս, որ այս ոլորտում ևս առկա է հստակ մասնագիտացում: ՀՀ-ում գործում է օրինակ «Լույս» հիմնադրամը և վերջինս բավականին լայն թափով ֆինանսավորում է աշխարհի լավագույն 10 բուհերն ընդունված ՀՀ քաղաքացիներին, սակայն բավականին հետաքրքիր կլինեն նաև, եթե ֆինանսավորման տրամաբանությունը կառուցվեր աշխարհի ինովացիոն բուհերում սովորելու տեսանկյունից, օրինակ Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտում, Սլոանի կառավարման դպրոցում, Հարվարդի գործարար դպրոցում, Սթենֆորդի գործարար դպրոցում և այլն: Սա կարծում ենք կլինեն այն մոտեցումը, որը թույլ կտար ստանալ գիտելիքներ ինովացիոն ուղղվածության տնտեսություն կառուցելու համար: Մինչդեռ Հայաստանում չկան նաև միջազգային մակարդակի հզոր բուհեր, այսինքն՝ լուրջ խնդրի առջև են կանգնած նաև ՀՀ բուհերը՝ չունենալով միջազգային վարկանիշեր, դեռ ավելին բուհերի թույլ կողմերից մեկն էլ այն է, որ վերջիններս չունեն նաև հզոր գիտահետազոտական կենտրոններ, իսկ ինովացիոն տնտեսության կամ ազգային ինովացիոն համակարգի հիմքերը ձևավորվում են բուհական համակարգում: Սա նշանակում է, որ պետք է լուրջ աշխատանք տարվի նաև բուհերում գիտության զարգացման, ինչպես նաև այդ կադրերից լավագույնների գիտահետազոտական աշխատանքներով զբաղվելու երաշխավորման ուղղությամբ: Հակառակ պարագայում, ՀՀ-ում զգացվելու է և հիմա էլ զգացվում է գիտական լուրջ ներուժ ունեցող կադրերի կարիք, որոնք կարող են ինտեգրվել միջազգային հետազոտական նախագծերի մեջ՝ դրսևորելով լուրջ արդյունքներ:

Քննարկվող համատեքստում իրական համագործակցության շրջանակ է նաև ԵՄ-ի կողմից իրականացվող Յոթերորդ ֆունդամենտալ ծրագիրը (FP7) [4]: Հարկ ենք համարում նշել, ԵՄ-ում 10.8 մլրդ եվրո հետազոտությունների և նորարարությունների բյուջեից 2013թ.-ին Եվրոպական Հանձնաժողովը համաձայնվել է 8,1 մլրդ եվրոն ուղղել ԵՄ-ում (FP7) ծրագրի հետազոտությունների ֆինանսավորմանը: Եվ կարելի է համարել, որ դա մինչ այդ գոյություն ունեցող խոշորագույն ծրագրային փաթեթն է, որով ֆինանսավորվել են Եվրոպական հանձնաժողովի գիտահետազոտական ծրագրերը:

Այսպիսով՝ նպատակ է դրվել Եվրոպան վերածել համաշխարհային բարձր վարկանիշ ունեցող հետազոտողների տարածաշրջանային կենտրոնի, որը ԵՄ-ի կարևոր գերակայություններից է: Եվրոպական հետազոտական խորհուրդը հսկայական հատկացումներ է արել նաև լավագույն հետազոտողների համար, ինչպես նաև ՓՄՁ-ների կողմից մշակված և ճանաչված նորարարական նախագծերը խթանելու համար: Այս ծրագրերին մասնակցել են նաև հայ հետազոտողները, սակայն իրականում Հայաստանում բավականին քիչ են այն հետազոտական թիմերը, որոնք համապատասխանում են, կամ կարողանում են բավարարել FP7-ի չափանիշներին: Այնուամենայնիվ, այս ծրագրերին հարկավոր է նաև հետագայում ցուցաբերել ակտիվ մասնակցություն, քանի որ իրականում դրանք բավականին ընդգրկուն են:

Այդ ծրագրի հիմքում դրված է նաև ԵՄ հետազոտական քաղաքականությունը, որն ընդգրկում է մինչև 2020թ.-ը և հենց վերնագրված է «Հորիզոն 2020» [5]: Հարկ ենք համարում նշել, որ «Հորիզոն 2020»-ը իր չափերով մոտ 10 անգամ գերազանցում է FP7 ծրագրին, քանի որ ԵՄ հետազոտությունների և նորարարությունների բնագավառում այն ամենամեծ ծրագիրն է, որի ֆինանսավորումը կազմում է գրեթե 80 մլրդ եվրո: Այդ ֆինանսավորումը մատչելի կլինի ավելի քան 7 տարի (2014-2020թթ.), այսինքն՝ տարեկան 11 մլրդ եվրոյից ավելի: Այս միջոցներն ունենալու են հստակ ուղղվածություն, քանի որ իրենց մեջ միավորելով նաև մասնավոր ներդրումներ՝ փորձելու են կատարել նոր հայտնագործություններ, ինչպես նաև փակել լաբորատորիայում ծնված գաղափարներից մինչև շուկայում դրանց իրացումը շղթան: «Հորիզոն 2020» ֆինանսական գործիքն իրականացնում է «Ինովացիոն միության» և «Եվրոպա 2020» նախաձեռնությունների շրջանա-

կում, որի վերջնական նպատակն է ապահովել և բարձրացնել Եվրոպայի գլոբալ կամ համաշխարհային մրցունակությունը:

«Հորիզոն 2020»-ը բաց է բոլորի համար (հասարակական և գիտական լայն շրջանակների), ինչպես նաև մի պարզ կառույց է, որը հնարավորություն է տալիս մասնակիցներին կենտրոնանալ, իսկապես, կարևորություն ներկայացնող խնդիրների լուծման տարբերակների վրա: Այս մոտեցումը ստիպում է համոզված լինել, որ նոր ծրագրերը կյանքի կկոչվեն շատ արագ և նույնքան արագ էլ կապահովեն արդյունքներ: ԵՄ-ում իրականացվող այս ծրագիրը կարելի է ասել կստեղծի եվրոպական հետազոտական տարածք (ERA), որը կմիավորի և կմեղմացնի բոլոր խոչընդոտները, որոնք գոյություն ունեն գիտելիքների շուկայի, հետազոտությունների և նորարարությունների միջև: Այս ծրագրին հարկավոր է ինտեգրվել բոլոր ուղղություններով, կարելի է ասել ԵՄ-ը ստեղծել է այն հզոր գիտահետազոտական պլատֆորմը և ֆինանսավորման գործիքակազմը, որը կարող է լուրջ գիտական արդյունք ապահովել բոլոր մասնակիցների համար, հատկապես, որ այս ծրագրին կարող են դիմել նաև կոնսորցիումային կամ համատեղ իրականացվող միջպետական ծրագրերի միջոցով՝ ապահովելով տարբեր երկրների գիտնականների հնարավոր համագործակցությունը:

Այժմ մասամբ կներկայացնենք նաև այն ոլորտները կամ բաժինները, որոնք ընդգրկված են «Հորիզոն 2020-ում», իսկ դա կարելի է ասել առաջիկա տարիներին հանդիսանալու է ԵՄ-ում գիտության զարգացման հիմնական ոլորտային սխեման: Ինչպես նաև պետք է փորձել այս ոլորտներից յուրաքանչյուրի հետ գտնել ՀՀ գիտնականների համար համագործակցության եզրեր և մինչև 2020թ.-ը Հայաստանում գիտության մեջ կատարել լուրջ առաջընթաց ապահովող քայլ և դնել ազգային ինովացիոն համակարգի հիմքերը:

«Գերազանց գիտություն» բաժինն իր մեջ ընդգրկում է՝ Եվրոպական հետազոտական խորհուրդը, Ապագան և զարգացող տեխնոլոգիաները, Մարի Սկլոդովսկայա-Կյուրի գործողությունների ծրագիրը, Եվրոպական հետազոտական ենթակառուցվածքները, այդ թվում՝ էլեկտրոնային ենթակառուցվածքները:

Սա բավականին լուրջ և ընդգրկուն տարրերի կամ բաղադրիչների համակարգ է՝ նախատեսված տարբեր հետազոտական խմբերի (2-7 հոգանոց) համար, որոնք կարող են ստանալ մինչև 15 մլն եվրո 6

տարի տևողությամբ հետազոտությունների համար: Գրեթե նույն տիպի ֆինանսավորում է նախատեսված նաև «Ապագան և զարգացող տեխնոլոգիաները» ենթաբաժնում, որտեղ բավականին լուրջ նախագծերի, կամ հավակնոտ հետազոտական հայտերին կարող են ուղղվել տարեկան մինչև 1 մլն եվրո միջոցներ:

Հաջորդ ենթաբաժինն առնչվում է «Միջազգային և միջոլորտային համագործակցության միջոցով Հետազոտողների և ինովացիոն աշխատակազմերի փոխանակման» (Research and Innovation Staff Exchanges) հետ: (Research and Innov

RISE աջակցում է հետազոտող և ինովացիոն աշխատակազմերի կարճաժամկետ տեղաշարժը կարիերայի բոլոր մակարդակներում, ներառյալ՝ կրտսեր հետազոտողները (հետբուհական) և ավագ (կառավարման), այդ թվում՝ նաև վարչական և տեխնիկական անձնակազմը: Այն բաց է գործընկեր համալսարանների, գիտահետազոտական ինստիտուտների և ոչ ակադեմիական կազմակերպությունների համար, որոնք գտնվում են ԵՄ սահմաններից դուրս և Եվրոպայում: Սա իրականում ուղղված է գիտակրթական համակարգում առկա փորձի փոխանակմանը:

Հաջորդ խոշոր բաժինը, որին ուղղված է ԵՄ հետագա զարգացումը, կապվում է «Արդյունաբերության մեջ առաջնորդության» գաղափարի հետ: Այս բաժնի նպատակն է արագացնել տեխնոլոգիաների և նորարարությունների զարգացման գործընթացը, քանի որ վերջիններիս միջոցով է ամրապնդում վաղվա բիզնեսը և աջակցում եվրոպական նորարարական ՓՄՁ-ներին՝ թույլ տալով նրանց աճել և հայտնվել համաշխարհային առաջատար ընկերությունների շարքում:

Այս ամենը կնպաստի, որպեսզի Եվրոպան ավելի գրավիչ վայր դառնա հետազոտություններին և նորարարություններին (ներառյալ՝ էկո-նորարարությունները) ներդրումներ ուղղելու համար: Հարկ է նշել, որ այս բնագավառում իրենց միջոցներն են պատրաստ տրամադրել Եվրոպական ներդրումային բանկը (ԵՆԲ) [6] և Եվրոպական ներդրումային հիմնադրամը (ԵՆՀ) [7]:

Այսպիսով, Հայաստանը պետք է անցնի սկզբունքորեն նոր մոտեցումներով գիտության զարգացման քաղաքականության, քանի որ միայն առանձին կազմակերպությունների կամ գիտահետազոտական առանձին ինստիտուտների աջակցություն ցուցաբերելով մենք չենք

կարողանա ազգային ինովացիան համակարգ ձևավորել: Մյուս կողմից, գիտական հիմնավորում ունեցող լուծումներից ելնելով, տնտեսության այս կամ այն ոլորտի զարգացումը պետք է վերածել իրական նախաձեռնությունների:

Հարցը նրանում է, որ մենք վերոնշյալ հարցադրումների շրջանակներում ցույց տվեցինք, թե ինչքան բաց և թափանցիկ, ինչպես նաև համագործակցության պատրաստ նախագծեր կան ամբողջ համաշխարհային տնտեսության մեջ, մասնավորապես ԵՄ-ում: Այս ծրագրերից յուրաքանչյուրին միանալը պետք է դրված լինի Հայաստանյան յուրաքանչյուր գիտական և գիտահետազոտական գործունեությամբ զբաղվող կազմակերպության առաջ, իսկ գերնպատակը պետք է լինի այդ փորձի տեղայնացումը Հայաստանում: Միայն անհատների վրա հիմնվելով՝ գիտելիքահենք և ինովացիոն տնտեսության ստեղծումը բավականին դժվար է, այս ոլորտում անհրաժեշտ են գիտության ոլորտը համակարգված մոտեցումներից ելնելով կառավարող մասնագետներ: Գիտության մեջ ժամանակակից կառավարման մեխանիզմների միջոցով առաջխաղացում ապահովելու հայեցակարգը կամ ուղենիշի դեր կատարող փաստաթուղթը պետք է լինի ազգային ինովացիոն համակարգի ստեղծման փաստաթուղթը, որտեղ պետք է հստակ աշխատանքի բաժանման միջոցով ակնհայտ լինի յուրաքանչյուր գիտահետազոտական կազմակերպության մասնակցության բաղադրիչը: Այնինչ՝ Հայաստանում դեռևս նման մասշտաբի ազգային ինովացիոն համակարգի ստեղծման և զարգացման քայլ իր վրա ոչ մի ինստիտուցիոնալ միավոր չի վերցրել: Այդ համակարգաստեղծ գործառույթը պետք է դրվի ՀՀ ԿԳԼ-ի, ՀՀ ԳԱԱ-ի և խոշոր բուհերի վրա, որոնք պետք է հասնեն այդ խնդրի լուծմանը: Հակառակ պարագայում, Հայաստանի տնտեսության և գիտության ոլորտի ապագան կլինի բավականին մշուշոտ:

Ամփոփելով, կարող ենք նշել, որ բավականին լուրջ բարդությունների հետ է կապված ազգային ինովացիոն համակարգ ստեղծելու, ինչպես նաև վերջինս լուրջ զարգացած ենթակառուցվածքների հետ ինտեգրելու հիմնախնդիրը, այնուամենայնիվ գտնում ենք, որ ոչ թե պետք է մտածել, որ ՀՀ-ն կորցնում է իր գիտական ներուժն ու ինովացիոն նախաձեռնություններով հանդես գալու ունակությունն, այլ ընդհակառակը՝ պետք է ապահովել սերնդափոխություն, ապահովել նոր

մարտահրավերներին դիմագրավելու գիտական ու տնտեսական հիմքեր, որի վրա պետք է կառուցվի ՀՀ գիտելիքահենք, ինովացիոն և առևտրայնացման ներուժ ունեցող տնտեսությունը:

Բանալի բաներ. Ազգային ինովացիոն համակարգ, ազգային ինովացիոն ծրագրեր, հետազոտական նախագծեր, ինտեգրում:

Գրականություն

1. <http://www.forbes.com/sites/louiscolumbus/2014/11/03/the-50-most-innovative-companies-of-2014-strong-innovators-are-three-times-more-likely-to-rely-on-big-data-analytics/>
2. The Most Innovative Companies 2014: Breaking Through Is Hard to Do, BCG (Boston Consulting Group) 2014, 28p.
https://www.bcgperspectives.com/most_innovative_companies
3. <http://www.business-management-degree.net/50-innovative-business-schools-america/>
4. The seventh Framework Programme (FP7), Taking European Research to the forefront,
http://ec.europa.eu/research/fp7/index_en.cfm?pg=understanding
5. <http://ec.europa.eu/programmes/horizon2020/h2020-sections>
6. <http://www.eib.org/>
7. <http://www.eif.org/>

ПРОБЛЕМЫ ИНТЕГРАЦИИ НАЦИОНАЛЬНОЙ ИННОВАЦИОННОЙ СИСТЕМЫ РА С КРУПНЕЙШИМИ НАУЧНО-ИССЛЕДОВАТЕЛЬСКИМИ МИРОВЫМИ ПРОГРАММАМИ

Л.К. Саргсян

Резюме

Процесс создания национальной инновационной системы является достаточно трудным. Для этого процесса необходимы людские, материальные и финансовые ресурсы и что более важно: время. Последние развития мировой экономики привели к тому, что некоторые страны достигли принципиально нового уровня технологического развития, но по-прежнему есть страны, которые не могут

найти свое место на мировом рынке технологий, в первую очередь из-за наличия слабой и не конкурентоспособной национальной инновационной системы. С другой стороны, существует много барьеров для проникновения на эти рынки, что особенно важно для стран с малой экономикой. Одним из решений этих проблем является интеграция страны различными способами и средствами с большими мега-проектами, что позволит создать основанную на знаниях инновационную экономику с потенциалом для коммерциализации.

Ключевые слова: Национальная инновационная система, национальные инновационные проекты, научно-исследовательские проекты, интеграция.

THE PROBLEMS OF INTEGRATION OF THE NATIONAL INNOVATIVE SYSTEM OF THE RA TO THE WORLD'S LARGEST RESEARCH PROGRAMS

L.K. Sargsyan

Summary

The process of creation of the national innovative system is sufficiently hard. It needs human, material and financial resources and which is the most important: time. The latest developments of the world economy led to a situation that some countries reached a fundamentally new level of technological development, but still there are countries which can not find their own place in the world market of technologies primarily due to a weak and not competitive national innovative system. On the other hand there are a lot of barriers to penetrate to these markets that is especially important for the countries with small economies. One of the solutions of these issues is the integration of the country to the large mega projects with different ways and means, which will enable to create knowledge-based, innovative economy with commercialization potential.

Key words: National innovative system, national innovative projects, research projects, integration.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԻՉԻԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ա.Ա. Խաչատրյան

Հոդվածում անդրադարձ է կատարվում Հայաստանի Հանրապետության ինքնիշխան իրավունքների ու դրանց իրացման տեսական-իրավական, ինչպես նաև պետության ինքնիշխանության և ինքնիշխան իրավունքների հարաբերակցության հիմնախնդիրների վերլուծությանը: Վերլուծելով սահմանադրաիրավական կարգավորումները, տարբեր գիտական հայացքներն ու մոտեցումները, տրվել է ինքնիշխան իրավունքի սահմանումը և իրականացվել դրա դասակարգումը:

Ինքնիշխանությունը պետության էական հատկանիշներից է, ինչը չի ենթադրում, որ այն կարող է կրել պետական իշխանություն պետության անունից կամ ուղղակիորեն պատկանել նույն պետական իշխանությանը: Սակայն, եթե պետության ինքնիշխանության իրավական բովանդակության սահմանները կանխորոշված են իր իսկ բովանդակությունից բխող հատկանիշներով՝ պետական իշխանության գերակայությամբ, միասնությամբ և անկախությամբ¹, ապա այն դրսևորվում է պետության ինքնիշխան իրավունքներում:

Միաժամանակ, ինքնիշխանությունը պետության այնպիսի հատկություն է, որը նրա իշխանությունը դարձնում է իր տեսակով՝ յուրահատուկ և որոշակի իմաստով՝ անսպառ: Պետական իշխանության հատկության անմիջական դրսևորումն է ստանում պետության ինքնիշխան իրավունքներում: Բոլոր ժամանակներում պետության ինքնիշխան իրավունքների հետազոտությունները հանդիսանում են պե-

¹ Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք // Ն.Այվազյանի խմբ., Եր., 2012, էջ 122:

տական ինքնիշխանության հիմնախնդիրների կարևորագույն ուղղություններից մեկը²:

Եվ այդ առումով անհրաժեշտ է կարևորել թե Հայաստանի Հանրապետության սահմանադրական բնութագրիչների համատեքստում, ինչպիսի ինքնիշխան իրավունքների մասին խոսք կարող է գնալ, որոնց իրականացման ժամանակ առավել լիարժեք են ապահովում ու պահպանվում պետության իշխանության ինքնիշխանության հատկանիշները:

Որպես կանոն, պետության ինքնիշխան իրավունքների ընդհանուր սոցիալական նշանակությունը չպետք է հակասի քաղաքացիների անհատական իրավունքներին: Այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել, որ պետությունը իր իշխանությունը ձեռք է բերում ոչ թե անհատներից ու անմիջականորեն, այլ քաղաքացիների հավաքական ընդհանրությունից՝ ժողովրդից, քանի որ հենց վերջինիս է պատկանում իշխանությունը և, որն էլ հանդիսանում է նույն իշխանության աղբյուրը: Այսինքն, պետությունն իր իշխանությունը ստանում է ժողովրդից և ժողովրդի առջև էլ նա պատասխանատու է, ինչը կանխորոշում է պետական իշխանության մարմինների լիազորությունների ինչպես առարկայական, այնպես էլ սահմանափակումների առումով դրանց ձևակերպումների իրավական բնույթը:

Այս տրամաբանության շրջանակում լիովին արդարացված է այն տեսական եզրահանգումը, ըստ որի՝ պետության ինքնիշխան իրավունքները հանդիսանում են ժողովրդի ինքնիշխան իրավունքների յուրատեսակ սահմանադրաիրավական գծագրում (պրոյեկցիա) պետաիրավական և միջազգային-իրավական անմիջական պրակտիկայի ո-

² XIX-XX դարերում մասնագիտական գրականության մեջ «ինքնիշխան իրավունքներ» հասկացության փոխարեն օգտագործվում էր «վեհապետական իրավունքներ» բառակապակցությունը, իսկ առանձին պետականագետներ իրենց հետազոտություններում սահմանափակվում էին այդ իրավունքների կարճ ձևակերպմամբ և դրանց ցանկի շարադրմամբ: Այնինչ, տվյալ իրավունքների քաղաքական և իրավական բնույթն ու բովանդակությունը, ինչպես նաև դրանց օրենսդրական կարգավորման հիմնախնդիրները գործնականում մնում են մասնակի հետզոտված: Տես՝ օրինակ, Гессен В.М. Общее учение о государстве. СПб., 1913, Грабарь В.Э. Материалы к литературе международного права в России (1647-1917). М.: 1958 և ուրիշներ:

լորտում³: Այլ խոսքերով, պետությունն իր ամենօրյա գործունեության ընթացքում երաշխավորելով մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների գերակայությունը, այնուամենայնիվ, չի կորցնում իր ինքնիշխանությունը կամ այն չի իմաստագրկվում:

Դա նշանակում է, որ պետությունը, հետևելով իրավունքի նորմերին՝ ցուցաբերում է հանրային իշխանության էությանը համարժեք վարքագիծ: Ինչպես արդարացիորեն նշում է պրոֆեսոր Վ.Դ.Ջորկինը, պետության ինքնիշխանությունը՝ ժողովրդավարական ու իրավական պետության սահմանադրական սկզբունքների համատեքստից դուրս, չի կարող այլ կերպ մեկնաբանվել⁴: Ի վերջո, «ինքնիշխանություն՝ չի նշանակում իրավունքի հետ պետության չկապված լինելը, ընդհակառակը, ինքնիշխանությունը՝ որպես իրավաբանական կատեգորիա, գոյություն ունի հատկապես իրավունքի ուժով»⁵:

Հետևաբար, պետության ինքնիշխան իրավունքները կարելի է ընկալել որպես պետության ինքնիշխանության իրավաբանական բովանդակության տարր: Հենց այս բնութագրման շրջանակում էլ անհրաժեշտ է դիտարկել պետության ինքնիշխան իրավունքները որպես սահմանադրաիրավական հետազոտության առարկա, քանի որ այդ իրավունքներն առավելապես ամրագրվում են Սահմանադրությամբ և իրավական այլ ակտերով:

Նախ, սույն հետազոտության առարկայի շրջանակում, անհրաժեշտ է կարևորել պետության ինքնիշխան իրավունքների և պետական իշխանության մարմինների լիազորությունների հարաբերակցության հիմնախնդիրը: Ընդ որում, շատ դեպքերում այդ հասկացությունները նույնականացվում են՝ ինչպես դրանց բովանդակային առումով, այնպես էլ նշանակությամբ: Այսպես, պրոֆեսոր Ս.Ա.Ավակյանի կարծիքով՝ պետության ինքնիշխան իրավունքներին է վերաբերում պետության և նրա մարմինների լիազորությունները⁶, այսինքն, պետության

³ Горюнов В.В. Суверенитет Российской Федерации: сущность, содержание, гарантии: дисс... канд. юрид. наук: М.: 2007, էջ 81-82.

⁴ Зорькин В.Д. Текст и реальность // Рос. газ. 2006. 12 декабря:

⁵ Троицкая А.Л. Государственный суверенитет: ограничение или трансформация содержания? // Конституционное и муниципальное право, 2006. № 10, էջ 9:

⁶ Конституционное право: Энциклопедический словарь / Отв. ред. С.А. Авакьян. М., 2000. էջ 55:

ինքնիշխան իրավունքները նույնն են, ինչ պետության իրավասությունը:

Սակայն, այդ երկու հասկացությունների բացարձակ համադրման անթույլատրելիության մասին են վկայում առանձին հեղինակների այն դրամները: Այսպես, պրոֆեսոր Մ.Ի.Կուկուշկինը նշում է, որ այդպիսի համադրումը տեղին չի այն առումով, որ «ինքնիշխան իրավունքներ» հասկացությունը շատ է մասնատվում, այն դեպքում, որ այն ավելի ընդգրկուն հասկացություն է և իրացվում է պետության իրավասության միջոցով⁷:

Իհարկե, այդ երկու հասկացությունների միջև անքակտելի կապի առկայությունը անվիճելի է: Սակայն, հարկ է նկատել, որ «պետության ինքնիշխան իրավունքներն» իրենց ծավալով ավելի լայն հասկացություն է, քան «պետական մարմինների իրավասությունը»:

Այսպես, օրինակ, եթե պետության ինքնիշխան իրավունքները մատնանշում են ժողովրդի շահերով ու պահանջմունքներով պայմանավորված պետության իրավական հնարավորությունները, ապա պետական մարմինների իրավասությունը կազմում է այդ մարմինների գործունեության առարկան կամ իշխանական լիազորությունների համակցությունը՝ վերջիններիս կիրառման ոլորտների կամ տնօրինման առարկայի շրջանակներում:

Մինչդեռ, դժվար չէ նաև նկատել, որ պետության ինքնիշխան իրավունքները կարող են իրացվել բացառապես իրավասության մեջ մարմնավորելու միջոցով: Այսինքն, այդ իրավունքների գործնական իրացման հիմնախնդիրը պայմանավորված է այդ մարմինների լիազորությունների իրականացմամբ:

Ավելին, պետության ինքնիշխան իրավունքներն առաջնային են և հանդիսանում են նրա պետական մարմինների լիազորությունների հենքը: Այլ խոսքերով, պետական մարմինների լիազորությունների հիմքը կազմում են պետության ինքնիշխան իրավունքները, որոնք իրավական որոշակիացում են ստանում դարձյալ այդ մարմինների լիազորությունների միջոցով: Այսպես, օրինակ, ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի ուժով Հայաստանի Հանրապետության միջազգային

⁷ Вопросы теории и практики публичной власти: Екатеринбург: 2005. էջ 77.

այայմանագրեր կնքելու ինքնիշխան իրավունքն իրացվում է ՀՀ Ազգային ժողովի և Հանրապետության Նախագահի միջոցով:

Սույն հետազոտության առարկայի հաջորդ կարևոր հիմնախնդիրն առնչվում է պետության ինքնիշխան իրավունքների ցանկին: Մասնագիտական գրականության մեջ կան տարբեր մոտեցումներ: Եթե Զ.Բոդենի կողմից առաջարկվում է որոշակիացնել կամ ամրագրել պետության ինքնիշխան իրավունքները⁸, ապա պրոֆեսոր Ս.Ս.Լևինը պնդում է, որ ինքնիշխան իրավունքների որոշակի ցանկի մասին խոսք չի կարող գնալ, քանի որ հասարակության զարգացման տարբեր ժամանակահատվածներում փոփոխվում է պետության գործառույթների կազմը, ինչը ենթադրում է ինքնիշխան իրավունքների ցանկում ևս համարժեք փոփոխություն⁹: Վերջինիս հետ համակարծիք է նաև պրոֆեսոր Ա.Ա.Իվանովը, ով գտնում է, որ պետության ինքնիշխան իրավունքների ցանկը կախված է այսպես կոչված տնտեսական ու աշխարհագրական հանգամանքներից, և բխում է ժողովրդի տվյալ ժամանակահատվածի պահանջունքներից: Այդ իմաստով, նա պետության իրավասութվետությունը դիտարկում է նպատակային այն հիմնավորմամբ, որ դա բխում է հանրային իշխանության կրողի կոնկրետ գործառույթից, որի շահերին է ուղղված պետության պարտավորությունների կատարումը, ընդ որում, պետությունը՝ կախված կոնկրետ հանգամանքներից, կարող է արդիականացնել այնպիսի իրավունքներ, որոնք անհրաժեշտ են նրա գործառույթների կատարման համար կոնկրետ պատմական իրավիճակում¹⁰:

Պետության ինքնիշխան իրավունքների ցանկը բոլոր դեպքերում կարող են արդիականացվել պետության կողմից, ինչը ենթադրում է, որ այն անսահմանափակ է: Սակայն, պետության ինքնիշխան իրավունքների անսպառությունը չի ենթադրում դրա բացարձականացում,

⁸ Զ. Բոդենն առաջարկել է պետության ինքնիշխան իրավունքների հետևյալ ցանկը. 1) օրենքներ իրապարակելու իրավունք, 2) պատերազմ հայտարարելու և խաղաղություն կնքելու իրավունք 3) բարձրագույն պաշտոնատար անձանց նշանակման իրավունք, 4) դատարանի և վերջնական ատյանի իրավունք, 5) նվիրվածության և հնազանդության իրավունք, 6) ներում շնորհելու իրավունք, 7) դրամ դրոշմելու իրավունք, 8) հարկեր գանձելու իրավունք: *Stu` История политико-правовых учений / Под ред. проф. А.Н. Хорошилова. М., 2002. էջ 84:*

⁹ Левин И.Д. Суверенитет. СПб.: 2003. էջ 82:

¹⁰ Гражданское право / Отв. ред. А.П. Сергеев, Ю.К. Толстой. М.: 2004, էջ 221-222:

քանի որ, ըստ պրոֆեսոր Վ.Դորոգինի, ինքնիշխան պետությունը չունի իրավական սահմանափակումներ, հետևաբար, կարող է ընդունել ցանկացած որոշում, եթե գտնի որ այն նպատակահարմար է¹¹:

Տվյալ դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել, որ ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի տրամաբանությամբ՝ Հայաստանի Հանրապետությունը ոչ միայն ինքնիշխան պետություն է, այլև՝ իրավական, ինչից կարելի է ենթադրել, որ պետության ինքնիշխանությունն իր իրավաբանական բովանդակությամբ անսպառ է: Այստեղից, պետական իշխանության մարմինը կարող է իրականացնել միայն այնպիսի իշխանական լիազորություններ, որոնք ամրագրված են նրա համար համապատասխան օրենսդրությամբ: Այս կապակցությամբ ճիշտ կլինի խոսել այն մասին, որ պետության գործունեության ազատությունն ունի կատարյալ ու միաժամանակ պարզ սահմաններ, բայց մարդու և քաղաքացու իրավունքներով ու ազատություններով սահմանափակված (ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդված):

ՄԱԿ-ի 1970 թվականի «Միջազգային իրավունքի սկզբունքների մասին» հռչակագրում ևս հաստատվում է այն դրույթը, որ յուրաքանչյուր պետություն օգտվում է լիիրավ ինքնիշխանությանը հատուկ իրավունքներով: Ակնհայտ է, որ նշված Հռչակագրում «լիիրավ ինքնիշխանություն» հասկացության տակ անհրաժեշտ է նկատի ունենալ պետությունների ինքնիշխան իրավունքների անսպառություն:

Այսպիսով, ինքնիշխան իրավունքների անսպառությունը հատուկ է միայն ինքնիշխան պետությանը: Ինչպես արդարացիորեն նշել է Ի.Դ.Լևինը, ինքնիշխանությունը ստեղծում է պետական իրավունքների լիիրավության, լիիշխանության և պետության անկախության կանխավարկած¹²: Այլ խոսքերով, ինքնիշխան իրավունքների անսպառությունը չի ենթադրում պահանջել ապացույցներ, եթե հաստատված է, որ պետությունը տիրապետում է լիարժեք ինքնիշխանությամբ: Պետության ինքնիշխանության և ինքնիշխան իրավունքների միջև նման հարաբերակցությունը և փոխադարձ կապը թույլ են տալիս խոսել նրա ինքնիշխան իրավունքների անսպառության մասին: Հենց պետության ինքնիշխան իրավունքների անսպառության հատկանիշի առկայություն

¹¹ Дорогий В.А. Суверенитет в советском государственном праве. М., 1948. էջ 40:

¹² Левин И.Д. Նույն աշխ. էջ 84:

նը վկայում է ինքնիշխան պետության բացարձակ իրավասուբյեկտիվության մասին¹³:

Պետական ինքնիշխանության իրավաբանական բովանդակության մեջ ինքնիշխան իրավունքներն օտավաժ են որոշակի առանձնահատկությամբ: Այսպես, պետությունն իր ինքնիշխան իրավունքները տիրապետում է սեփական կամքով, այլ ոչ թե որևէ պետության կամ այլ սուբյեկտի որոշմամբ: Այստեղից, ինքնիշխան իրավունքներ կարող է կրել այն պետությունը, որն ինքնուրույն սահմանում է սեփական իրավական կարգավիճակը:

Անդրադարձ կատարելով այս խնդրին, կարծում ենք, որ յուրաքանչյուր պետություն ինքն է հաստատում իր իշխանությունը և սահմանում իր լիազորությունների շրջանակները՝ անկախ որևէ այլ պետության համաձայնությունից: Այսպես, օրինակ, ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածի տրամաբանությունից հետևում է, որ Ազգային ժողովի գործունեության, նրա մարմինների ձևավորման և գործունեության կարգը սահմանվում է Սահմանադրությամբ և Ազգային ժողովի կանոնակարգով:

Շարադրվածից ելնելով, կարելի է եզրահանգել, որ Հայաստանի Հանրապետության ինքնիշխան իրավունքներն ընկալվում են պետության այնպիսի իրավունքներ՝ ա) որոնք ձեռք են բերվել սեփական կամքով, բ) մարմնավորում են պետական իշխանության անկախության և լիիշխանության իրացումը, գ) որոնց ցանկը անսպառ է, դ) պատմական կոնկրետ ժամանակաշրջանում հայ ժողովրդի պահանջմունքներով է կանխորոշվում այս կամ այն իրավունքի առկայությունը:

Սույն հետազոտության առարկայի շրջանակում հաջորդ կարևոր հիմնախնդիրն առնչվում է պետության ինքնիշխան իրավունքների սահմանադրաիրավական կարգավորումների հետ: Անհրաժեշտ է նկատել, որ հենց ինքնիշխան իրավունքների իրավական ամրագրման նշանակությամբ է կանխորոշվում պետական ինքնիշխանության իրավաբանական բովանդակությունը:

Այդ առումով հարկ է կարևորել հետևյալը. 1) Հայաստանի Հանրապետության ինքնիշխան իրավունքներն իրականացվում են հասարակական հարաբերությունների որոշակի ոլորտներում՝ իշխանու-

¹³ Кутафин О.Е. Предмет конституционного права. М.: 2001. էջ 338:

թյունների բաժանման հիման վրա (Սահմանադրության 5-րդ հոդված 1-րդ մաս), 2) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց վերապահվում է միայն այնպիսի գործողություններ կատարելու իրավասություն, որոնց համար նրանք լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով (Սահմանադրության 5-րդ հոդված 2-րդ մաս):

Հետազոտության առարկայի տրամաբանության շրջանակում՝ Սահմանադրական հիշատակված նորմերի համադրված վերլուծությունից բխում է, որ, եթե պետության ինքնիշխան իրավունքները պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, ապա պետական և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները դիտարկվում են որպես տվյալ սահմանադրական մարմնի իրավական կարգավիճակի տարր: Այստեղից, պետական մարմինների լիազորություններն ածանցվում են պետության ինքնիշխան իրավունքներից և վերջիններիս նկատմամբ ունեն երկրորդային նշանակություն:

Միաժամանակ, պետության ինքնիշխան իրավունքները սուբյեկտիվ իրավունքներ են, որոնք վերապահված են իրավասու սուբյեկտին՝ պետությանը, սակայն, պետական մարմնի լիազորությունը դա ոչ միայն իրավունք է, այլև այնպիսի իրավունք, որը միաժամանակ, հանդիսանում է պարտականություն¹⁴:

Այս իմաստով՝ Հայաստանի Հանրապետության ինքնիշխան իրավունքները չեն կարող դիտարկվել որպես պետության իրավասություն, քանի որ դրանք ոչ բոլոր դեպքերում են արտացոլված օրենսդրության մեջ կամ որոշված չեն նրանց իրացման կարգը: Հետևաբար, դրանք չեն կարող իրացվել Հայաստանի Հանրապետության իրավասության շրջանակում, սակայն դիտարկվում են որպես պետության իրավասության ու լիազորությունների ձևավորման հիմք:

Այնուհետև, ներպետական և միջազգային հարաբերություններում պետության ինքնիշխան իրավունքների հարաբերակցության հիմնախնդրին, անհրաժեշտ է նկատել, որ պետական իշխանության գերակայության՝ որպես պետության տարածքում նրանից բարձր կան նրան հավասար այլ իշխանության, ինչպես նաև անկախության՝ որպես օտարերկրյա իշխանության բացակայության վիճակի առկայու-

¹⁴ Теория государства и права / Отв. ред. В.Д. Перевалов. М.: 2004. էջ 352:

թյունն ինքնին կանխորոշում է պետության ներպետական և միջազգային հարաբերություններում անսպառ ինքնիշխան իրավունքներով օժտվածություն:

Սակայն, եթե ներքին ինքնիշխան իրավունքների անսպառությունը գրեթե անվերջ է և սահմանվում է բուն պետության կողմից, ապա արտաքին ոլորտում ինքնիշխան իրավունքների անսահմանությունը պայմանավորված պետք է լինի պետությունների փոխադարձ հարաբերություններում միմյանց նկատմամբ հարգանքի ցուցաբերմամբ: Այլ կերպ ասած, արտաքին գործունեության ոլորտում ինքնիշխան իրավունքների անսպառ լինելը հարաբերական է այն իմաստով, որ միջազգային հարաբերություններում պետությունն օգտվում է բոլոր իրավասություններից, որոնք միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքներին ու նորմերին համապատասխան ու պետությունների փոխադարձ համաձայնության հիման վրա ունի ցանկացած ինքնիշխան պետություն:

Վերոնշյալ հանգամանքը ենթադրում է Հայաստանի Հանրապետության ինքնիշխան իրավունքների առանձին-առանձին դիտարկելու անհրաժեշտություն, որոնք դրսևորվում են ինքնիշխանության ներքին իրավասության շրջանակներում և իրականացվում Հայաստանի Հանրապետության կողմից արտաքին հարաբերություններում: Դիտարկենք Հայաստանի Հանրապետության հիմնական ինքնիշխան այն իրավունքները, որոնք, մեր կարծիքով, առաջնահերթ նշանակություն ունեն նրա պետական ինքնիշխանության բնութագրման համար:

1) Պետության իրավական ակտեր ընդունելու ու հրապարակելու ինքնիշխան իրավունք: Դեռևս Ջ. Բոդենն՝ ինքնիշխանության մասին իր հայտնի ուսմունքում, սահմանել է, որ. օրենքը ինքնիշխան իշխանության պատվիրան է՝ անկախ այն հանգամանքից, թե այդ պատվիրանն իրականացվում է մեկ անձի, թե մի քանի անձանց կամ բոլորի կողմից, միաժամանակ, գտնելով, որ միայն օրենք հրատարակող իշխանությունը կարող է փոփոխել կամ վերացնել այն, եթե դա լրիվ կամ մասամբ հնացել է¹⁵: Թերևս ասվածը չի կորցրել իր արդիականությունը նաև ժամանակակից պետությունների համար, այնուամենայնիվ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ պետության իշխանությունն ու նրա

¹⁵ Левин И.Д. Նշվ. աշխ. էջ 214:

պատվիրանները դրսևորվում են իր իսկ կողմից ընդունված օրենքների միջոցով¹⁶:

2) Իրավական հարկադրանք կիրառելու իրավունք: Իրավական հարկադրանքը կարող է հիմնվել բացառապես իրավունքի նորմերի վրա: Այդ հարկադրանքի կիրառման իրավունքն առաջնահերթ ինքնիշխան իրավունք է, քանի որ դրա վրա է մեծապես սահմանված պետական ինքնիշխանությունը: Չունենալ իրավական հարկադրանք կիրառելու հնարավորություն, դրանով պետությունը չի կարող պահպանել իր իշխանության գերակայությունը:

Միևնույն ժամանակ, իրավական հարկադրանքի կիրառման իրավունքը կարող է որոշ չափով փոխանցվել պետության կողմից սահմանված պատժի կիրառումն իրականացնող որևէ այլ սուբյեկտի: Տվյալ դեպքում, խոսք կարող է գնալ պրոբացիայի՝ այլընտրանքային պատժի կիրառումն ապահովող ծառայության մասին, որի ներդրման հայեցակարգն ընդունվել է ՀՀ կառավարության կողմից 2015 թվականի ապրիլի 26-ին: Սակայն, նման գործառույթ վերապահել ոչ պետական կազմակերպություններին ու անձանց (ինչպես դա վկայում է առանձին երկրների փորձը), Հայաստանի Հանրապետության ներկայիս պայմաններում դեռևս անընդունելի է, քանի որ ցանկացած իշխանական հարկադրանք պետք է բխի հենց պետական ինքնիշխանության նշանակությունից:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ՝ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց պատասխանատվության տեսակները, չափերը, պատասխանատվության ենթարկելու կարգը, հարկադրանքի միջոցներն ու դրանք կիրառելու կարգը:

Այն հանգամանքը, որ իրավական հարկադրանքի կիրառման իրավունքին առաջատար նշանակություն է տրվում պետական ինքնիշխանության իրացման համար, ենթադրում է, որ միայն պետությունն է հարկադրում իշխանական մեթոդներով:

¹⁶ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածով ամրագրվում են պետության ինքնիշխան այդ իրավունքի իրացման և ամբողջականության ապահովմանն ուղղված դրույթներ, որոնց համաձայն սահմանվել են իրավական ակտերի աստիճանակարգված ենթակայության և ուժի մեջ մտնելու կարգերը:

Բացի այդ, պետությունը ոչ միայն իրավունք ունի կիրառել հարկադրանք, այլև ազատելու պատասխանատվության միջոցներից, որոնք նախապես կիրառվել են իր կողմից: Օրինակ, Հայաստանի Հանրապետությունն իրավունք ունի ազատել անձին քրեական պատժից Ազգային ժողովի կողմից հայտարարված համաներման ակտով կամ ներում շնորհել ՀՀ նախագահի հրամանագրով (ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին կետ, 55-րդ հոդվածի 17-րդ կետ):

3) Զինված ուժեր ունենալու ինքնիշխան իրավունքը: Պետության տարածքում միայն պետությունն օժտված է զինված ուժեր ստեղծելու իրավունքով: ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 12-րդ կետի համաձայն՝ Հանրապետության Նախագահը զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարն է, համակարգում է պետական մարմինների գործունեությունը պաշտպանության բնագավառում, նշանակում և ազատում է զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերը ստեղծվում են պետության պաշտպանության նպատակով և այն հանդիսանում է պետության ինքնիշխան կարևոր իրավունքներից մեկը:

Անհարժեշտ է նկատի ունենալ, որ ՀՀ զինված ուժերի կազմակերպման ու գործունեության հետ առնչվող գործառույթներ վերապահված են պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմիններին:

4. Հարկեր սահմանելու ու գանձելու ինքնիշխան իրավունքը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարկը պետության ոչ միայն գոյության անհրաժեշտ պայմանն է, այլև պետության հատկանիշ, հարկերի միջոցով պետությունը ստեղծում է նյութական հենքը՝ պետության ֆինանսական պահանջմունքները բավարարելու և մարդու իրավունքներն ու ազատությունը երաշխավորելու համար:

Սահմանադրության 45-րդ հոդվածը հռչակում է, որ յուրաքանչյուր քր պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ: Հարկավոր է նշել, որ պետության դիտարկվող իրավունքը համալիր բնույթ ունի, քանի որ իր մեջ է ներառում է՝ ինչպես հարկեր սահմանելու իրավունքը, այնպես էլ՝ դրանք գանձելու իրավունքը: Այսինքն, հարկեր գանձելու համար անհրաժեշտ է դրանք սահմանել օրենքով:

Պետության կողմից հարկային վճարումներ գանձելու համար ստեղծվում են հարկային մարմիններ, որոնք ձևավորում են հարկային օրենսդրության պահպանման նկատմամբ հսկողության իրականացման միասնական համակարգ:

Հետաքրքրական է նշել, որ հարկեր գանձելու ինքնիշխան իրավունքը, ինչպես Հայաստանում, այնպես էլ այլ պետություններում ամրագրված է ոչ թե որպես պետության իրավունք, այլ իբրև օրինականորեն սահմանված հարկերն ու հավաքները վճարելու յուրաքանչյուրի պարտականություն: Ուստի տրամաբանական է, որ հարկերի սահմանման նկատմամբ պետության ինքնիշխան իրավունքը դիտարկվում է այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու, պետության պաշտպանունակությունն ապահովելու համար, իսկ Սահմանադրության 45-րդ հոդվածով ամրագրված հարկեր վճարելու պարտականությունը տարածվում է բոլոր հարկ վճարողների վրա՝ իբրև պետության պարտադիր կատարման պահանջ:

5. Պետության արտակարգ միջոցներ ձեռնարկելու ինքնիշխան իրավունք: Յուրաքանչյուր պետություն իր գործունեության մեջ ստիպված է լինում բախվել բնական, տեխնոլոգիական, սոցիալական և այլ բնույթի հանգամանքների հետ, որոնք խոչընդոտում են պետության գործառույթների իրականացմանը, սպառնում պետական ու հասարակական կարգին, խախտում քաղաքացիների բնականոն կենսակերպը: Որպես կանոն, տվյալ իրադրություններն օբյեկտիվորեն արտակարգ միջոցներ են պահանջում, որոնք պայմանավորում են պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեության հատուկ ընթացակարգ, որոնք չեն կիրառվում առօրյա գործունեության մեջ: ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ կետի համաձայն՝ Հանրապետության Նախագահը սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում, խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ, հայտարարում է արտակարգ դրություն, իրականացնում է իրավիճակից թելադրվող միջոցառումներ և այդ մասին ուղերձով դիմում է ժողովրդին:

Հայաստանի Հանրապետությունում այդպիսի միջոցներ կիրառվում են արտակարգ դրության իրավական ռեժիմի սահմաններում:

Դիտարկված ինքնիշխան իրավունքներն ընդգրկվում են պետության ինքնիշխանության կառուցվածքում և դրանք հանդիսանում են հիմնականը: Սակայն, բացի այդ իրավունքներից, իրավական ակտերի համակարգային վերլուծությունից կարելի է բխեցնել նաև պետության այնպիսի ինքնիշխան իրավունքներ, ինչպիսիք են, օրինակ, պետական իշխանության մարմինների համակարգի սահմանումը, բնական հարստությունների օգտագործումը, քաղաքացիության սահմանումը, պետական լեզվի սահմանումը, քաղաքական ապաստանի տրամադրումը և այլն:

Դիտարկված ինքնիշխան իրավունքները կազմում են պետական ինքնիշխանության ներքին կողմը, քանի որ դրանց իրացման տարածք է հանդիսանում Հայաստանի Հանրապետության ողջ տարածքը: Միևնույն ժամանակ, առկա են Հայաստանի Հանրապետության ինքնիշխան իրավունքներ, որոնց իրացման շրջանակներն առնչվում են գլխավորապես այլ պետությունների ու միջազգային կազմակերպությունների հարաբերությունների հետ:

Միջազգային պայմանագրեր կնքելու իրավունք: Պետությունների միջև հարաբերությունների սահմանման ու կայուն զարգացման համար անհրաժեշտ է դրանց փոխգործակցության ու փոխհարաբերությունների կարգավորում, որն իր մարմնավորումն է գտնում, որպես կանոն, միջազգային պայմանագրերի միջոցով: «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքով՝ միջազգային պայմանագրերը ձևավորում են միջպետական հարաբերությունների իրավական հիմքը, նպաստում համընդհանուր խաղաղության ու անվտանգության պահպանմանը, միջազգային համագործակցության զարգացմանը՝ Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրության նպատակներին ու սկզբունքներին համապատասխան: Միջազգային պայմանագրերին կարևոր դեր է պատկանում մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը, պետությունների օրինական շահերի պաշտպանության գործում: Այսպիսով, միջազգային պայմանագրերի միջոցով Հայաստանի Հանրապետությունը հնարավորություն ունի ապահովել իր և իր քաղաքացիների օրինական շահերն ու իրավունքները՝ միջազգային հարաբերություններում:

Ըստ ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ՝ Ազգային ժողովը Հանրապետության Նախագահի առաջարկությամբ վավերացնում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:

Միջազգային կազմակերպությունների մասնակցելու իրավունք: Պետության ու դրա քաղաքացիների շահերի ապահովումն իրականացվում է ոչ միայն միջազգային պայմանագրերին մասնակցելու կամ միանալու միջոցով, այլև որոշակի ընդհանուր նպատակներին հասնելու համար ստեղծվող տարբեր միջազգային կազմակերպություններին անդամակցելու միջոցով: Այդ կապակցությամբ այնպիսի կազմակերպություններին մասնակցելը, որոնց միջոցով պետությունը հնարավորություն է ստանում ապահովել սեփական շահերը նաև սեփական տարածքից դուրս, հանդիսանում է չափազանց արդիական, հատկապես ներկա ժամանակներում:

ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով:

Պետության ինքնիշխան իրավունքներից անհրաժեշտ է նշել նաև պատերազմ հայտարարելու և խաղաղություն հաստատելու, ինչպես նաև պետական սահմաններից դուրս գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու իրավունքները:

Նախ, անհրաժեշտ է կարևորել այն, որ ՄԱԿ-ի Կանոնադրությունը և միջազգային իրավական այլ ակտերը պետությունների պատերազմի իրավունք չեն նախատեսում: Ավելին, նույն ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածը սահմանում է, որ պետության անհատական կամ կոլեկտիվ ինքնապաշտպանության իրավունքը՝ այն դեպքում, եթե տեղի է ունենում զինված հարձակում ՄԱԿ-ի անդամ-պետության վրա: Ընդ որում, ինքնապաշտպանության իրավունքը կարող է օգտագործվել միայն այնքան ժամանակ, քանի դեռ ՄԱԿ-ի Անվտանգության Խորհուրդը չի ընդունել միջազգային իրավունքի ու անվտանգության պահպանման համար անհրաժեշտ միջոցները:

Այնուհետև, Հայաստանի Հանրապետության պետական իշխանության գերակայությունը չի սահմանափակվում պետական տարածքի սահմաններով, և պետությունը չի կորցնում երկրի սահմաններից դուրս մեկնած իր քաղաքացիների հետ իրավական կապը: Տվյալ կապն իրականացվում է քաղաքացիության ինստիտուտով ու բավականաչափ խիստ է, քանի որ ենթադրում է օրենսդրության գործողության տարածումը ՀՀ քաղաքացիների առանձին փաստական ու իրավաբանական գործողությունների վրա, որոնք կատարվել են օտար պետությունների տարածքում:

Մյուս կողմից, չի կարելի ենթադրել, որ տվյալ իրավական կապն ունի բացառապես միակողմանի բնույթ, քանի որ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածը երաշխավորում է, որ պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Այսպիսով, պետությունը հետևելով իրավունքի նորմերին ցուցաբերում է հանրային իշխանության էությանը համարժեք վարքագիծ՝ իր ինքնիշխան իրավունքների միջոցով: Այդ իրավունքները կազմում են պետության ինքնիշխանության իրավաբանական բովանդակությունը և իրենց իրացումն են գտնում բացառապես ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրման միջոցով:

Բանալի բառեր. ինքնիշխանություն, ինքնիշխան իրավունք, ինքնիշխան իրավունքի իրացում, ինքնիշխան իրավունքների դասակարգում:

Գրականություն

1. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, Եր., 2012, 1040 էջ,
2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Եր., 2010, 678 էջ,
3. Троицкая АЛ Государственный суверенитет: ограничение или трансформация содержания? // Конституционное и муниципальное право, 2006.

4. Конституционное право: Энциклопедический словарь / Отв. ред. С.А.Авакьян. М., 2000.
5. Вопросы теории и практики публичной власти: Коллективная монография. Екатеринбург: 2005.
6. Левин И.Д. Суверенитет. СПб.: 2003.
7. Кутафин О.Е. Предмет конституционного права. М.: 2001. §2 338.

СУВЕРЕННЫЕ ПРАВА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И ПРОБЛЕМЫ ИХ РЕАЛИЗАЦИИ

А.А. Хачатрян

Резюме

В статье проанализированы суверенные права Республики Армения, рассматриваются проблемы их реализации, также соотношений суверенитета и суверенных прав государства. Исследованы конституционно-правовые регулирования суверенных прав государства, также разные научные подходы и взгляды, даны понятие и виды суверенных прав государства.

Ключевые слова: суверенитет, суверенные права, реализация суверенных прав, виды суверенных прав.

SOVEREIGN RIGHTS AND THE PROBLEMS OF THEIR REALIZATION OF THE REPUBLIC OF ARMENIA

A.A. Khachatryan

Summary

In this article sovereign rights and their theoretical-legal realization, as well as the analysis of the main problems of the correlation of state sovereignty and sovereign rights are discussed. Analyzing the constitutional and legal regulations, the different scientific views and approaches, the definition of sovereign rights was given and implemented their classification.

Key words: Sovereignty, sovereign right, the realization of sovereign rights, the classification of sovereign rights.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԻԶԻՏԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Ա.Ա. Խաչատրյան

Հողվածում անդրադարձ է կատարվում Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության երաշխիքների տեսական-իրավական հիմնախնդիրների վերլուծությանը: Վերլուծելով տարբեր գիտական հայացքներ ու մոտեցումներ, տրվել է ինքնիշխանության երաշխիքի սահմանումը և իրականացվել երաշխիքների դասակարգումը:

Պետության գործունեության արդյունավետության բարձրացման առանցքային հարցերից է ինքնիշխանության երաշխիքների համակարգի սահմանումը: Ընդ որում, և քաղաքական համակարգում, և միջազգային հարաբերություններում պետության շահի առաջնայնությունը՝ որպես ընդհանուր կանոն, միաժամանակ ընկալվում է պետական ինքնիշխանության ապահովման երաշխիք:

Հայաստանի Հանրապետության համար ինքնիշխանության հիմնախնդիրը՝ աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում, սահմանակցում է հայ ժողովրդի ինքնագոյության պահպանման հիմնախնդրի հետ: Քանի որ յուրաքանչյուր պետություն իր ներքին ու արտաքին գործառույթների իրականացման ժամանակ գտնվում է որոշակի մրցակցային միջավայրում, ուստի տարբեր գործոնների կամ սպառնալիքների առկայությունն ինքնաբերաբար բացասական ներգործություն է ունենում ինքնիշխանության երաշխավորման վրա:

Հենց այդ առումով, պետական ինքնիշխանությունն անհրաժեշտ է դիտարկել որպես հայ ժողովրդի համար իր ապագայի ինքնուրույն ընտրության հնարավորությունների երաշխիք: Դա, ըստ պրոֆեսոր Վ.Դ. Զորկինի արդարացի պնդմանը, վկայում է այն պահանջարկվածության մասին, ըստ որի՝ սահմանադրագետների միջազգային ընկերակցությունը պետք է վերլուծի պետական ինքնիշխանությունն ու դրա լիարժեք ապահովման ժամանակակից երաշխիքները¹:

Կապված շարադրվածից, օրինաչափ է, որ ցանկացած պետության ինքնիշխանության իրողության և արդյունավետության պահ-

¹ Зорькин В.Д. Апология Вестфальской системы //Рос. газ. 2004, 13 июля.

պանման համար անհրաժեշտ են դրա ապահովման բազմազան ու մշտական երաշխիքներ: Եվ այդպիսի երաշխիքների մշակումը և դրա հետ կապված հիմնախնդիրների լուծումը հատուկ տեղ են գրավում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության մեջ: Հայաստանի Հանրապետության նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագրով հաստատված Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությամբ՝ ազգային անվտանգության հիմնարար արժեք է սահմանվել անկախությունը, ինչը այդ ռազմավարության տրամաբանությամբ, նշանակում է. Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է: Միաժամանակ, բանակաշինության բնագավառում որպես ռազմավարության նպատակ է դիտարկվել պետության այնպիսի պաշտպանական ներուժի ապահովումը, որն անհրաժեշտ է, այդ թվում Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը պաշտպանելը:

Պետք է նկատել, որ հենց Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը պաշտպանությունը կարող է արդյունավետ իրականացնել այդ ինքնիշխանության համար անհրաժեշտ համապատասխան երաշխիքների ապահովման պարագայում: Այդպիսիք բխում են, մասնավորապես, Հայաստանի անկախության հռչակագրի 2-րդ կետով սահմանված դրույթի բովանդակությունից, այն է. Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան պետություն է՝ օժտված պետական իշխանության գերակայությամբ, անկախությամբ, լիիրավությամբ: Իսկ «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է, որ ռազմական դրություն հայտարարվում է միայն այն հանգամանքների առկայության դեպքում, որոնք անմիջականորեն սպառնում են նաև Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությանը:

Հիշատակված նորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ ինքնիշխանության պահպանումը, պաշտպանությունը և ապահովումը իրականացվում է պետական իրավասու մարմինների կողմից համապատասխան միջոցների ու պայմանների առկայությամբ: Իսկ դա ենթադրում է, որ պետության ինքնիշխանության ապահովման, պահպանման ու պաշտպանության հնարավոր միջոցները և պայմանները, հետևաբար՝ դրանց իրագործումն իրականացնող

պետական մարմիններն ու նրանց պաշտոնատար անձինքն կազմում են ինքնիշխանության երաշխիքները:

Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ բացակայում է «ինքնիշխանության երաշխիքներ» եզրույթի նորմատիվային սահմանումը, այնուամենայնիվ, հայրենական սահմանադրական իրավունքի գիտության մեջ ամբողջական հայեցակարգային ձևակերպում չի ստացել: Արտասահմանյան առանձին հեղինակներն իրենց գիտական հետազոտություններում անդրադարձ կատարել են պետական ինքնիշխանության երաշխիքների հիմնախնդրին, հաշվի առնելով տվյալ ներպետական օրենսդրության առանձնահատկությունները²:

Անհրաժեշտ է նկատել, որ մասնագիտական գրականության մեջ փորձեր են արվում հետազոտության առարկա հասկացության բովանդակությունը բացահայտել նաև հարակից կամ մասամբ աղերսներ ունեցող հասկացությունների համատեքստում: Այսպես, պրոֆեսոր Վ.Գ. Աննենկովան նշում է պետության միասնության երաշխիքների մասին՝ դիտարկելով դրանք որպես պետության միասնության իրական գործող և զարգացող իրավական ինստիտուտների ապահովման պայմաններ և միջոցներ, որպեսզիք են՝ տարածքը, պետական իշխանությունը, անձի իրավական կարգավիճակը, պետության դաշնային սուբյեկտների միասնությունը, իրավական տարածքի միասնությունը, տնտեսական միասնությունը³:

Դժվար չէ նկատել, որ՝ որպես պետական միասնության ինստիտուտներ, Վ.Գ.Աննենկովան դիտում է, ամենահիմնականը՝ տարածքի, իրավական և տնտեսական տարածքի միասնությունը, պետական իշխանության միասնությունը: Այդ ընթացքում նշված ինստիտուտներն իրենց քաղաքական ու իրավական էությանը ներկայացնում են պետական ինքնիշխանության դրսևորումները և ամբողջությամբ ընդգրկում են նրա բովանդակությունը: Այս ձևով, պետության միասնության

² Амиров М.Г. Суверенитет и территориальная целостность России как конституционно-правовые принципы: Дис.... канд. юр ид, наук. Махачкала, 2004, Горюнов В.В. Суверенитет Российской Федерации: сущность, содержание, гарантии: диссертация... кандидата юридических наук: М.: 2007.

³ Анненкова В.Т. Единство Российского государства: проблемы конституционной теории и практики: Автореф. дисс.... докт. юрид. наук. М., 2006. էջ 12:

երաշխիքների հասկացության սահմանմամբ՝ նա բավականին մոտ է պետական ինքնիշխանության երաշխիքների հասկացության սահմանմանը:

Պատահական չէ, որ նույն հեղինակի կողմից առանձնացված պետական միասնության երաշխիքների տեսակները, գործնականում համընկնում են ինքնիշխանության երաշխիքների հետ, որոնք սովորաբար մասնագիտական գրականության մեջ դասակարգվում են՝ իրավականի, կազմակերպչականի, քաղաքականի, հոգևորի⁴:

Բավականին հետաքրքիր տեսակետ է արտահայտել Դ.Վ. Շումկովը, ըստ որի՝ պետական ինքնիշխանության ապահովման առանձնահատուկ կառուցակարգերից է այն միջոցների, գործողությունների ու սկզբունքների համակարգը, որոնց օգնությամբ երաշխավորվում է հանրային քաղաքական իշխանության անկախությունն ու ինքնուրույնությունը: Այս դեպքում, հեղինակի հարցադրումն ուղղված է ոչ այնքան ինքնիշխանության երաշխիքներին, որքան՝ ինքնիշխանության ապահովման տնտեսական, ռազմական, քաղաքական և գաղափարական միջոցներին⁵: Նույն հեղինակի այդ հայեցակարգի տրամաբանությամբ, ինքնիշխանության երաշխիքների ներքո անհրաժեշտ է նկատի ունենալ այն կառուցակարգերի ամբողջությունը, որոնք ուղղված են պետական ինքնիշխանության ապահովմանը:

Թերևս, անհրաժեշտ է նկատել ևս մեկ կարևոր հանգամանք, որ մասնագիտական գրականության մեջ ինքնիշխանության երաշխիքները բովանդակային առումով հաճախ նույնականացվում են նրա հիմքերի հետ: Չնայած ինքնիշխանության երաշխիքների ու ինքնիշխանության հիմքերի իմաստային բովանդակությունը տարբեր են, սակայն, պետական ինքնիշխանության տեսանկյունից թույլատրելի է նաև դիտարկել դրանց միատարրության հարցը: Այսպես, օրինակ, եթե ժողովրդական ինքնիշխանությունը հանդիսանում է պետական ինքնիշխանության հիմքը, ապա ասվածին համարժեք է այն, որ առաջինը (ժողովրդական ինքնիշխանություն) հանդիսանում է երկրորդի (պետական ինքնիշխանություն) երաշխիքը: Ի վերջո, և հիմքերը, և ե-

⁴ Նույն աշխ. էջ 35:

⁵ Шумков Д.В. Социально правовые основания государственного суверенитета Российской Федерации (историко-теоретический анализ): Дисс.... докт. юрид. наук. СПб., 2002. էջ 273:

րաշխիքներն իրենց նշանակությամբ միտված են պետական իշխանության ինքնիշխանության ապահովմանը:

Պետական ինքնիշխանության երաշխիքների իրավաբանական վերլուծությունը լիարժեք չի լինի, առանց հետազոտելու նրա սոցիալ-քաղաքական էությունը, նախապես դասակարգելով ինքնիշխանության երաշխիքներն ըստ տեսակների: Պետք է նշել, որ մասնագիտական գրականության մեջ ձևավորվել է ավանդական մոտեցում այն մասին, թե ինչպիսի երաշխիքների տեսակներ կարելի է առանձնացնել: Այսպես, օրինակ, խորհրդային ժամակաշրջանում առանձնացվում էին՝ տնտեսական, սոցիալ-քաղաքական, գաղափարական, կազմակերպական-քաղաքական և իրավական երաշխիքներ⁶, իսկ ժամանակակից իրավագետների կողմից հետազոտման առարկա են դիտարկվում ոչ թե ինքնիշխանության երաշխիքները, այլ՝ ինքնիշխանության ապահովման միջոցները՝ դասակարգելով դրանք՝ տնտեսականի, քաղաքականի, ռազմականի, գաղափարականի, իրավականի⁷:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ է կարևորել առաջնային նշանակություն ունեցող իրավական երաշխիքները, որոնց օգնությամբ պետությունը նպատակաուղղված ներգործություն է ունենում հասարակական ու քաղաքական հարաբերությունների վրա:

Այդ իմաստով՝ իրավական երաշխիքները իրավական ակտերով ամրագրված ինքնիշխանության ապահովման այն միջոցներն են, որոնց միջոցով պետությունը կանխարգելում կամ չեզոքացնում է իր ինքնիշխանության դեմ ուղղված հնարավոր կամ իրական սպառնալիքները: Հատկապես այս դեպքում անհրաժեշտ է առանձնացնել սահ-

⁶ Безуглов Л.Л. Суверенитет советского народа, М.: Юрид. лит., 1975 և Вихарев С.Р. “В.И.Ленин о суверенитете союзных республик”, Минск: 1969. էջ 176 և ուրիշներ:

⁷ Սկզբունքորեն վերջին դասակարգումը համընկնում է առանձին երկրների (Ռուսաստանի Դաշնություն, Բելառուսի Հանրապետություն և այլն) օրենսդրական կարգավորումների հետ: Այսպես, օրինակ, Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքականության հայեցակարգում խոսք է գնում պետական ինքնիշխանության պաշտպանության քաղաքական, իրավական, արտաքին տնտեսական և այլ միջոցների մասին, իսկ «Անվտանգության մասին» ՌԴ օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է, որ անվտանգության բնագավառում իրականացվում է միասնական պետական քաղաքականություն տնտեսական, քաղաքական, կազմակերպչական և այլ բնույթի միջոցառումների միջոցով: Шымков Д.В. Նույն աշխ. էջ 273:

մանադրական այն երաշխիքները, որոնք սահմանվել են ՀՀ Սահմանադրությամբ:

Որպես կանոն, ինքնիշխանության իրավական երաշխիքները պետք է համարժեք լինեն այն սպառնալիքներին, որոնք իրականում գոյություն ունեն կամ կարող են տեղիք տրվել: Դա նշանակում է, որ համապատասխան իրավակարգավորման միջոցով անհրաժեշտ է ժամանակին լուծել առկա խնդիրը: Այսինքն, ինքնիշխանության երաշխիքներին իրավական ձև հաղորդելն ինքնին անհրաժեշտ ու կարևոր գործընթաց է, որը կոչված է ապահովել մարդու իրավունքների իրացումը և այդ իրավունքների պաշտպանությունը պետության կամայական միջամտությունից: Այդ իմաստով, ինքնիշխանության երաշխիքների հստակ ու համարժեք իրավական ամրագրումը բխում է ոչ միայն պետության շահերից, այլև՝ հանդիսանում մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանության յուրահատուկ երաշխիք:

Պետական ինքնիշխանության իրավական երաշխիքների դիտարկման ժամանակ, մեր կարծիքով, անհրաժեշտ է հաշվի առնել, որ այդ ինքնիշխանության իրավական բովանդակությունն ու իրավական երաշխիքներն ունեն ընդհանուր աղերսներ և միասնական ծավալներ՝ պայմանավորված այն հիմնավորմամբ, որ հենց ինքնիշխանության բովանդակությունն է արտահայտվում երաշխիքների ապահովման միջոցով:

Այսպես, համակարծիք լինելով հայ իրավագետների այն պնդման հետ, ըստ որի, պետական ինքնիշխանության իրավական բովանդակությունը դրսևորվում է պետական իշխանության գերակայության, նրա միասնության և անկախության մեջ⁸, ինչը, ենթադրաբար, համարժեք է այն եզրահանգման հետ, որ ինքնիշխանության երաշխիքների ապահովումն ունի այն նույն նշանակությունը, ինչ իրավական բովանդակությունը: Այս համատեսքում, Հայաստանի Հանրապետության՝ որպես ինքնիշխան պետության գոյության հիմնական կամ երաշխիքային նշանակություն ունեցող պայմաններ կարող են դիտարկվել՝ պետական իշխանության գերակայությունը, պետության միասնությունն ու անկախությունը:

⁸ Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, Եր., 2012, էջ 121-122:

Ընդ որում, անհրաժեշտ է նկատել, որ՝ եթե պետական իշխանության գերակայության երաշխավորման ժամանակ անհրաժեշտ է բացառել որևէ այլ իշխանությանը պետական իշխանության ենթակայությունը, իսկ ինքնիշխանության անկախությունն արտահայտվում է միջազգային հարաբերություններում պետական իշխանության այլ պետությունների իշխանություններին չենթարկվելու իմպերատիվությամբ, ապա պետական ինքնիշխանությունն ի հայտ է գալիս պետության և նրա իշխանության միասնության մեջ: Այսինքն, պետության ինքնիշխանությունը՝ որպես նրա քաղաքական-իրավական հատկություն, արտահայտվում է երկրի ներսում պետական իշխանության գերակայությամբ և արտաքին հարաբերություններում՝ անկախությամբ⁹:

Սակայն, սահմանադրական նորմերի շրջանակում պետական իշխանության միասնությունը կարող է արտահայտվել տարբեր նշանակությամբ և ընկալումով: Այսպես, կա տեսակետ այն մասին, որ այդպիսի միասնությունը բացահայտվում է այնպիսի ինստիտուտների միջոցով, ինչպիսիք են՝ միասնական տարածքը, պետական իշխանության միասնությունը, միասնական իրավական տարածքը, միասնական տնտեսական տարածքը, մարդու և քաղաքացու իրավական միասնական կարգավիճակը¹⁰:

Այս համատեքստում անհրաժեշտ է կարևորել այն, որ պետական իշխանության միասնականության ապահովման հիմնախնդիրն առաջին հերթին պայմանավորված է հենց պետական ինքնիշխանության իրավական երաշխիքների միասնությամբ: Այդպիսիք փոխկապակցվում են իրավական միասնական պետության մեջ դրանց գոյության հետ, որոնք հոչակվել են Սահմանադրության 1-ին հոդվածով և բխում են 3, 5, 6, 8-րդ և այլ հոդվածների բովանդակությունից: Տվյալ դեպքում՝ բացի միասնական իրավական ու տնտեսական տարածքից, խոսք կարող է գնալ նաև Հայաստանի Հանրապետության տարածքա-

⁹ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Եր., 2010, էջ 40:

¹⁰ Ըստ ռուս իրավագետ Վ.Գ.Անենկովայի՝ պետության միասնությունը բացահայտվում է սահմանադրաիրավական այնպիսի ինստիտուտների միջոցով, ինչպիսիք են՝ միասնական տարածքը, պետական իշխանության միասնությունը, միասնական իրավական տարածքը, միասնական տնտեսական տարածքը, մարդու և քաղաքացու իրավական միասնական կարգավիճակը. // Анненкова В.Т. Նույն աշխ. էջ 10:

յին ամբողջականության և ժողովրդի շահերից ելնելով պետական իշխանության իրականացման երաշխավորման մասին:

Նախ, տարածքային ամբողջականության և դրանից բխող անձեռնմխելիության երաշխավորման նկատմամբ ցանկացած դրսևորում կամ ոտնձգություն նշանակում է ինքնիշխան պետության իշխանության իրականացման դեմ կատարված խախտում: Իսկ այդպիսի խախտումների կանխարգելման կամ չեզոքացման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ամրագրվել են որոշակի երաշխիքներ: Այսպես, ՀՀ Սահմանդրության 49-րդ հոդվածը հռչակում է, որ Հանրապետության Նախագահը Հայաստանի Հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորն է: Իսկ «Ռեզոլուցիայի կազմակերպության վիճակի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ ռազմական դրություն հայտարարվում է միայն այն հանգամանքների առկայության դեպքում, որոնք անմիջականորեն սպառնում են Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությանը, անվտանգությանը, տարածքային ամբողջականությանը և դրանով պայմանավորված՝ քաղաքացիների կյանքին ու անվտանգությանը, և այդ հանգամանքների վերացումն անհնարին է առանց արտակարգ միջոցներ ձեռնարկելու:

Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ տարածքային ամբողջականության ապահովման որոշակի երաշխիքներ ամրագրվել են նաև առանձին միջազգային իրավական ակտերում: Մասնավորապես, ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածով նախատեսվում են դրույթներ որևէ պետության կողմից մեկ այլ պետության նկատմամբ զինված հարձակման դեպքում հնարավոր հակազդման և հավաքական պաշտպանությունը կազմակերպելու վերաբերյալ: Գրեթե նույնաբովանդակ դրույթ ամրագրված է Հավաքական անվտանգության կազմակերպության մասին 1992 թվականի մայիսի 15-ին ստորագրված պայմանագրով (հոդվ. 4):

Ինչ վերաբերում է միասնական իրավական տարածքի երաշխիքների ապահովման խնդրին, ապա անհրաժեշտ է նշել, որ այն անմիջականորեն փոխկապակցվում է իրավաստեղծ գործընթացների միասնականության ապահովման, իրավական ակտերի աստիճանակարգված ենթակայության և այլ սկզբունքների իրացման հետ: Ընդ որում, միասնական իրավական տարածքի երաշխիքների համակարգի

կատարելագործումն ինքնին պայմանավորված է իրավակիրառ պրակտիկայում այդ սկզբունքների իրացման արդյունավետության ապահովման անհրաժեշտությամբ:

«Սահմանադրության 8, 89-րդ և մի շարք այլ հոդվածների բովանդակությունից բխում է միասնական տնտեսական տարածքի երաշխավորման անհրաժեշտությունը: Ընդ որում, ինքնիշխանության իրավական այս երաշխիքների ներքո անհրաժեշտ է ընկալել տնտեսական այնպիսի միջոցների ամբողջություն, որոնց իրագործումն ինքնաբերաբար պահանջում է տնտեսական հարաբերությունների կարգավորման հատուկ իրավական ընթացակարգերի իրականացում: Այս առումով, կարծում ենք արդարացի է այն պնդումը, ըստ որի՝ միասնական տնտեսական տարածքի երաշխիքներն առաջին հերթին պայմանավորված են միասնական քաղաքացիական, ֆինանսական, տնտեսական օրենսդրության առկայությամբ¹¹:

Ինքնիշխանության իրավական հաջորդ կարևոր երաշխիքն առնչվում է ժողովրդի շահերին համահունչ պետական իշխանության իրականացման երաշխավորման հետ: Այս երաշխիքի հիմքում ընկած է այն գաղափարը, ըստ որի՝ պետությունն իշխանությունը ստանում է ժողովրդից, ինչը ենթադրում է, որ պետական իշխանությունն ածանցվում է ժողովրդական իշխանությունից: Հետևաբար, պետական իշխանությունը պայմանավորված պետք է լինի ժողովրդի կամքով ու պահանջներով և նպատակաուղղվի ժողովրդի շահերի բավարարմանը:

Այսպիսով, ընդհանրացնելով, կարելի է նշել, որ պետական իշխանության միասնականության ապահովումը պայմանավորված է պետական ինքնիշխանության որոշակի իրավական երաշխիքների առկայությամբ, դրանք են՝ միասնական իրավական ու տնտեսական տարածք, պետության տարածքային ամբողջականության ու անձեռնմխելիություն, ինչպես նաև ժողովրդի շահերին ուղղված պետական իշխանության իրականացում:

Ինքնիշխանության հաջորդ խումբ երաշխիքները կազմում են քաղաքական, հոգևոր և տնտեսական, որոնք սույն հետազոտության

¹¹ Кузоакин Д.В. Обеспечение единства экономического пространства Российской Федерации (конституционно-правовое исследование): Автореф. Дисс...канд. юрид. наук. Омск, 2005, էջ 17,18:

շրջանակում առաջարկվում է դիտարկել որպես պետական իշխանության իրականացման քաղաքական, հոգևոր և տնտեսական որոշակի պայմանների առկայություն, որոնք պետական իշխանության ինքնիշխան հատկությունների ապահովման վրա անմիջական ներգործություն են ունենում:

Կարևորելով պետական ինքնիշխանության քաղաքական երաշխիքների ապահովման խնդիրը, անհրաժեշտ է նկատել, որ պետության իշխանությունը՝ առանց քաղաքական համակարգի այլ սուբյեկտների հետ փոխգործակցության և բարոյահոգեբանական այլ գործոնների հաշվառմամբ, չի կարող իրականացնել պետական ու հասարակական գործերի անկախ և բարձրագույն կառավարում:

Հանդիսանալով քաղաքական համակարգի կենտրոնական սուբյեկտ, պետությունը փոխգործակցում է այդ համակարգի մյուս սուբյեկտների հետ: Եվ սոցիալական այդ կապերով պայմանավորված ցանկացած դրսևորում կոչված է ինքնին նպաստելու պետության ինքնիշխանության երաշխավորմանը կամ, ընդհակառակը, թուլացնում է այդ հատկությունները:

Առաջին հերթին անհրաժեշտ է նկատի ունենալ ժողովրդին՝ որպես պետության քաղաքական հիմունք: Ինչպես արդարացիորեն նշել է Զ.Լոկկը, «յուրաքանչյուր պետության կազմավորման հիմքում ընկած է ժողովրդի համերաշխ համաձայնությունը»¹²: Այսինքն, պետությունը՝ որպես քաղաքական համակարգի ակտիվ սուբյեկտ, իր նպատակներն իրագործելու համար պետք է ունենա ժողովրդի աջակցությունն ու համաձայնությունը: Իհարկե, այս խնդրում պետության և քաղաքացիների հարաբերություններում կարևոր դերակատարությունը պատկանում է պետական իշխանության մարմինների ընտրություններին: Ընդ որում, եթե ընտրությունների արդյունքներն ունեն համաժողովրդական որոշմանը համարժեք բնույթ, ապա այդ ընտրությունների արդյունքներով ձևավորված պետական իշխանության մարմիններն ինքնին ընկալվում են որպես օրինական (լեգիտիմ):

Հետևաբար, ժողովրդի կողմից պետական քաղաքականությանը աջակցելը հանդիսանում է պետական ինքնիշխանության առավել էական երաշխիքներից մեկը: Ի վերջո, պետական իշխանությունը դա ա-

¹² История политических и правовых учений. Под общ. ред. В.С. Нерсесянца. М.: 2008, էջ 271:

ռաջին հերթին ժողովրդի իշխանություն է համաժողովրդական խնդիրները լուծելու համար:

Դրա համար, պետական իշխանությունն ինքնաբերաբար պետք է վերածվի ժողովրդական ինքնիշխանության, կամ ինչպես արդարացիորեն նշել է պրոֆեսոր Է.Թադևոսյանը. «ժողովրդական ինքնիշխանությունը հանդիսանում է պետական ինքնիշխանության հիմքը»¹³: Որպեսզի պետությունը լինի ինքնիշխան, այդ դեպքում ժողովուրդն առաջին հերթին պետք է լինի անկախ ու ինքնիշխան իր տարածքի վրա: Դա են հաստատում ՀՀ Սահմանադրության 1-ին և 2-րդ հոդվածներով հռչակված «Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան պետություն է», «Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին» և «Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ընտրությունների միջոցով» դրույթները: Այստեղից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության ժողովրդական ինքնիշխանությունը հանդիսանում է պետության ինքնիշխանության քաղաքական կարևոր երաշխիքը:

Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության քաղաքական հաջորդ կարևոր երաշխիքը դա քաղաքացիական հասարակության առկայությունն է: Այն հանդիսանում է հասարակության կենտրոնական մասը և կազմում բարձր գիտակցականություն ունեցող գործուն անդամների միավորումը, որոնք իրենց հարաբերությունները կառուցում են միմյանց միջև, ինչպես նաև պետության և հասարակության միջև օրենքի և սոցիալական առաջադիմական նորմերի հիման վրա¹⁴:

Բացի այդ, անհրաժեշտ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ իրական ժողովրդավարական պետության համար քաղաքացիական հասարակությունը կարող է դիտարկվել որպես հասարակության առջև ծառայած խորքային խնդիրների լուծման համար յուրահատուկ դաշնակից: Ավելին, քաղաքացիական հասարակության մասնակցությունը առանձին համընդհանուր խնդիրների լուծմանը կարող է դիտարկվել առավել արդյունավետ կամ առաջնային, այն դեպքում, երբ պետության միջամտությունը տվյալ հարցում կարող է անցանկալի հետևանքներ առաջացնել:

¹³ Енгибарян Р.В., Тадевосян Э.В. Конституционное право. М.: 2002, էջ 201-202:

¹⁴ Тихомиров Ю.А. Теория компетенции. М., 2005- С. 108

Այսպիսով, զարգացած քաղաքացիական հասարակության պայմաններում պետությունն օժտված է առավելապես քաղաքական կայունությամբ, հատկապես՝ իր անվտանգությանը սպառնացող վտանգներին հակազդելու նպատակով: Այս տեսակետը համահունչ է նաև պրոֆեսոր Ն.Պաստուխովայի այն պնդմանը, ըստ որի՝ քաղաքացիական հասարակությունը դա պետական ինքնիշխանության քաղաքական հիմունքն է¹⁵:

Ինչ վերաբերում է հոգևոր երաշխիքներին, ապա անհրաժեշտ է նկատել, որ պետական ինքնիշխանության պաշտպանվածության լիարժեքությունն առաջին հերթին պայմանավորված է պետության նկատմամբ իր ժողովրդի վերաբերմունքով և նույն ժողովրդի համախմբվածությամբ:

Իրավական երևույթների ուսումնասիրությունը անհնար է առանց հասարակության քաղաքական ու իրավական գիտակցության հաշվառմամբ: Այստեղ անհրաժեշտ է կարևորել գաղափարականը, որն առավել քան խտացված ձևով արտահայտում է շրջապատող իրականության վերաբերյալ մարդկաց հայացքների, պատկերացումների ու տեսակետների ամբողջությունը:

Գաղափարախոսությունն անմիջականորեն առնչվում է իրավական ու քաղաքական հայացքների ձևավորման հետ, հետևաբար, պետության միասնությունը՝ որպես պետության գոյության և ամրապնդման հիմնական պայման, պայմանավորված է ոչ միայն իրավական ու տնտեսական միասնական տարածքով, այլև այն խարսխվում է պետական քաղաքական դիրքորոշումների, ինչպես նաև ժողովրդի հոգևոր միասնության ամրապնդմանն ուղղված հայրենասիրական մղումների վրա:

Տվյալ դեպքում, խոսք կարող է գնալ պետության և հասարակության կողմից մշտապես իրականացվող կազմակերպարավական այն միջոցառումների և դրանց կառուցակարգերի մասին, որոնք կոչված են ապահովելու Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության հոգևոր հիմունքները: Այս առումով տեղին է մեջբերել հայտնի պատմաբան Ե.Շենկարևային, ով պատմական որոշակի զարգացումների համատեքստում մշակութային գործոնների մասին հարցը դիտարկել է

¹⁵ Пастухова К.Б. Проблемы государственного суверенитета. М.: 2006. Էջ 2Տ2:

որպես պետության ինքնիշխանության զորակցման ու կայացման էական կողմ: Ավելին, նա մշակութաբանությունը փոխկապակցում էր պետության ինքնիշխանության հետ՝ վերջինիս ապահովման ու կայացման հիմքում մատնանշելով պետության քաղաքացիների հայրենասիրական զգացմունքների ու գիտակցության համակարգային կապի առկայությունը¹⁶:

Ընդ որում, մշակութաբանության և պետության ինքնիշխանության հարաբերակցության կարևոր գործոններից կարող են հանդիսանալ, օրինակ, հասարակական կարգի՝ որպես արդարության պահպանման ընկալումը, վստահության ռեժիմը պետական իշխանության նկատմամբ, պետական խորհրդանիշները որպես պետության նկատմամբ վերաբերմունք կամ քաղաքացու արժանապատվության պայման և այլն:

Իհարկե, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ինքնիշխանության հոգևոր երաշխիքները բոլոր դեպքերում սերտաճում են իրավական երաշխիքների հետ, քանի որ հանրային իշխանությունն, ի վերջո, իրականացվում է հենց ժողովրդի շահերին համապատասխան:

Պետական ինքնիշխանության հաջորդ կարևոր երաշխիքը դա տնտեսական երաշխիքներն են: Կարծում ենք, որ այդ երաշխիքները այն տնտեսական գործոնների համախումբն են, որոնք կոչված են նպաստելու տնտեսական հարաբերություններում պետական իշխանության ինքնիշխան հատկությունների իրացմանը:

Տվյալ դեպքում, անհրաժեշտ է զանազանել ինքնիշխանության տնտեսական երաշխիքները պետության տնտեսական միասնական տարածքի երաշխիքից:

Ինչպես արդեն նշվեց, եթե պետության տնտեսական միասնական տարածքի երաշխիքը՝ որպես պետության ինքնիշխանության իրավական երաշխիք, իրենից ներկայացնում է հատուկ իրավական միջոցներ՝ իրենց կիրառման և իրականացման կառուցակարգերի առանձնահատկությամբ, ապա պետության ինքնիշխանության տնտեսական երաշխիքները կոչված են ստեղծելու առավել բարենպաստ պայմաններ պետության և հասարակության տնտեսական գործունեության իրականացման համար:

¹⁶ Шенкарева Е.О. Социокультурные факторы поддержания суверенитета (на примере истории Черногории XV-XVIII вв.); Дисс...канд. истор. наук. М., 2003, էջ 64:

Ըստ պրոֆեսոր Ն.Պաստուխովայի, այդ երաշխիքների տակ անհրաժեշտ է նկատի ունենալ պետության տարածքն՝ իր բնական ռեսուրսներով, տնտեսական զարգացման մակարդակով, արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների բնույթով, գիտական ներուժով, մարդկային ռեսուրսներով, որոնք համախմբված կարգով դիտարկվում են պետության ինքնիշխանության կարևորագույն պայման¹⁷:

Բացի այդ, անհրաժեշտ է նկատել, որ ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածով տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը երաշխավորող դրույթը համակարգային առումով փոխկապակցվում է Սահմանադրության 33.1-րդ հոդվածի հետ, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք ունի օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք:

Սահմանադրական հիշատակված նորմերի համադրված վերլուծությունից բխում է, որ Հայաստանի Հանրապետությունում հանրային և մասնավոր շահերի հարաբերական հաշվեկշռվածության ապահովման համար անհրաժեշտ տնտեսական բարենպաստ պայմանների ստեղծումն ու երաշխավորումը դիտարկվում է պետության քաղաքական և տնտեսական կայունության ապահովման կարևոր պայման:

Այսպիսով, պետության ինքնիշխանության երաշխիքների դասակարգումը և դրանց իրավաբանական վերլուծությունը վկայում են, որ դրանք ինքնիշխանության ապահովման այն միջոցներն են, որոնց միջոցով պետությունը կանխարգելում կամ չեզոքացնում է իր ինքնիշխանության դեմ ուղղված հնարավոր կամ իրական սպառնալիքները: Ընդ որում, դրանց իրավական ձև հաղորդելն ինքնին անհրաժեշտ ու կարևոր գործընթաց է, որը կոչված է ապահովել մարդու իրավունքների իրացումը և այդ իրավունքների պաշտպանությունը պետության կամայական միջամտությունից, ինչը բխում է ոչ միայն պետության շահերից, այլև՝ հանդիսանում մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանության յուրահատուկ երաշխիք:

Բանալի բառեր. ինքնիշխանություն, ինքնիշխանության երաշխիքներ, իրավական երաշխիքներ, երաշխիքների դասակարգում:

¹⁷ Пастухова Е.В. Նույն աշխ. էջ 282:

Գրականություն

1. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, Եր., 2012, 1040 էջ,
2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Եր., 2010, 678 էջ,
3. Енгибарян Р.В., Тадевосян Э.В. Конституционное право. М.: 2002,
4. История политических и правовых учений. Под общ, ред. В.С. Нерсесянца. М.: 2008,
5. Пастухова К.Б. Проблемы государственного суверенитета. М.: 2006.
6. Тихомиров Ю.А. Теория компетенции. М., 2005:

ГАРАНТИИ СУВЕРЕНИТЕТА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

А.А. Хачатрян

Резюме

Статья посвящена анализу теоретико-правовых проблем гарантий суверенитета Республики Армения. Проанализированы разные научные подходы и взгляды, даны понятие и виды гарантий суверенитета.

Ключевые слова: суверенитет, гарантии суверенитета, юридические гарантии, виды гарантий.

SOVEREIGNTY GUARANTEES OF THE REPUBLIC OF ARMENIA

A.A. Khachatryan

Summary

The article reflects the analysis of the theoretical and legal main problems of the guarantees of sovereignty. The definition of sovereignty guarantee was given and the classification of the guarantees implemented by analyzing different scientific views and approaches.

Key words: Sovereignty, Sovereignty guarantee, legal guarantee, the classification of guarantee.

ՊՐՈՔԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վ.Ա. Բաղդասարյան

Հոդվածը նվիրված է պրոբացիայի ծառայողի իրավական կարգավիճակի հիմնախնդիրների ու առանձնահատկությունների հետազոտությանը: Հեղինակի կողմից կատարված եզրահանգման արդյունքում նշվել է, որ պրոբացիայի ծառայության մեջ առաջնային դերակատարությունը պետք է վերապահել պրոբացիայի ծառայողին, նրա հանրային վարքագծի նշանակությանը և այդ բնագավառում հանրային ծառայողական հարաբերությունների իրավական կարգավորումներին:

Պրոբացիայի ծառայությունը որպես մասնագիտական գործունեության տեսակ, բազմաբնույթ է և դրա բարդությունը ենթադրում է տվյալ գործունեության առավել հստակ կազմակերպում, կանոնակարգում և համակարգում: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ գոյություն ունեն գիտականորեն հիմնավորված և պրակտիկ փորձով ամրապնդված այդ ծառայության կազմակերպման և գործունեության իրականացման տարբեր ձևեր, սահմանակարգեր և ընթացակարգեր¹: Սակայն, դրանց հիմնարար վերլուծությունը ցույց է տալիս, որ նման ծառայության ճիշտ և նպատակային կազմակերպելու նկատառումով առաջնային դերակատարությունը պետք է վերապահել պրոբացիայի ծառայողին, նրա հանրային վարքագծի նշանակությանը և այդ բնագավառում հանրային ծառայողական հարաբերությունների իրավական կարգավորումներին:

Պրոբացիայի ծառայողների առջև դրված խնդիրները պահանջում են առկա հիմնահարցերի հստակ պատկերացում, պատասխանատվության մեծ զգացում և բավարար գիտելիքներ: Խնդիրն առավել քան կարևորվում է նաև այն պարագայով, որ պրոբացիայի ծառայողների աշխատանքային վարքագիծը և գործելակերպը ուղղակիորեն առնչվում են քաղաքացիների հետ, կապված են մարդու և քաղաքա-

¹ Stu` Фоглесон Т. Эффективные альтернативы тюремному содержанию в Российской Федерации. Поддержка Министерства юстиции со стороны Европейской комиссии (EC Report on RE penal system). Брюссель, 2007. էջ 21-23.

ցու հիմնարար իրավունքների ու ազատությունների և դրանց օրենքով սահմանափակումների հետ:

Այս առումով չափազանց կարևոր է համակարգային առումով փոխկապակցված մի շարք գործոնների առկայության հանգամանքը: Դրանք են՝

1) պրոբացիայի հանրային-ծառայողական հարաբերությունները կարգավորող օրենսդրական կարգավորումների անհրաժեշտությունը, ինչը ենթադրում է, որ պրոբացիայի ծառայության հստակ իրավական կանոնակարգում համապատասխան օրենքների և իրավական այլ ակտերի ընդունման միջոցով,

2) պրոբացիայի ծառայության այնպիսի կառուցվածքի սահմանումը, որը կերաշխավորեր պետական ծառայության այդ տեսակի պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոնների սահմանում, որն զբաղեցնող ծառայողի գործունեությունն ուղղված կլինի պրոբացիայի ծառայության մարմնին օրենքով վերապահված խնդիրների ու գարծառույթների իրականացմանը,

3) պրոբացիայի ծառայության համակարգում կադրային քաղաքականության իրականացում այն պայմանով, որ դա ենթադրի պրոբացիայի ծառայողի ընտրության, պատրաստման և վերաորակավորման ապահովման համակարգի ստեղծում և դրա շարունակական կատարելագործում,

4) պրոբացիայի ծառայողի աշխատանքի պլանավորում այն մեթոդաբանությամբ, որ դրա կիրառման հիմքում օգտագործվեն ծառայության պլանավորման կարճատև և ընթացիկ, երկարաժամկետ և ռազմավարական պլանավորման միջոցներ ու եղանակներ,

5) պրոբացիայի ծառայության համակարգում տեխնիկական և տեղեկատվական անհրաժեշտ միջոցների կիրառում, որը կենթադրի ժամանակակից տեղեկատվական բազայի ստեղծում, տվյալների հավաքագրման, պահպանության, փոխանակման և վերլուծության համակարգերի ստեղծում,

6) պրոբացիայի ծառայողի կողմից պրոբացիայի ենթակա անձանց նկատմամբ անհրաժեշտ հսկողության իրականացման կառուցակարգերի ընդունում այն նկատառումով, որ դրանք, կապահովեն հսկողական գործառույթի արդյունավետության գնահատումը՝ հաշվի առնելով պրոբացիայի ծառայության գործուն միջոցների օգտագործ-

մամբ այդ ծառայության ռազմավարական նպատակների իրագործումը²,

7) պրոբացիայի ծառայողի հաշվետվողականության այնպիսի կառուցակարգերի մշակում, որոնք կերաշխավորեն կատարված աշխատանքների գնահատում՝ այդ պաշտոնում զբաղեցնելու և տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացված ծառայողի գիտելիքների ու աշխատանքային ունակությունների օպտիմալ հարաբերակցության ապահովման տեսանկյունից,

8) պրոբացիայի ծառայության գործունեության ներկառուցվածքային ստորաբաժանումների արդյունավետ գործակցության ապահովում և այլ գործոններ, որոնք կերաշխավորեն համակարգի անխափան և արդյունավետ գործունեության իրականացումը:

Այս համատեքստում չափազանց կարևոր է նաև անդրադարձ կատարել ՀՀ կառավարության կողմից հաստատված Պրոբացիայի ծառայության ներդրման հայեցակարգին: Ընդ որում, հայեցակարգի բովանդակությունից ակնհայտ է դառնում պրոբացիայի ծառայության գործունեության ընդգրկունությունը, այն է՝ ամբողջ երկրի տարածքում գործելու պարագան, պրոբացիայի ծառայողների պատասխանատվության կարևորությունը, այդ ծառայության կազմակերպահրավական առանձնահատկությունների ու կարգավիճակի սահմանումը և այլն:

Բոլոր դեպքերում, պրոբացիայի ծառայության աշխատանքների կազմակերպումն ինքնին բարդ ու բազմաոլորտ է, որի իրավական բովանդակությունը բնորոշվում է ինչպես այդ մարմնին վերապահված հսկողական ու դրանով պայմանավորված այլ գործառույթներով, այնպես էլ պայմանավորված է նույն գործունեության մարդասիրական նշանակությամբ:

Ելնելով նվաճ գործոնների նշանակության համալիր վերլուծությունից, անհրաժեշտ է նշել, որ պրոբացիայի ծառայության յուրաքանչյուր ուղղություն իրենից ներկայացնում է գործիքների և գործողությունների մի ամբողջություն, որոնց իրականացումն առաջին հերթին պայմանավորված է այդ ծառայության իրավական կարգավիճա-

² Մասնագիտական գրականության մեջ այդպիսի նպատակներն իրենց էությամբ բնութագրվում են որպես պաշտպանիչ ու դրական. Տես նաև՝ Դ.Վ.Атаманчук, Теория государственного управления, М.: 2003, էջ 115

կի սահմանումով և պետական մարմինների համակարգում նրա տեղի ու դերի մատնանշումով:

Ժամանակակից միջազգային փորձը ևս մատնանշում է, որ Հայաստանի Հանրապետությունում նույնպես կարևորագույն խնդիր կարող է դիտարկվել պրոբացիայի ծառայության իրավական կարգավիճակի սահմանումը: Չնայած այն հանգամանքին, որ նշված հայեցակարգի տրամաբանությանը համապատասխան՝ Հայաստանում պրոբացիայի ծառայության համակարգը նախատեսվում է ներառել Արդարադատության նախարարության կազմում որպես պետական ոչ առևտրային կազմակերպություն: Սակայն, անհրաժեշտ է նկատել, որ այդպիսի կազմակերպությանը վերապահել պետական հատուկ իրավասություն ունեցող մարմնի գործառույթներ (հսկողության իրականացում, պետական կառավարում, հանրային ծառայություն և այլն), ինքնին խնդրահարույց է այդ ծառայության կազմակերպարավական նման ձևին նախապատվություն տալու տեսանկյունից:

Միաժամանակ, ՀՀ կառավարության 2006 թվականի հունկտեմբերի 26-ի թիվ 1561-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի տարածքային մարմինների գործունեության կարգը, որի դրույթների համակարգային վերլուծությունից բխում է, որ պրոբացիայի գործառույթները կարող են կատարվել նաև այլ մարմինների կողմից, քանի որ այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանումները դիտարկվում են յուրօրինակ ”միջնորդ” պատիժ կրողի և պատիժ կիրառողի միջև:

Ընդ որում, միայն հանրային աշխատանքների կատարման մասով կարելի է ենթադրել, որ դատապարտյալի նկատմամբ վերահսկողական միջոցառումների անմիջական իրականացումը փոխկապակցվում կամ փոխարինվում է այդպիսի աշխատանքներ կատարման հետ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կապված որոշակի կոնկրետ իրավապայմանների առկայության դեպքում դատարանը՝ պատժատեսակը փոխարինելու ինստիտուտի կիրառման կարգի ու պայմանների առակայության պարագայում կարող է փոխարինել այդ պատժատեսակները հանցագործության կատարման մեջ մեղավոր ճանաչված անձանց նկատմամբ հարկադրանքի այլ կոնկրետ միջոցներով: Իհարկե, տվյալ դեպքում անհրաժեշտ է վկայակոչել ՀՀ քրեա-

կատարողական օրենսգրքի 24-ից 26-րդ եւ 32-ից 35-րդ հոդվածները, որոնք սահմանում են տուգանքի եւ հանրային աշխատանքների՝ որպես ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման կարգն ու պայմանները³:

Միջազգային փորձի ուսումնասիրությունից ևս բխում է, որ պրոբացիայի ծառայություն ունեցող բոլոր պետությունները հանրային աշխատանքների կատարումը վերապահել են ոչ թե քրեակատարողական, այլ պրոբացիայի ծառայությանը: Եվ դա կարևոր առանձնահատկություն է, ուստի՝ ելնելով վերոգրյալից՝ ակնհայտ է դառնում, որ այլընտրանքային բոլոր պատիժների կատարումը պետք է վերապահել պրոբացիայի ծառայությանը, բացառությամբ գույքի բնագրավումից և հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելուց, եթե դրանց հետ որպես հիմնական պատիժ է նշանակվել ազատազրկումը:

Այդ դեպքում, այդ երկու պատիժների կատարումը պետք է ապահովի համապատասխան քրեակատարողական հիմնարկը: Այսինքն՝ տուգանքի, որոշակի պաշտոն զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու, հանրային աշխատանքների կատարումը պետք է ապահովի պրոբացիայի ծառայությունը: Այս խնդիրների հստակ իրականական կանոնակարգումը կարևոր է հիմնախնդրին առնչվող պետական մարմինների աշխատակիցների միջև հստակ գործառությանի տարանջատում ապահովելու համար:

Այդ իմաստով, կարծում ենք, առանցքային են այն մոտեցումները, որոնց պարագայում պրոբացիայի ծառայությունը կոչված կլինի երաշխավորել այլընտրանքային պատժատեսակների արդյունավետ և նպատակային կիրարկումը: Մասնավորապես խոսքը վերաբերում է հետևյալներին. ա) այլընտրանքային պատժատեսակներ և այլընտրանքային խափանման միջոցներ իրականացնող մարմինը չպետք է ենթակայական կապ ունենա ազատազրկման հետ կապված պատիժներ կիրառող մարմնի՝ քրեակատարողական ծառայության հետ: բ)

³ Պրոբացիայի ծառայության պարագայում նմանատիպ հարցերը պետք է դիտարկվեն առաջին հերթին ազատազրկումն այլընտրանքային պատժատեսակով փոխարինելու ինստիտուտի սահմանադրարկական բովանդակությանը համապատասխանության և իրավունքի գերակայության երաշխավորման տեսանկյունից, ինչը կատարվել է ՀՀ սահմանադրական դատարանի 2013 թվականի ապրիլի 23-ի ՍԴՈ-1082 որոշմամբ:

պրոբացիայի ծառայությունը անհրաժեշտ է դիտարկել որպես պետական հատուկ ծառայություն, իսկ պրոբացիայի ծառայողը՝ որպես պետական ծառայող, գ) օրենսդրական կարգավորումների միջոցով անհրաժեշտ է կանոնակարգել ծառայության այս տեսակին բնորոշ առանձնահատկությունները, դ) ապահովել վերապատրաստման և որակավորման բարձրացման, գիտագործնական փորձի փոխանակումով պարբերական գործող կառուցակարգեր և այլն:

Սակայն, մասնագիտական գրականության և առանձին միջազգային իրավական ակտերով նախատեսվում են նաև այլ մոտեցումներ, որոնք ունեն գիտագործնական նշանակություն: Այսպես, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2010 թվականի հունվարի 20-ի «Պրոբացիայի կանոնների մասին» թիվ CM/Rec(2010) հանձնարարականի 18-19-րդ կետերով սահմանվում է, որ անհրաժեշտ է միասնականացնել այդ կանոնները եվրոպական երկրներում, հաշվի առնելով այն պահանջը, որ պրոբացիայի ծառայության կառուցվածքը, կարգավիճակը և ռեսուրսները պետք է համապատասխանեն այդ ծառայության վրա դրված գործառույթներին՝ անկախ այն հանգամանքից թե պետական ծառայության տեսակ է, թե մասնավոր, այնուամենայնիվ պրոբացիայի ծառայությունը պետք է կարգավորվի բացառապես օրենքով, իսկ մասնավոր ծառայությունները նաև ստանան համապատասխան արտոնագիր: Միաժամանակ, այդ կանոններով սահմանվում է, որ պրոբացիայի ծառայողները քաղաքացիական ծառայողներ են և հիմնական մասը պետք է համալրվի սոցիալական ծառայության համակարգից:

Իսկ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի ավելի վաղ ընդունված R(92)16 հանձնարարականով հաստատվել են հասարակական բնույթի պատժատեսակների կիրառման կանոնները, համաձայն որոնց՝ հասարակությունը պրոբացիայի ծառայության հետ միասին ևս պետք է ներգրավված լինի իրավախախտների նկատմամբ հսկողություն իրականացնելու գործընթացներում⁴:

Միաժամանակ, պրոբացիայի կադրային քաղաքականության համաեվրոպական պահանջներին համապատասխան այդ ծառայության գործունեության գլխավոր նպատակը հասարակության և իրավակի-

⁴ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն R(92)16 հանձնարարականն ընդունել է 1992 թվականի հոկտեմբերի 19-ին

րառ այլ մարմինների վստահության ձեռք բերումն է⁵: Այդ նպատակով պետությունը պետք է անհրաժեշտ միջոցներ տրամադրի կադրային համալրման, մասնագիտական պատրաստվածության բարձրացման ու որակավորման, աշխատանքի վարձատրության և այլ խնդիրների լուծման համար:

Մասնագիտական գրականության մեջ առկա են տեսակետներ, որոնք կասկածի տակ են դնում պրոբացիայի ծառայության որպես պետական ծառայության տեսակի գոյությունը: Այսպես, պրոֆեսոր Ռոբ Կենտոնը գտնում է, որ Անգլիայում պրոբացիայի ծառայության բոլոր գործառույթները ապագայում փոխանցվելու են ոչ կառավարական կազմակերպություններին՝ դրանով առաջ քաշելով այդ ծառայության գործառույթների «սեփականաշնորհման» ծրագիրը⁶:

Այնուամենայնիվ, պրոբացիայի ծառայության արդյունավետության գրավականներից է պրոբացիայի ծառայողի ուղղակի կապը և անմիջական աշխատանքը հանցագործություն կատարած անձի հետ, ինչը կկազմի նրա աշխատանքի մեծ մասը: Այդ նպատակով կարևորվում է, որ պրոբացիայի ծառայողը ոչ միայն համապատասխան գիտելիքներ և կարողություն ունենալը, այլ նաև հանցագործություն կատարած անձանց հետ աշխատանքի փորձն ու հմտությունը:

Տվյալ դեպքում անհրաժեշտ է կարևորել պրոբացիայի ծառայողի ուսուցման այնպիսի բաղադրիչների առկայությունը, ինչպիսիք են՝ 1) վարքագծի կանոնների ուսուցանումը, 2) համապատասխան օրենքների և նորմատիվ ակտերի իրազեկվածությունը, 3) մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների վերաբերյալ ՄԱԿ-ի և եվրոպական միասնական իրավական չափորոշիչների նվազագույն ուսուցանումը, 4) անձնական շահի և արտոնությունների համադրման հարցերը, 5) հոգեբանական վերապատրաստումը, 6) կոռուպցիոն ռիսկերի չեզոքացումը և այլն:

Պրոբացիայի ծառայության գործունեության արդյունավետության գրավականներից է նաև համապատասխան որակավորմամբ, մասնա-

⁵ Տես՝ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2010 թվականի հունվարի 20-ի «Պրոբացիայի կանոնների մասին» թիվ CM/Rec(2010) հանձնարարականի 21-34-րդ կետերը:

⁶ Տես՝ Материалы заседания Совета по пенологическому сотрудничеству Совета Европы. Страсбург. 11 ноября 2007 г. - էջ 2.

գիտական կարողություններով ու գիտելիքներով օժտված անձնակազմի ներգրավումը: Պրոբացիայի ծառայության անձնակազմը պետք է ապացուցի իր մրցունակությունը և միմյանց ու այլ հաստատությունների հետ համագործակցելու պատրաստակամությունը՝ պրոբացիայի ծառայության նպատակներն իրագործելու առումով:

Ընդ որում, այդ նպատակով, անհրաժեշտ է մատնանշել այն հնարավոր պահանջները, որոնք կարող են ներկայացվել պրոբացիայի ծառայողներին: Խոսքը վերաբերում է, մասնավորապես՝ կրթությանը, նախկինում ունեցած աշխատանքային փորձը, տարիքը, սեռը, հոգեբանական չափորոշիչներին համապատասխանելու ունակությունը, վերապատրաստումների առկայությունը և փորձը, նախկինում հանցանք կատարած լինելու հանգամանքը:

Մասնավորապես, այդ խնդրի կարևոր բաղկացությունը կազմող վերապատրաստումների գործընթացը պետք է ուղղված լինի՝ ա) պրոբացիայի ծառայողի գործառույթների և անհրաժեշտ կարողությունների զարգացմանը, բ) վարքագծային և միջանձնային հաղորդակցության կարողությունների զարգացմանը, գ) վերլուծական կարողությունների զարգացմանը, դ) տեխնիկական կարողություններին:

Ըստ էության, պրոբացիայի ծառայության արդյունավետությունը պայմանավորված է երկու կարևոր պայմանների հստակ ու իրավաչափ համադրմամբ. դա պրոբացիայի ծառայողների մասնագիտական հմտություններն են ու պատրաստվածությունը հանցագործի հետ տարվող աշխատանքների և վերջինիս նկատմամբ սոցիալ-վերականգնողակա ու հոգեբանական բնույթի համապատասխան վերաբերմունք ցուցաբերելու կապակցությամբ:

Պրոբացիայի ծառայությունը կարգավորող իրավական նորմերի համեմատական իրավական վերլուծությունը և այդ բնագավառի միջազգային փորձի ուսումնասիրությունը աներկբայորեն բերում են այն եզրահանգման, որ այն երկրներում, որտեղ ներդրվել է պրոբացիայի ծառայությունը, այնտեղ, սկզբնական շրջանում, որպես կանոն, տևական ժամանակ խնդրահարույց են եղել պրոբացիայի ծառայողների իրավական կարգավիճակի հիմնախնդիրները, այդ ծառայողին ներկայացված պահանջների հստակեցման հիմնահարցերը և այլն⁷: Այդ ա-

⁷ Шатанкова Е.Н. Условное осуждение и пробация за рубежом (сравнительно-правовой анализ): Автореф. дис. ... канд. юрид. наук. М., 2008. էջ. 113-114.

ռումով անհրաժեշտ է ընդհանրացնել այն մոտեցումները, որոնք էական նշանակություն կարող են ունենալ Հայաստանի Հանրապետությունում համապատասխան օրենսդրական քաղաքականությունը մշակելիս: Դրանք են՝

1) պրոբացիայի ծառայողի իրավական կարգավիճակի և պրոբացիայի ծառայության սկզբունքների ու կազմակերպման կարգի բացառապես օրենքով ամրագրման

2) պրոբացիայի ծառայողի գործառույթներ կարող են իրականացնել ինչպես պետական ծառայության ծառայողները, այնպես էլ համապատասխան որակավորում ու թույլտվություն ստացած, ինչպես նաև կամավորության հիման ներգրավված անձինք,

3) պրոբացիայի ծառայողների թվաքանակը՝ ի տարբերություն պետական ծառայության այլ տեսակների ծառայողների, ունի պարբերաբար ավելացման միտում, ինչը պայմանավորված է գործնականում բոլոր երկրներում պրոբացիայի ենթակա հանցագործությունների շարունակական աճով,

4) պրոբացիայի ծառայողների հաշվետվողականությունը, նրանց ծառայության արդյունավետության գնահատման մեխանիզմների և գործունեության նկատմամբ գործուն հսկողության պարտադիր պահանջի առկայությունը,

5) պրոբացիայի ծառայության վերաբերյալ առկա է մեկ կարևոր օրինաչափություն. ինչքան զարգացած է երկիրը և ինչքան զարգացած է պրոբացիայի ծառայությունը, այնքան ավելի մեծ է պրոբացիայի ծառայողին ենթակա անձանց թիվը⁸ և այլն:

Միաժամանակ, միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է նաև պրոբացիայի ծառայողների գործունեությունը բնութագրող և այդ գործունեության արդյունավետությանը խոչնդոտող մի շարք գործոնների առկայությամբ պայմանավորված գործընթացների մասին: Դրանք են՝

⁸ Ավստրալիայում, Բելգիայում, Նորվեգիայում, Դանիայում, Շվեյցարիայում, օրինակ, մեկ պրոբացիայի ծառայողին հասնում է առավելագույնը 20 պրոբացիայ ենթակա անձինք, իսկ Ֆրանսիայում, Գերմանիայում, Մեծ Բրիտանիայում այդ թիվը հասնում է 30-ի, իսկ Արևելյան Եվրոպայի և որոշ ԱՊՀ երկրներում այդ հարաբերակցությունը կարող է հասնել մինչև 70-ի:

- ա) պրոբացիան որպես քրեակատարողական հիմնարկների գերբեռնվածությունը թուլացնող միջոցի հակազդումը,
- բ) պրոբացիայի ծառայության ներդրման հետ կապված խնդիրների ոչ հստակ կանոնակարգվածությունը,
- գ) պրոբացիայի ծառայության արդյունավետության գնահատման կառուցակարգերի անկատարությունը,
- դ) պրոբացիայի ծառայողների վերապատրաստման և վերաորակավորման կառուցակարգերի բացակայությունը,
- ե) պրոբացիայի ծառայության և պրոբացիայի ծառայողի դերի ու գործառույթների ամրապնդման և ընկալման անկատարությունը ոչ միայն հանցագործություն կատարած անձանց և նրանց ընտանիքների անդամների, այլ նաև՝ հասարակության համար⁹,
- զ) պրոբացիայի ծառայության և պետական այլ մարմինների միջև փոխադարձ գործակցության կառուցակարգերի անկատարությունը,
- է) պրոբացիայի ծառայության տեղեկատվական բազայի և էլեկտրոնային մոնիթորինգի համակարգի բացակայությունը և այլն¹⁰:

Այս և նման խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է կարևորել, մի կողմից, պրոբացիայի ծառայողների որակավորման ու նրանց ծառայության ընդունելու չափանիշների սահմանման անհրաժեշտությունը, իսկ մյուս կողմից՝ հետազոտության առարկա հարցի իրազեկման միջոցառումների իրականացումը:

Այս համատեքստում կարևոր է, որ պրոբացիայի ծառայողի գործունեության արդյունավետությունն ուղղակիորեն կախված է լինի պրոբացիայի ենթակա անձանց թվաքանակից, որի հաշվարկման համար ճիշտ ուղեցույց կարող է հանդիսանալ ծառայության կենտրոնական մարմնի խնդիրների և տարածքային մարմիններում ծառայության կողմից իրականացվող գործառույթների համար կադրային ռեսուրսների ճիշտ հաշվարկը: Այս տեսանկյունից պրոբացիայի բնույթի աշխատանքների համար գործերի լավագույն քանակը մեկ պրոբա-

⁹ Հենց այս գործոնի բովանդակությունից է բխում հանրային իրազեկման ծրագրերի մշակման և կենսագործման անհրաժեշտությունը:

¹⁰ Шатаикова Е.Н. Նույն աշխ. մեջ էջ 33-34:

ցիայի ծառայողի համար որոշելը չափազանց կարևոր հարց է, սակայն անհրաժեշտ է հաշվի առնել, որ բոլոր հանցագործություն կատարած անձանց նկատմամբ միատեսակ վերահսկողություն չի իրականացվում և կարևորություն տալ պրոբացիայից ազատ արձակվելուն մոտ ժամանակահատվածին:

Թվարկվածը մեզ հիմք է տալիս կատարել հետևյալ եզրահանգումը, որ պրոբացիայի ծառայությունն ուղղակի փոխկածության մեջ է գտնվում պետության ֆինանսական միջոցների չափից: Եվ այդպիսի զարգացումների դեպքում համանման սխալ կարող է թույլ տրվել նաև Հայաստանում:

Ինչ վերաբերում է կրթական չափանիշներին, ապա պրոբացիայի ծառայողների համար կարևոր է հատկապես համապատասխան մասնագիտական որակավորում ստանալը: Այսպես, եթե Իռլանդիայում և Ֆրանսիայում կրթական ցենզ սահմանված չէ, սակայն այդ ծառայությունում պետք է ներգրավված լինեն հատուկ մասնագիտացում ունեցող մասնագետներ՝ պրոբացիայի բնույթի ծրագրերում իրավախախտում թույլ տված անձանց սոցիալական, հոգեբանական, իրավական և մտավոր ծրագրային առանձնահատկություններից ելնելով:

Այսպիսով, պրոբացիայի ծառայության ճիշտ և նպատակային կազմակերպելու նկատառումով առաջնային դերակատարությունը պետք է վերապահել պրոբացիայի ծառայողին, նրա հանրային վարքագծի նշանակությանը և այդ բնագավառում հանրային ծառայողական հարաբերությունների իրավական կարգավորումներին:

Կախվածության մեջ է գտնվում պետության ֆինանսական միջոցների չափից: Եվ այդպիսի զարգացումների դեպքում համանման սխալ կարող է թույլ տրվել նաև Հայաստանում:

Ինչ վերաբերում է կրթական չափանիշներին, ապա պրոբացիայի ծառայողների համար կարևոր է հատկապես համապատասխան մասնագիտական որակավորում ստանալը: Այսպես, եթե Իռլանդիայում և Ֆրանսիայում կրթական ցենզ սահմանված չէ, սակայն այդ ծառայությունում պետք է ներգրավված լինեն հատուկ մասնագիտացում ունեցող մասնագետներ՝ պրոբացիայի բնույթի ծրագրերում իրավախախտում թույլ տված անձանց սոցիալական, հոգեբանական, իրավական և մտավոր ծրագրային առանձնահատկություններից ելնելով:

Այսպիսով, պրոբացիայի ծառայության ճիշտ և նպատակային կազմակերպելու նկատառումով առաջնային դերակատարությունը պետք է վերապահել պրոբացիայի ծառայողին, նրա հանրային վարքագծի նշանակությանը և այդ բնագավառում հանրային ծառայողական հարաբերությունների իրավական կարգավորումներին:

Բանալի բաներ. պրոբացիա, պրոբացիայի ծառայող, պրոբացիայի ծառայություն, իրավական կարգավիճակ, իրավական չափանիշներ:

ЮРИДИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЯ СЛУЖАЩЕГО ПО ПРОБАЦИИ

В.А. Багдасарян

Резюме

Статья посвящена изучению особенностей проблемы юридического положения, в котором находится служащий по probation. По заключениям, сделанным автором было отмечено, что в услуге probation первое место должно быть отведено служащему по probation, значению его общественного поведения, юридическому упорядочению его общественных отношений в этой области.

Ключевые слова: probation, служащий по probation, услуга по probation, юридическое положение, юридические критерии.

THE JUDICIAL STATUS OF THE EMPLOYEE OF THE PROBATION

V.A. Baghsasaryan

Summary

This article investigates the specifications of problems of the judicial status in which acts the employee of the probation. In conclusion, it was highlighted that in the service of the probation the first place must be given the employee of the probation, the importance of his social behavior, judicial ordering of his social attitude in that sphere.

Key words: probation, the employee of the probation, judicial status, judicial criterion.

ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վ.Ա. Բաղդասարյան

Այս հոդվածում անդրադարձ է կատարվում պրոբացիայի ծառայության ներդրման առանցքային հարցադրումներին՝ պրոբացիայի ծառայության մարմինների գործունեության հիմնական սկզբունքների էության ու նշանակության, ինչպես նաև դրա առանձնահատկությունների բացահայտմանը:

Ազատագրկման հետ չկապված այլընտրանքային պատժատեսակների սահմանումն ինքնաբերաբար ենթադրում է այդպիսի պատիժների կիրառումն ապահովող մարմինների համակարգի ներդրում, ինչը, Հայաստանի Հանրապետության պայմաններում, մի կողմից հնարավորություն կապահովի սահմանել՝ առանց ազատությունից զրկման, այլընտրանքային պատիժների կիրառման ավելի մարդասիրական ու առաջադեմ եղանակներ, իսկ մյուս կողմից, երաշխավորել պատժի անխուսափելիության սկզբունքի արդյունավետ իրացումը՝ հնարավորություն վերապահելով հանցագործություն կատարած անձին՝ առանց իրեն ազատությունից զրկելու, ուղղվելու և վերադաստիարակվելու: Այս համակարգի ստեղծման կազմակերպահրավական հիմնական երաշխիքը պրոբացիայի ծառայության մարմինների հիմնումն է:

Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր վեհաժողովն՝ իր 1990 թվականի դեկտեմբերի 14-ին ընդունված «Ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների վերաբերյալ նվազագույն կանոնների մասին» թիվ 45/111 բանաձևով, ևս կարևորել է պրոբացիայի ծառայության դերակատարությունը արդարադատության պետական կառավարման համակարգում¹: Մասնավորապես, բանաձևի 3-րդ կետով ամրագրված դրույթների համակարգային վերլուծությունից հետևում է, որ ազատությունից զրկելու հետ չկապված այլընտրանքա-

¹ Stu՝ Международные акты о правах человека. Сборник документов. М.: 2000. էջ 217-225.

յին պատժատեսակները, դրանց ապահովման ու կիրառման մեխանիզմները պետք է նախատեսվեն բացառապես օրենքով, ինչը նշանակում է. այդ խնդիրների լուծումն ապահովող հատուկ իրավասություն ունեցող պրոբացիայի ծառայության մարմինների կազմակերպման ու գործունեության համար համարժեք օրենսդրական կարգավորումներ կատարելու անհրաժեշտություն:

Հայաստանի Հանրապետությունում նման մարմինների ձևավորման ընթացքը անխափան իրականացնելու համար անհրաժեշտ է սահմանել և համակողմանիորեն վերլուծել պրոբացիայի ծառայության կազմակերպման ու գործունեության այն հիմնական սկզբունքներն ու առանձնահատկությունները, որոնցից ելնելով ու դրանցով պայմանավորված պետք է գործեն հանրային վարչարարություն իրականացնող այդ մարմինները:

Իրավական պետության շրջանակներում յուրաքանչյուր պետական մարմնի գործունեության իրավական կարգավորման ժամանակ սահմանվում և գործում են որոշակի հիմնարար սկզբունքներ, ելակետային դրույթներ, որոնցով էլ նախանշվում են տվյալ պետական մարմնի կազմակերպման ու գործունեության շրջանակները: Պրոբացիայի ծառայության մարմինների կազմակերպման և գործունեության սկզբունքները, չնայած իրենց դրսևորման յուրահատկություններին, աշխարհի տարբեր երկրներում գրեթե ունեն գործունեության միևնույն բովանդակությունն ու նպատակները: Եվ դա է թերևս պատճառը, որ պրոբացիայի ծառայության հիմքում դրված են նույնաբովանդակ սկզբունքները:

Սակայն, այդ ծառայության խնդիրների մասով նույնը չի կարելի ասել, ինչը պայմանավորված է այս կամ այն երկրում պրոբացիայի իրավաբանական առանձնահատկություններով: Այսպես, առանձին պետություններում այն կիրառվում է որպես պատժատեսակ (օրինակ, Շվեդիա, Ֆինլանդիա, Լատվիա), մեկ այլ խումբ պետություններում, այն՝ որպես այլընտրանքային պատիժ կրում է քրեաիրավական բնույթ (օրինակ, Մեծ Բրիտանիա, Դանիա), իսկ երրորդ խումբ երկրներում պրոբացիան դիտարկվում է որպես պատժից (ազատագրկում) ազատման տեսակ: Իհարկե, անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն, որ ԱՄՆ-

ում այս ինստիտուտի իրավական բնութագրման մասին որևէ խոսք չի գնում².

Առանձին երկրների հետազոտման առարկա փորձի վերլուծությունը ցույց է տալիս նաև, որ պրոբացիայի ծառայությունը Լատվիայում հանդիսանում է ինքնուրույն պետական կառավարման մարմին Արդարադատության նախարարության համակարգում, Չեխիայում այդ ծառայությունն իրականացնում են դատարանների ծառայողները, ԱՄՆ-ում՝ այն իրականացնում են հատուկ մասնագիտացված վերահրկողական ծառայությունները, իսկ Սինգապուրում պրոբացիայի ծառայությունը գտնվում է Սպորտի և զարգացման նախարարության կառուցվածքում և այլն³:

Միաժամանակ, արտասահմանյան երկրների օրենսդրության վերլուծության արդյունքների ընդհանրացումը վկայում է, որ այդ ծառայությունը պետության անունից իր իրավական և կազմակերպական գործունեությունն իրականացնում է օրենքով վերապահված լիազորությունների ու իրավասության շրջանակներում: Ընդ որում, այստեղ նախանշվում են երկու խումբ խնդիրներ՝ կապված պրոբացիայի ենթակա անձանց նկատմամբ հսկողության և նրանց սոցիալական վարքագծի ու վերականգնողական բնույթի միջոցառումների իրականացման հետ⁴:

Հենց այդ խնդիրների իրացման շրջանակների և իրավասության հստակ սահմանման համար անհրաժեշտ է կարևորել այս մարմինների կազմակերպման և գործունեության սկզբունքների համակողմանի ուսումնասիրությունը:

Իրավաբանական գրականության մեջ սկզբունք է դիտարկվում կամ անվանվում այն հիմնարար, տեսականորեն փաստարկված և ընդհանրացված ելակետային գաղափարների ու խնդիրների համակցությունը, որը բնորոշ ու առաջնային է տվյալ պետական մարմնի համար իր կազմակերպման և գործունեության ընթացքում: Նախ, ան-

² Տես՝ Шатанкова Е.Н. Условное осуждение и пробация за рубежом (сравнительно-правовой анализ): Автореф. дис. ...канд. юрид. наук. М., 2008. էջ13-14.

³ Տես՝ Зыков О. Записка о создании Федеральной службы пробации в Российской Федерации. <http://vtt.net.ru/node/27>

⁴ Տես՝ Джозеф Ф. Шелли. Криминология: современное руководство. СПб., 2003. էջ 579.

հրաժեշտ է համաձայնվել այն պնդման հետ, որ հանրային ծառայության հիմնական սկզբունքները բխում են սահմանադրական դրույթներից⁵: Միաժամանակ, անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ հանրային ծառայության իրավական սկզբունքների բացակայությունն ինքնին հանգեցնում է այդ ոլորտում կամայականության, բյուրակրատիզմի, անկազմակերպվածության, ապօրինության ու անարդարության երևույթների առաջացմանը⁶:

Միաժամանակ, սկզբունքը որպես հիմնական գաղափարների ամբողջություն արտահայտում է պետության կողմից պրոբացիայի ծառայության խնդիրների ու լիազորությունների այն միասնությունը, որով իրականացվում են տվյալ պետական մարմնի կազմակերպումն ու գործունեությունը: Ահա թե ինչու, Հայաստանի Հանրապետության ներկայիս պայմաններում անհրաժեշտ է կարևորել պրոբացիայի ծառայության հնարավոր կազմակերպման և գործունեության անհրաժեշտ և տեսականորեն հիմնավորված սկզբունքների սահմանումը: Դրանց էության հստակ բացահայտումն ու կանոնակարգումն առանձնահատուկ նշանակություն ունի այն իմաստով, որ հենց սկզբունքներում են դրսևորվում պետական տվյալ մարմնի գործառության չափերը, խնդիրները և կարևոր նախապայման են հանդիսանում վերջինիս աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար:

Այս առումով արդարացի է պրոֆեսոր Ն.Ն. Պոլյանսկիի բավականին պարզ ենթատեքստով հաստատված այն դիտարկումը, ըստ որի՝ իրավագիտության մեջ իրավական նորմերով սահմանված սկզբունքները հանդիսանում են պետական մարմնի գործունեության հիմնադրույթներ, և վերջիններս չեն կարող կարգավորել որոշակի իրավահարաբերություններ, քանի դեռ չունեն իրավանորմի վարքագծային բնույթ⁷:

Միաժամանակ, պրոբացիայի ծառայության գործունեության կազմակերպման և գործունեության սկզբունքներնում դրսևորվում են պրոբացիայի գործունեության էությունը, խնդիրները, դրանց իրականացման ձևերն ու մեթոդները, այսինքն՝ էական այն ամենը, որն անհ-

⁵ Տես՝ Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք, Եր., 2012, էջ 248:

⁶ Տես՝ Старилов Ю.Н. Службное право. М.: 1996, էջ 201-202

⁷ Տես՝ Н.Н. Полянский, Вопросы теории уголовного процесса, М.: 1986, էջ 69:

րաժեշտ է պետաիրավական գործունեության այս տեսակին նորմալ կենսագործունեություն հաղորդելու առումով:

Այս առումով, պրոբացիայի ծառայության գործունեության իրավական կարգավորման տեսանկյունից անհրաժեշտ է վերլուծել այդ ծառայության իրավական կարգավիճակի ընդհանուր և յուրահատուկ գծերը, այդ մարմինների կազմակերպման և գործունեության այն սկզբունքները, որոնք կարող են, ըստ էության, մի կողմից համանման լինել տարբեր պետական մարմինների համար, մյուս կողմից առանձնահատուկ՝ պայմանավորված այլ մարմիններին պետության կողմից տրամադրված լիազորությունների առանձնահատկություններում:

Այս ծառայությունների կազմակերպման ու գործունեության իրավական կարգավորումների միջազգային փորձի ուսումնասիրությունից ընդհանրացված ձևով կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական մոտեցումները⁸, որոնք կարող են օգտակար լինել Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի ծառայության ստեղծման գործընթացների համար: Դրանք են՝ 1) քրեակատարողական ծառայության կազմակերպագործառության ուղղվածության փոխակերպմանը (տրանսֆորմացիա) զուգընթաց առաջնային նշանակություն պետք է հաղորդել սոցիալական վերականգնողական բնույթի այն խնդիրների լուծմանը, որոնք անմիջականորեն չեն առնչվում քրեական պատիժների իրագործման հետ, 2) պրոբացիայի ծառայության ստեղծմամբ առաջին հերթին պետք է լուծել ոչ այնքան սոցիալական խնդիրներ, որքան կազմակերպական ու ֆինանսական ռեսուրսների միջոցով ապահովել հոգեբանական ու վերականգնողական ռեսուրսների համախմբումը, 3) այնուհետև, անհրաժեշտ է այդ ծառայության լիազորությունների ու գործառույթների շրջանակը որոշել պրոբացիայի քրեաիրավական բովանդակության սահմանման հարաբերակցության համատեքստում, 4) հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ ծառայությունն ենթադրում է սերտ փոխհամագործակցություն այլ մարմինների հետ, ուստի անհրաժեշտ է «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ սահմանել այդ ծառայության իրավական կարգավիճակը և դրա բաղկացությունը

⁸ Стен' Голодов П.В. Зарубежный опыт и перспективы создания службы пробации в России: организационно-правовые аспекты // Вестник института. Научно-практический журнал Вологодского института права и экономики ФСИН. Преступление. Наказание. Исправление. - Вологда: 2011, № 2 (14). էջ 82-83:

կազմող տարրերը, սահմանելով միջգերատեսչական և քաղաքացիական հասարակության հետ հնարավոր հարաբերակցության շրջանակները, 5) «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի ընդունմանը պետք է հաջորդի «Պրոբացիայի ծառայության մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որով կկարգավորվի պրոբացիայի ծառայության որպես պետական ծառայության տեսակի հետ ծագող հարաբերությունները, կամրագրվի պրոբացիայի ծառայողի վարչաիրավական կարգավիճակը, այդ թվում՝ նրա իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվությունը, սոցիալական երաշխիքները և այլն, 6) պրոբացիայի ծառայության սոցիալ-վերականգնողական գործառույթի իրացման պարագայում անհրաժեշտություն կառաջանա պրոբացիայի ենթակա անձանց նկատմամբ հսկողական և հոգեբանական-համապարտ (կոռեկցիա) համալիր միջոցառումների մշակումն ու ներդնումը, 7) անհրաժեշտ է իրականացնել պրոբացիայի ծառայողների մասնագիտացված դասընթացների կազմակերպումը՝ հաշվի առնելով այդ ծառայությանը ներկայացվող պահանջների առանձնահատկությունները և այլն:

Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի ծառայության խնդիրների ընդհանրությունը, մի կողմից, ու միասնականությունը մյուս կողմից, դրանք բազմազանությունն ու գործունեության ընդգրկուն շրջանակները, բնականաբար, ենթադրում են պրոբացիայի ծառայության գործունեության և կազմակերպման սկզբունքների որոշակի դասակարգում:

Պրոբացիայի ծառայությունը, որպես պետական գործունեության ձև և հանրային ծառայության տեսակ, ենթադրվում է, որ այն պետք է կրի պետական մարմնին բնորոշ կազմակերպաիրավական միասնական սկզբունքներ: Դրանք նախ և առաջ պայմանավորված են այս մարմնի գործունեության առանձնահատկություններով, ինչպես նաև այդ գործունեության վրա ազդող օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոններով:

Առաջին, դրանք հանդիսանում են պետության կամքի այնպիսի դրսևորումներ, որոնք բովանդակում են նպատակաուղղված գործունեությունը սոցիալական ու իրավական բնագավառներում:

Երկրորդ, պրոբացիայի ծառայության մարմնի կազմակերպման և գործունեության սկզբունքներում դրսևորվում, արտահայտվում և բա-

ցահայտվում է պետական այդ մարմնի էությունը, ինչը և ցույց է տալիս այդ ծառայության բնութագրող գծերը, իրավասության շրջանակները, կարգավորման ենթակա հարաբերությունների ոլորտները և այլն:

Մասնագիտական գրականության մեջ առկա տեսակետների համակարգային վերլուծությունը հանգեցնում է մեկ կարևոր ընդհանրության, այն է, որ պրոբացիայի ծառայության մարմիններն ունեն իրենց կազմակերպման և գործունեության ինչպես ընդհանուր սկզբունքներ, որոնք բնորոշ են գրեթե բոլոր պետական մարմիններին⁹, այնպես էլ հատուկ սկզբունքներ, որոնք բնորոշ են բացառապես պրոբացիայի գործունեությանը: Ընդ որում, անդրադառնալով հատկապես այն սկզբունքներին, որոնք արդիական ու կարևոր են հատկապես մեր պետության վարչատարածքային կառուցվածքի, ազգային առանձնահատկությունների համատեքստում:

Այսպես, պրոբացիայի ծառայության մարմինների գործունեության կարևորագույն սկզբունքներից է օրինականության ապահովումը, որն արտահայտում է օրինականության գաղափարը պետության իրավական համակարգում:

Օրինականության գաղափարի գոյության փաստն ինքնին նշանակում է ու ենթադրում պետական կարգապահություն և պատշաճ հսկողության անհրաժեշտություն՝ պետական ապարատի բոլոր օղակների և պաշտոնատար անձանց նկատմամբ:

Ընդհանուր առմամբ, օրինականության ապահովումը պետական ապարատի բոլոր օղակներում կարող է ստեղծել այն բավարար հիմքերը, որոնք անհրաժեշտ են պրոբացիայի ծառայության գործունեության և դրա բարեփոխումների իրականացման ողջ գործընթացում: Մասնավորապես, պրոբացիայի գործունեության մեջ օրինականության ապահովման սկզբունքը նաև ենթադրում է՝ 1) օրենքների ճիշտ կիրառման ապահովում պրոբացիայի ենթակա անձանց կողմից՝ անկախ նրանց սոցիալական դրությունից, կարգավիճակից, կրթությունից և այլն, 2) օրինականության ապահովման վիճակի վերլուծության

⁹ Որպես կանոն, պետական մարմինների համակարգի և գործունեության կազմակերպումը պետք է հիմնվեն միասնականության, անկախության, աստիճանակարգված ենթակայության սկզբունքների վրա: Տես օրինակ, Ա.Խաչատրյան, Հարկային իրավունք, Եր., 2003, էջ 419:

իրականացման ապահովում, 3) պատշաճ իրավական վիճակագրության ապահովում, 4) օրենքով սահմանված վերահսկողության իրականացում և այլն:

Օրինականության ապահովումը ենթադրում է նաև քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանության իրավունքի իրացում, ինչը նշանակում է՝ քրեաիրավական ազատության և, միաժամանակ, օրինականության ապահովման երաշխավորում: Չարգացման ներկա փուլում Հայաստանի Հանրապետությունում քրեական արդարադատության ոլորտում իրականացվող բարեփոխումներն առաջին հերթին պետք է ուղղված լինեն հենց արդյունավետ պետական կարգապահության և օրինականության պահպանման բավարար նախադրյալների ապահովմանը:

Այս առումով էլ հենց պատահական չէ, որ հանցագործություն կատարած և պրոբացիայի ենթակա անձանց կողմից օրինականության պահպանման և ապահովման գործառույթը պետք է վերապահել պրոբացիայի ծառայության մարմնին:

Ասվածից հետևում է, որ օրինականության ապահովման սկզբունքը պրոբացիայի ծառայության մարմիններին հնարավորություն է ընձեռում միաժամանակ իրականացնել իրավապահ գործունեություն՝ ապահովելով, նախ, օրենքի գերակայությունը, այնուհետև՝ դրա միատեսակ ընկալումը, կիրառումն ու կատարումը, իսկ վերջում, պաշտպանելով իրավակարգը ցանկացած ոտնձգությունից:

Պրոբացիայի ծառայության կազմակերպման և գործունեության մյուս կարևորագույն սկզբունքը դա պրոբացիայի ծառայության մարմնի կառուցվածքային կենտրոնացվածությունն է: Կենտրոնացվածությունը տվյալ դեպքում արտահայտում և միաժամանակ սահմանում է ոչ միայն պրոբացիայի ծառայության մարմինների համակարգի ներքին փոխհարաբերությունները, այլ նաև պրոբացիայի ծառայության փոխհարաբերություններն այլ մարմինների հետ:

Այս սկզբունքը շնորհիվ պրոբացիայի ծառայության մարմինների ներքին աստիճանակարգված (հիերարխիկ) համակարգը ձևավորված տեսք է ստանում այն ժամանակ, երբ, մի կողմից, այն ենթադրում է պրոբացիայի ծառայության մարմինների կենտրոնացված ղեկավարում իրականացնող սահմանակարգերի առկայություն, իսկ մյուս կողմից, պրոբացիայի մարմինների համախմբված համակարգի առկայու-

թյուն՝ պրոբացիայի ծառայության մարմնի անմիջական ղեկավարի ենթակայությամբ:

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված պրոբացիայի ծառայության ներդրման հայեցակարգն արդեն իսկ սահմանում է, որ պրոբացիայի ծառայությունը պետք է ունենա տարածքային ստորաբաժանումներ, կենտրոնական վարչական ապարատ: Սա նշանակում է արդեն, որ պրոբացիայի ծառայության մարմնի կառուցվածքային կենտրոնացվածության սկզբունքն իր հետագա շարունակական իրավական ամրագրումները կստանա նաև այս գործունեությունը կարգավորող օրենքներում և այլ իրավական ակտերում: Ուստի և ստորև շարադրվող մոտեցումները, մեխանիզմներն ու առաջարկները թերևս կարող են կարևորվել նաև նրանով, որ կենտրոնացվածության սկզբունքը ամրագրված է աշխարհի բազմաթիվ երկրների պրոբացիայի ծառայությունների գործունեության հիմքում, ըստ որում, կապ չունի թե այն ինքնուրույն պետական մարմին է, թե գործում է արդարադատության կամ մեկ այլ համակարգում: Բոլոր դեպքերում էլ պահպանվում է նույն մոտեցումը. պրոբացիայի ծառայությունը պետք է ունենա միասնական կենտրոնացված կառուցվածք:

Պրոբացիայի ծառայության մարմնի կառուցվածքային կենտրոնացվածության սկզբունքը ենթադրում է նաև պրոբացիայի մարմինների կանոնակարգված աշխատանքների, գործունեության հստակեցված պայմանների և ռեժիմի, ընդհանուր խնդիրների ու գործառնությունների և պետական գործունեության այս տեսակին բնորոշ այլ հատկանիշների առկայություն: Այս սկզբունքն իրավաբանական գրականության մեջ հաճախ նույնացվում է պրոբացիայի ծառայության մարմինների կազմակերպման և գործունեության միասնականության ապահովման սկզբունքի հետ¹⁰: Այն, որ միասնականության սկզբունքը բխում է պետության միասնական քրեական և քրեակատարողական քաղաքականության միասնականության և այդ ոլորտում հսկողության իրականացման միատարր բնույթի պահանջներից, փաստ է:

Չնայած սկզբունքների նույնացման անընդունելիությանը, այդուհանդերձ, անհրաժեշտ է նշել, որ դրանց փոխադարձ կապի առկայությունը: Այսպես, եթե կառուցվածքային կենտրոնացվածությունը նախ

¹⁰ Stu՝ В.С. Семенов, Суд и прокуратура, М.: 1996, էջ 28, С.В. Парадаева, Общій государственный надзор за исполнением трудового законодательства, М.: 2001, էջ 19

և առաջ ենթադրում է կենտրոնացված համակարգի, այդ թվում՝ վերադաս և ստորադաս մարմինների առկայություն, ապա պետական այլ մարմինների կազմակերպման և գործունեության միասնականության սկզբունքն նախևառաջ ենթադրում է այս համակարգի մարմինների ընդհանուր և միասնական օրինականություն ապահովելու կարևորությունից բխող խնդիրների, աշխատանքների և անելիքների միասնականություն: Միասնականության սկզբունքն ինքնուրույն է դրսևորման իր առանձնահատկություններով հանդերձ: Այն նույնպես բնորոշ է պրոբացիայի ծառայության մարմիններին, քանի որ միասնական է պրոբացիայի գործունեության բովանդակությունը, միասնական են այն խնդիրներն ու գործառույթները, որոնք դրված են պրոբացիայի ծառայության վրա՝ անկախ ծառայության ներսում գործող տարբեր ստորաբաժանումների գործառույթային տարբերություններից:

Միջազգային պրակտիկայում պրոբացիայի ծառայության կազմակերպման և գործունեության սկզբունքների մեջ հաճախ առանձնացվում է այդ ծառայության մարմինների գործունեության անկախության կամ միայն օրենքին ենթարկվելու սկզբունքը: Ընդ որում, ժամանակակից եվրոպական երկրներում (Ֆրանսիա, Բելգիա, Գերմանիա և այլն) օրենսդիրը պարտավորեցնում է պրոբացիայի ծառայողին ձեռնպահ մնալ ղեկավար ծառայողի՝ օրենքին հակասող հրահանգները կատարելուց և գանգատարկել դրանք ու իրենց ծառայողական գործունեությունն իրականացնել՝ բացառապես հիմնվելով գործող օրենքների և իրավական ակտերի վրա¹¹: Անկախության սկզբունքը այն հիմնարար ու ղեկավար դրույթն է, որի օգնությամբ պրոբացիայի ծառայության մարմիններն իրենց առջև ծառայած խնդիրները լուծում են՝ օրենքով սահմանված պահանջներից ելնելով: Այսինքն՝ օրենքի, օրինականության գաղափարի առաջնությունը դրվում է այս մարմինների աշխատանքների կազմակերպման հիմքում, ինչը ընդհանուր օրինականության ապահովման անհրաժեշտությունից բխող չափազանց կարևոր նկատառում է, չնայած որ դրա ամբողջական ներդրման համար անհրաժեշտ է համապատասխան օրենսդրական կարգավորումներ և այլն:

¹¹ Stu՝ B.A.Пертли, Сущность организации пробаии во Франции, Великобритании и Швеции // Организация пробаии, М.: 2012, էջ 233-234:

Միևնույն ժամանակ, այդ մարմնի գործունեության անկախության սկզբունքն իր ամրագրումը պետք է ստանա հատկապես տվյալ մարմնին վերապահված գործառնական լիազորությունների իրագործման առումով:

Պրոբացիայի ծառայության մարմինների կազմակերպման և գործունեության առանձնահատկություններից ելնելով՝ անհրաժեշտ է անդրադարձ կատարել հսկողական և խորհրդատվական սկզբունքներին, որոնք ունեն առանձնահատուկ բնույթ: Պրոբացիայի ծառայության մարմիններն իրենց գործունեությունն իրականացնելիս պետության անունից օժտված են կարևորագույն հատուկ իրավասությամբ՝ այն է հսկողություն իրականացնել պրոբացիայի ենթակա անձանց և նրանց վարքագծի նկատմամբ:

Ընդ որում, պրոբացիայի ծառայության կազմակերպման և գործունեության հսկողական սկզբունքը ենթադրում է այդ ծառայության կողմից այնպիսի իրավական և կազմակերպչական միջոցների, մեթոդների իրականացում, որը կոչված կլինի ապահովել, մի կողմից, պետության կամքի կիրառումը իրավախախտում կատարած անձի նկատմամբ, մյուս կողմից, կապահովի նույն այդ անձի պրոբացիայի տակ գտնվելու ժամանակաշրջանում նրա ուղղման և վերադաստիարակման հնարավորությունը: Պրոբացիայի ծառայության կազմակերպման և գործունեության հսկողական սկզբունքի նշանակությունն էական է հատկապես այդ ծառայության իրավական կարգավորման համատեքստում:

Պրոբացիայի ծառայության մարմինների կազմակերպման և գործունեության հաջորդ կարևորագույն սկզբունքը դա խորհրդատվության սկզբունքն է:

Իրավախախտում կատարած անձի ուղղման և վերադաստիարակման խնդիրը պրոբացիայի ծառայության կարևոր խնդիրներից մեկն է, հատկապես, երբ անձը գտնվում է պրոբացիայի ներքո: Այս առումով, գտնվելով միայն ազատության մեջ և պրոբացիայի ներքո, բավարար պայման չի կարող համարվել պրոբացիայի ենթակա անձի ուղղման ու վերադաստիարակման համար: Եթե հարկադրանքը դիտարկվում կամ կիրառվում է այն ժամանակ, երբ անձը խախտել է պրոբացիայի ծառայողի օրինական պահանջները կամ գործող օրենսդրությամբ սահմանված վարքագծի կանոնները, ապա խորհրդ-

դատվության սկզբունքի նշանակությունն ուղղված է այլ իրավախախտումների կանխմանը: Այստեղ անձի վարքագծի վերասոցիալականացման խնդիր է դրվում ընտանիքի, հասարակության մեջ վերստին ինտեգրվելու, ինչը և նշանակում է անհրաժեշտ իրավաբանական ու խորհրդատվական աջակցության ցուցաբերում:

Այսինքն՝ պրոբացիայի ծառայողը մի դեպքում հանդես է գալիս որպես պետության անունից հսկողական գործառույթներ և պետական հարկադրանքի միջոցներ կիրառելու իրավասությամբ օժտված պաշտոնատար անձ, մյուս կողմից արդեն հանդես է գալիս որպես խորհրդատու, աջակից կամ խնամակալ իրավախախտում կատարած և պրոբացիայի ենթակա անձանց համար: Հենց այս հիմնավորմամբ է պայմանավորված պրոբացիայի ծառայության գործունեության առանձնահատկությունը, որն էլ իր հերթին առաջ է քաշում այս մարմինների կազմակերպման և գործունեության ընդհանուր և հատուկ սկզբունքների առկայությունը: Եթե օրինականության, կենտրոնացվածության, միասնականության կամ անկախության սկզբունքները բնորոշ են շատ պետական մարմինների համար, ապա հսկողական և խորհրդատվության սկզբունքները բնորոշ են հենց պրոբացիայի ծառայությանը:

Պրոբացիայի ծառայության մարմիններն իրենց կազմակերպման և գործունեության հիմքում ունեն այլ սկզբունքներ ևս, որոնք բխում են նրանց գործունեության բովանդակությունից և առանձնահատկությունից:

Այսպիսով, պետությունների և հասարակությունների, պետական մարմինների զարգացումն օբյեկտիվորեն առաջ է քաշում նաև տվյալ պետական մարմինների գործունեության կազմակերպման բազմապիսի հիմնահարցեր, նոր մոտեցումներ և գործունեության ընթացակարգեր: Ուստի՝ որպես պետական ապարատի բաղկացուցիչ մաս, պրոբացիայի ծառայությունը ևս ժամանակի ընթացքում կազմակերպական և իրավական հետագա կատարելագործումների և մշակումների կենթարկվի: Սակայն, կարևոր է, որ պետական ու հանրային կյանքի բնականոն զարգացումներով պայմանավորված պետական մարմինների կազմակերպման և գործունեության հետագա կատարելագործման ժամանակ հաշվի առնվեն գիտական մշակումները, արդի միջազգային փորձը, ինչպես նաև դրանց կազմակերպման ու գործունեու-

թյան սկզբունքները, որոնք առանցքային նշանակություն ունեն ոչ միայն պրոբացիայի ծառայության, այլ նաև ցանկացած պետական մարմնի արդյունավետ գործունեության համար:

Բանալի բառեր. պրոբացիա, պրոբացիայի ծառայություն, պրոբացիայի ծառայության մարմին, պրոբացիայի ծառայության սկզբունք, պրոբացիայի ծառայության առանձնահատկություններ:

ОСНОВНЫЕ ПРИНЦИПЫ И ЗНАЧЕНИЯ ДЕЯТЕЛЬНОСТИ ОРГАНОВ ПО УСЛУГАМ ПРОБАЦИИ

В.А. Багдасарян

Резюме

В этой статье говорится об основных вопросах по внедрению услуги по пробации: о сути основных принципов и значений деятельности органов по услугам пробации, о выявлении ее основных особенностей.

Ключевые слова: пробации, услуга по пробации, органы по услугам пробации, принцип услуг по пробации, особенности услуг по пробации.

THE MAIN PRINCIPLES AND MEANINGS OF THE PROBATION

V.A. Baghdsaryan

Summary

This article covers the main issues of introducing probation services and the essence of the main principles and meanings of the probation, and the elicitation of its main peculiarities.

Key words: probation, probation services, organs of the probation, the principle services of the probation, the peculiarity services of the probation.

**ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ՈՒ
ՔԱՂԱՔԱՑՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՊԱՀՈՎՈՒՄՆ ՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

S.4. Մարգարյան

Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնառավարման մարմինները կոչված են նաև մարդու իրավունքների և ազատությունների որպես բարձրագույն արժեքների պաշտպանություն ապահովելու համար: Սույն հոդվածում վերլուծվում է Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների ապահովման և պաշտպանության բնագավառում:

Հայաստանի Հանրապետությունում իրավական պետության ձևավորման գործընթացում մարդու ու քաղաքացու իրավունքների ու ազատությունների ապահովման ու պաշտպանության բնագավառում կարևոր դերակատարում է վերապահված տեղական ինքնակառավարման ինստիտուտին: ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ պետությունը, այդ թվում տեղական ինքնառավարման մարմինները կոչված են ապահովելու մարդու իրավունքների և ազատությունների որպես բարձրագույն արժեքների պաշտպանությունը:

ՀՀ Սահմանադրության 5-րդ և 11.2-րդ հոդվածների համակարգային վերլուծությունից հետևում է, որ տեղական ինքնակառավարումը իր իրավասությունների շրջանակում ինքնուրույն է, իսկ տեղական ինքնակառավարման մարմինները չեն ներառվում պետական կառավարման մարմինների համակարգում: Դա նշանակում է, որ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ճանաչման, պահպանման ու պաշտպանության սահմանադրական պարտականությունը անմիջականորեն չի տարածվում տեղական ինքնակառավարման և նրա մարմինների վրա: Եվ պատահական չէ, որ ՀՀ Սահմանադրության 104-110-րդ հոդվածներում ուղղակիորեն խոսք չի գնում այդ մարմինների կողմից մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ճանաչման, պահպանման ու պաշտպանության պարտա-

կանության մասին: Սակայն, Սահմանադրության 2-րդ, 3-րդ, 5-րդ, 104-րդ, 105-րդ և այլ հոդվածներով ամրագրված նորմերի բովանդակությունից բխում է, որ մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները կազմում են ոչ միայն օրենսդիր և գործադիր իշխանության գործունեության իմաստն ու բովանդակությունը, այլև արտացոլում են տեղական ինքնակառավարման և նրա մարմինների դերը այդ իրավունքների ու ազատությունների իրացման երաշխիքների ապահովման գործում, ինչպես նաև այդ մարմինների պարտականությունը համայնքի բնակիչների բարօրությանն ուղղված գործողությունների իրականացման առումով:

Այդ առումով անհրաժեշտ է հիշատակել Տեղական ինքնառավարման եվրոպական խարտիան, որի 3-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից հետևում է, որ տեղական ինքնակառավարումը՝ որպես տեղական ինքնակառավարման մարմինների իրավունք և կարողություն, կոչված է իրականացնելու գործողություններ՝ ելնելով տեղական բնակչության շահերի հաշվառմամբ: Սա իր հերթին ենթադրում է, որ տեղական ինքնակառավարում իրականացնելիս անհրաժեշտ է ոչ միայն մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունն երաշխավորելու համար, այլև՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից այդ իրավունքների ու ազատությունների իրացման, դրանց մասով խախտումները կանխարգելելու և կասեցնելու, ինչպես նաև մարդու և քաղաքացու խախտված իրավունքները վերականգնելու իրական մեխանիզմներ ստեղծելու նպատակով: Իհարկե, ասվածի համատեքստում, այնուամենայնիվ պետք է նկատի ունենալ, որ՝ ի տարբերություն տեղական ինքնակառավարման մարմինների, պետական մարմիններն ունեն առավելագույն հնարավորություններ՝ ինչպես պաշտպանելու, այնպես էլ խախտելու մարդու իրավունքներն ու ազատությունները [1, էջ 288]:

Բացի այդ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 89-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ապահովում է հասարակական կարգի պահպանությունը, միջոցներ է ձեռնարկում օրինականության ամրապնդման, քաղաքացիների իրավունքների և ազատությունների ապահովման ուղղությամբ, ինչը նշանակում է, որ տեղական ինքնակառավարման մարմինների համար նման պարտականություն սահմանված չէ:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ քաղաքացիների իրավունքների պաշտպանության բնագավառում համայնքի ղեկավարն իր իրավասության շրջանակում միջոցներ է ձեռնարկում պաշտպանելու համայնքի բնակիչների իրավունքները և օրինական շահերը, միաժամանակ, օրենքով իրեն վերապահված պարտադիր լիազորությունների պատշաճ իրականացման համար նա կարող է ակնկալել և պահանջել համապատասխան աջակցություն ցանկացած ոչ մունիցիպալ մարմիններից:

Այսինքն, չնայած այն հանգամանքին, որ ՀՀ Սահմանադրությամբ տեղական ինքնակառավարման մարմինների համար մարդու և քաղաքացու քաղաքացիների իրավունքների և ազատությունների ապահովման ու պաշտպանության լիազորություններ չեն նախատեսվում, սակայն դրանք իրենց ամրագրումն են ստացել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով և հանդիսանում են տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթներից մեկը: Այսպես, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածը սահմանում է համայնքի ղեկավարի և պարտադիր, և նրան պետության կողմից պատվիրակված լիազորությունները քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում: Իսկ նույն օրենքի 33.1-րդ հոդվածով համայնքի ղեկավարին վերապահվում են լիազորություններ տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ապահովման ու աջակցության բնագավառում:

Այնուամենայնիվ, մասնագիտական գրականության մեջ հաճախ են վերլուծվում մարդու ու քաղաքացու իրավունքների ու ազատությունների ապահովման ու պաշտպանության բնագավառում տեղական ինքնակառավարման դերակատարման կարևորման մասին: Այսպես, պրոֆեսոր Ա.Բ.Վենզերովը դիտարկում է մարդու իրավունքները և ազատությունները որպես օբյեկտիվ պայմաններ և, միաժամանակ, մարդու կենսունակության հնարավորություն՝ առանց որոնց չի կարող լինել նաև ինքը՝ մարդը [2, էջ 596]:

Այս հիմնախնդրին առավել լայն բնորոշում է տվել Ե.Ա. Լուկաշևան, նշելով, որ տեղական ինքնառավարման համակարգում մարդու իրավունքները հանդիսանում են մարդկանց միմյանց նկատմամբ փոխազդեցության նորմատիվ տեսակ, իրենց կապերի կանոնակար-

գում, գործունեության և արարքների կարգավորում, հակասությունների կանխարգելում նորմալ հասարակությունում և պետությունում [3, էջ 12]: Այս բնորոշումը չնայած տեսականորեն առավել հստակ է, սակայն, կարծում ենք, որ Ա.Բ.Վենգերովի սահմանումը առավել վերաբերելի է տեղական ինքնակառավարման մարմինների տվյալ ոլորտի լիազորությունների սահմանման համար, քանզի մարդու իրավունքների և ազատությունների մեծ մասը իրականացվում է հենց տեղական ինքնակառավարման ոլորտի աստիճանում և հատկապես, այդ հարթության մեջ է իրականացվում դրանց պաշտպանությունը:

Պրոֆեսոր Ն.Ս. Բոնդարն անդրադառնալով հետազոտման առարկա խնդրին նշել է, որ մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների էությունը փաստում է մարդկանց և մունիցիպալ մարմինների միջև առկա խորքային կապը: Հենց այս մոտեցմամբ, նա գտնում է, որ անհրաժեշտ է առանձնացնել քաղաքացիների մունիցիպալ իրավունքները և ազատությունները և դրանց իրականացման երաշխիքները [4, էջ 9-10]:

Դրանք հիմնականում բովանդակում են պահանջներ քաղաքացիների, պաշտոնատար անձանց, պետական և հասարակական կազմակերպությունների կողմից իրավական նորմերի պահպանման վերաբերյալ:

Այստեղից, մարդու իրավունքների և ազատությունների ապահովմանն ու պաշտպանությանն ուղղված տեղական իրավակարգն անհրաժեշտ է ընկալել որպես օրինականության պահպանման արդյունք կամ, պարզապես, հասարակության մեջ իրավական պահանջների պահպանում [5, էջ 601]:

Ընդ որում, այդ իրավակարգի ձևավորման ժամանակ օգտագործվում են հանրային իրավահարաբերությունների իրավական բոլոր տարրերը, որոնց պատճառահետևանքային կապը կազմում է հանրության իրավական կյանքի հիմքը՝ հանգեցնելով հասարակական կարգի ապահովմանը:

Պրոֆեսոր Վ.Ն Խրոպանյուկի կարծիքով՝ հասարակական կարգը իրենից ներկայացնում է հանրային իրավահարաբերություններից բաղկացած համակարգ, որը կազմավորվում է սոցիալական նորմերի իրականացմամբ, իրավունքի նորմեր, բարոյականության նորմեր, հասարակության ձևավորման նորմեր, սովորույթային նորմեր: Իրավա-

կան պետությունում հասարակական կարգի բոլոր էլեմենտները փոխկապակցված են և գտնվում են պետության պաշտպանության ներքո: Սակայն միայն իրավական կարգն է պաշտպանվում հատուկ պետական-իրավական միջոցներով: Հասարակական կարգի մյուս տարրերը, այդ թվում՝ տեղական ինքնակառավարման, ապահովվում են իրենց ներգործության միջոցներով, բարոյական սովորություններով և սովորույթներով [6, էջ 348-363]:

Եվ այսպես տեղական իրավակարգի պահպանությունը իր մեջ ներառում է քաղաքացիների իրավունքների և ազատությունների անվերապահորեն պահպանումը, դրանց խախտմանը ուղղված ցանկացած գործունեության կանխարգելումը: Քաղաքացիները իրավունք ունեն դիմելու տեղական ինքնակառավարման մարմիններին իրենց սահմանադրական իրավունքների իրականացման և պաշտպանության համար: Տեղական ինքնակառավարման մարմիններն էլ պարտավոր են ուսումնասիրեն քաղաքացու կամ քաղաքացիների դիմումով բարձրացված հարցերը և հանգամանորեն պատասխանել կամ ընթացք տալ դրանց:

Այս առումով, առավել ճիշտ կլինի, եթե խոսք գնա տեղական ինքնակառավարման մարմինների օրինականության ապահովման, իրավակարգի պահպանման, քաղաքացիների և մարդկանց իրավունքների և ազատությունների ապահովման գործառույթի մասին:

Այնուամենայնիվ, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մարդու ու քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության գործառույթը առաջին հերթին անհրաժեշտ է ընկալել որպես՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավունք և պոզիտիվ պարտականություն, որոնք անհրաժեշտ են օրենքների և այլ իրավական ակտերի պահպանմամբ տեղական ինքնակառավարման մարմինների և նրանց պաշտոնատար անձանց կողմից տեղական նշանակության հարցերը լուծելու, ինչպես նաև մարդու կյանքի և գործունեության համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու համար:

«Սահմանադրության «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» գլխում ամրագրված նորմերի համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ մարդու իրավունքների իրականացումը կապված է տեղական ինքնակառավարման հետ: Քաղաքացիներն իրավունք ունեն ընտրել և ընտրվեն տեղական ինքնա-

կառավարման մարմինների ձևավորման ընտրություններում, մասնակցել տեղական հանրաքվեներին, դիմել տեղական ինքնակառավարման մարմիններին և ողջամիտ ժամկետում պատասխաններ ստանալ, իրացնեն իրենց իրավունքները առողջապահության, կրթության բնագավառում, որոնք իրականացվում են նաև տեղական ինքնակառավարման մարմինների կողմից և այլն: Այսինքն, «Սահմանադրությունը բովանդակում է այնպիսի դրույթներ, որոնք անմիջականորեն կամ անուղղակիորեն վերաբերում են տեղական ինքնակառավարման իրավասությանը վերապահված հարցերի կարգավորմանը: Այսպես, Սահմանադրության 11.2-րդ հոդվածի կոնկրետացումն ու մանրամասնումը վկայում է տեղական ինքնակառավարման սոցիալական արժեքավորության մասին, քանի որ դրա միջոցով է ապահովվում ժողովրդի կողմից իր իշխանության իրականացումը [7, էջ 145]:

Բացի այդ, համաձայնվելով պրոֆեսոր Վ.Վ.Տվետկովի կարծիքի հետ [8] անհրաժեշտ է նշել, որ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց գործառույթները իրականացնելիս պետք է ապահովեն ոչ միայն համայնքի բնակչի սահմանադրական իրավունքները և ազատությունները, այլ նաև այլ իրավական ակտերի հիման վրա երաշխավորեն մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունների պաշտպանությունն ընդհանրապես:

Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը անհրաժեշտ է դիտարկել որպես այդ մարմինների գործառույթ: Այդ գործառույթի բովանդակությունը կարծում ենք պայմանավորված է համայնքներում մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների իրավաչափ իրացման համար անհրաժեշտ քաղաքական, տնտեսական և սոցիալական կազմակերպական բնույթի ընդհանուր երաշխիքների ստեղծմամբ ու զարգացմամբ:

Այդ առումով սույն հետազոտության համար կարևոր նշանակություն ունի «տեղական նշանակության» հարցերի եզրույթի իմաստի ու նշանակության բացահայտումը: Ընդ որում, դրա սահմանադրաիրավական էությունը ենթադրվում է, որ այն պայմանավորված պետք է լինի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակի և համայնքի տարածքում նրանց իրավասության որոշա-

կիացմամբ, որոնց միջոցով տեղական ինքնակառավարման փաստացի իրականացումը կրում է իրավաչափ բնույթ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 104-րդ հոդվածով այդ եզրույթի ամրագրումը սահմանադրական կարգավորումների համատեքստում կարևոր նշանակություն ունի այն առումով, որ համայնքի բնակչի բարօրությանն ու իրավունքների ապահովմանն ուղղված տեղական նշանակության ցանկացած հարցի լուծում իրավաչափ է, եթե դա որևէ կերպ վերապահված չէ պետական մարմիններին: Անհրաժեշտ է նաև նկատել, որ տեղական նշանակության հարցերը թեև սպառիչ չեն, սակայն դրանց շրջանակը սահմանափակված է ՀՀ Սահմանադրության 104.1, 105 և 106-րդ հոդվածներով ամրագրված տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրական կարգավիճակից բխող դրույթներով:

Մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ապահովման ու պաշտպանության ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության կարևոր օղակներից է անմիջական ժողովրդավարության ինստիտուտների (տեղական հանրաքվե, հանրային լսումներ և այլն) օգտագործմամբ ապահովել համայնքի տարածքում մունիցիպալ այնպիսի իրավակարգի առկայություն, երբ կանխարգելվում կամ կասեցվում է մարդու իրավունքների որևէ խախտում: Իհարկե, տվյալ պարագայում խոսք չի կարող գնալ միայն հանրային իրավակարգի պահպանման վերաբերյալ: Այստեղ, առանձնակի կարևորություն է ստանում մարդուն և քաղաքացուն ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված բոլոր իրավունքների և ազատությունների ապահովումը:

Բացի այդ, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ապահովման ու պաշտպանության բնագավառում, իր էությամբ, կարևոր նշանակություն ունի տեղական ինքնակառավարման մարմինների իրավաստեղծ գործառույթը: Ընդ որում, այն կրում է ենթաօրենսդրական բնույթ, ինչը պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի տրամաբանությունից հետևում է, որ համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումները չպետք է հակասեն, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության օրենքներին: Իսկ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով ամրագրված դրույթ-

ների բովանդակությունից հետևում է, որ համայնքի ղեկավարը օրենքով վերապահված լիազորությունների շրջանակում կայացրած որոշումներով խթանում է տնտեսական գործունեություն նախաձեռնողների ծրագրերի իրականացմանը, նպաստում ու օժանդակում է համայնքում նրանց գործունեության առավել արդյունավետ իրականացմանը, կանոնակարգում է հավաքների անցկացումը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով սահմանված կարգով և այլն:

Սակայն, դա չի նշանակում, որ մունիցիպալ իրավական ակտերով համայնքի բնակիչների համար չեն կարող սահմանվել արտոնություններ և տրվել հատուկ երաշխիքներ, որոնք կորոշակիացնեն մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների իրացման կազմակերպարավական մեխանիզմները տվյալ համայնքի տարածքում:

Մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պահովման ու պաշտպանության բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների հաջորդ կարևոր գործառույթը դա տեղական նշանակության հարցերով մունիցիպալ նախնական և հետագա վերահսկողության իրականացումն է, այդ թվում նաև պետության պատվիրակած լիազորությունների մասով: Նախնական վերահսկողությունը մեր կարծիքով կրում է նախնական բնույթ և ուղղված է համայնքում անձի իրավունքների հնարավոր խախտումների կանխարգելմանը, իսկ հետագա վերահսկողությունը կրում է փուլային բնույթ, որի արդյունքներով ընդունվում է երաշխավորային բնույթի որոշումներ: Այսպես, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 33 և 33.1-րդ հոդվածների համակարգային վերլուծությունից հետևում է, որ համայնքի ղեկավարն իր իրավասության շրջանակում միջոցներ է ձեռնարկում պաշտպանելու համայնքի բնակիչների ու տնտեսավարող սուբյեկտների իրավունքները և օրինական շահերը, քաղաքացիներին ընդունելություն կատարելու միջոցով համապատասխան ընթացք է տալիս նրանց առաջարկություններին, դիմումներն ու բողոքներին, ինչպես նաև համայնքի բնակիչների համար ստեղծում է բավարար պայմաններ՝ իրազեկ լինելու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության և համայնքի կառավարմանն ու զարգացմանը մասնակցելու մասին և այլն:

Բացի այդ, տեղական ինքնակառավարման համակարգում առանցքային նշանակություն ունի նաև մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ապահովման ու պաշտպանության առանձնահատկությունների բացահայտման խնդիրը: Այսպես, այդ իրավունքների դասակարգման առանձնահատկությունները մատնանշում են՝

ա) տեղական ինքնակառավարման գործունեության շրջանակները քաղաքացու անձնական (քաղաքացիական) ապահովման ու պաշտպանության բնագավառում, որն իրականացվում է պետության անմիջական վերահսկողության ներքո՝ առանց այդ իրավունքների իրացման համար անհրաժեշտ երաշխիքների սահմանմամբ: Ընդ որում, դրանք ուղղված են՝ քաղաքացու անձնական անվտանգության ապահովման պայմանների ստեղծմանը և ենթադրում են համայնքի տարածքում իրավակարգի հնարավոր խախտումների կանխարգելիչ գործունեության իրականացմանը,

բ) տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակը ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված մարդու և քաղաքացու քաղաքական իրավունքների իրացման ու երաշխավորման նկատմամբ: Այս լիազորությունները կրում օպերատիվ-կարգադրիչ բնույթ և ուղղված են կոնկրետ քաղաքական այս կամ այն իրավունքի իրացմանն աջակցելուն,

գ) տեղական ինքնակառավարման և նրա մարմինների լիազորությունները մարդու և քաղաքացու սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների ապահովման ու պաշտպանության բնագավառում, որոնց իրացումը կարող է բնութագրվել որպես այդ մարմինների կողմից տնտեսական և սոցիալական բնույթի մունիցիպալ ծառայությունների մատուցում:

Այսպիսով, ընդհանրացնելով կարելի ներկայացնել հետևյալ նկատառումները.

1) Սահմանադրական նորմերի բովանդակությունից բխում է, որ մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները կազմում են ոչ միայն օրենսդիր և գործադիր իշխանության գործունեության օբյեկտ, այլև արտացոլում են տեղական ինքնակառավարման և նրա մարմինների դերը այդ իրավունքների ու ազատությունների իրացման երաշխիքների ապահովման գործում, ինչպես նաև այդ մարմինների

պարտականությունը համայնքի բնակիչների բարօրությանն ուղղված գործողությունների իրականացման առումով:

2) մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը տեղական ինքնակառավարման մարմինների կարևորագույն գործառույթներից է, որի բովանդակությունը պայմանավորված է համայնքներում մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների իրավաչափ իրացման համար անհրաժեշտ քաղաքական, տնտեսական և սոցիալական կազմակերպական բնույթի ընդհանուր երաշխիքների ստեղծմամբ ու զարգացմամբ:

3) Տեղական ինքնակառավարման համակարգում մարդու իրավունքների և ազատությունների ապահովմանն ու պաշտպանությանն է ուղղված տեղական իրավակարգը՝ որպես համայնքի տարածքում օրինականության պահպանման արդյունք: Ընդ որում, այդ իրավակարգի պահպանությունը բովանդակում է քաղաքացիների իրավունքների և ազատությունների անվերապահորեն պահպանումը և դրանց խախտմանը ուղղված ցանկացած գործունեության կանխարգելումը:

4) Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգավորումների համատեքստում համայնքի բնակչի բարօրությանն ու իրավունքների ապահովմանն ուղղված տեղական նշանակության ցանկացած հարցի լուծում իրավաչափ է, եթե դա որևէ կերպ վերապահված չէ պետական մարմիններին:

5) Մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ապահովմանն ու պաշտպանության ոլորտում տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացվող իրավաստեղծ և մունիցիպալ վերահսկողության գործառույթներն ունեն առաջնային ու որոշիչ նշանակություն:

6) Տեղական ինքնակառավարման համակարգում մարդու և քաղաքացու անձնական (քաղաքացիական), քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների դասակարգումն ինքնին նշանակում է դրանց ապահովմանն ու պաշտպանության առանձնահատկությունների սահմանում:

Բանալի բառեր և արտահայտություններ. տեղական ինքնակառավարում, տեղական ինքնակառավարման մարմիններ, ՀՀ Սահմանադրություն, մարդու ու քաղաքացու իրավունքներ և ազատություններ:

Գրականություն

1. Վ.Այվազյան Մարդու իրավունքներ, Եր.,2007:
2. Венгеров А.Б. Теория государства и права. М.: Новый юрист, 1998.
3. Права человека. /Отв. Ред. Е.А. Лукашева. М.: Норма, 2003.
4. Бондарь Н.С. Права человека и местное самоуправление в Российской Федерации.
5. Автореф. Дисс... д-ра юрид. Наук: 12.00.02. Саратов, 1997. Венгеров А.Б. Указ. Соч.
6. Хропанюк В.Н. Теория государства и права. М., 1996.
7. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ /ընդհ. խմբ. Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Եր. 2010:
8. Цветков В.В. Полномочия органов местного самоуправления в сфере обеспечения правопорядка. // Дисс... канд. Юрид. Наук: 12.00.02. М., 2000.

ОРГАНЫ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ И ОБЕСПИЧЕНИЕ И ЗАЩИТА ПРАВ И СВОБОД ЧЕЛОВЕКА И ГРАЖДАНИНА

**Т.К. Маргарян
Резюме**

Органы местного самоуправления в РА также призваны в наивысшей степени обеспечивать права и свободу человека. В данной статье анализируются полномочия органов местного самоуправления в сфере обеспечения и защиты прав и свобод человека и гражданина.

Ключевые слова и высказывания: местное самоуправление, органы местного самоуправления, Конституция РА, права и свобода человека и гражданина.

**LOCAL SELF-GOVERNMENT AND THE RIGHTS OF HUMAN AND
CITIZEN AND THE SECURE OF FREEDOM AND PROTECTION IN
REPUBLIC OF ARMENIA**

T.K. Margaryan

Summary

In republic of Armenia the local self-governmental bodies are also called to protect the rights and freedom of human high values.

In this article is analyzed the authorization of local self-governmental bodies in human and citizen rights, and the protection of law and freedom.

Keywords and phrases: Local self-government, local self-governmental bodies, Constitution of RA, rights and freedom of human and citizen.

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Տ.Կ. Մարգարյան

Սույն հոդվածում վերլուծվում է Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինների հանրային իրավական պատասխանատվության ինստիտուտի էությունը, պատասխանատվության ձևերը և տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատվության միջազգային պրակտիկան:

Պատասխանատվությունը, որպես ընդգրկուն ու բազմիմաստ հասկացություն, տեղական ինքնակառավարման համակարգում դիտարկվում է պետության, համայնքի և բնակչի առումով: Ինչպես գրել է Հեգելը. «Գերատեսչությունների և չինովնիկների կողմից իշխանության չարաշահումներից պետությանն ու պետության կառավարման ներքո գտնվող բոլոր անձանց պաշտպանելու անմիջական ձևը այդ գերատեսչությունների և պաշտոնատար անձանց հիերարխիան է ու նրանց պատասխանատվությունը» [1, էջ 334]:

Հայրենական իրավագիտության մեջ տեղական ինքնակառավարման մարմինների հանրային իրավական պատասխանատվության ինստիտուտի իմաստավորումը, հաստատումն ու ամրապնդումը արդյունք է մեր երկրում ժողովրդավարության այդ ինստիտուտի սահմանադրականացման:

Այսպես, Հայաստանի Հանրապետությունում 2005 թվականի սահմանադրական գործընթացների արդյունքում կարևորվեց տեղական ինքնակառավարումը որպես սահմանադրական կարգի հիմունք, և արդյունքում՝ Սահմանադրության 11.2-րդ հոդվածով հռչակվեց, որ Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է տեղական ինքնակառավարումը, իսկ 104-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվեց, որ տեղական ինքնակառավարումը համայնքի իրավունքն ու կարողությունն է սեփական պատասխանատվությամբ բնակիչների բարօրության նպատակով Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան լուծելու տեղական նշանակության հարցերը:

Սահմանադրական այս նորմերի բովանդակությունից հետևում է, որ, մի կողմից պետությունը պոզիտիվ հանրային իրավական պա-

տասխանատվություն է ստանձնում՝ ճանաչելու և երաշխավորելու տեղական ինքնակառավարումը, ինչպես նաև ապահովելու համայնքի ինքնակառավարման իրավունքի լիարժեք իրականացումը, իսկ մյուս կողմից՝ տեղական ինքնակառավարման մարմինները պատասխանատվություն են կրում ինչպես պետության առջև Սահմանադրության ու օրենքների պահանջների կատարման մասով, այնուհետև, ժողովրդի՝ որպես իշխանության աղբյուրի առջև, այնպես էլ համայնքի առջև՝ իրենց գործունեության արդյունքների համար [2, էջ 318-319]: Ակնհայտ է, որ տեղական ինքնակառավարման համակարգի կազմակերպման ու գործունեության կարևոր երաշխիքներից է դառնում սահմանադրական սկզբունքների պահպանումը պետության, տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքի բնակիչների կողմից: Ինչպես նշում է Ա.Շ.Հարությունյանը, «ճանաչելով բնակչության տեղական ինքնակառավարում իրականացնելու իրավունքը՝ պետությունը ճանաչում և երաշխավորում է տեղական ինքնակառավարման ինքնուրույնությունը՝ նրա լիազորության սահմաններում, և պարտականություն է ստանձնում անհրաժեշտ պայմաններ ստեղծել տվյալ իրավունքի իրականացման համար» [3, էջ 87]:

Տեղական ինքնակառավարման մարմինների հանրային իրավական պատասխանատվությունը խնդրահարույց ինստիտուտ է ինչպես այդ ինստիտուտի իրավական կարգավորման, այնպես էլ դրա պրակտիկ կիրառման տեսանկյունից:

Նախ, անդրադառնանք տեղական ինքնակառավարման մարմինների հանրային իրավական պատասխանատվության առանձին հիմնահարցերի տեսական-իրավական վերլուծությանը (այսուհետև՝ մունիցիպալ իրավական պատասխանատվություն):

Որոշ գիտնականների կարծիքով՝ մունիցիպալ իրավական պատասխանատվության հարցը բնութագրվում է երկու ասպեկտներով՝ պոզիտիվ և նեգատիվ [4]: Ընդ որում, եթե իրավական պոզիտիվ պատասխանատվությունը ենթադրում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց պարտավորությունների, Սահմանադրությամբ և օրենսդրությամբ ամրագրված նորմերի բարեխիղճ և պատշաճ կատարում, ապա նեգատիվ ասպեկտը բնութագրում է այդ մարմինների կողմից թույլ տրված խախտումների շրջանակը [5]:

Մունիցիպալ իրավական պատասխանատվությունը ինքնուրույն իրավական երևույթ է: Մունիցիպալ իրավական պատասխանատվության ինստիտուտը իրենից ներկայացնում է իրավական նորմերի համակցություն, որոնք կարգավորում են տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատվության հետ կապված իրավահարաբերությունները: Այն նպատակ ունի ապահովել Սահմանադրությամբ ամրագրված նորմերի կատարումը, սահմանադրական կարգի և օրինականության պահպանումը:

Իրավագիտության մեջ առկա են տեղական ինքնակառավարման ոլորտում հանրային իրավական պատասխանատվության տարբեր ձևակերպումներ: Այսպես, հեղինակների մի խումբ կարծում է, որ տեղական ինքնակառավարման մարմինների հանրային իրավական պատասխանատվությունն անհրաժեշտ է ընկալել որպես սահմանադրական պատասխանատվության ձև [6, էջ 39], իսկ մեկ այլ խումբ այն դիտարկում է որպես մունիցիպալ իրավունքի ինստիտուտ [7, էջ 249]:

Պրոֆեսորներ Օ.Ե.Կուտաֆինը, Վ.Ի.Ֆադեևը [8, էջ 529-537]: և Ե.Ս.Շուգրինան [9, էջ 249] ընտրել են մունիցիպալ իրավական պատասխանատվություն եզրույթը և դեմ են ցանկացած այլ կերպ ու այլ տերմինով դրա անվանակոչմանը: Իսկ պրոֆեսոր Կ.Ի.Ամիրբեկովի կարծիքով՝ մունիցիպալ իրավական պատասխանատվությունը հանրային իրավական պատասխանատվության տեսակ է, քանի որ դրանում համադրվում են միաժամանակ և քաղաքական և իրավական պատասխանատվության տարրեր [10]:

Մասնագիտական գրականության մեջ շրջանառվում է նաև ընդհանրացված մի տեսակետ, ըստ որի, իրավունքի յուրաքանչյուր ճյուղ պետք է ապահովի իր նորմերի ինքուրույնաբար իրականացում, այդ թվում՝ սեփական պատասխանատվության միջոցներով՝ սանկցիաներով:

Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման համակարգի ներդրումից հետո, մունիցիպալ իրավական պատասխանատվության հարցը հրատապ է այն առումով, որ տվյալ ոլորտի ցանկացած բարեփոխման հիմքում անհրաժեշտ է ապահովել համայնքային իշխանության և բնակիչների միջև սերտ փոխգործակցությունն ու փոխկապվածությունը:

Միաժամանակ, անհրաժեշտ է արժևորել մունիցիպալ իրավական պատասխանատվության որպես իրավական պատասխանատվության ինքնուրույն տեսակի գոյության հիմնախնդիրը, ինչը պայմանավորված է հետևյալ հիմնավորումների առկայությամբ՝

1) մունիցիպալ իրավական պատասխանատվության նորմատիվ հիմք են հանդիսանում ՀՀ Սահմանադրությունը և օրենքները,

2) սահմանադրական և մունիցիպալ իրավախախտումը հանդիսանում է մունիցիպալ իրավական պատասխանատվության փաստական հիմք,

3) մունիցիպալ իրավական պատասխանատվության սուբյեկտ են հանդիսանում տեղական ինքնակառավարման մարմինները՝ համայնքի ղեկավարը և ավագանին:

Հատկանշական է այն, որ ընտրությունների արդյունքների հիման վրա ընտրված համայնքի ղեկավարի և ավագանու անդամի պատասխանատվության միջոցները ունեն որոշակի առանձնահատկություններ, որոնցով պայմանավորված մունիցիպալ իրավական պատասխանատվությունը տարբերվում է պատասխանատվության այլ տեսակներից: Միաժամանակ, անհրաժեշտ է նկատել, որ մունիցիպալ իրավական պատասխանատվությունը կարող է դրսևորվել տարբեր ձևերով, այդպիսիք են, օրինակ՝ համայնքի ղեկավարի լիազորությունների վաղաժամ դադարեցումը կամ տեղական ինքնակառավարման մարմինների գործողություններով և անգործությամբ պատճառված վնասի հատուցումը, ընդունված ոչ իրավաչափ ակտերի վերացում կամ համայնքի ղեկավարի ավագանու անդամի պաշտոնանկություն և այլն:

Միաժամանակ, Սահմանադրության 108.1-րդ հոդվածն անուղղակիորեն նախատեսում է մունիցիպալ իրավական պատասխանատվություն տեղական ինքնակառավարման մարմինների համար՝ սահմանելով, որ. «Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության օրինականությունն ապահովելու նպատակով օրենքով սահմանված կարգով իրականացվում է իրավական հսկողություն: Համայնքին պատվիրակված լիազորությունների իրականացման նկատմամբ պետական վերահսկողության կարգը սահմանվում է օրենքով»: Իսկ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ գլխով ամրագրված հոդվածների բովանդակությունից հետևում է, որ համայնքի ղեկավարն իր լիազորությունների իրականացման շրջանակում պոզի-

տիվ իրավական պատասխանատվություն է կրում քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում (հոդվ.33), տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բնագավառում (հոդվ.33.1), հասարակական կարգի պահպանության բնագավառում (հոդվ.35), ֆինանսների բնագավառում (հոդվ.34), հանրային միջոցառումների կանոնակարգման բնագավառում (հոդվ.35.1), պաշտպանության կազմակերպման բնագավառում (հոդվ.36), քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում (հոդվ.37) և այլ բնագավառներում:

Մունիցիպալ իրավական պատասխանատվության հարցերը իրավաբանական գիտությունում համեմատաբար նոր են ուսումնասիրվում, և դրանց սկզբնական հետազոտության շրջանում ստացված արդյունքները միանշանակ չեն կարող ընկալվել: Այսպես, տեղական ինքնակառավարման իրականացումը «սեփական պատասխանատվությամբ չի նշանակում, որ տեղական ինքնակառավարման համակարգում բացակայում է նեգատիվ իրավական պատասխանատվությունը՝ տեղական ինքնակառավարման մարմինների ոչ իրավաչափ գործողությունների, այդ թվում՝ անօրինական ակտերի ընդունման, քաղաքացիների իրավունքների և ազատությունների խախտման համար:

Տվյալ դեպքում համայնքի ընտրողների կողմից համայնքի ղեկավարին ու ավագանու անդամին տեղական նշանակության հարցեր լուծելու իրավունքի և իրավասության տրամադրումն ինքնին բովանդակում է բարոյական պատասխանատվության տարրեր: Ինչպես արդարացիորեն նշել է պրոֆեսոր Մ.Ա.Կրասնովան, «սեփական պատասխանատվությամբ» եզրույթի գործնական իմաստը կայանում է նրանում, որ գործողությունների ազատություն տալով, պետությունը որոշ չափով հեռվանում է պատասխանատվությունից, իսկ բնակչությունը պատասխանատու է դառնում ինքն իր առջև [11, էջ 489]: Արդյունքում, տեղական նշանակության հարցերը լուծելու բարոյական պոզիտիվ պատասխանատվությունը աստիճանաբար վերաճում է իրավական պատասխանատվության և այն կապված է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից օրենսդրության պահանջները, մարդու և քաղաքացու իրավունքները և ազատությունները խախտելու հետ:

Համայնքի ղեկավարի և ավագանու անդամների համար պատասխանատվության տեսակներ են հանդիսանում քրեական, վարչական, կարգապահական, նյութական պատասխանատվությունը: Քրեական և կարգապահական պատասխանատվության միջոցներ կարելի է կիրառել միայն պաշտոնատար անձանց նկատմամբ, քանի որ տվյալ պատասխանատվության տեսակների սուբյեկտ է հանդիսանում հենց ֆիզիկական անձը [12]:

Որպես կանոն, մունիցիպալ իրավական պատասխանատվությունը առավել արտահայտվում է դրա պոզիտիվ ուղղվածությամբ՝ լիազորությունների պատշաճ իրականացմամբ և պարտականությունների բարեխիղճ կատարմամբ: Տեղական ինքնակառավարման մարմինները պոզիտիվ հանրային իրավական պատասխանատվություն են կրում իրենց սեփական և պատվիրակված լիազորությունների իրականացման համար և նրանց ընդունած ակտերը չեն կարող հակասել օրենսդրությանը: Ինչ վերաբերում է մունիցիպալ իրավական նորմերի ուղղակի խախտման կամ տեղական ինքնակառավարման մարմինների վրա դրված պարտականությունների չկատարման դեպքերին, ապա այդ դեպքում անխուսափելի է դառնում նեգատիվ մունիցիպալ իրավական պատասխանատվության կիրառման հնարավորությունը: Իհարկե, չի կարող կասկածի տակ դրվել պատասխանատվության այդ ինստիտուտի կարևորությունն ու անհրաժեշտությունը, սակայն, մյուս կողմից, չի կարող տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սեփական և պետության պատվիրակված լիազորությունների իրականացումն ապահովել բացառապես պատիժ կրելու սպառնալիքով:

Մունիցիպալ իրավական պատասխանատվության կարևոր բնագավառներից է այդ պատասխանատվության իրականացման կամ կիրառման մեխանիզմների սահմանումը, ընդ որում, բացասական հետևանքներ առաջացնող այդպիսի պատասխանատվությունը կիրառելի է դառնում տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ՝ վերջիններիս կողմից իրենց անմիջական պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման և իրենց լիազորությունների չարաշահման համար: Այսպես, Սահմանադրության 104–106-րդ հոդվածներով ամրագրված նորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ, օրինակ, համայնքի ավագանին պոզիտիվ ի-

րավական պատասխանատվություն է կրում՝ համայնքի սեփականությունը տնօրինելու, համայնքի բյուջեն հաստատելու, համայնքի բյուջեի կատարումը վերահսկելու, տեղական հարկեր ու այլ վճարներ սահմանելու, համայնքի տարածքում պարտադիր կատարման ենթակա իրավական ակտեր ընդունելու համար: Որպես իրավական պատասխանատվության հիմք հանդիսանում է սահմանադրաիրավական նորմերի պահանջները չկատարելու կամ սահմանադրական արգելքները չպահպանելու ձևով, սահմանադրական կարգի դեմ ոտնձգությունները, օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները խախտելը [13, էջ 321]:

Մոսկովչենկոյի հարցաթերթիկի միջոցով նրանք բաժանվել են երեք խմբի՝ «արտույտներ», «աղավնիներ» և «բվեճներ»: Ըստ շտրիխթեսթի արդյունքների ուսումնասիրվել են տարբեր քրոնոտիպով աշակերտների ստեղծագործական կարողությունները և աշխատունակությունը: Կատարված դիտարկումները ցույց են տվել, որ որպես կանոն տղաները ավելի շուտ են ավարտում ստեղծագործական առաջադրանքը, քան աղջիկները:

Բանալի բառեր. քրոնոտիպ, հուզական սթրեսս, նկարչության դաս, աշակերտներ:

ՎԻՐՏՈՒԱԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՑՈՒԹՅԱՆ
ԵՂԱՆԱԿ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՓՈՒԼ

Ռ.Վ. Նեմիշայան, Կ.Վ. Վողենկո

*«Մարդկությունը շտապում է դեպի
դատարկություն, քանի որ բոլոր
վերջնական նպատակները հեղուկ են...»¹*

Ժ. Բոդրիյար

Անառարկելի փաստ է, որ համակարգչային տեխնոլոգիաները լայն տարածում են ստացել հասարակական կառույցի բոլոր մակարդակներում: Թվայնացման գործընթացը մարդկության ունենցած ողջ տեղեկույթը, գիտելիքները, մշակութային արժեքները տեղափոխել է համակարգչային տեղեկատվական տիրույթ: Թվայնացվել է ոչ միայն տեղեկույթն ու մարդկության հազարամյա փորձը, այլ նաև ժամանակակից մարդու առօրյա կեցությունը: Հասարակական գործառույթները, փոխազդեցությունները, ինքը՝ մարդը, դարձել է թվայնացված աշխարհի մասը: Անհրաժեշտ է հասկանալ՝ ինչ տեսակի հասարակական փոխակերպումներ տեղի ունեցան: Արդյո՞ք տեղեկատվական հասարակության մարգարեների կանխատեսումներն իրականացան: XXI դարի երկրորդ տասնամյակում մարդկային, անհատական կեցությունը հասարակական ինչպիսի՞ իրականության մեջ հայտնվեց: Միզուցե վիրտուալ իրականությունը նոր չէ՝ այն մեր իրական փորձի հասարակ վերարտադրությունն է կամ գու՞ցե պետք է խոսել ոչ թե վիրտուալ իրականության, այլ վիրտուալության իրականության մասին, ինչպես Սլավոյ Ժիժեկը²: Գու՞ցե վիրտուալությանը հասարակական զարգացման հերթական փուլն է՝ պայմանավորված արտադրողական միջոցների զարգացմամբ:

Ժամանակակից մարդու հասարակական կեցությունը հասկանա-

¹ Տե՛ս Ա.Ա. Грицанов, Н.Л. Кацук. «Жан Бодрийяр» – Мн.: Книжный Дом, 2008. էջ 190-191:

² Տե՛ս Zhizhek S. Welcome in deserd Real, М., “Pragmatist of culture”, 2002, էջ160:

լու համար անհրաժեշտ է վերլուծել հետադրիականության իրավիճակը: XX դարում աննախադեպ առաջընթաց արձանագրվեց տեղեկատվության, հաղորդակցման միջոցների զարգացման բնագավառում, բարձրացավ տեղեկատվական գործընթացների արագությունը: Գիտատեխնիկական նվաճումների շնորհիվ արդյունաբերական քաղաքակրթությունը ձեռք բերեց մշակութային արժեքների արտադրության ու տարածման նոր ու ավելի կատարելագործված միջոցներ, որոնցից առաջատարները՝ զանգվածային տեղեկատվության միջոցներն են: Է.Թոֆֆլերը նշում է, որ տեխնիկական հանդիսանում է արդյունաբերական քաղաքակրթության «թաքնված կողմ»³ կանոնների ու սկզբունքների այն համակարգը, որով պայմանավորված է տվյալ քաղաքակրթության զարգացման տրամաբանությունը:

Նորագույն տեղեկատվական համակարգերը ստեղծում են տեղեկատվական մշակույթը, որը գործառնության մեջ է դնում հսկայական կերպարների համակարգ: Ձևավորվում է ևս մի՝ «վիրտուալ իրականություն», որի միավորները կերպարներն են: Այդ կերպարները մարդկանց պահում են զամված էկրաններին, թելադրում են նախասիրություններ, մտածելակերպ, ապրելակերպ և վարքի մոդելներ: Կերպարների համակարգը ունի իր օրենքները և ստեղծում է ամբողջական վիրտուալ մշակույթ, ուր ներառված են հեռուստատեսությունը, համացանցը, կինոմատոգրաֆիան, գովազդային հոլովակները և վահանակները, տարբեր հասարակական զանգվածային միջոցառումները, որոնք իրականացվում են նոր տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով: Հատուկ մշակված կերպարների միջոցով վիրտուալ մշակույթը հասարակական գիտակցության մեջ ձևավոխում է հասարակական գործառնության այնպիսի մոդելները, ինչպիսիք են՝ արտաքին տեսքը (ցանկացած տարիքում առողջ ու երիտասարդ տեսք ունենալը), ազատ ժամանակի կազմակերպումը (տեղեկատվական մշակույթի արտադրանքը սպառելով հանգստի կազմակերպման վրա), կրթա-ծությունը (ամբողջ կյանքի ընթացքում սովորելը ու կատարելագործվելը), բազմաթիվ մակերեսային շփումներ ունենալը, հասարակական վարկանիշի ձևավորումը, որոնք այս նույն մշակույթը համարում է հաջողակ, նորաձև և առաջադեմ լինելու պայմաններ:

³ St'u Toֆֆլեր Э. Третья волна. М., ООО Фирма издательство АСТ, 1999, էջ 92:

Ժամանակակից աշխարհում զարգանում են ոչ թե տեղեկատվական-իմացաբանական տեխնոլոգիաները, այլ դրանց սիմուլյացիոն՝ փոխնակ, կեղծ նմանակներ ստեղծող, տարածող՝ վիրտուալ իրականության տեխնոլոգիաները: Վիրտուալության գաղափարը նոր չէ, այն օգտագործվել է միջնադարյան սխոլաստիկայի կողմից, ուր վիրտուալության գաղափարը հակադրում էր մի կողմից սուբստանցիոնալությունը, մյուս կողմից՝ ներունակությունը (պոտենցիալությունը), վիրտուալությունը ոչ սուբստանցիոնալ էր, ոչ էլ ներունակ, սակայն իրական էր և ակտուալ: Սխոլաստ մտածողները վիրտուալության գաղափարի միջոցով փորձում էին բացատրել տարբեր մակարդակների իրականությունների գոյության խնդիրը, բարդ իրերի ծագումն ավելի պարզերից, ակտուալի և պոտենցիալի փոխհարաբերության խնդիրը: Այդ ամենի համար համարվում էր, որ աստվածային իրականության սահմաններում գոյություն ունի երկրորդ մակարդակի իրականություն, ուր վիրտուալ կերպով առկա է ստեղծագործական էներգիան:

XX դարի 20-ական թթ. վիրտուալության գաղափարը ծագեց քվանտային ֆիզիկայում, ուր բացահայտվեցին վիրտուալ մասնիկները, որոնք ծագում են վակուումում, մասնիկների բախումներից, դրանց գոյությունը շատ կարճատև է և հնարավոր չէ դրանք ֆիքսել:

Այս նույն ժամանակահատվածում հոգեբանները սկսեցին խոսել մարդու հոգեկանում առաջացող վիրտուալ իրականության մասին: Հոգեկանի այլ դրսևորումներից, օրինակ երևակայությունից, տարբերվում է նրանով, որ անձը չի գիտակցում դրա օբյեկտիվ իրականություն չլինելու փաստը:

Ի վերջո, վիրտուալ իրականություն գաղափարը ծագեց համակարգչային տեխնոլոգիաների զարգացման հետևանքով: Վիրտուալ իրականությունը բնորոշում է տարատեսակ, տարբեր աստիճանակարգային մակարդակներում գտնվող օբյեկտների միջև գոյություն ունեցող փոխհարաբերություններով: Վիրտուալ իրականության օբյեկտները առաջանում, ծագում են օբյեկտիվ իրականության օբյեկտներից, որոնց հետ գոյաբանական իրավահավասար պայմաններում են գտնվում: Վիրտուալ օբյեկտները կամ «սիմուլյատիվ կերպարները» գոյություն ունեն ակտուալ ձևով, այստեղ և հիմա, քանի դեռ օբյեկտիվ իրականությունից այդ ծագման գործընթացը շարունակվում է: Վիրտուալ իրականությունն ունի ժամանակի և տարածության իր «բնա-

կան օրենքները», որոնք չեն համընկնում օբյեկտիվ իրականության ժամանակի և տարածության հետ: Նորագույն տեխնոլոգիաների տարածումը հասարակության կառույցի ու գործառույթի տարբեր մակարդակներում բերեց իրական երևույթների և գործընթացների կերպարներով փոխարինմանը՝ վիրտուալ իրականության ստեղծմանը:

Ժամանակակից մարդը ձգտում է ոչ թե գիտելիքների, այլ տեղեկույթի, որը նրան մղում է գործողությունների, դառնում է հասարակական ակտիվության խթան: Նոր ժամակներում ձևավորած ճանաչողության իդեալը ձևափոխվում է ժամանակակից աշխարհում: Նոր գիտելիքներ ստանալու ձգտումը փոխարինվում է արդեն գոյություն ունեցող գիտելիքների կառավարմամբ: Իմացաբանությունն արդեն ներկայանում է «կառավարման» սկզբունքի միջոցով: Տեղեկույթը ժամանակակից աշխարհում տեղեկատվական փոխազդեցությունն է, սիմվոլների ու կերպարների փոխանակման գործընթացը: Դրա վառ ապացույցն է համացանցի տարածումը, ուր նոր գիտելիքներ չեն ստեղծվում, սակայն բազմապատկվում են տեղեկատվական փոխազդեցությունների, սիմվոլների, կերպարների ստեղծման և տարածման հնարավորությունները: Համացանցի կերպարները՝ սիմվոլների ու նշանների մանիպուլյացիաներ են, իսկ տեղեկույթը՝ նշանների հոսք, որն առաջին հայացքից նման է գիտելիքների հորձանուտի, սակայն իրականում այն կերպարների ստեղծման գործընթաց է: Ժամանակակից հասարակության ուժը ոչ թե Բեկոնյան գիտելիքի, այլ այդ գիտելիքի ստացման ու փոխանցման, ընկալելի ու հրապուրիչ կերպարների գործառնության մեջ է: Տեղեկատվական մշակույթի ազդեցության տակ հասարակական համակարգը ենթարկվում է փոփոխության: Այս առնչությամբ գոյություն ունեն տարբեր հայեցակարգեր:

Մարքսը կապիտալն անվանում էր աշխատանքով սնվող արյունարբու հրեշ⁴: Ժամանակակից հասարակության սոցիոլոգիական մոդելների կողմնակիցները՝ Բյուլը, Պանետաուն, Կրոկերը և Վեյնստեյնն այդպիսի հրեշ են համարում հաղորդակցությունը, շփման նոր ձևերն ու եղանակները: Այս մոտեցումը հիմնվում է մարքսիստական այն դրույթի վրա, որ արտադրողական ուժերի զարգացումը, տվյալ դեպքում դրանց ժամանակակից տեսակը՝ նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների զար-

⁴ Տե՛ս Մարքս Կ., Փ. Էնգելս, Сочинения, 2-е изд. Т. 23; "Капитал - это мертвый труд, который, как вампир, оживает лишь тогда, когда всасывает живой труд и живет тем полнее, чем больше живого труда он поглощает" էջ 244:

գացումը և աճը, հանգեցնում են հասարակական հարաբերությունների կառուցվածքային փոփոխությունների: Պատետաուփ մոտեցման համաձայն՝ հասարակությունը (կոմունիկացիաների) տեղեկատվական փոխազդեցությունների համակարգ է: Այս նույն մոտեցումն է արտահայտում գերմանացի հայտնի սոցիոլոգ Նիկոլաս Լումանը, ըստ որի, «հասարակությունն ընդհարապես ձևավորվում է տեղեկատվական փոխազդեցությունների հիման վրա»: Լումանը տեղեկատվական փոխազդեցությունը բնորոշում է ոչ թե գործառույթային նշանակությամբ, այլ ինքնին, իր եզրով ասած՝ աուտոպոեզիս (outpoiesis), ինքնաձագում, ինքնազարգացում: Այս եզրը Լումանը վերցրել է կենսաբաններ Վարելի և Մատուրանի աշխատություններից, որտեղ աուտոպոեզիսը նշանակում է կենդանի օրգանիզմների իրենց կառուցվածքը վերարտադրելու ունակություն: Լումանը նշում է, որ աուտոպոեզիսը բնորոշ է հասարակական համակարգին, որը, ևս մշտապես գտնվում է ինքնիրեն վերարտադրելու գործընթացի մեջ: Ըստ Լումանի համակարգն ինքն իրենից ստեղծում, առաջացնում է. նախ՝ համակարգերը, երկրորդը՝ տեղեկատվական փոխազդեցությունները և երրորդը՝ իմաստներ:

Համակարգային տարբերակումը կամ սահմանազատումը մշտական գործընթաց է, համակարգը անընդհատ սահմաններ է ընգծում իր և շրջակա միջավայրի միջև: Լումանը, պահպանողական կառուցվածքաբանության տեսանկյունից, չի տարբերակում իմացաբանական համակարգերի տարրերի գոյություն ունենալու և ճանաչելու պայմանները: Նրանց հասու է միայն այն իրականությունը, որն իրենք են կառուցում: Խոսքը տեղեկատվական համակարգերի կառուցած իրականության մասին է, որոնք պետք է ոչ թե քննադատել իրականությունն աղավաղելու համար, այլ ուսումնասիրել այդ կառուցման եղանակները: Հասարակությունն ամբողջական համակարգ է, որը ներառում է բոլոր տեղեկատվական փոխազդեցությունները: Ժամանակակաից մարդը արտաքին աշխարհի մասին գիտելիքների ու տեղեկույթի մեծ մասը ստանում է մեդիա տիրույթից: Մեդիա ասելով, նկատի ունենք, բոլոր այն հասարակական միավորները, որոնք օգտագործելով նորագույն տեղեկատվական միջոցները գործառնության մեջ են դնում առկա կամ նոր ստացվող գիտելիքները և տեղեկույթը: Դա և՛ տպագիր մամուլն է, և՛ էկրանային մշակույթի բոլոր տարատեսակները, և՛ հասարակական լայնամասշտաբ միջոցառումները, որոնք օգտագործում են նո-

րագույն տեղեկատվական տեխնոլոգիաները և իրենց վերջնական արտադրանքը դուրս բերում զանգվածային սպառման:

Մեդիա տիրույթը սահմաններ է անցկացնում, «առաջին» և «երկրորդ» բնությունից զատ կառուցում է վիրտուալ իրականություն: Տեղեկույթը գիտելիք է կամ համակարգային կարգավորման մեխանիզմ, տարրանջատում իրականացնող սահմանազատում: Հաղորդակցությունը ոչ թե տեղեկույթի փախանցում է, այլ կարգավորման, համաձայնեցման մեխանիզմ, որը հաղորդակցվողներին միավորում է, ստեղծում համաձայնության գալու նախադրյալներ և իրականացնում այն: Լումանը նշում է, որ կարևոր են հաղորդակցությունների էությունական գործողությունները, ոչ թե գործառույթները: Հաղորդակցությունները մղում են գործողությունների, ակտիվության, որոնցից կարևորագույնը զանազանումների, տարանջատումների կամ սահմանազատումների առաջացումն է:

Այդ «սահմանազատումը» մարդը սկսում է կատարել վաղ տարիքից: Տեղեկատվական և հուզական փոխազդեցությունների ընթացքում մարդը համեմատում, ճշգրտում, սահմաններ է անցկացնում իր ունեցած պատկերացումների, ընկալումների միջև, ձևավորում է արտաքին աշխարհի մասին հասկացություններ: Նա սահմաններ է անցկացնում իրականության տարբեր իրերի, երևույթների, մասերի, դրսևորումների միջև: Ավելի բարդ հաղորդակցությունների մեջ ներառվելով, այդ սահմանազատումները ու հստակությունների ձևավորումները ավելի բարձր մակարդակի վրա են տեղի ունենում: Հաղորդակցվող կողմերը գալիս են համաձայնության, միմյանց հասկանալու, արտաքին աշխարհի իրենց ընկալումները կարգավորելու շուրջ:

Լումանը հրաժարվում է տեղեկույթի (ինֆորմացիայի)՝ որպես գիտելիք փոխանցող գործընթացի մասին ավանդական մոտեցումներից: Խոսքը XX դարի 60-90-ական թթ (Բեյլ, Թուրեն, Թոֆլեր, Մասուդա) տեղեկատվական հասարակության տեսությունների մասին է, համաձայն որոնց՝ նոր տեղեկատվական տեխնոլոգիաների, հատկապես համակարգիչների, տարածումը և կիրառումը բերում է հասարակության ձևափոխմանը, փոխակերպմանը (տրանսֆորմացիայի) և տեղեկատվական հասարակության ձևավորմանը, որին բնորոշում են.

1. Գիտական իմացության գերակայություն: Եթե նախկինում աշխատանքն էր որոշում ապրանքների և ծառայությունների արժեքները,

ապա տեղեկատվական հասարակության մեջ այդ գործառույթը իրականացնում է գիտելիքը: Այդ պատճառով հասարակության կազմավորման առանցք են դառնում համալսարանները՝ որպես գիտելիքի ստեղծման, կուտակաման և փոխանցման կենտրոններ:

2. Հասարակական նոր շերտավորում: Ստրատիֆիկացիայի հիմք է դառնում գիտելիքների մակարդակը, ոչ թե ունեցվածքը: «Ունևորներ» և «չունևորներ» շերտավորումը փոխարինվում է «տեղեկացված» և «չտեղեկացված կամ նոր չունևորների» շերտերով: Հետևաբար, հասարակական կոնֆլիկտների կենտրոնը տնտեսական դաշտից տեղափոխվում է մշակութային դաշտ:

3. Ծրագրավորվածություն: Հասարակական գործընթացները տեղեկատվական հասարակարգերում դառնում են ծրագրավորված: Հասարակական կազմավորումները և տեղեկատվական տեխնոլոգիաները միավորվում և «սիմբիոզ» են կազմում:

Ժամանակակից հասարակության կարևորագույն բնորոշիչներից է տեղեկատվական փոխազդեցությունը (կոմունակացիան): Տեղեկատվական հասարակության տեսաբանները նույնականանցնում էին տեղեկույթը և գիտելիքը: Ժամանակակից աշխարհը հեղեղված է տեղեկույթով, բայց դա գիտելիքը չէ: Նոր գիտելիքներ ստեղծվել և մշակվել են բոլոր դարաշրջաններում, տեղեկատվական դարաշրջանը բնորոշվում է ոչ թե մեծաքանակ նոր գիտելիքների ստեղծմամբ, այլ առկա գիտելիքների փոխանցման և տարածման բազմաթիվ միջոցներով, որոնք հասու են մարդկության մեծ մասին: Տեղեկույթը կամ ինֆորմացիան ժամանակակից իմաստով նշանակում է ոչ թե նոր գիտելիք, այլ գոյություն ունեցող գիտելիքների ստացման նոր և բազմապիսի եղանակներ:

Ռուս մտածող Դմիտրի Իվանովը վիրտուալ իրականությունը բնորոշում է որպես մարդու հարաբերություն ոչ թե իրերի, այլ դրանց սիմուլյացիաների, կերպարների հետ: Աշխարհը ընկալվում է որպես խաղային միջավայր, ուր չափորոշիչները վերահսկելի են, ելքումուտքը՝ ազատ: Վիրտուալացվում են սոցիալական ինստիտուտները՝ տնտեսական, քաղաքական, գիտական ոլորտները, նաև արվեստը և ընտանիքը: Տնտեսական ոլորտում վիրտուալացվում են շուկան, կազմակերպությունները, գործարքները, ֆինանսները: Ապրանքի փոխարեն հանդես է գալիս նշանը: Վաճառքն իրականացվում է գովազդի միջոցով, որը հիմնականում կերպարներ է ստեղծում:

Գերմանացի մտածող Բյուլը վիրտուալ իրականությունը բնորոշում է որպես համակարգչային տեխնոլոգիաներով միջնորդավորված «զուգահեռ» իրականություն, ուր «գործառության մեջ են հասարակության իրական վերարտադրության մեխանիզմների փոխարինողները (անալոգները) օրինակ՝ քաղաքական և տնտեսական փոխազդեցությունները համացանցում, համակարգչային խաղերի հերոսների հետ շփումը»⁵:

Կանադացի հետազոտողներ Կրոկերը և Վեյնստեյնը մարքսիստական նոր, հետարդիական տեսանկյունից վիրտուալ իրականությունը դիտարկում են որպես օտարման նոր տարատեսակ: «Վիրտուալ իրականության գոյությունը պայմանավորվում է մարդու սեփական մաշկից օտարումով»⁶: Միանալով համացանցին մարդը վերածվում է «համացանցին միացված մարմնի» (wired body): Այս մոտեցումը սահմանափակում է վիրտուալ իրականության գաղափարը համակարգչային տեխնոլոգիաներով:

Գերմանացի աստվածաբան Պաուլ Թիլիխը վիրտուալ իրականության գաղափարը կապում է «մարդու վիրտուալություն արարելու, վիրտուալ իրեր ստեղծելու ինտելեկտուալ կարողությունների հետ»⁷: Վիրտուալ իրականության սուբյեկտիվությանը շեշտող հետազոտողների համար վիրտուալությունը ոչ թե ֆիզիկական, այլ ներունակ իրականություն է, այն ներկառուցված է բազմաթիվ նմանատիպ աշխարհների համակարգում, օրինակ՝ երազները, գիտակցական վիճակի փոփոխությունները, երևակայությունները, իրականության սիմուլյացիաները, ուր վիրտուալությունը համընկնում է սուբյեկտիվ իրականության հետ: Սակայն միայն համակարգչային տեխնոլոգիաները հնարավորություն ստեղծեցին, որ այդ սուբյեկտիվ աշխարհը գտնի իր առարկայական դրսևորումները կամ «մարմնավորումները»:

Ֆրանսիացի սոցիոլոգ Ժան Բոդրիյարը գտնում է, որ վիրտուալ իրականությունը ստեղծվում է հասարակության ինստիտուցիոնալ և արժեքային կառույցների սիմուլյակրներով փոխարինելով: Հասարա-

⁵ Иванов Д.В. Виртуализация общества- М. АСТ, 2004. Стр. 368.

⁶ Kroker A. Data trash. The theory of the virtual class/ Kroker A., Weinstein M.-Montrea:New world perspectives,1994.-p. 66.

⁷ Игнатъев В.И. Социальная система как информационное взаимодействие: коллективная моногр. /В.И. Игнатъев, Т.В. Владимирова, А.Н. Степанова.- Новосибирск: Изд-во НГТУ, 2009. С. 167.

կական կառույցը բաղկացած է նշանային համակարգից, որի միավորը՝ սիմուլյակրն է: Բողոքիյարը սիմուլյակրը սահմանում է առաջինը՝ որպես կեղծ նմանակ, որը քողարկում է օրիգինալի բացակայությունը և դրանով իսկ չարիքի աղբյուր դառնում, երկրորդը՝ գիտակցության գաղափարականացման կերպար, երևակայություն, ցնորք: Հասարակության պատմությունը, ըստ Բողոքիյարի, սոցիալական իրականության ներկառուցումն է կեղծ օբյեկտներով (սիմուլյակրներով): Վերածննդի դարաշրջանից ի վեր, արժեքների փոփոխմանը զուգահեռ, հաջորդականորեն փոփոխվել են սիմուլյակրների երեք տեսակ.

- առաջինը՝ դասական դարաշրջանում՝ սկսած Վերածննդից մինչև արդյունաբերական հեղափոխությունը, իշխում էր սիմուլյակրների «կեղծիք» տեսակը, որը գործառում է արժեքների բնական օրենքի հիման վրա,
- երկրորդ՝ արդյունաբերական դարաշրջանում իշխող էր սիմուլյակրների «արտադրողական» տեսակը՝ շուկայի օրենքի հիման վրա,
- երրորդ՝ ժամանակակից փուլում գերակշռում են սիմուլյացիաները կամ երրորդ կարգի սիմուլյակրները, որոնք գործում են արժեքների կառուցվածքային օրենքի հիման վրա: Սիմուլյակրները պատահական նշաններ չեն, դրանք իրենց մեջ կրում են որոշակի հասարակական հարաբերություններ և իշխանության յուրահատուկ արտահայտություններ: Բողոքիյարը վիրտուալացումը ներկայացնում է որպես սիմուլյակրների ստեղծման գործընթաց, «վիրտուալությունը հենց սիմուլյացիան է»: Սիմուլյակրները կամ «կեղծ նմանակները՝ պայմանական նշաններն են, որոնք գործառում են հասարակական կառույցներում օրիգինալների փոխարեն»⁸ և ստեղծում հիպերիրականություն, իրականության պատրանք, կերպարների աշխարհ: Սիմուլյացիան նշանի արժեքայնության ժխտումն է «օտարված նշանը՝ առանց օրիգինալի»:

Իրականության փոխակերպումը հիպերիրականությամբ, ըստ Բողոքիյարի, ունի իր պատճառները: Գիտապաշտական ռացիոնալիստական մտածողությունը ճշմարտության չափանիշ է համարում գիտափորձը, որն ինքնին իրականության երկատում է, գիտափորձի

⁸ Бодрийяр, Ж. Система вещей.- М.:Рудомино, 2001. с. 6.

ճշմատացիության չափանիշը նրա սկզբունքորեն կրկնվելիությունն է: Հիպերիրականությունն ընկալում է ճշմարտության, համարժեքության, իրականության որպես սիմվոլիկ երևույթներ: Ժամանակակից հասարակությունը համընդհանուր ներկայացում է, այսպես կոչված վիտրոմշակույթ: Համաձայն Բոդրիյարի՝ վերջացել է ոչ միայն պատմությունը, այլ նաև իրականությունը՝ իրտեղը զիջելով սիմուլյատիվ հիպերիրականությանը: «Իրականության սահմանվում է որպես վերարտադրվող»⁹: Առհասարակ բնագիտությունը սահմանում է, որ ցանկացած գործընթաց նախապես սահմանված պայմաններում կարելի է ճշգրիտ վերարտադրել: Հիպերիրականությունը՝ իրականության նոր տեսակ է, որը ձևավորվել է ամենակարող և իրատեսական հեռուատատեսության, համացանցի, բջջային բազմագործառույթային հեռախոսների շնորհիվ: «Հիպերիրականությունը ստեղծվում է փոքր մասնիկներից (микрочастицы), մատրիցաներից, հիշողության բանկերից և հրամանների համակարգերից, այն կարող է բազմաթիվ անգամ վերարտադրվել»¹⁰: Հիպերիրականությունը խիտ բնակեցված է ժամանակակից մշակույթի ոչինչ չպարունակող կերպարներով, որոնք միայն հիշեցնում են այս կամ այն արժեքների գոյության մասին՝ մի կողմ թողնելով դրանց բովանդակությունը և իրականության հանդեպ վերաբերմունքը: Իրականությունը դարձել է էֆեմեր, անցողիկ, անկայուն, հետպոզիտիվիստների եզրով «ամեն ինչ հոսում է» իրավիճակ է ստեղծվել:

Շուկան, խոշոր կորպորացիաները, պետությունը, քաղաքական կուսակցությունները, համալսարանները դադարում են սոցիալական իրականություն լինելուց, քանի որ տնտեսական, քաղաքական, գիտական, առօրեական ոլորտներում հաջողությունը կախված է կերպարներից, ոչ թե իրերից և իրական վարքից, կերպարները ավելի ազդեցիկ են, քան իրականությունը: XIX և XX դարերի ընթացքում ինքնակառավարվող հասարակական ինստիտուտները՝ «իրականություն» էին, հասարակական նորմերի համակարգ, դրանք կարգավորում էին մարդկանց փոխազդեցությունները տարբեր ոլորտներում և ստեղծում այդ փոխազդեցություններին համապատասխան հասարակական դերերի համակարգ: Անհատը համապատասխանեցնում էր իր վարքն այդ

⁹ Бодрияр, Ж. Символический обмен и смерть / Ж. Бодрияр; пер. с франц. С.Н. Зенкина. – М.: «Добросвет», 2000. с. 225.

¹⁰ Նույն տեղը՝ 135:

նորմերին, անհատի վարկանիշը միանշանակ կախված էր այս կամ այն հասարակական դերակատարումից՝ ձեռներեց, աշխատավոր, կուսակցական առաջնորդ, ընտրող, ուսանող: Այժմ, երբ դերերին ունորմերին հետևելը վիրտուալացվել է, հասարակական ինստիտուտները կորցրել են իրենց իշխանությունն անհատի նկատմամբ և դարձել կերպարներ ու կերպարների համակարգի մաս: Ինստիտուտները վիրտուալացվել են: Դրանց գոյությունը բնորոշվում է վիրտուալ իրականության երեք հիմնական հատկանիշներով՝ ազդեցության ոչ նյութականությամբ, չափորոշիչների պայմանականությամբ և էֆեմերությամբ (ազատ ելքի, դադարեցման վերսկսման հնարավորություն):

Հասարակության ինստիտուցիոնալ կառույցը ոչ թե անհետանում է, այլ սիմուլյացիայի ենթարկվում: Այն, պահպանելով իրական լինելու բնորոշումը, յուրօրինակ վիրտուալ միջավայր է դառնում, որը հարմար է կերպարներ ստեղծելու և հեռարձակելու, բաց է ելքի և մուտքի համար: Վիրտուալացվելով հասարակությունը չի անհետանում, այն վերաբաշխվում է: Համակարգչային տեխնոլոգիաները՝ առաջին հերթին վիրտուալ իրականության տեխնոլոգիաները, կյանքի կոչվեցին հասարակության բանականացման (ռացիոնալիզացման) հրամայականով, այդ տեխնոլոգիաները հասարակության սիմուլյացիայի առավել արդյունավետ միջոցներն են: Հասարակությունը, ըստ ավանդական սահմանումների, սոցիալական ինստիտուտների համակարգ է, իսկ համացանցը՝ հասարակությունից դուրս գոյության միջավայր: Հասարակական նորմերը համացանցում իրականացվող տեղեկատվական փոխազդեցությունների վրա չեն գործում: Համացանցով իրականացվող տեղեկատվական փոխազդեցություններն անտարբեր են ինստիտուցիոնալ և խմբային նորմերի հանդեպ, որոնք ուղղորդում են մարդկանց վարքը համացանցից դուրս: Սակայն ինստիտուցիոնալ համակարգի հետ համացանցը կապված է հետևյալ կերպ.

- համացանցը, որպես տեխնիկական միջոց իրականացնում է սոցիալական ինստիտուտների հաղորդակցական գործառույթները: ԱՄՆ-ի պետական և գիտական ինստիտուտների գործառույթներն իրականացվում են համացանցով,
- համացանցը համաշխարհային, պատմական ու հասարակական մշակութային երևույթ է, դրա միջոցով իրականացվում են ոչ ինստիտուցիոնալ, անվերահսկելի կոմունիկացիաներ,

- համացանցի տեղեկատվական փոխազդեցությունների ոչ ինտիտուցիոնալությունը մշտական կոնֆլիկտների պատճառ է: Ցանցային օգտատերերի ընդհանրապես և կիբեռպանկերի ու հակերների գործողությունները մասնավորապես, չեն վերահսկվում սոցիալական ինստիտուտների կողմից,
- ավանդական սոցիալական ինստիտուտները համացանցում չեն գործառում որպես նորմատիվ կառույցներ, սակայն դրանք առկա են ցանցում կերպարների տեսքով, որոնցով կարելի է մանիպուլյացիաներ իրականացնել: Ինստիտուցիոնալությունը համացանցում սիմուլյացվում է:

Համացանցն իրական միջավայրի այլընտրանք է, վիրտուալ համայնքների ձևավորման ոլորտ: Անհատների ակտիվությունը, նրանց ուժը և ժամանակը տեղափոխվում են վիրտուալ աշխարհ, ուր նրանց վիրտուալ «ես»-ը ստեղծում է իր կեցությունը, իր փոխազդեցությունները: Վիրտուալ շփման առավելությունն իրական շփումներից նրանում է, որ մարդը ստեղծում է իր կերպարը, իր սիմուլյակը, ներկայանում է իր ստեղծած հատկանիշներով, որոնք հնարավոր է և իրականում գոյություն չունեն: Մի կողմից համացանցն ինքնությանը ազատություն է տալիս՝ վիրտուալ անուն, մարմին, վարկանիշ, հոգեբանություն, սովորություններ, արժանապատվություն և արատներ: Մյուս կողմից՝ մոռացվում, օտարվում, անհետանում են իրական անունը, մարմինը և ինքնությունը: Համացանցում փոփոխության է ենթարկվում մարդը և՛ որպես անհատականություն, և՛ որպես հասարակական, մշակութային ու պատմական միավոր: Անհատի այնպիսի հատկանիշները, ինչպիսիք են կայուն ինքնության ձևավորմանը (ինդենտիֆիկացիա), հասարակական դերերի կատարման անհատական եղանակները (ստեղծագործ անհատը) համացանցում ձևափոխվում են: Գիտակցաբար, թե ոչ համացանցում ձևավորվում է փոփոխական, ոչ կայուն ինքնություն: Առաջանում են նոր անհավասարություններ, նոր շերտավորումներ, որոնք կերպարների-սիմուլյակների մրցակցության հետևանք են: Այդ նոր անհավասարությունները ձևափոխում են հասարակության ավանդական շերտավորումը: Հասարակական բարձր վարկանիշ և հաջողություն է ձեռք բերում այն անհատը, ով կարողանում է կերպարների հետ ավելի արդյունավետ մանիպուլյացիաներ իրականացնել: Այս ամենը հասարակության կազմակերպման նոր մեխանիզմներ չեն, ի տարբերություն պատմության նա-

խորդ փուլերի, դրանք հազեցած են նորագույն տեխնոլոգիաներով, սակայն իրականացնում են նույն գործառույթները՝ անձի ձևավորում, արտաքին աշխարհի մասին հստակ գիտելիքների, ընկալումների սահմանազատում, հասարակական շերտավորումների կառուցարկում, արժեքների և նորմերի ձևավորում: Ֆրենսիս Ֆուկույաման կարծում էր, որ պատմությունը վերջացել է, քանի որ մարդկությունը հասել է իր ձգտումների գագաթնակետին՝ լիբերալ ժողովրդավարությանը, ազատությանը¹¹: Պատմությունը Ֆուկույաման դիտարկում է ոչ թե որպես իրադարձությունների հաջորդականություն, այլ միասնական, տրամաբանական գործընթաց, որը պարունակում է բոլոր ժամանակների և ժողովուրդների փորձը: Այս մոտեցումը համընկնում է Հեգելի պատմության ըմբռնման հետ, որը հետագայում փոխառեց նաև Մարքսը: Մարդկային հասարակությունը, այս հեղինակների կարծիքով, գործընթացների տրամաբանական հաջորդականություն է՝ սկսած տոհմային համայնքներից մինչև ժամանակակակից ազատական ժողովրդավարական հասարակարգերը և նորագույն տեխնոլոգիաների վրա հիմնված կապիտալիզմը: Այդ էվոլյուցիոն գործընթացը անսահման չէ, այն հասնելու է իր վերջնակետին, երբ մարդկությունը ստեղծի այն հասարակարգը, որը կբավարարի նրա պահանջումներին: Ըստ Ֆուկույամայի, դա հիմնարար տնտեսական պահանջումներն են և «ճանաչված, ընդունված լինելու պայքարի» բավարարումը (struggle for recognition): Հեգելի համար դա լիբերալ ժողովրդավարական պետությունն էր, Մարքսի համար սոցիալիզմը, որոնց ձևավորումից հետո, ըստ այս մտածողների և Ֆուկույամայի, հասարակական կառույցը սկզբունքորեն այլևս չի զարգանալու, քանի որ բոլոր կարևոր խնդիրները լուծված են լինելու:

Հիպերիրականությունն ազատության նոր դրսևորում է, կեցության մշակութային ազատության տիրույթ (եթե կարելի է այդպես ասել), որը փորձում է համալրել քաղաքացիական ժողովրդավարական ազատությանը՝ առաջացնելով ու բավարարելով մարդկանց նոր պահանջումները: Վիրտուալությունը հասարակության զարգացման օրինաչափ փուլ է, այն բնորոշվում է տեղեկատվական փոխազդեցությունների գերակայությամբ և հիպերիրականության ձևավորմամբ, կերպարների ու սիմուլյացիաների գերակա նշանակությամբ:

¹¹ Ф. Фукуяма, Конец истории и последний человек. Полиграфиздат. Москва. 2009.с. 251.

Բանալի բաներ. տեղեկույթ, հասարակություն, վիրտուալ իրականություն, սիմուլյակր:

ВИРТУАЛЬНОСТЬ КАК СПОСОБ ОБЩЕСТВЕННОГО БЫТИЯ И ОЧЕРЕДНОЙ ЭТАП РАЗВИТИЯ

Р.В. Немишальян, К.В. Воденко

Резюме

Виртуальная реальность, став крупнейшим достижением техники конца XX века, является серьезнейшим фактором в развитии общества. Информационная культура, как утверждал Тоффлер, становится скрытым кодом индустриального общества. Новейшие информационные технологии создают огромную систему образов: виртуальную реальность, которая функционирует параллельно с “первой и второй” природой. Информация в современном обществе это коммуникация, операция трансляции символов, побуждающая к действию. Информационные технологии осуществляют функцию демаркации, разграничения системы смыслов и создают виртуальную реальность.

Ключевые слова: информация, общество, виртуальная реальность, симулякр.

VIRTUALITY AS A WAY OF PUBLIC LIFE AND THE NEXT STAGE OF DEVELOPMENT

R.V. Nemishalyan, K.V. Vodenko

Summary

Virtual reality, becoming the biggest achievement of the late XX century, is a major factor in the development of society. Informational culture, as argued Toffler, becomes a "hidden code" of industrial society. The newest information technologies create an enormous system of images: a virtual reality that functions parallel with "the first and second" nature. The information in a modern society is communication, that broadcasts operation symbols impelling to action. Information Technology performs the function of demarcation, differentiation of meanings and creates a virtual reality.

Key words: information, society, virtual reality, a simulacrum.

ՏԵԽՆԱԾԻՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԱՐԱԴՈՔՍԱԼ ՇԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Ե.4. Մանուկյան

Արդի քաղաքակրթության զարգացման ընդհանուր օրինաչափությունների շրջանակներում կատարվում են այնպիսի փոխակերպումներ, որոնք սոցիալական համակարգերի զարգացումը դարձնում են առավել այլընտրանքային, պարադոքսալ և անկանխատեսելի: Ժամանակակից սոցիալական համակարգերը աչքի են ընկնում վարքի «տարօրինակ» տատանումներով (ֆուկուտացիա), «երկճյուղավորման» միտումներով (բիֆուրկացիա) և ճգնաժամային դրսևորումներով: Այս ամենի հետևանքով երբեմնի միանաշանակ սոցիալական աշխարհը հարուցում է տարըմբռնումներ ու տարբեր հայեցակարգային մոտեցումներ, որոնք պահանջում են նորովի բացատրել ու մեկնաբանել սոցիալական համակարգերի զարգացման, վերարտադրման ու գործառնության հայտնի օրինաչափություններն ու սկզբունքները: Ազատական-ժողովրդավարական հասարակություններին ներքնապես բնորոշ անկայունությունը, անկանխատեսելիությունը, զարգացման այլընտրանքային հնարավորությունների առկայությունը ժամանակակից սոցիալական համակարգերը դարձնում են առավել հեռանկարային:

Մեթոդաբանական իմաստով սկզբունքային նշանակություն ունեցող այս կանխավարկածի համատեքստում գիտական ու գործնական նոր հնչեղություն են ստանում տեխնաճին քաղաքակրթության պարադոքսալ հետևանքների սոցիալ-փիլիսոփայական վերլուծությունները:

Համակարգային փոխակերպումների արդի փուլը ձևավորվեց լուսավորականության այն գաղափարների շղարշի ներքո, որոնք կարևորում էին սոցիալական կյանքի ապաստրբազանեցման և ապակրոնականացման գործոնը: Այս ամենի նպատակը հասարակության մեջ բանականության, գիտության օգնությամբ սոցիալական կյանքի բոլոր ոլորտներում ռացիոնալ գործողությունների նկատմամբ վստահություն սերմանելն էր: Բայց սոցիալական աշխարհի բանականացումն ու ռացիոնալացումը ոչ թե համընդհանուր գիտելիքի աճ էր ենթադրում, այլ ընդամենը փաստում էր, որ բացարձակապես չկան մարդու կյանքի մեջ ներխուժող, գաղտնի, անկանխատեսելի գաղափար-

ներ, և որ մարդը սկզբունքորեն կարող է ռացիոնալ հաշվարկի միջոցով տիրապետել իրերի աշխարհին: Իրատեսական աշխարհայացք դավանող նոր ժամանակի մտածողները պնդում էին, որ ապագային տիրելու համար հարկավոր է ձերբազատվել անցյալի սովորույթներից ու նախապաշարումներից և օգտվելով գիտության ու տեխնոլոգիայի ընձեռած հնարավորություններից՝ աշխարհը դարձնել առավել կանխատեսելի ու կարգավորված: Պետք է նկատել, սակայն, որ ժամանակակից աշխարհը չի համապատասխանում այդ կանխատեսումներին, նպատակներին և իդեալներին: Ավելին, ժամանակակից քաղաքակրթությունը նկատելիորեն շեղվել է նախանշված ուղուց և քաղաքակրթության զարգացման ներկա միտումները ոչ միայն կանխատեսելի ու կառավարելի չեն, այլև սկսել են դուրս գալ ընդհանուր վերահսկողության ու զարգացման հունից և հարուցել ինքնակործանման լուրջ վտանգներ:

Սոցիալական համակարգերի ծրագրավորման և վերակառուցման հաշվարկը չափազանց դժվար խնդիր է, քանի որ, ի տարբերություն բնական համակարգերի, վերջիններս ավելի ակտիվ են արձագանքում իրականացվող փոփոխություններին, ինչն իր հերթին առաջ է բերում նախանշված նպատակից շեղում, պատասխան չծրագրավորված փոփոխություններ հենց նույն համակարգում:

Ժամանակակից հասարակության մեջ տեղեկատվությունը այնքան վճռական նշանակություն և դերակատարություն ունի, որ դարձել է նոր տիպի հասարակության կերտման նախապայման: Տեղեկատվության քանակական հոսքերը հանգեցնում են ոչ միայն որակական, այլև՝ կյանքի ոճի և ոիթմի փոփոխության: Այսինքն, տեղեկատվական նորարարության նման ծավալները ենթադրում են սոցիալական կյանքի հիմնովին վերակառուցում, քանի որ վերջինս նշանակալի ազդեցություն է թողնում հասարակության վրա: Տեղեկատվական հասարակությանը բնորոշ պարադոքսների և տարըմբռնումների առանձնահատկություններից մեկն այն է, որ ազատական մշակույթը թեև ազատ ընտրության հնարավորություն է ընձեռում, բայց և ավելի վերահսկելի է դարձնում նրանց կյանքը և ապրելակերպը¹:

¹ Сту, Уэбстер Ф. Теория информационного общества. М.,Аспект Пресс, 2004, էջ 137:

Պարադոքսն այն է, որ այլընտրանքայնության և ինքնադրսևորման հնարավորությունների ազատությունը էլ ավելի է մեծացնում մարդկանց կախվածությունը անցյալի և ապագայի հնարավոր իրադարձությունների իմացությունից:

Ժամանակակից աշխարհում թե՛ շուկայի և թե՛ անմիջական արտադրության ոլորտում տեղեկատվական ցանցերի համընդհանուր տարածումը միանշանակ գնահատվող գործընթաց չէ, քանի որ ազգային պետությունների համար մեծ վտանգ է պարունակում: Որքան էլ ճգնաժամը սպառնալից է ազգային պետությունների համար, այնուամենայնիվ այլընտրանք չկա, քանի որ արևմտյան քաղաքկրթության կառույցներին անդամակցությունը նախանշում է ինչպես համընդհանուր դիրքորոշման ձևավորում, այնպես էլ խաղի կանոնների համաձայն պատասխանատվության ստանձնում: Իսկ այդ ամենը չպետք է ենթադրի փախուստ դեպի ինքնության խորքերը (Փոքր Միերի օրինակով, ով Ագռավաքարում փակված սպասում է մինչև աշխարհը փոխվի և վերակառուցվի), այլ ընդհակառակը՝ կենսաաշխարհի պատմական ապրիորիների վերանայում՝ ժամանակին համապատասխան վերաիմաստավորելու և փոխակերպելու նախապայմանով:

Վերլուծելով տեղեկատվական քաղաքակրթության պայմաններում նույնականության ճգնաժամի պատճառներն ու հետևանքները, հողվածի մեջ անդրադարձ է կատարվել ժամանակակից մարդաբանական նոր տիպերի ձևավորմանը²:

Այսպիսով, արդի տեխնածին քաղաքակրթության զարգացման ներկա վիճակը վկայում է, որ այդ գործընթացները, իբրև օբյեկտիվ իրողություններ, մարդկանց և առանձին հանրույթներին ստիպում են ընդօրինակել իրենց հնարավորություններին և էթնոմշակութային ավանդույթներին ոչ համարժեք չափորոշիչներ և արժեքային կողմնորոշիչներ, ինչը խարխլում է հասարակության ներքին համախմբվածությունը, նույնականությունը, կազմակերպվածությունը³: Բանն այն է, որ հասարակական կյանքի կազմակերպման ժամանակակից մշակույթը մի կողմից մարդուց պահանջում է ստեղծագործական ակտիվություն

² Տես, Бауман З., От паломника к туристу / /Социологический журнал. 1995, N4, էջ 134:

³ Տես, Хесле В. Кризис индивидуальной и коллективной идентичности// Апокалипсис смысла. Сборник работ западных философов XX-XXI веков. М., 2007, էջ 23:

և ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողություն, իսկ մյուս կողմից՝ նրան դարձնում է տեխնիկայի կցորդ: Նյութական պահանջմունքների գերիշխանության ժամանակաշրջանում տեխնածին քաղաքակրթությունն աստիճանաբար փոխակերպվում է սպառման հիմքի վրա ձևավորվող քաղաքակրթության: Ուստի ակնհայտ է դառնում, որ զանգվածային-սպառողական հասարակություններում մի կողմից ընդլայնվում են մարդկանց ազատության շրջանակներն ու հնարավորությունները, մյուս կողմից՝ խորանում են հասարակական կապերն ու կախվածությունները, ինչի արդյունքում, ի վերջո, ձևավորվում են տոտալ վերահսկողության տակ հայտնված, «թափառաշրջիկ» ու մշտապես մանիպուլյացիայի ենթարկվող մարդկանց հոծ զանգվածներ⁴:

Հասարակական կյանքի զարգացման «ներքին» շարժառիթները պայմանավորված են սոցիալական որոշակի նպատակներով, կայունության ու կարգավորվածության, համակեցության ու անձնական կյանքի ինքնիշխանության, սոցիալական աշխարհի ուսցունալացման և ազատության սահմանների ընդլայնման մարդկային բնական ու բանական պահանջմունքներով: Բայց քաղաքակրթության զարգացման ողջ պատմությունը պարադոքսալ է հենց այն պատճառով, որ, որպես կանոն, գործում է սոցիալական նպատակների և դրանց արդյունքների անհամապատասխանության սկզբունքը: Առավել կառավարելի ու կանխատեսելի, առավել ուսցիոնալ ու կարգավորված աշխարհ ունենալու սոցիալ-քաղաքական գրեթե բոլոր նախագծերն ու հայեցակարգերը, ինչպես վկայում է պատմությունը, ի վերջո հարուցում են այնպիսի խնդիրներ ու մարտահրավերներ, որոնք ոչ միայն տարըմբռնումներ են հարուցում, այլև հակասում են սոցիալական նախագծերի բուն էությանը: Մինչդեռ արդի ժողովրդավարական հասարակություններում մարդկանց հայացքների և համոզմունքների վրա վերահսկողություն սահմանելու համար իշխանությունները ստիպված են գործադրել զանգվածային ներշնչման առավել ազատական մեխանիզմներ, որոնց նպատակներից մեկն էլ քաղաքացիական ակտիվության անկումն է:

Տեխնածին քաղաքակրթության զարգացման ու փոխակերպումների արդի միտումների վերլուծությունները ցույց են տալիս, որ տեղե-

⁴ Stou, Bayman 3. Индивидуализированное общество. М.: Логос, 2005, էջ 122:

կատվության ժամանակակից միջոցները նախանշում են գիտելիքի որոշակի մակարդակ, մարդու և հասարակության իրազեկվածության ցուցանիշ, առանց որի հնարավոր չէ կողմնորոշվել տեղեկատվական տարածության մեջ: Արդի տեխնածին քաղաքակրթությունը անձի ինքնավար-ինքնիշխան էությանը պարադոքսալ բնույթ է հաղորդել: Մի կողմից՝ կյանքի կազմակերպման ժամանակակից մշակույթը մարդուց պահանջում է ստեղծագործական ակտիվություն և ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողություն, մյուս կողմից՝ նրան դարձրել է հեշտ փոփոխվող պտուտակ և ինստիտուցիոնալ կառույցների կցորդ: Կյանքի պայմանների միջինացումը, պահանջմունքների և հետաքրքրությունների ստանդարտացումը մարդկանց արտադրական և կենցաղային պայմաններին, մտածողությանն ու ճաշակին հաղորդում են միակերպություն և նպաստում միասեռ զանգվածի ձևավորմանը:

Բանալի բաներ. Տեխնածին քաղաքակրթություն, սոցիալական պարադոքս, տեղեկատվական հասարակության, կենցաղային մշակույթ, քաղաքացիական ակտիվություն, անհատի ինքնիշխանություն:

Գրականություն

1. Бауман З., От паломника к туристу / /Социологический журнал. 1995, N4, с. 133-154.
2. Бауман З. Индивидуализированное общество. М.: Логос, 2005, 390 с.
3. Уэбстер Ф. Теория информации общества. М., Аспект Пресс, 2004, 400 с.
4. Хесле В. Кризис индивидуальной и коллективной идентичности// Апокалипсис смысла. Сборник работ западных философов XX-XXI веков. М., 2007, с. 16-46.

PARADOXICAL EFFECTS OF TECHNOGEN CIVILIZATION

E.K. Manukyan

Summary

The analysis of development and transformation of modern civilization shows that the mechanisms of modern information indicate a certain level of knowledge and the index of human and public awareness

without of which it is not possible to orient in the information space. Dissemination and exchange of information brings the evidence that in modern societies new information systems are being implemented, which provides a high level of control.

When discussing the causes and consequences of identity crisis, the new types of anthropological man are defined in modern information civilization.

Key words: technological civilization, social paradox, information society, consumer culture, citizens activity, individual autonomy.

ПАРАДОКСАЛЬНЫЕ СРЕДСТВА ТЕХНОГЕННЫХ ЦИВИЛИЗАЦИЙ

Е.К. Манукян

Резюме

Развитие техногенных цивилизаций и анализ современных тенденций трансформации показывает, что современные средства информации определяют определенный уровень знаний, критерии информированности человека и общества, без которых невозможно ориентироваться в информационном пространстве. Распространение и обмен информацией доказывает, что в современном обществе протекают процессы инвестирования новых систем информирования, что предполагает высокий уровень контроля.

Ключевые слова: техногенных цивилизаций, социальный парадокс, информационное общество, потребительская культура, гражданской активности, суверенность индивидуальности.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հ.Ա. Մարգարյան, Ա.Ա. Հարությունյան

Զբաղվածության կառուցվածքը և ռազմավարությունը ԼՂՀ գյուղատնտեսության ոլորտում..... 3

Ն.Լ. Կիրակոսյան

Մոտիվացիայի և խթանման տարբերությունները..... 10

Մ.Ռ. Մանվելյան

Փոքր և միջին ձեռնարկատիրության հարկման ռեժիմները Ռուսաստանի Դաշնությունում 19

Ա.Հ. Ստեփանյան

Բանկի հաճախորդների պահանջմունքների բացահայտումը և համապատասխան պրոդուկտների առաջարկումը որպես հաճախորդների բավարարվածության ապահովման միջոց..... 28

Տ.Ս. Բաղդասարյան

Առևտրային կազմակերպությունների դրամական հոսքերի կառավարման բարելավման գործիքակազմը..... 38

Վ.Ս. Մկրտումյան

Բիզնեսի արժեքի կառավարումը. առավելություններն ու թերությունները..... 46

Լ.Մ. Դոխոյան

ՀՀ ձեռնարկատիրական միջավայրի զարգացման հիմնախնդիրների շուրջ..... 56

Ս.Վ. Մարտոյան

Առողջապահության ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացման ուղիները 66

Կոռուպցիայի հնարավոր սոցիալ-տնտեսական հետևանքերը ՀՀ-ում. կոռուպցիայի մոդելը ՀՀ առողջապահական համակարգում..... 72

Л. В. Тумян

Национальный бренд, создание и продвижение 79

A.H.M. Nemati

Possibilities of introduction and application of information technology in rural areas of developing countries87

The role of information and communication technologies in rural development 95

L.Վ. Պետրոսյան

Առևտրային բանկերում ցուցանիշների հաշվեկշռված համակարգի (balanced scorecard-bsc) կիրառման միջազգային փորձը 104

Ա.Մ. Հակոբյան

Հայաստանում էլեկտրոնային առևտրի զարգացմանը նպաստող և խոչընդոտող գործոնները116

Տ.Ռ. Սարգսյան

Աշխատավարձի ձևերի կատարելագործման ուղիները Երևանի մետրոպոլիտենում 123

Տ.Ս. Վարազդատյան

Բնական մենաշնորհների դրսևորումները ՀՀ-ում131

Ա.Ս. Մխիթարյան

Բանկային ֆինանսական նորարարությունների էությունը և առանձնահատկությունները..... 137

Ա.Յ. Карян, Д.Е. Джангирян

Налоговые реформы Грузии и их результаты 145

Ս.Հ. Հարությունյան

Սողանքային օբյեկտների հասցրած տնտեսական վնասները և կանխարգելումը 162

A.A. Yakhshibekyan

The assessment of competition policy and its reflection on the competitive environment of the food markets of Armenia 170

Գ.Գ. Կուրդիյան

«Օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալի փոփոխության վրա ինստիտուցիոնալ գործոնների ազդեցության տնտեսաչափական գնահատումը ՀՀ-ում» 182

«Ներդրումային միջավայրի ինստիտուցիոնալ հիմքերի
ձևավորման օտարերկրյա փորձի շուրջ» 192

Վ.Ա. Երանոսյան

Բանկային տոկոսադրույքի դերը բնակչության խնայողությունների
ներգրավման գործընթացում 202

Ծ.Զ. Կարապետյան

Միասնական հետազոտական տարածքի զարգացման
ինստիտուցիոնալ հիմնահարցեր..... 211

R.L. Markosyan

Human capital reproduction issues in migration framework 219

A.G. Juguryan, J.A. Tadevosyan

Income taxation framework in USA and RA..... 228

Մ.Ս. Կասիմյան

Հայ-վրացական առևտրատնտեսական համագործակցության
տնտեսաչափական գնահատականը..... 238

Գ.Ա. Ավագյան

Միջազգային վարկերի ներգրավման հեռանկարները ՀՀ-ում..... 245

Գ.Մ. Միքայելյան

Տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրությունում
կոռուպցիոն որոշ ռիսկերի մասին..... 255

Լ.Կ. Սարգսյան

Համաշխարհային խոշոր հետազոտական նախագծերին
ՀՀ ազգային ինովացիոն համակարգի ինտեգրման
հիմնախնդիրները..... 261

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ա.Ա. Խաչատրյան

Հայաստանի Հանրապետության ինքնիշխան իրավունքները և
դրանց իրացման հիմնախնդիրները 273

Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության
երաշխիքները..... 289

Վ.Ա. Բաղդասարյան

Պրորբացիայի ծառայողների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները..... 304

Պրորբացիայի ծառայության մարմինների գործունեության հիմնական սկզբունքներն ու առանձնահատկությունները..... 316

Տ.Կ. Մարգարյան

Տեղական ինքնակառավարումը և մարդու ու քաղաքացու իրավունքների և ազատությունների ապահովումն ու պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում329

Տեղական ինքնակառավարման մարմինների հանրային իրավական պատասխանատվությունը 341

А.С. Напетян

Соотношение институтов государственного суверенитета и гуманитарной интервенции в контексте оценки и адекватной реакции на массовые нарушения прав человека353

Некоторые рассмотрения о законности применения гуманитарной интервенции как международно-правового механизма..... 372

Ռ.Ռ. Մարանդյան

Հանրաքվեին մասնակցելու իրավունքի սահմանափակումը Հայաստանի Հանրապետությունում392

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ

N.V. Kocharyan, K.A. Tonoyan

Information technology law and e-government in Armenia..... 410

С.Б. Овакимян, Г.С. Абгарян

Многокритериальная модель автоматизированной системы управления чрезвычайными ситуациями420

Տ.Ա. Միրայելյան

Մոդիֆիկացված գենետիկական ալգորիթմ, նախատեսված դինամիկ միջավայրի համար429

SH. M. Talehvaran

Advantages and disadvantages of fuzzy model in r&d projects 434

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

A.С. Абрамян

Математика и кибернетика в клинической диагностики 444

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Л. Г. Мелоян

Значение хронотипа школьников во время урока рисования 450

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

Ռ.Վ. Նեմիշայան, Կ.Վ. Վոդենկո

Վիրտուալությունը հասարակական կեցության եղանակ և
զարգացման հերթական փուլ 455

Ե.Կ. Մանուկյան

Տեխնաձին քաղաքակրթության պարադոքսալ հետևանքները 469

**Խմբագրության հասցեն. Հայաստանի Հանրապետություն,
Երևան 0037, Դավիթ Անհաղթի 10**

Հեռ. (374 10) 24 00 38

Ֆաքս (374 10) 24 00 38

Վեբ կայք <http://www.era.am>

Էլ. փոստ. segart25@yahoo.com

d.hovhannisyan@eriicta.am

Համակարգչային ձևավորումը՝ Մ. Գևորգյանի
Սրբագրությունը՝ Գ. Պետրոսյանի

Ստորագրված է տպագրության 15.07.2015թ.

Ֆորմատ՝ 60x84/16 Թուղթ՝ օֆսեթ:
Տպագրական 30 մամուլ: Տպաքանակ՝ 100:

© ԵԱ գիտական հոդվածների ժողովածու, 2015

Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի
հրատարակչություն,
Երևան 0037, Դավիթ Անհաղթի 10

Տպագրվել է «Աստղիկ Գրատուն» հրատարակչության տպարանում:

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Գևորգ Քոչարի փ. 21:

Հեռ.՝ (+374 10) 52 88 00:

E-mail: info@astghik.am, www.astghik.am